

ԹԱԶՔԻՐԱԹ  
ԱԼ-ՄՈՒԼՈՒՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

18

FOREIGN SOURCES  
ABOUT ARMENIA AND ARMENIANS

ԵՐԵՎԱՆ  
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2019

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

PERSIAN SOURCES

I

MIRZA SAMI'A  
TAZKIRAT AL-MULUK

Translated with notes by  
K. P. KOSTIKYAN, J. V. MESHKANBARYANS

YEREVAN 2019

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ПЕРСИДСКИЕ ИСТОЧНИКИ

I

МИРЗА САМИ'А  
ТАЗКИРАТ АЛ-МУЛУК

Перевод и комментарии  
К.П. КОСТИКЯН, Ж. В. МЕШКАНБАРЯНС

ЕРЕВАН 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՐՄԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա

ՄԻՐԶԱ ՍԱՄԻ'Ա  
ԹԱԶԳԻՐԱԹ ԱԼ-ՍՈՒԼՈՒՔ  
(ԱՐՔԱՆԵՐԻ ՀԻՇՏԱԿԱՐԱՆ)

Բնագիրը թարգմանեցին և ծանոթագրեցին  
Զ. Պ. Կոստիկյանը և Ժ. Վ. Մեշքանբարյանը

ԵՐԵՎԱՆ  
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2019

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Օ-780

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ  
Պատասխանատու խմբագիր՝ Ք. Կոստիկյան

ՕՏԱՐ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ: 18:

Օ-780 ՊԱՐՄՎԱԿԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ: Ա: ՄԻՐԶԱ ՍԱՄԻ՝Ա:  
ԹԱՋԵՐԻՄԹ ԱՂ-ՄՈՒՆՈՒՔ (ԱՐՔԱՆԵՐԻ ԶԻՇՏԱԿԱՐԱՆ)/  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԳՐԻՑ ԵՎ ՍԱՆՈՑԱԳՐՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԸ Ք. Պ. ԿՈՍՏԻԿՅԱՆ, Ժ. Վ. ՄԵՇԵՆ-  
ԲԱՐՅԱՆԻ, ԵՐԵՎԱՆ: ՀԵՂ. ՆՐԱՏ., 2019.- 271 է.Տ:

Գրքում տրվում է Մեֆյան պետության վարչաքաղա-  
քական համակարգի սկզբնաղբյուր Միրզա Սամի՝այի «Թագ-  
քիրաթ ալ-մոլուքի» ամբողջական թարգմանությունը: Այդ  
երկը ինչպես Իրանի, այնպես էլ Մեֆյան Պետության մեջ  
ընդգրկված Այսրկովկասյան շրջանների պատմության  
կարևոր աղբյուրներից է: Գրքի առաջաբանը բովանդակում է  
ակնարկ պարսկալեզու պատմագրության վերաբերյալ և  
ներկայացնում «Թագքիրաթ ալ-մոլուքը» որպես Մեֆյան պե-  
տության պատմության աղբյուր:

Համահեղինակ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
առաջատար գիտաշխատող Ք. Կոստիկյանի աշխատանքը  
կատարվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի  
կողմից ֆինանսավորվող «Հայաստանը և հայերը XV – XVII  
դարերի արաբա-պարսկական աղբյուրներում» (ծածկագիրը՝  
18T-6A179) գիտական ծրագրի շրջանակներում:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-0-3138-5

© Կոստիկյան Ք., 2019

© Մեշյանբարյան Ժ., 2019

ՆՎԻՐՎՈՒՄ Է

ՄԵՇԱՆՈՒՆ ՀԱՅԱԳԵՏ ՊԱՎԵԼ ԶՈՐԱՆՅԱՆԻ

ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌՆԱԶԱԲԱՆ.....	8
Իրանի պատմագրությունը (Ք. Կոստիկյան).....	9
«Թագքիրաթ» ալ-մուլուքը» որպես Սեֆյան պետության պատմության սկզնաղբյուր (Ժ. Մեշքանբարյան).....	40

ԹԱԶՔԻՐԱԹ ԱԼ-ՄՈՒՆՈՒՔ (ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ).....	76
--	----

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ.....	213
--------------------------	-----

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	256
--	-----

ՑԱՆԿԵՐ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ.....	263
-----------------------------	-----

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ.....	267
-----------------------------	-----

էին Թուսի Սամանյան տիրակալ Աբու Մանսուր բ. Աբդ ալ-Ռազզադի իշխանության օրոք, և ներառելով հասվածներ նաև Դալիդիի կողմից ավելի վաղ գրված «Շահնամեից»<sup>4</sup>:

X դարի առաջին կեսի արձակ պարսկերեն աշխատությունները հիմնականում կամ թարգմանություններ էին արաբերեն երկերից կամ հիմնվում էին արաբական աղբյուրների վրա: Այդպիսին են Բալ'ամիի պատմագրական և անանուն հեղինակի պատմաաշխարհագրական «Նուդուղ ալ-ալամ» երկերը:

Պարսկերեն առաջին ինքնուրույն աշխատություններից էր 982թ. Սամանյան պետության մեջ մտնող Գուզգանսի մարզում անհայտ հեղինակի կողմից գրված աշխարհագրական աշխատությունը, որ վերնագրված է «Նուդուղ ալ-ալամ» (Աշխարհի սահմանները)<sup>5</sup>: 60 գլուխներից բաղկացած այս աշխատությունը, հեղինակը արաբ հեղինակներ Իսթախրիի, Բալխիի, Մաս'ուդիի և Իբն Նաուկալի հաղորդումների վրա, շարունակում է արաբական նկարագրական աշխարհագրության ավանդույթները և արժեքավոր տեղեկություններով լրացնում ինչպես խալիֆայության, այնպես էլ Հայաստանի ու հարակից տարածքների պատմական աշխարհագրությունը<sup>6</sup>:

Պարսկերեն աշխարհագրական երկերի շարքից է նաև մի փոքր ավելի ուշ<sup>7</sup> XI դարի կեսին, իսմայիլական աղանդին հարող

<sup>4</sup> Լույս տեղում:

<sup>5</sup> 1340. حدود العالم من المشرق الى المغرب، بکوشش دکتر منوچهر ستوده، تهران: دانشگاه تهران.

<sup>6</sup> Աղբյուրի տեղեկությունների քննությունը հայոց պատմության տեսանկյունից տե՛ս Զ. Բ. Փափագյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին, Տեղեկագիր ՄՍՍՀ ԳԱ, № 5, էջ 73-88:

բանաստեղծ Նասեր Խոսրովի (1003-1088 թթ.) կողմից գրված «Սաֆարնամե» (Ուղեգրություն): Այս աշխատությունը, չնայած իր փոքր ծավալին, հարուստ է ինքնատիպ ու հետաքրքիր տեղեկություններով այն երկրների ու բնակավայրերի մասին, որոնց հեղինակը այցելել է որպես իսմայիլական բարոզիչ կատարած իր երկարատև ճանապարհորդությունների ժամանակ: «Սաֆարնամեի» բնագիրը հրատարակվել է<sup>8</sup>: Այն մատչելի է նաև անգլերեն ու ռուսերեն թարգմանություններով<sup>9</sup>: Նասեր Խոսրովի ուղեգրության Հայաստանին ու Ատրպատականին վերաբերող մասերը ուսումնասիրել և թարգմանաբար՝ աներաժեշտ մեկնաբանություններով հրատարակել է Վահան Փափագյանը<sup>9</sup>:

Բալ'ամիի կողմից X դարի կեսերին Թարբիի «պատմության» համառոտ խմբագրությունից նեոտ առաջին պարսկերեն պատմագրական աշխատությունը գրվում է XI դարի կեսին Աբդ ալ-Հայ Գարդիզիի կողմից և վերնագրված է «Ջեյն ալ-ախբար» (Տեղեկությունների գեղեցկություն): Այս աշխատությունն ընդգրկում է նախախալանական ժամանակներից մինչև 1041 թ. ընկած ժամանակաշրջանի Իրանի և հատկապես Խորասանի պատմությունը<sup>10</sup>:

<sup>7</sup> سفرنامه ناصر خسرو، بکوشش نادر وزیر پور، تهران: کتبهای جنبی، 1984

<sup>8</sup> Насири Хусрау, Сафар-намэ. Книга путешествия. Пер. и вступ. Е. Бертельса, Москва-Ленинград, 1933. Naser-e Khosraw's Book of Travels, edited by Wh. Thakston, Bibliotheca Persica, 1986.

<sup>9</sup> Վ. Փափագյան, Նասեր Խոսրովի «Սաֆար նամե» Հայաստանի և Ատրպատականի պատմության ու աշխարհագրության սկզբնաղբյուր, Լրաբեր Հասարակական գիտությունների, 3(459), Երևան, 1981, էջ 97-102:

<sup>10</sup> Elton L. Daniel, Historiography: Early Islamic period, Encyclopedia Iranica, Vol. XII, Fasc. 3, pp. 330-336 and Vol. XII, Fasc. 4, pp. 337-349, available

Իրանի XI դարի պատմական առավել արժեքավոր աշխատություններից է Աբու-լ-Ֆազլ Բեհհակիի «Թարիխ-ե ալ-ե Սեբուկ Թեղին» (Սեբուկ Թեղինի տոհմի պատմությունը): Հնդիկ-նակը երկար տարիներ աշխատելով Ղազնևյան տիրակալներ Մահմուդի ու Մաս'ուդի արքունիքում՝ իր աշխատությունը գրելիս օգտագործել է պետական փաստաթղթեր և ներդրել հարուստ փաստագրական նյութ: Երա աշխատությունը ընդգրկում է 1018-1059թթ. ժամանակաշրջանի պատմությունը և բաղկացած է եղել 30 հատորներից, որոնցից մեզ են հասել միայն VII, VIII ու IX հատորներն ամբողջությամբ և VI, X հատորների մի մասը<sup>11</sup>:

Նոր պարսկերենն իր դիրքերն էլ ավելի է ամրապնդում Սելջուկյան պետության ժամանակաշրջանում՝ այդ պետության հետ նաև ընդլայնելով իր գործածության շրջանակները մինչև Փոքր Ասիա և Կովկաս: Այն դառնում է «խլամական լեզու»՝ իր մեջ ներառելով մեծ թվով փոխառություններ արաբերենից: Հետագայում ևս ընդհուպ մինչև XIX դար նոր պարսկերենի կիրառության սահմանները դուրս էին բուն Իրանի տարածքից և ընդգրկում էին արևմուտքում Ռումի Սելջուկյան սուլթանության և արևելքում Հյուսիսային Հնդկաստանի, Աֆղանստանի ու Ղակիստանի շրջանները<sup>12</sup>:

online: <http://www.iranicaonline.org/articles/historiography-iii> (last visited on 03.09.2019).

<sup>11</sup> ابو الفضل بهقى، تاريخ بهقى، مقدمه، توضیحات و تعلیقات و فهرس از متوجه دانش بزرگ، جلد 1، 2.

<sup>12</sup> تهران 1376

<sup>12</sup> Ludwig Paul, Persian language i. Early New Persian. Historical background. Encyclopædia Iranica, online edition (accessed on April 21, 2015): <http://www.iranicaonline.org/articles/persian-language-1-early-new-persian>.

Իրանի Սելջուկյան ժամանակաշրջանի պարսկերեն աղբյուրներից է անհայտ հեղինակի կողմից 1196 թ. գրված հակիրճ «Մուջմալ ալ - թավարիխը» (Պատմությունների համառոտագրությունը), որում պատմության շարադրանքը հասցվում է մինչև 1126 թ.<sup>13</sup>:

Սելջուկյան ժամանակաշրջանի պատմագրական երկերից Անուշիրվան բ. Խալիդ Քաշանիի (մահ. 1138/9 թ.) պատմագրական աշխատությունը կորած է համարվում և մեզ է հասել Իմադ ալ-Դին Քաթեբ Իսֆահանիի արաբերեն խմբագրությամբ, որը գրված է ծաղկուն, դժվարըմբռնելի ոճով: Այս աշխատությունն իր հերթին խմբագրվել է արաբերեն լեզվով Ֆախր ալ-Դին Բունդարիի կողմից և քանի որ այն հրատարակված է «Զոբդաթ ալ-լուս-րա» վերնագրով, ուստի այս գործն է հիմնականում հղվում պատմագիտական ուսումնասիրություններում<sup>14</sup>:

Սելջուկյան պատմագրության վառ նմուշներից է «Զոբդաթ ալ-թավարիխ ախբար ալ-օմարա վալ-մուրաբ ալ-Մալջուդիա» վերնագիրը կողո ձեռագրի բնագիրը, որը Աբբաս Էդրալի խմբագրությամբ հրատարակվել է «Ախբար ալ-դաուլա ալ-Մալջուդիա» (Տեղեկություններ Սելջուկյան պետության մասին) վերնագրով և վերագրվում է Սադր ալ-Դին Աբու-լ-Հասան բ. Ալի բ. Նասեր Հուսեյնիին:

Բացի վերը նշված Քաշանիի գործից, Սելջուկյան պատմագրության մնացած բոլոր մյուս աշխատությունները ծագում են

<sup>13</sup> Elton L. Daniel, Historiography: Early Islamic period.

<sup>14</sup> Նույն տեղում:

Ջահիր ալ-Դին Նիշապուրիի «Մելջուկ-նամեից», որը հայտնի միայն մեկ դեռես չհրատարակված ձեռագրով<sup>15</sup>:

Նաջմ ալ-Դին Ռավենդին, որը ստացել էր իր ժամանակի համար լավագույն կրթություն, մասնագիտությամբ եղել գրագիր ու կազմարար, որոշ ժամանակ ծառայելով Իրաքի սուլթան թողրուվ Գ-ին, 1202թ. գրում է իր պատմագրական աշխատությունը, որ կոչվում է «Ռահաթ ալ-սուլուր վա այաթ ալ-սուրուր» (Մրտերի հանդարտեցում և ուրախության հրաշք)<sup>16</sup>: Հեղինակն իր երկում ընդգրկելով Իրանի Մելջուկյան ժամանակաշրջանը մինչև 1199թ.<sup>17</sup> անդրադառնում է ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական պատմության հարցերին:

Այս ժամանակաշրջանի կարևոր աղբյուրներից է Մելջուկյան տիրակալներ Ալպ-Արսլանի ու Մելիք շահի վեզիր Նիզամ ալ-մուլքին վերագրվող «Միասաթ-նամե» աշխատությունը<sup>17</sup>, որը բովանդակում է պետության կառավարմանը, զանազան վարչությունների ու պաշտոնյաների գործունեությանը վերաբերող տեղեկություններ ու հանձնարարականներ: Այն թարգմանվել է ֆրանսերեն, անգլերեն ու ռուսերեն<sup>18</sup> լեզուներով:

Սոցիալ-կենցաղային բնույթի առատ նյութ է պարունակում Նիզամի Արուզի Մամարդանդիի «Չահար մադալե» (չորս հոդված) աշխատությունը մարդկային չորս խավերի (վեզիրներ,

բանաստեղծներ, աստղագուշակներ և բժիշկներ) նշանավոր ներկայացուցիչների մասին<sup>19</sup>:

Միևնաջ ալ-Դին Օսման Ջուզանին, որ եղել է Գուրյան սուլթանների պաշտոնյաներից, մոնղոլների արշավանքի ժամանակ հեռանում է Հնդկաստան, որտեղ էլ մնում է մինչև իր մահը: Այստեղ էլ, 1260 թ. նա ավարտում է իր կարճ ընդհանուր տիպի պատմությունը, որն ընծայել է Հինդուստանի Նասեր ալ-Դին Մահմուդ շահին՝ անվանելով այն "Թարադաթ-ե Նասերի" (Նասերի կարգերը)<sup>20</sup>: Այս հեղինակը պատկերում է մոնղոլական արշավանքները առանց քողարկելու նրանց սարսափելի հետևանքները:

Իրանի մոնղոլական ժամանակաշրջանում (1220-1336 թթ.) պարսկալեզու պատմագրությունը վերելք է ապրում: Պատմագրության մեջ տիրապետող է դառնում պարսկերենը, իսկ արաբերենը գրեթե դուրս է մղվում: Մոնղոլ տիրակալները խրախուսում էին իրանցի պատմագիրներին գրել իրենց հաղթանակներն ու գործերը փառաբանող երկեր:

Մոնղոլների պետական ապարատում ծառայության մեջ գտնվող պատմագիրների շարքը սկսում է Ալա ալ-Դին Աթա Մալիք իբն Մուհամմեդ Ջուվեյնին (1226-1283թթ.)՝ ծագումով պարսից ազնվականական տոհմից: Նա իր պատմագրական երկը, որ կոչվում է «Թարիխ-ե Ջահանգոշա» (Աշխարհի նվաճման պատմություն) ավարտել է 1260 թ.<sup>21</sup>: Այն բաղկացած է երեք

<sup>15</sup> Elton L. Daniel, *Historiography: Early Islamic period.*

<sup>16</sup> محمد علی بن سلیمان الراوندی، راحة لاسدور و آية السرور، بسعی و تصحیح محمد اقبال، تهران، 1364.

<sup>17</sup> خواجه نظام الملک، سیر الملوك: سیاست نامه، باہتمام ہیوبرت دارک، انتشارات علمی و فرهنگی،

انتشارات بنگاه ترجمه و نشر کتاب، چاپ دوم، تهران 1347.

<sup>18</sup> Сиваст-намэ книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька, перевод, введение и примечания Б. Н. Заходера, М., Л., 1949.

<sup>19</sup> نظمی عروضی، چهار مقالہ، باہتمام محمد مہین، تصحیح محمد قزوینی، تهران: انتشارات جامی، 1996.

<sup>20</sup> منهاج سراج جوزجانی، طبقات ناصری، جلد اول، دوم، تصحیح، مقابله و تحشیہ عبدالرحمن حبیبی، تهران، اساطیر، 1389.

<sup>21</sup> تاریخ جهانگشاہی جوینی، تصحیح محمد قزوینی، تهران، 1911.



հատրներից, որոնցից առաջինը բովանդակում է Մոնղոլական կայսրության պատմությունը՝ Չինգիզ խանի առաջին արշավանքներից մինչև Գույուկ խանի մահը, երկրորդը՝ Խորեզմշահների պետության պատմությունը, երրորդը՝ Հուլավու խանի արշավանքը Իրան, նաև Ալամուտի իսմայիլական պետության պատմությունը: Չնայած իր ընդհանուր մոնղոլական ուղղվածությանը, երկուսն լռության չեն մատնված մոնղոլական նվաճման բացասական կողմերը:

Պարսկալեզու խոշորագույն պատմագիրներից է Ղազան և Օլջայթու խաների վեզիր Ռաշիդ ալ-Դին Ֆազլուլլահ բ. Աբու-լ-Խեյր Ալի Համադանին (1247-1318): Ղազան խանի պատվերով 1300-1310թթ. նրա գրած ընդարձակ «Ջամի՝ ալ-թավարիխ» (Տարեգրությունների ժողովածուն) պատմական ընդհանուր տիպի աշխատությունը ընդգրկում է ոչ միայն մահմեդական երկրների, այլև հեղինակին հայտնի բոլոր ժողովուրդներինը՝ սկսած արևմուտքում «Ֆրանկների» երկրից մինչև արևելքում Չինաստան: Իր աշխատությունն առավել իրական ու հավաստի դարձնելու նպատակով հեղինակը ներգրավել է աշխատակիցներ, որոնք լավատեղյակ են եղել առանձին ժողովուրդների լեզվին ու պատմությանը: Այս պատմագրական երկը առավել լավ ուսումնասիրված պարսկական աղբյուրներից է, որը թարգմանվել է նաև ռուսերեն<sup>22</sup>:

Այս պատմագրության անգլերեն թարգմանությունը տե՛ս The history of the world conqueror by 'Ala-ad-Din 'Ata-Malik Juvaini. Translated from the text of Mirza Muhammad Qazvini by J. Boyle, vol. 1, 2, Cambridge Massachusetts: Harvard University Press, 1958.

<sup>22</sup> Рашид ад-дин, Фазлуллах, Джами ат-таварих (Сборник летописей), т. 1, кн. 1, 2, т. 2, 3, М., Л.: Изд. АН СССР, 1952, 1960, 1946.

Աշխատության առաջին հատորը, որը Ղազան խանի պատվին կոչվել է «Թարիխ-ե Ղազանի», ներառում է մոնղոլաթյուրքական ցեղերի, Չինգիզ խանի ու նրա հաջորդների, մոնղոլական պետությունից առանձնացած ուլուսների պատմությունը<sup>23</sup>: Երկրորդ հատորի մեջ են մտել ոչ մահմեդական երկրների՝ Չինաստանի, հրեաների, «ֆրանկների», Հռոմի կայսրերի ու Հնդկաստանի պետության պատմությունը: 2. Փափագյանը ուսումնասիրել է «Ջամի՝ ալ-թավարիխի» Կրիլիյան Հայաստանին վերաբերող հատվածը և ներկայացրել այն հոդվածով<sup>24</sup>: Մոնղոլական ժամանակաշրջանի կարևոր սկզբնաղբյուրներից է նաև Ռաշիդ ալ-Դինի «Նամակագրությունը», որը ևս թարգմանվել է ռուսերեն<sup>25</sup>:

Շահար ալ-Դինի 'Աբդուլլահ իբն Ֆազլուլլահ Շիրազին, որն առավել հայտնի է իր «Վասսաֆ ալ-հագրաթ» ծածկանունով, ևս մոնղոլ տիրակալներին գովերգող պատմագիրներից է, որը ծառայելիս է եղել ֆինանսական վարչությունում: Նրա ծավալուն պատմական աշխատությունը կրում է հետևյալ վերնագիրը՝ «Թազդիյաթ ալ-ամսար վա թագիյաթ ալ-ամար» (Երջանների բաժանումն ու դարերի բաշխումը), բայց ավելի շատ հայտնի է «Թարիխ-ե Վասսաֆ» անվամբ<sup>26</sup>: Աշխատության առաջին չորս

<sup>23</sup> Այս աշխատության քննական քննագիրը տե՛ս У Рашид ад-Дин, Джами ат-таварих (прел. А. А. Али-заде), т. I-III, Москва, 1957-1968.

<sup>24</sup> 2. Փափագյան, Ռաշիդ-եղ-Դինը Կրիլիյան Հայաստանի մասին, ՊԲՀ, հ. 2 (81), 1978, էջ 129-139:

<sup>25</sup> 1364 رشيد الدين فضل الله، مكاتبات رشيدى، لاهور، 1971. Рашид ад-дин, Фазлуллах, Переписка, М. Наука, 1971.

<sup>26</sup> Մաշտոցյան Մատենադարանում պահվում է Վասսաֆի պատմության առաջին հատորի XIX դարի մի ձեռագիր ընդօրինակություն (ՄՄ, արարատառ ֆոնդ, հեռ. 15):

մասերը գրվել են ու ներկայացվել Օշթայթու խանին 1312 թ., իսկ հինգերորդ մասն ավարտվել է 1328 թ.: Աշխատությունը գրվել է որպես Ջուվեյնիի պատմության շարունակություն, ուստի ընդգրկում է 1257-1323 թթ. ժամանակահատվածի պատմությունը: Այն հարուստ է հիշյալ ժամանակաշրջանի Իրանի թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ-տնտեսական պատմությանը վերաբերող արժեքավոր տվյալներով, որոնց օգտագործումը սակայն դժվարանում է հեղինակի շարադրանքի խիստ ծանր ու խրթին ոճի պատճառով:

Մոնղոլ տիրակալներին գովերգող հայտնի պատմագիրների շարքը լրացնում է իրանցի ազնվականների տոհմից սերող Համդալլահ Մուսթովֆի Ղազվինին (ծնվ. 1281թ.): Նա իր պատմական «Թարիխ-ե գոզիդե» (Շուտիր պատմություն) աշխատությունն ավարտում է 1330թ.: Այն ընդհանուր տիպի պատմություն է, որի XII գլխի IV բաժինն ընդգրկում է Իրանի մոնղոլական ժամանակաշրջանի համառոտ պատմությունը մինչև 1329թ., իսկ VI գլխում մանրամասն նկարագրվում է հեղինակի ծննդավայր Ղազվինը: Հետագայում հեղինակը շարունակում է իր պատմության շարադրանքը՝ հասցնելով մինչև 1344 թ.: Նրա որդին՝ Ջեյն ալ-Դին Մուսթովֆի Ղազվինին իր հերթին պատմական դեպքերի շարադրանքը շարունակում է հասցնելով մինչև 1392 թ.:

1335 թ. Համդալլահ Ղազվինին ավարտում է իր չափածո տարեգրություն - պոեմը կոչված «Ջաֆարնամե» (Գիրք Հադթության)՝ բաղկացած 75000 բեյթից, որը հեղինակը գրել էր իբրև Ֆիրդուսու «Շահնամեի» շարունակություն: Այս երկում դեպքերի շարադրանքը հասցվում է մինչև 1331/2 թ.:

Պատմական բարձր արժեք ունի Համդալլահ Ղազվինիի կողմից 1340թ. գրված աշխարհագրական «Նուզհաթ ալ-դուլուբ» (Մրտերի մաքրություն) աշխատության III մասը, որտեղ հեղինակը տնտեսական բնույթի առատ տվյալներ է հաղորդում իրեն ժամանակակից Իրանի մասին<sup>27</sup>: Հայաստանի բնակավայրերի մասին Համդալլահ Ղազվինիի «Նուզհաթ ալ-դուլուբ» աշխատության հաղորդումների ուսումնասիրություն է կատարել Էլիսա Ղազարյանը<sup>28</sup>:

Թիմուրյան պատմագրությունը ևս զարգանում է նույն պալատական- ներքոզական ոճի մեջ որպիսին մոնղոլական շրջանի պարսկական պատմագրությունն էր:

XV դարի պատմագիրների շարքում նախ և առաջ հարկ է նշել Լենգ Թեմուրի պալատական պատմագիրներ Նիզամ ալ-Դին Շամիին և Շարաֆ ալ-Դին Եզդիին, որոնք երկուսն էլ իրենց պատմական աշխատությունները վերագրել են «Ջաֆարնամե»: Թե՛ Շամիի երկը (գրվել է 1404թ.) և թե՛ Եզդիինը (1424թ.) շարադրված են մեզ չհասած պաշտոնական սկզբնաղբյուրների վրա և ներկայացնում են Թեմուրին ու նրա գործերը իդեալական կերպով, առանց բացասական կողմերի: Շամիի աշխատությունը

<sup>27</sup> زهة القلوب. ناليف حمدالله بن ابي بكر بن محمد بن نصر مستوفي قزوینی، با مقابله وحواسی و تعلیقات و فہارس محمد دبیر سیاقی. تہران، 1336.

<sup>28</sup> Ղազարյան Է., Հայկական բնակավայրերն ըստ Համդալլահ Ղազվինիի «Նուզհաթ ալ-դուլուբ» աշխատության, «Հայաստանը և Արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը», Գ, Հանրապետական գիտաժողով նվիրված Պ. Չոբանյանի ծննդյան 70 ամյակին, Ջելուցումներ ու զեկուցումների դրույթներ, Երևան, 2018, էջ 162-178:

գրված է պարզ ու հասկանալի ոճով<sup>29</sup>, իսկ Եզդիիները՝ խրթին է ու ավելի ներդրողական<sup>30</sup>:

Թիմուրյան պատմագրության առավել նշանավոր ներկայացուցիչը Հաֆեզ-ե Աբրուն է (մահ. 1430թ.): Նա ծառայել է սկզբում Լենգ Թեմուրին, ապա նրա որդուն՝ Շահրոխին: Վերջինիս արքունիքում էլ գրում է իր պատմական ու աշխարհագրական երկերը:

Հաֆեզ-ե Աբրուն մի շարք պատմագրական երկերի հեղինակ է, որոնք են՝

- Ռաշիդ ալ-Դինի «Ջամի ալ-Թավարիխի շարունակությունը» (Ջեյլ-ե Ջամի ալ-Թավարիխ), որն ընդգրկում է 1304-1335 թթ. Օջայթու և Աբու Սաիդ Իլխանների իշխանության ժամանակաշրջանը,

- Շամիի «Ջաֆարնամեի շարունակությունը» (Ջեյլ-ե Ջաֆարնամե-ե Շամի), որը բովանդակում է Լենգ Թեմուրի կյանքի վերջին տարվա 1404-5 թթ. պատմությունը,

- «Թարիխ-ե Հաֆեզ-ե Աբրուն» պատմաաշխարհագրական երկը, որն ավելի շատ հայտնի է «Ջոդրաֆիա» անվամբ և հեղինակը սկսել է գրել Շահրոխի պատվերով 1414 թ.՝ առաջնորդվելով արաբական աշխարհագրության մոդելով<sup>31</sup>: Նրա այս երկում բավականին ընդարձակ տեղ է հատկացված Ֆարս, Խորասան ու

<sup>29</sup> Այս երկի բնագիրը և նրա ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս Sami, Nizamuddin, Histoire des conquêtes de Tamerlan intitulée Zafarnama, t. I, II, Praha, 1937, 1956. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում առկա է այս աշխատության XVII դարի մի ամբողջական ընդօրինակություն (ՄՄ, արաբատառ ֆոնդ, ձև. 286):

<sup>30</sup> 1387. شرف الدين بيزدي، ظفرنامه تصحيح و تحقيق عبد الحسين نوابي، تهران.

<sup>31</sup> 1375. جغرافياي حافظ ابرو، تصحيح س سجادی، جلد 1، 2، تهران: ميراث مکتوب.

Քերման ևահանգներին, որոնց նկարագրության մեջ ծավալուն պատմական ակնարկ կա:

- «Մաջմու՛-ե-ե Հաֆեզ-ե Աբրուն» (Հաֆեզ-ե Աբրունի ժողովածու) կոմպիլյատիվ բնույթի տիեզերական պատմություն է, որը գրելով 1417-1418 թթ. Շահրոխի պատվերով հեղինակը ներառելով Թարաբիի, Ռաշիդ ալ-Դինի ու Շամիի հատվածները՝ շարունակում է նրանց պատմությունները:

- Մյուս ընդարձակ պատմական աշխատությունը, որը հայտնի է «Մաջմա՛ ալ-թավարիխ» (Տարեգրությունների ժողովածու) վերնագրով, և 1426 թ. հեղինակը գրել է Շահրոխի որդի Բայսունդուրի համար, բաղկացած է չորս հատորներից: Այդ երկի չորրորդ մասը, որը վերնագրված է «Ջուբդաթ ալ-թավարիխ-ե Բայսունդուրի» (Բայսունդուրի տարեգրությունների ժողովածու), աղբյուրագիտական տեսակկյուսից ամենաարժեքավորն է, որն աչքի է ընկնում իր հաղորդումների ճշգրտությամբ ու հակիրճ շարադրանքով<sup>32</sup>:

Արդ ալ-Ռազզադ Սամարղանդիի (1413-1482թթ.) երկհատորյա պատմագրական երկը վերնագրված է «Մաթլա՛ ալ-սա՛դնյն վա մաջմա՛ ալ-բահրեյն» (Երկու երջանիկ աստղերի ծագումն ու երկու ծովերի միախառնումը): Մինչև 1426թ. դեպքերի նկարագրությունը աշխատանքը կոմպիլյատիվ բնույթի է՝ հիմնված Հաֆեզ-ե Աբրունի «Մաջմա՛ ալ-թավարիխի» վրա, մնացած մասում՝ (մինչև 1470թ.) հեղինակն ինքնուրույն է շարադրում իր

<sup>32</sup> M. Subtelny and Ch. Mellville, Hafez-e Abru, Encyclopedia Iranica, vol. XI, Fasc. 5, pp. 507-509, available online (last visited 27.08.2019): <http://www.iranicaonline.org/articles/hafez-e-abru>

պատմությունը: Երկում առատ են տնտեսական բնույթի սովորները:

XV դարի նշանավոր պատմագիրներից է Միրխոնդ անվամբ հայտնի Մուհամմեդ իբն Խավանդշահը (1433-1498թթ.), որը ծառայելով Հերաթում գտնվող Թիմուրյան պալատում, գրել է 7 հատորյա ընդհանուր տիպի պատմություն «Ռուզբե ալ-Սաֆա» (Մաքրության այգի) վերնագրով: Վերջինիս միայն VI և VII հատորներն են վերաբերում XV դարի երկրորդ կեսի պատմությանը<sup>37</sup>: Միրխոնդի պատմությունն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև Թիմուրյան Սուլթան Հուսեյն Բայբարայի իշխանությունն (1470-1506 թթ.) ընկած շրջանի պատմությունը: Սկզբի հատորները կոմպիլատիվ բնույթ ունեն և հիմնված են արաբական ու պարսկական տարբեր աղբյուրների վրա, որոնց մի մասը չի պահպանվել, իսկ վերջին հատորի հեղինակն է ըստ երևույթին նրա թոռ Խանդամիրը<sup>38</sup>, քանի որ այն ընդգրկում է նաև նրա մահվանը հաջորդած դեպքերի շարադրանքը: «Ռուզբե ալ-սաֆան» դեռևս XIX դարում հրատարակվել էր անգլերեն թարգմանությամբ<sup>39</sup>, թեև իր հաղորդած տեղեկությունների հավաստիությամբ ու ճշգրտությամբ զիջում է Հաֆեզ-ե Աբրուին ու Սամարղանդիին:

Հաֆեզ-ե Աբրուի, Միրխոնդի ու Խանդամիրի լայնածավալ աշխատությունները շուտով տարածվում են ողջ իսլամական

աշխարհում և օրինակ ծառայում հետագա դարերի պատմագիրների համար<sup>36</sup>:

Հայկական բարձրաձևողական ու Այսրկովկասի շրջաններն իր սահմաններում ընդգրկած Կարա Կոյունլու ու Ակ Կոյունլու Թուրքմեն տիրակալների ստեղծած պետության պատմության աղբյուրներն ավելի սակավաթիվ են: Դրանց մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Ֆազլալլահ Ռուզբեհան Ամինի Խունջիի «Թարիխ-ե ալ-ամ-առ-ե ամինի» աշխատությունը, որը բովանդակում է Ակ Կոյունլուների պետության պատմությունը մինչև 1488 թ.<sup>37</sup>: Հեղինակը լինելով Ակ Կոյունլու տիրակալների պալատական պաշտոնյան՝ Սեֆյան շահ Բամայիլ Ա-ի գահակալումից հետո ջանալով խուսափել կրոնական հետապնդումներից, ապաստան է գտնում Մուհամմեդ խան Շեյբանիի պալատում:

Սեֆյան դարաշրջանում պարսկալեզու պատմագրությունը շարունակում է զարգանալ: Խիստ մեծ է այս շրջանի պատմագիրների թիվը, որոնց որոշ մասը գտնվելով պետական ծառայության մեջ, հնարավորություն ուներ օգտվելու պետական փաստաթղթերից ու հավաստի աղբյուրներից:

Սեֆյան թագավորական տան հիմնադիր Բամայիլ Ա-ի գահակալության մինչև 1512 թ. ընկած ժամանակահատվածի տարեգրությունն է ընդգրկում XVI դարի բանաստեղծ ու պատմաբան

<sup>37</sup> روضة الصفاء، تأليف محمد بن خاوند شاه بلخي، تهذيب و تلخيص عباس زوي، تهران، 1358.

<sup>38</sup> M. Szuppe, Historiography: Timurid period, Encyclopaedia Iranica, Vol. XII, Fasc. 4, pp. 356-363, available online (last visited 27.08.2019): <http://www.iranicaonline.org/articles/historiography-v>

<sup>39</sup> History of the Early kings of Persia, translated from the Persian of Mirkhond with notes by David Shea, London, 1832.

<sup>36</sup> M. Szuppe, Historiography: Timurid period.

<sup>37</sup> تاریخ عالم آرای امینی "شرح حکمرانی سلاطین آی قویونلو و ظهیر صفویان" تألیف فضل الله روزبهان خنجی اسفهانى، تصحیح محمدعشیرق، تهران، میراث مکتوب، 1382.

Քյամալ ալ-Դին Բեննայիին վերագրվող «Շահանշահ-նամեն» (Գիրք արքայից արքայի)<sup>38</sup>:

Ամիր Սադր ալ-Դին Սուլթան Իբրահիմ Ամինիի «Ֆութուհաթ-ե շահի» (Շահական հաղթանակները) կամ «Ֆութուհաթ-ե Ամինի» (Ամինիի հաղթանակները) աշխատությունը ևս նվիրված է շահ Իսմայիլ Ա-ի ժամանակաշրջանի ղեկավարի նկարագրությանը: Հեղինակը նախապես եղել է Սուլթան Հուսեյն Բայթարայի պաշտոնյաներից, իսկ 1519 թվականից ծառայել Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ի պալատում: Իր երկհատորյա պատմությունը Ամինին սկսում է Ադամից և հասցնում մինչև 1512 թ., ընդ որում երկրորդ հատորն ամբողջովին նվիրված է շահ Իսմայիլ Ա-ի գահակալման առաջին 12 տարիների պատմությանը<sup>39</sup>:

Պատմական էպոս է անվանում հետագոտող Ասդաբ Մոնթազեր Մահերն իր աշխատասիրությամբ հրատարակված անանուն հեղինակի «Ալամ առա-ե շահ Իսմայիլ» (Շահ Իսմայիլի աշխարհակալությունը) անվամբ հայտնի աշխատությունը<sup>40</sup>: Այն բովանդակում է Սեֆյան պետության հիմնադրի պատմությունը՝ համեմված տարաբնույթ ավանդապատմամներով:

Առաջին Սեֆյան շահի ժամանակակիցն էր նշանավոր պատմագիր Միրխոնեյի թողը՝ Գիյաս ալ-Դին իբն Հումամ ալ-Դին ալ-Հուսեյնին, որն ավելի շատ հայտնի էր Ռանդամիր ծածկանունով (1475-1535թթ.): Նա իր կյանքի մեծ մասը անց է կացրել

<sup>38</sup> Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIXв., Ленинград, изд. Ленинградского гос. университета им. А. А. Жданова, 1949, с. 20.

<sup>39</sup> جهانبخش نواقب، تاریخنگاری عصر صفوی و شناخت منابع و مآخذ، تهران، 1380. ص. 29

<sup>40</sup> عالم آرای شاه اسماعیل، با مقدمه و تصحیح وتعلیق اصغر صفیر منظر صاحب، تهران: انتشارات علمی و فرهنگی، 1384. ص. 11.

Ներառում, որտեղ Թիմուրյան սուլթան Բադի ալ-Չամանի վեզիր, նշանավոր բանաստեղծ Միր Ալիշեր Նավոյիի հովանավորությամբ 1500թ. գրում է պատմական կարճ կոմպիլյատիվ աշխատությունը, որ կոչվում է «Նուլասաթ ալ-Ախբար» (Տեղեկությունների համառոտագրություն); իսկ 1524թ. իր ընդարձակ «Հաբիբ ալ-սիյար» (կենսագրությունների ընկեր), որն այդպես էր կոչվել նրա նոր հովանավորի՝ Խոջա Հաբիբուլլահ Սավեջիի պատվին: Այս աշխատությունը բաղկացած է երեք հատորներից, որոնցից յուրաքանչյուրը բաժանվում է չորս մասի<sup>41</sup>: Չնայած իր խորին ուճին նրա այս աշխատությունն աչքի է ընկնում ճշգրտությամբ ու բովանդակված փաստագրական նյութերի առատությամբ: Հատկապես արժեքավոր են նրա այն մասերը, որոնք ընդգրկում են Թիմուրյան սուլթան Հուսեյնի ու Իսմայիլ Ա-ի կառավարման ժամանակաշրջանը: Թեև առանձին ղեկավարում հեղինակը հանդես է բերում կողմնակալ վերաբերմունք, սակայն ընդհանուր առմամբ նրա «Հաբիբ ալ-սիյար» աշխատությունը բարձրարժեք աղբյուր է համարվում իր ժամանակի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության որոշ հարցերի լուսաբանման համար<sup>42</sup>:

Միր Յահիա Ղազվինին (1481-1552/3թթ.) գրել է «Լուբբ ալ-թավարիխ» (Պատմությունների միջուկ) կոչված հակիրճ աշխատությունը՝ նվիրված շահ Թահմասպ Ա-ի որդի Բահրամ Միրզային: Այն բաղկացած է 4 մասերից, որոնց շարադրանքը խիստ ճշգրիտ է և հազեցած իրադարձությունների մասին տվյալներով,

<sup>41</sup> Մաշտոցյան Մատենադարանում առկա է այս աշխատության առաջին հատորի XVII դարի մի ընդօրինակություն (ՄՄ, արաբատառ ձև, 58):

<sup>42</sup> П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 21:

իսկ լեզուն՝ պարզ: Դեպքերի շարադրանքը հասցվում է մինչև 1542թ.<sup>43</sup>:

Խուրշահ իրն Ղուբադ ակ-Հուսեյնին (մահ. 1565թ.) ծագումով պարսիկ, երկար ժամանակ ապրել է Հեղկաստանում՝ ծառայելով Նիզամշահերի արքունիքում: Որպես դեսպան 1546 թ. ուղարկվում է Իրան, որտեղ մնալով բավականին երկար ժամանակ, մասնակցում է Շահ Թահմասպ Ա-ի Հարավ-կովկասյան արշավանքներին: Նա գրել է ընդհանուր պատմություն՝ վերագրելով այն «Թարիխ-ե իլլի-ե Նիզամշահ» (Նիզամշահի դեսպանի պատմությունը): Այս աշխատության VI մասը նվիրված է թուրք-մենական Ակ Կոյունլու և Կարա-կոյունլու իշխանությունների, առաջին երկու Սեֆյան շահերի ու Օսմանյան սուլթանների պատմությանը<sup>44</sup>:

Իրանի և Թուրքիայի սահմանակից շրջանների XVI դարի առաջին կեսի պատմությանը վերաբերող արժեքավոր տվյալներ է բովանդակում շահ Թահմասպ Ա-ի և Օսմանյան սուլթանի դեսպանների գրույցի արձանագրությունը՝ ոչ ճշգրիտ կերպով վերնագրված «Թեգբերե-ե շահ Թահմասպ» (Շահ Թահմասպի հիշատակարանը)<sup>45</sup>:

Օագումով թուրքական ոռույլու ցեղից էր Հասան Բեկ Ռումլուն (ծնվ. 1531 թ.), որը 10 տարեկանից դաստիարակվել էր շահ Թահմասպ Ա-ի պալատում: Նա գրել է 12 հատորյա «Ահսան ակ – Թավարիխ» (Պատմություններից լավագույնը) պատմությունը,

որից պահպանվել են միայն XI և XII հատորները<sup>46</sup>: XII հատորը բովանդակում է Սեֆյան առաջին երեք շահերի ժամանակաշրջանի պատմությունը մինչև 1577 թ.: Աշխատության յուրաքանչյուր տարվա շարադրանքում առկա են տվյալներ եշանավոր մարդկանց, աստվածաբանների ու բանաստեղծների մասին, որոնք մահացել են այդ տարի: Այս աշխատությունը համարվում է շահ Թահմասպ Ա-ի և շահ Իսմայիլ Բ-ի ժամանակաշրջանի լավագույն սկզբնաղբյուրներից մեկը<sup>47</sup>:

Իրան ներգաղթած քրդական ռուզբեի ցեղի առաջնորդի ընտանիքից է սերել Շարաֆ Խան Բիթլիսին, որը ծնվել է 1543 թ. Կումի մոտ գտնվող Քերեհրուղ վայրում: 9 տարեկան հասակից նա դաստիարակվել է շահ Թահմասպ Ա-ի պալատում: Վարել է Շիրվանի կառավարչի պաշտոնը: Բայց հետագայում հեռանում է Թուրքիա՝ ստանձնելով իր ժառանգական տիրույթ Բիթլիսի վիլայեթի կառավարչի պաշտոնը: 1596թ. Շարաֆ Խան Բիթլիսին ավարտում է իր «Շարաֆնամե» աշխատությունը, որտեղ ընդարձակ տեղ է հատկացված քրդական ցեղերի պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև իր օրերը: «Շարաֆնամեում» մանրամասն շարադրվում են Իրանում XVI դարում զարգացող իրադարձությունները անկողմնակալ կերպով, որը բարձրացնում է աշխատության պատմագիտական արժեք<sup>48</sup>: Հատկապես բարձր է այս սղբյուրի արժեքը Արևմտյան Հայաստանի XVI դարի

<sup>43</sup> П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 21:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 26: St u այն հրատարակված تذكرة شاه طهماسب شرح وقایع و احوالات زندگانی شاه طهماسب صفوی بقلم خودش، برلین، چاپخانه کاوابی، 1343.

<sup>46</sup> A Chronicle of the Early Safawis being the Ahsan u't- Tawarikh of Hasan-i Rumlu, vol. II, Translated by C.N. Seddon, Oriental Institute Baroda, 1934.

<sup>47</sup> И. П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 29:

<sup>48</sup> Մատենադարանում պահվում է այդ աշխատության XIX դարի մեկ ամբողջական ձեռագիր (ՄՄ, արաբատա ֆոնդ, ձեռ. 1799):

սոցիալ-տնտեսական պատմության համար<sup>49</sup>։ Այս աշխատությունն ունեցել է մի քանի հրատարակություն, թարգմանվել ռուսերեն<sup>50</sup>։

Մեֆյան պատմագրության խոշորագույն ներկայացուցիչը Իսքանդար Բեկ Թորքեմանն է (1560/1-1633/4թթ.), որն ավելի հայտնի է Մունշի (պարսկ. քարտուղար) անվամբ։ Ստանալով լավ կրթություն՝ Մունշին 24-25 տարեկան հասակում ծառայության է անցնում շահ Մուհամմեդ Խուդաբանդեի հեծյալ դուլամների գնդում։ 1592/3թ. նա դառնում է բարձրագույն դիվանի քարտուղարներից մեկը՝ գտնվելով էթեմադ ալ-դուվեի անմիջական ենթակայության տակ։ Վերջինիս հովանավորությամբ էլ նա կարողացել է օգտվել պետական փաստաթղթերից։ Լինելով ժամանակաշրջանի դեպքերից շատերի ակնատեսն ու մասնակիցը՝ Մունշին գրում է շահ Աբբաս Ա-ի պատմությունը, որը վերնագրում է «Թարիխ-ե ալամ առայե Աբբասի» (Աշխարհը զարդարող Աբբասի պատմությունը)։

Այն բաղկացած է առաջաբանից ու երկու մասերից (սահիֆե), որոնցից առաջինը ընդգրկում է շահ Աբբաս Ա-ի մինչև նրա զահակալությանն ընկած ժամանակաշրջանի պատմությունը, իսկ երկրորդը՝ նրա թագավորության պատմությունը երկու փուլերով՝ նախ առաջին երեւոն տարիների ժամանակահատվածը (I մադադ), ապա՝ հետագա տարիներինը մինչև նրա մահը (II մադադ)<sup>51</sup>։ Մյուս պատմագիրների համեմատությամբ Իսքան-

դար Մունշին բավականին ընդարձակ տեղ է հատկացնում Հարավային Կովկասում զարգացող դեպքերի նկարագրությանը, մանրամասն խոսում ոչ միայն տարածքի, այլև տեղի բնակչության, մասնավորապես հայերի մասին։ Հեղինակը բավականին օբյեկտիվ է դեպքերի լուսաբանման հարցում և իր հարորդումներով հաստատում է հայկական աղբյուրների տվյալները հայության բռնագաղթի մասին<sup>52</sup>։ Արժեքավոր են նրա տեղեկությունները նաև ջալալիների ապստամբության, հատկապես Հարավային Կովկասում նրա տարածման մասին<sup>53</sup>։

Դեռ հեղինակի կենդանության օրոք նրա «պատմությունն» այնպիսի մեծ ժողովրդականություն է վայելում, որ Մունշին պաշտոնական առաջարկ է ստանում շարունակելու այն՝ ընդգրկելով շահ Մեֆի Ա-ի ժամանակաշրջանը։ Մունշին սկսում է այն, բայց աշխատանքն ընդհատվում է հեղինակի մահով։ Այս շարունակությունը հայտնի է մի ձեռագրով, որը վերնագրված է «Խուլասաթ ալ-սիյար» և իր մեջ ներառում է նաև Մուհամմեդ Մա՛նում իբն Խոջադի Իսֆահանիի ընդգծված ներբողական բնույթ կրող կարճ ակնարկը նվիրված Գանձակի ու Ղարաբաղի բեկլարբեկեր Ջիյադոլլիներին<sup>54</sup>։

Շահ Աբբաս Ա-ի ժամանակաշրջանի պատմությանն է նվիրված նաև Ֆազլի Բեկ Իսֆահանիի «Աֆգալ ալ-թավարիխ» (Տարեգրություններից լավագույնը) վերնագիրը կրող աշխատությունը՝ բաղկացած երեք հատորներից։ Առաջին հատորն ընդգր-

<sup>49</sup> И. П. Петрушевский, *изв.*, աշխ., էջ 31։

<sup>50</sup> Шараф-хан Шамсалдин Биллиси, Шараф-наме, т. I, II, Москва, Наука, 1967, 1976.

<sup>51</sup> Մատենադարանում պահվում են այս երկի տարբեր մասերի 4 ձեռագրեր (ՄՄ, արարատառ ֆոնդ, ձեռ. 2, 11, 34, 575)։

<sup>52</sup> اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، بکوشش ایرج افشار، جلد 1، 2، ق 1335.

<sup>53</sup> И.П. Петрушевский, *изв.*, աշխ., էջ 35։

<sup>54</sup> اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، بکوشش ایرج افشار، جلد 1، 2، ق 1335، ص 668-669.

կում է Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ի ժամանակաշրջանի պատմությունը, երկրորդը՝ շահ Թահմասպ Ա-ի, շահ Իսմայիլ Բ-ի ու Մուհամմեդ Խուդաբեդեի ժամանակաշրջանները, երրորդը՝ շահ Աբբաս Ա-ինը: Հատորներից յուրաքանչյուրը պահպանվել է եզակի ձեռագրային օրինակով, որոնցից առաջինը պահվում է Քեմբրիջի գրադարանում (Էթոն-Պոսի հավաքածու, ձեռ. 278), երկրորդ հատորի առաջին մասը, որը հեղինակի ինքնագիր օրինակն է՝ Բրիտանական գրադարանում (ձեռ. 4678), երկրորդ մասը համարվում է կորած, իսկ աշխատության երրորդ հատորը վերջ նշված Քրիստ քոլեջի նորահայտ և միակ ձեռագիրն է (հ. Dd 5.6), որը հայտնաբերվել է 1993 թ. իրանագետ Չարլզ Մելվիլի կողմից: Այս երրորդ հատորի պարսկերեն բնագիրը հրատարակվել է 2015 թ. Քայումարս Քերեքուի ընթերցմամբ ու Չ. Մելվիլի խմբագրությամբ<sup>55</sup>:

Օսգունով հայտնի ազնվականական տոհմից սերած Ֆազլի Բեկ Իսֆահանին իր պաշտոնական առաջադրացում սկսել է 16 տարեկանում՝ եղբոր՝ Գանձակի վեզիր Մուհամմեդ Բեկի վարչական անձնակազմում: Երկուսը այնուհետև տեղափոխվում են Բարդա, որը կառավարում էր Բզինիդորաի կառավարիչ Փեյքար խանը: 1617 թ. շահ Աբբաս Ա-ի հրամանով նա նշանակվում է Փեյքար խանի վեզիր, որի հիմնական պարտականությունն էր նախ Ղարաբաղի, ապա՝ Արևելյան Վրաստանի հարկատվությունը<sup>56</sup>: Ֆազլի Բեկի պատասխանատվության տակ էր Ղարաբաղի, Մուղանաթի, Թուրան-ե Մեշքինի, Ղափանաթի

<sup>55</sup> Fazli Beg Khuzani Isfahani, A Chronicle of the Reign of Shah 'Abbas, vol. I, II, Gibb Memorial Trust, 2015.

<sup>56</sup> Fazli Beg Khuzani Isfahani, նշվ. աշխ., էջ xxxi:

ու Չուխուր-Սաադի ցեղերից չորսնեզի հարկի գանձումը: Նա միաժամանակ նաև Ղարաբաղի ու Ատրպատականի հյուսիսային շրջանների պետական (խալիս) հողերի ֆինանսական վերահսկիչն էր: Ֆազլի Բեկի ուղևորությունները Ղարաբաղի, Ատրպատականի ու Արևելյան Վրաստանի տարածքներում լույս են սփում իրանական տիրապետության ու վարչարարության մեթոդների ու մանրամասների վրա: Այս սկզբնաղբյուրը ի տարբերություն պարսկական մյուս պատմագրական երկերի ավելի մանրամասն ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում շահ Աբբաս Ա-ի ու հայ մելիքների փոխհարաբերությունների, ինչպես նաև Արևելյան Հայաստանի տարածքում զարգացող դեպքերի ու տնտեսական հարցերի շուրջ:

Սեֆյան շահ Սեֆի Ա-ի իշխանության շրջան (1629-1642 թթ.) է ընդգրկում Աբու ալ-Մոֆախեբ բ. Ֆազլալլահ ալ-Հուսեյնի Թաֆրեշիի «Թարիխ-ե շահ Սեֆի» (Շահ Սեֆիի պատմությունը) պատմագրական երկը: Հեղինակի մասին կենսագրական տեղեկություններըց հայտնի է միայն, որ նա շահ Աբբաս Ա-ի ու Սեֆի Ա-ի ժամանակաշրջանի բանաստեղծ - պատմագիրներից էր և իր «պատմությունն» ավարտել է 1667 թ.<sup>57</sup>:

Շահ Աբբաս Բ-ի ժամանակաշրջանի կարևոր աղբյուրներից է Մուհամմեդ Թահիր Վահիդի «Թարիխ-ե շահ Աբբաս-ե Մակի» (Շահ Աբբաս Բ-ի պատմություն) կամ «Աբբաս-նամե» կոչված աշխատությունը<sup>58</sup>: Արժեքավոր են այս աղբյուրի վկայությունները հարկազանձումների ընթացքում չարաշահումները սահմա-

<sup>57</sup> تفری (ابوالمفاخر بن فضل الله الحسيني - سوانح نگار تفری، مقدمه، تصحیح و تعلیقات محسن بهرام نژاد، تهران: میراث مکتوب، 1388، ص. 21، 23.

<sup>58</sup> عباسنامه نالیق آقای ابراهیم دهگان، بهمت آقای رای رئیس زاده، تهران، 1329.



նափակելու նպատակով շահ Աբբաս Բ-ի ձեռնարկած միջոցառումների մասին<sup>50</sup>:

Սեֆյան ժամանակաշրջանի պարսկերեն միակ պատմա-աշխարհագրական երկը «Մոխթասար-ե մոֆիդ» (օգտակար համատարադրություն) վերնագրով հայտնի աշխատությունն է՝ գրված Մուհամմեդ Մոֆիդ Մուսթովֆի Բաֆեղի կողմից: Հեղինակը եղել է Սեֆյան Իրանի վարչական ապարատի պաշտոնյաներից, որոշ ժամանակ (1077-1081) զբաղվել է Եզդի վակֆերի հաշվապահությամբ, որից հետո հեռացել է Հնդկաստան: Այստեղ էլ, Լահորում 1091 թ. ավարտում է վերը նշված երկը<sup>60</sup>, որտեղ նկարագրվում են Իրանի բոլոր վիլայեթները: Իր աշխատությունը գրելիս հեղինակը օգտվել է Համդալլահ Ղազվինիի «Նուզհաթ ալ-դուլուբից» և մեծապես ազդվել նրանից: Աշխատության մեջ նկարագրվում են Սեֆյան Իրանի կազմի մեջ մտնող Այսրկովկասյան շրջաններն ու բնակավայրերը<sup>61</sup>:

Նադիրյան ժամանակաշրջանն իր արտացոլումն է գտել երկու պալատական պատմագիրների՝ Միրզա Մեհդի Խան Ասթարաբադիի և Մուհամմեդ Քյազիմի գործերում:

Միրզա Մեհդի խանը եղել է Նադիր շահի քարտուղարն ու պալատական պատմագիրը, մասնակցել Աստվածաշնչի պարսկերեն թարգմանությանը, գրել ուզբեկերեն-պարսկերեն «Մանգլախ» կոչված բառարանը: Նրա պատմագրական երկերն են «Թա-

<sup>50</sup> И.П. Петрушевский, *նշվ. աշխ.*, 38:

<sup>60</sup> مختصر مفید (جغرافیای ایرانزمین در عصر صفوی، بکوشش ابرج افشار، تهران: بنیاد موقوفات دکتر محمود افشار، 1390. ص. 2

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 163-173:

րիխ-ե Նադիրի» (Նադիրի պատմություն)<sup>62</sup> և «Դորրե-ե Նադերե» (Հազվագյուտ գոհար) աշխատությունը, որը հայտնի է բազմաթիվ ձեռագրերով<sup>63</sup> և շուրջ 11 վիճառիպ հրատարակություններով: Այս երկու աշխատություններն աչքի են ընկնում իրենց կրթագեղ համարվող խիստ ծանր ու դժվարըմբռնելի ներբողական ոճով: Այն Հարավային Կովկասի ժողովուրդների պատմության այս շրջանի կարևոր աղբյուրներից է<sup>64</sup>:

Նադիրի ժամանակաշրջանի բարձրարժեք սկզբնաղբյուրներից է Մուհամմեդ Քյազիմի ծավալուն «Թարիխ-ե ալամ առա-ե Նադիրի» (Նադիրի աշխարհակալության պատմությունը)<sup>65</sup> երկը: Այս հիմնարար աշխատությունը առատ էլյութ է մատակարարում ժամանակաշրջանի Իրանի ու նաև Հարավային Կովկասի թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ-տնտեսական պատմության համար, որը բարձր է գնահատվել ուսումնասիրողների կողմից<sup>66</sup>:

Նադիր շահին հաջորդած 35 տարիների ու Ջեղայան թագավորական տան պատմությունն է շարադրված Աբու ալ-Հասան ր.

<sup>62</sup> Միրզա Մեհդի Խանի այս աշխատությունը հայտնի է նաև հետևյալ վերնագրով՝ «Թարիխ-ե Ջահեգուա-ե Նադերի» (Նադիրի աշխարհակալության պատմությունը):

<sup>63</sup> Մատենադարանում պահվում են «Թարիխ-ե Նադերի» և «Դորրե-ե Նադերի» աշխատությունների հինգական ձեռագիր ընդօրինակություն (ՄՄ, արաբատառ ֆոնդ, ձեռ. 23, 33, 293, 567, 590 և 7, 16, 86, 1198):

<sup>64</sup> Այս աշխատության նոր հրատարակություններից է՝ میرزا مهدی خان استرآبادی، تاریخ جهانگشای نادری، تهران، 1377:

<sup>65</sup> Այս աշխատությունը Մ. Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտում պահվող միակ ձեռագրի ֆոտոպատճենման եղանակով հրատարակվել է (Мухаммед Казим, Нама-йи алама-йи Надирн, т. I, II, III, Москва 1960, 1965, 1966):

<sup>66</sup> И.П. Петрушевский, *նշվ. աշխ.*, էջ 41:

Մուհամմեդ Ամին Գուլեսթաբենի «Մուջմալ ալ-թավարիխ» (Տարեգրությունների համառոտագրություն) վերնագրով հայտնի պատմագրության մեջ: Այն գրվել է 1780-1781 թթ.<sup>67</sup>:

Ղաջարական շրջանի պատմագիրներից է «Ասաֆ» գրական ծածկանունով և «Ռոսթամ ալ-Նորամա» տիտղոսով հայտնի Մուհամմեդ Հաշեմը՝ ծնված 1732/3 թ.: Նրա «Ռոսթամ ալ-թավարիխ» (Ռոսթամի տարեգրություն) վերնագիրը կրող պատմագրական աշխատությունն ընդգրկում է Սեֆյան շահ Մուլթան Հուսեյնից մինչև Ֆաթիալի շահն ընկած ժամանակաշրջանի Իրանի պատմությունը<sup>68</sup>:

Մուհամմեդ Սադեդ Մուսնին (մահ. 1789/90թ.) գրում է Քերիմ Խան Ձենդի ժամանակաշրջանի պատմությունը՝ վերնագրված «Թարիխ-ե զիթի գոշայ» (Տիեզերակալության պատմություն) կամ «Թարիխ-ե Ձենդիյե» (Ձենդյան պատմություն): Նրա մահից հետո այս «պատմությունը» շարունակում են Միրզա Աբդ ալ-Քերիմը և Աղա Մուհամմեդ Ռեզա Շիրազին<sup>69</sup>:

Մուհամմեդ Ֆաթիալլահ բ. Մուհամմեդ Թադի Մարավին եղել է Աղա Մուհամմեդ շահի ժամանակաշրջանի բանաստեղծներից ու նրա պալատական պատմագիրը: 1785-1786 թթ. Մարավին սկսում է գրել Աղա Մուհամմեդ շահ Ղաջարին նվիրված «Թարիխ-ե Մուհամմեդի» (Մուհամմեդի պատմությունը) պատմագրական երկը<sup>70</sup>: Այն ընդգրկում է Ձենդյան արքայատոհ-

<sup>67</sup> ابو الحسن بن محمد امين گلستانه، مجمل التواريخ، بسمی و اهتمام محمد تقی مدرسى رضوى، تهران: موسسه انتشارات دانشگاه تهران، 1391، ص. 18.

<sup>68</sup> محمد هاشم آصف، رستم التواريخ، تصحيح دكتور ميثرا مهربادى، تهران: دنيای كتاب، 1382.

<sup>69</sup> И.П. Петрушевский, նշվ. աշխ., էջ 43:

<sup>70</sup> محمد فتح الله بن محمد تقی ساروی تاریخ محمدی "الحسن التواريخ"، تهران 1371.

մի վերջին 18 տարիների և հետագա մինչև Աղա Մուհամմեդ շահ Ղաջարի մահն ընկած ժամանակաշրջանի (1761-1797թթ.) պատմությունը: Այս երկը գրված է պարսկալեզու պալատական պատմագրությանը բնորոշ ներբողական ու անականներով խճողված, խրթին ոճով: Չնայած դրան, այն իր ժամանակաշրջանի արժեքավոր սկզբնաղբյուրն է, որտեղ գտնում ենք նաև հայ ժողովրդի պատմությանը վերաբերող կարևոր անդրադարձներ կապված Աղա Մուհամմեդ Խանի կողմից XVIII դարի 90-ական թթ. Ղարաբաղը հպատակեցնելու նպատակով ձեռնարկված քայլերի հետ:

Ղաջարական ժամանակաշրջանի պատմագիրներից է քրդական դուներուլի ցեղի առաջնորդի տոհմից սերած Աբդ Ռազզադ իբն Նաջաֆ Ղուլի Դուներուլին (1762/3-1827/8թթ.): Նա գրել է Ղաջարական դինաստիայի առաջին երկու գահակալների պատմությունը մինչև 1825թ.՝ վերնագրելով այն «Մա'սսեր-ե սուլթանիե» (Սուլթանական հուշարձաններ)<sup>71</sup>: Այն ինչպես Իրանի, այնպես էլ Հարավային Կովկասի XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի պատմության կարևոր սկզբնաղբյուրներից է:

Նասրեդդին շահի օրոք իմունված «Դառ ալ-ֆոնունի»՝ առաջին բարձրագույն դպրոցից հետո նա կապվում իրանական պատմագրության ու աշխարհագրագիտության խոշոր ներկայացուցիչներ Ռեզա Ղուլի Խան Հեդայաթի ու Սահի ալ-Դաուլայի գործունեությունը:

Ռեզա Ղուլի Խան Հեդայաթը (1800-1870) «Դառ ալ-ֆոնունի» առաջին տնօրենն էր: Նա հեղինակել է սովորաբաժավ ընդհանուր պատմություն սկսած հնագույն ժամանակներից մինչև

<sup>71</sup> عبد الرزاق مفتون دنلی، مآثر سلطانیه، تهران، 1351.

1857թ. վերնագրելով այն «Ռոուզաթ» ալ-սաֆա-յե Նասերի» (Նասերի մաքրության այգին), որտեղ սկզբնաղբյուրի արժեք ունի միայն XIX դարի առաջին կեսն ընդգրկող մասը<sup>72</sup>:

Իրանում պատմաաշխարհագրական գրականության զարգացման մեջ մեծ դեր է կատարում Մուհամմեդ Հասան Խանի, կամ ինչպես ավելի շատ եւս հայտնի է՝ Սանի ալ-Ղաուլայի (մահ. 1896թ.) գործունեությունը: Նա եղել է «Դառ ալ-Ֆուտունի» առաջին շրջանավարտներից, ուղեկցել է Նասրեդդին շահին նրա խորասանյան ու եվրոպական ճանապարհորդություններում: Նրա հնդինական աշխատությունների մեջ իրենց կարևորությամբ առանձնանում են «Միրաթ ալ-բուլղանը» (Աշխարհի հայելի), որն իրենից ներկայացնում է ընդարձակ աշխարհագրական բառարանը և նրա շարունակությունը հանդիսացող եռանասոր «Մաթլա ալ-շամս» (Արեգակի ծագումը) հիմնարար աշխատությունը, որի առաջին հատորը նվիրված է Խորասանին և ամփոփում է հեղինակի Խորասանյան ճանապարհորդության տվյալները:

Միրզա Մուհամմեդ Թաղի Մուսթովֆին, որն ավելի շատ հայտնի է Լիսան ալ-Մուլք Սեփեհիի անվամբ (ծնվ. 1801/2թ.) ստացած լինելով իր ժամանակի համար լիարժեք կրթություն, ծառայել է Ղաջարական հարստության Ֆաթհալի, Մուհամմեդ ու Նասրեդդին շահերի պալատներում: Իր սովարածավալ «Նասեխ ալ-թավարիխ» (Տարեգրություններ ընդօրինակող) պատմագրական երկը ավարտել է 1857/8թ.: Նրա երեք հատորներից

<sup>72</sup> رضا قليخان متخلص بهديات، روضة الصفای ناصری، جلد ۱، ۱۰، ۹، ۱۳۳۹.

յուրաքանչյուրը նվիրված է վերոհիշյալ երեք Ղաջար շահերից մեկի ժամանակաշրջանին:

XIX դարի կեսերից պատմագրության վերելք է նկատվում Ռուսաստանի տիրապետության տակ անցած Հարավային Կովկասում<sup>73</sup>: Իրան նպաստում է ռուս բարձրաստիճան պաշտոնյաների ջուջաբերած հետաքրքրությունը իրենց ենթակա տարածքների պատմական անցյալի նկատմամբ, որի իմացությունը կօգներ նրանց տարածաշրջանում կառավարման ձևերի ընտրության հարցում: Պատմագրական երկերի մի մասը գրվել են հենց Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի ու այլ բարձրաստիճան պաշտոնյաների պատվերով: Ռուսական բանակի սպա Աբբաս Ղուլի աղա Բակիխանովը 1841 թ. պարսկերեն գրում է «Գոյլիսթան-ե Իրան» (Իրախստային ծաղկանոց) վերնագրով պատմագրական աշխատություն նվիրված Արևելյան Այսրկովկասի պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև Գոյլիստանի հաշտությունը 1813 թ.: Այն 1844 թ. ներկայացվում է Վրացա-Իմերեթական նահանգի նահանգապետին<sup>74</sup>: Իր պատմությունը գրելիս հեղինակն օգտվել է տարալեզու՝ պարսկերեն, վրացերեն, հայերեն, հունարեն և թուրքերեն աղբյուրներից: Աշխատությունը բաղկացած է 5 գլուխներից, որոնք շարադրված են պարսկական պատմագրության ավանդույթներին համապատասխան՝ սկսելով Աստվածաշնչյան պատմություններով և նախախլամական շրջանի Իրանի թագավորների պատմությամբ: Միայն վերջին՝ 5-

<sup>73</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, ՀՀմարտացի պատմություն, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, «Ձառնակ 97», 2000, էջ 11-12:

<sup>74</sup> А. Бакиханов, Сочинения. Записки. Письма, Баку, 1983, с. 320.

րդ գլուխն է ընդգրկում Նադիր շահի մահվանը հաջորդող 60 տարիներին Արևելյան Այսրկովկասում ստեղծված խանություններում զարգացող իրադարձությունների նկարագրությանը: Այս աշխատությունն առաջին անգամ ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է 1926 թ., ապա նաև 1991 թ.<sup>75</sup>:

Ղարաբաղի խանության պատմությանն է նվիրված 1797-1822 թթ. Իբրահիմ խանի վեզիր, ապա այնտեղի գավառական դատարանում ծառայող Միրզա Ջամալ Ջևանշիրի Ղարաբաղիի «Թարիխ-ե Ղարաբաղ» պարսկերեն պատմագրական աշխատությունը՝ գրված Շահամիր Խան Բեգյարովի պատվերով<sup>76</sup>:

Ղարաբաղի XIX դարի պատմագրության մեջ կարևոր տեղ է գրավում հայազգի Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Մաֆի» (ճշմարտացի պատմություն) պարսկերեն պատմագրական երկը<sup>77</sup>, որը գրվել է XIX դարի կեսին Գ. Օրբելիանու պատվերով<sup>78</sup>: Այն Ղարաբաղի հայ մելիքությունների ու XIX դարի սկզբի ռուս-իրանական պատերազմների արժեքավոր սկզբնաղբյուրներն է:

XXI դարի սկզբին Կովկասյան պատմագրության նմուշներից շատերը, կապված Խորհրդային Միության փլուզման ու տարածաշրջանում Իրանի դերի մեծացման հետ, դարձան

<sup>75</sup> А. Бакиханов, Гюлистан-е Ирам, Баку, 1926. А. Бакиханов, Гюлистан-е Ирам, ред., комм. и примеч. З. Бунятова, Баку, изд. Элм, 1991.

<sup>76</sup> Мирза Джамал Джеваншир Карабаги, История Карабага, Баку, 1959, с. 61.

<sup>77</sup> «Թարիխ-ե Մաֆիի» միակ ձեռագիրը գտնվում է Վրաստանի ԳԱ Արևելյան Ձեռագրերի ինստիտուտի Արևելյան բաժնում (P- 195): Այդ աշխատության վերջին երկու գլուխները հրատարակվել են հայերեն թարգմանությամբ և գիտական մեկնաբանություններով (Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, «Ջանգալ 97», 2000):

<sup>78</sup> Մ. Ֆ. Ներսեսով, նշվ. աշխ., էջ 35:

իրանցի հետազոտողների ուսումնասիրության առարկան և վերահրատարակվեցին: Այդ աշխատությունների շարքում են Միրզա Ջամալ Ջևանշիրի<sup>79</sup> և Միրզա Յուսուֆ Ներսեսովի վերոհիշյալ երկերը<sup>80</sup>: Իրանցի հետազոտողների ջանքերով վերջին շրջանում հրատարակվեցին նաև մինչ այդ անտիպ մի քանի այլ մանր աշխատություններ նվիրված Արցախի պատմությանը, որոնք են Միրզա Ջամալ Ջևանշիրի որդի Ռեզա Ղուլի Բեկի կողմից Ղարաբաղի Փանահ ու Իբրահիմ Խաների կառավարման նվիրված աշխատությունն ու վերջինիս դստեր՝ Գոհար Աղայի «Կակֆեհամեն»<sup>81</sup>:

#### Ք. Կոստիկյան

Խորին շնորհակալություն ենք հայտնում Գեղամ Բաղայանին ստորև թարգմանաբար ներկայացվող «Թագքիրաթ ալ-մուլուքի» բնագրի որոշ տեղանունների ճշգրտման հարցում ցուցաբերած օգնության համար:

#### Ք. Կոստիկյան, Ժ. Մեջբանբարյան

<sup>79</sup> میرزا جمال جوشنبر قره باغی، مقدمه، تصحیح و تفسیر از حسین احمدی، تهران: مرکز اسناد و خدمات پژوهشی، 1382.

<sup>80</sup> میرزا یوسف قراباغی، تاریخ صافی (تاریخ قراباغ از ابتدا تا دوره دوم جنگهای روس و ایران، بکوشش حسین احمدی، تهران: موسسه مطالعات تاریخ معاصر ایران، 1390.

<sup>81</sup> رضا قلی بیگ، حکومت پناه خان و ابراهیم خان در ولایت قره باغ، وقفنامه گوهر آغا (دختر ابراهیم خلیل جوشنبر)، سه رساله در باره قفقاز، مقدمه، تصحیح و یادداشتها حسین احمدی، تهران: موسسه مطالعات تاریخ معاصر ایران، 1384.

**«Տագքիրաթ»-ի պատմությունը որպես Մեֆյան պետության պատմության սկզբնաղբյուր**

Մեֆյան դարաշրջանը Իրանի պատմության կարևոր շրջաններից էր, որի ընթացքում նոր զարգացում են ապրում իրանական պետականությանը հատուկ հիմնական սոցիալ-տնտեսական ու վարչաքաղաքական կառույցները և համակարգերը, որոնք Մեֆյան պետության անկումից հետո դեռ երկար ժամանակ շարունակեցին իրենց գոյությունն ու գործունեությունը նաև հաջորդ թագավորական տների իշխանության ժամանակներում:

Մեֆյան արքունիքը մշակել էր որոշակի համակարգ, որի շնորհիվ քաղաքական, վարչական և ֆինանսական բնագավառներում վերահսկվում էր տեղական վարչակազմի գործունեությունը: Կառավարման գործընթացում կարևոր նշանակություն ունեին վարչաքաղաքական բաժանումները, որոնք վճռորոշ դեր խաղացին այդ շրջանների հետագա քաղաքական կարգավիճակի ու ճակատագրի հարցում:

Էթնիկ բազմազանության պայմաններում Իրանում պետականության ստեղծումը ուղեկցվել է ոչ միայն ռազմական պարտադրանքի, այլև տարբեր հավատների դավանող և տարբեր կարգավիճակ ունեցող բնակչության, տարբեր կենսակերպ ունեցող ցեղերի ու ժողովուրդների համակեցության ապահովման միջոցով: Թե ինչպիսի գաղափարական սկզբունքի և հիմքի վրա էր ձևավորվել Մեֆյան հարստության կառավարման համակարգը, Ռոջեր Մելլորին հետևյալ բացատրությունն է տալիս. «Մեֆյան հարստությունը ձևավորվեց երեք գլխավոր սկզբունքների հիման վրա, առաջինն այն էր, որ Մեֆյան շահերը նախախլամական շրջանի թագավորների նմանությամբ իրենց Աստուծո ներկայացուցիչը կամ, ինչպես իրենք էին անվանում,

«սայես խոդավանդ բար գամին՝ Աստուծո ստվերը երկրի վրա» ( ظل الله فی الارض کما فی سايه خداوند بر زمين ) էին կոչում, երկրորդ՝ ընդունելով շիիզմը, որպես պետական կրոն, իրենց նաև համարում էին շիաների փրկիչ՝ Մահդիի ներկայացուցիչը երկրի վրա և երրորդ, որպես սուֆիական առաջնորդներ, ինչպես ընդունված էր սուֆիական ուսմունքում, իրենց ենթակաների փիրը կամ առաջնորդն էին: Այս երեք պատճառներով էլ կրանց պիտի նկարկվեին երկրի հոգևոր և զինվորական բոլոր կառույցները, իսկ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ղզլբաշները սուֆիզմի հետևորդներ էին, ուստի պիտի ենթարկվեին շահերին, այլապես «նասուֆի կհամարվեին»:<sup>82</sup>

Մեֆյան հասարակության կառույցը բրզաձև է եղել, որի զագաթին շահն էր, որպես «արդար» իշխանավոր, որի ենթակաները կրա հովանու ներքո «երջանիկ» ապրում էին: Պետություն - «դովլաթ» ( دولت ) բառի սկզբնական իմաստը իրենից ներկայացնում էր՝ օրինություն և երջանկություն, սակայն հետագա դարերում իմաստափոխվելով՝ «պետության» և «երկրի» իմաստ է ստանում: Այդ դիտանկյունից էլ երկիրը կառավարող գերագույն աստիճանի անդամները կոչվել են «պետության հենասյուներ» (արքան-ե դովլաթ), իսկ զլխավոր վեզիրը կոչվում էր «պետության վստահություն, հավատ» ( էթեսադ ալ-դովլե ): Բուրգի ներքնի հատվածում հասարակության զանազան խավերի ներկայացուցիչներն էին՝ առևտրականներ, արհեստավորներ, գյուղացիներ և այլն:<sup>83</sup> Մեֆյան պետությունը ներկայացնելու համար նաև օգտագործվել է «մամալեք-ե մահրուսե» ( ممالک محروسه )

<sup>82</sup> سیوری راجر، تحقیقاتی در تاریخ ایران عصر صفوی، ترجمه عباسعلی غفاری، تهران، 1382، صص. 242-243

<sup>83</sup> سیوری راجر، ایران عصر صفوی، ترجمه کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1385، ص. 174

արտահայտությունը, որը բառացի նշանակում է «պաշտպանության տակ գտնվող երկրներ»<sup>84</sup>:

Երկրի գլխավոր խնդիրներն քննարկման և որոշումների կայացման գործում շահին օգնում էր յոթ անձից բաղկացած խորհուրդը, որի անդամներն էին «պետության հենասյուներ» (արքան-ե դավաթ) կոչվող ամիրները (*դոռչի բաշին, դուլլարադասին, իշիբադասի բաշին և թուֆանկչիադասին*), մեծ վեզիրը (կամ *էթենադ ալ-դովլե*), *դիվանբեկին* և *վադե'ե նեխար*<sup>85</sup>:

Մեֆյան հարստության նախնական շրջանում երկիրը ղեկավարվել է կրոնապետական եղանակով, որի հետևանքով էլ հևարավոր չէր բաժանում սահմանել պետական և կրոնական պաշտոնների միջև, որով և բացատրվում է քաղաքական և զինվորական բնագավառներում հոգևորականության ակտիվության պատճառը: Նրանք բնական էին համարում զինվորական և աշխարհիկ պաշտոնների համատեղումը հոգևոր դիրքի հետ: Ինչպես նահանգներում, այնպես էլ քաղաքներում հոգևորականության ներկայացուցիչներն օժտված էին մեծ իրավունքներով ու իշխանությամբ: *Մադրերի* ու *դագիների* իրավասության ներքո էին գտնվում *շարի աթական* դատարանները, *վակֆային* կալվածքներին վերաբերող գործերը: «*Քասսև*» համարվող շրջանները վերահսկվում էին շահական հատուկ աստիճանավորների *վեզիրների* կողմից: Պետության կենտրոնացման քաղաքականության շրջաններում բաղկացուցիչ մասն էր հանդիսանում շահապատկան և պետական հողերի հարաճուն ավելացումը:

Դա հնարավորություն էր տալիս, որ շահի գանձարան հոսեն հսկայական հարստություններ<sup>86</sup>:

Իրանի պատմության մեջ առանձնացվում է Մեֆյան հարստության վարչական կառույցի զարգացման երեք շրջան<sup>87</sup>: Առաջին շրջանը ընդգրկում է շահ Իսմայիլ Ա-ի գահակալությունից մինչև շահ Աբբաս Ա-ի գահակալությունն ընկած տարիները, երբ վարչական համակարգը գտնվում էր փոփոխությունների և կազմավորման փուլում: Այդ ընթացքում պետության պաշտոնյաների պարտականությունները հստակ որոշված չէին և հաճախ իրար էին խաչաձևվում: Երկրորդ շրջանը ներառում է շահ Աբբաս Ա-ի ողջ գահակալությունը, երբ վերջինս փոփոխության ներթարկելով երկրի վարչական կառույցը՝ հիմնականում նոր հիմքերի վրա դրեց այն՝ խիստ ամրացնելով նրա վարչատնտեսական համակարգը: Իսկ երրորդը՝ Մեֆյան պետության աստիճանական թուլացման և անկման շրջանն է, որ սկսվում է շահ Մեֆի Ա-ի գահակալությունից և ձգվում մինչև Մեֆյան պետության կործանումը:

Առաջին շրջանում իշխանությունները առավելապես վարում էին նվաճողական ու ինքնահաստատման քաղաքականություն: Իշխող համակարգը ռազմական կողմնորոշում ուներ, որով համեմատաբար պակաս դերակատարություն էր վերապահում երկրի վարչական կառուցակարգի զարգացման գործընթացին: Մեֆյան հարստության սկզբնավորման ու ձևավորման ժամանակաշրջանում կրոնական, քաղաքական և զինվորական կառույցները հստակ տարանջատված չէին և շարունակ

<sup>84</sup> بیتر جسون / لورنس لاکهارت، تاریخ ایران کمبریج (جلد ششم، قسمت دوم) دوره صفوی، ترجمه: تیمور قادری، تهران، انتشارات مهتاب، 1387، ص. 212.

<sup>85</sup> St. u ստորև, էջ 84:

<sup>86</sup> Բայբուրդյան Վ., Իրանի Պատմություն (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 327-328:

<sup>87</sup> بیتر جسون / لورنس لاکهارت، تاریخ ایران، ص. 218.

միջամտում էին միմյանց գործունեությանը<sup>88</sup>։ Սեֆյան շահ Իսմայիլի գահակալության վերջին տարիներին սկսած, ինչպես նաև նրա հաջորդների իշխանության ժամանակաշրջանում այդ կառույցները աստիճանաբար ընդարձակվեցին, ձևավորվեցին զանազան պաշտոններ, որոնք ունեին իրենց որոշակի պարտականությունները։ Սեֆյան հարստության ռազմական հենարանը ղզլբաշական զեղերն էն, որոնց ավագանին սկզբնական շրջանում զբաղեցնում էր կարևորագույն զինվորական պաշտոնները։

Շահ Աբբաս Ա-ն իր գահակալության ժամանակ խիստ թուլացրեց ղզլբաշներին, ուժեղացնելով երկրի կենտրոնական իշխանությունը և վարչական կառույցը։ Նա տարանջատեց աշխարհիկ և կրոնական իշխանությունները, որով վարչական կառույցը ստացավ ամբողջական տեսք։ Ղզլբաշական ուժերի թուլացմանը զուգընթաց ուժեղացան վարչական աստիճանները, որոնք կարճ ժամանակահատվածում վերածվեցին բարդ կառույցների<sup>89</sup>։

Շահ Աբբասը ձգտում էր երկրում ստեղծել հասարակական և վարչական նպատակալաց կառույցներ։ Շահ Աբբաս Ա-ը գիտակցում էր, որ եթե երկրի հնագույն հզոր զինվորական բազուկի՝ ղզլբաշների թուլացումն ու վերացումը հետևածվի, սպա այն վնասելու էր պետության հզորությանը և կայունությանը։ Այդ գործընթացը խթանելու նպատակով նա ստեղծեց իրեն ենթարկվող նվիրյալների վստահելի մի կառույց՝

բաղկացած շահսենների զինվորական խմբերից, որի մեջ ընդգրկվում էին գանին հավատարիմ ղզլբաշները<sup>90</sup>։

Նա ստեղծեց մի գորեղ վարչատնտեսական համակարգ, որը պետք է ապահովեր երկրի տնտեսական զարգացումն ու բարգավաճումը։ Շահ Աբբաս Ա-ն իր տնտեսական ծրագրերի իրականացման ծիրում արտաքին առևտրի մենաշնորհը և արջուկի արհեստանոցների հսկողությունը ևս կենտրոնացրեց իր ձեռքում։ Շահ Աբբաս Ա-ի կառավարման տարիներին Սեֆյան Իրանը դարձավ հզոր կենտրոնացված պետություն, որն իրենից ներկայացնում էր տիպիկ արևելյան բռնապետություն, որտեղ առաջին և վերջին խոսքը պատկանում էր ինքնակալին։ Նա անսահմանափակ իրավունքներով օժտված տիրակալ էր։ Թեև երկրում գործում էր «բարձրագույն խորհուրդ» կոչված խորհրդակցական մարմինը, սակայն նրա անդամները նշանակվում էին շահի կողմից և, բնականաբար, չէին կարող դեմ գնալ նրա կամքին<sup>91</sup>։

Նահանգների կառավարումն իրականացվում էր շահի կողմից նշանակված *բեկլարբեկերի* կողմից։ Այդ հանգուցային և կարևոր պաշտոնում սովորաբար նշանակվում էին կամ շահի մերձավորագույն ազգականները, կամ շահին հավատարիմ ազնվականության աչքի ընկնող ներկայացուցիչները, որոնք տարիներին ընթացքում ապացուցել էին իրենց անձնական նվիրվածությունը շահին։ *Բեկլարբեկերն* իրենց ձևերում էին կենտրոնացնում նահանգների ինչպես վարչական, այնպես էլ ռազմական իշխանությունը։ Հետևելով հին իրանական ավանդույթներին՝ շահը բեկլարբեկերի իշխանությունը սահմանափա-

<sup>88</sup> پيتر جکسون/ لورنس لاکهارت، تاريخ ايران، ص. 219.

<sup>89</sup> پيتر جکسون/ لورنس لاکهارت، تاريخ ايران، ص. 230.

<sup>90</sup> خلیلی نسیم، تاريخ صفویه، تهران، انتشارات ققنوس، 1387، ص. 68-72.

<sup>91</sup> Բայրության Վ., նշվ. աշխ., էջ 325:

կելու և նրանց մշտական հսկողության տակ պահելու նպատակով վերջիններին մոտ կշանակում էր տեղակալ (ջանեշին), որն անմիջականորեն ենթարկվում էր ո՛չ թե բեկլարբեկին, այլ շահին և հանդիսանում էր նրա «այքը», «ականջը» և «լեզուն»: Նա բեկլարբեկի վարքագծի և նահանգում ամեն մի անցուդարձի մասին գաղտնի տեղեկություններ էր հաղորդում շահին: Ի դեպ, նման ֆունկցիա կատարող մարդկանցից ջանեշինը միակը չէր: Բեկլարբեկի շրջապատում կային մեծ թվով հայտնի ու անհայտ աստիճանավորներ, որոնց գործը լրտեսելն ու շահին ամեն ինչի մասին իրագելն դարձնելն էր:<sup>92</sup> Այդ համակարգի շնորհիվ շահը ժամանակին կարողանում էր ճշել բեկլարբեկների կողմից ամեն մի խտրության կամ ապստամբության փորձ:

Շարդենը գնահատանքով է արտահայտվում շահ Աբբաս Ա-ի կողմից երկրի ղեկավարման համար կիրառված եղանակի մասին ու ամիսսանքով՝ նրա կորստի կապակցությամբ. «Նա արդար թագավոր էր, որ աշխատում էր իր երկրի և ժողովրդի բարօրության և երջանկության համար: Նա երկրի ղեկավարությունը ստանձնեց այն ժամանակ, երբ երկիրը ավիրված և թալանված էր: Այդուհանդերձ այն ձեռքբերումները, որ նա կարողացավ ունենալ իր թագավորության ընթացքում, անգնահատելի էր, սակայն, դժբախտաբար, երբ այս հզոր թագավորը հեռացավ կյանքից, երջանկությունը ևս երես թեքեց երկրից»:<sup>93</sup> Շահ Աբբաս Ա-ի մահից հետո մինչև աֆղանների կողմից

Մսլանսի գրավումը Մեֆյան հարստությունը աստիճանաբար մոտենում էր իր անկմանը:

Երրորդ շրջանում երկրի ուժերի վերադասավորումը ամբողջացավ: Զինվորական ուժերը թուլացել էին և այլևս անընդունակ էին դիմակայել բելուջների և աֆղանների հարձակումներին: Զինվորական ուժերի թուլացմանը զուգահեռ թուլացել ու անգործունակ մեքենայի էին վերածվել նաև երկրի վարչական կառույցները<sup>94</sup>:

Մեֆյան պետության զարգացման երրորդ շրջանում զգալիորեն տարանջատվեցին կրոնական և աշխարհիկ կառույցները: Կրոնական դասը, որն այլևս լիովին չէր գտնվում աշխարհիկ հսկողության ներքո, սկսեց ամրապնդել իր դիրքերը: Նրանց դերակատարության ուժեղացումը ավելի նկատելի դարձավ Մեֆյան երկու թույլ գահակալներ շահ Մուլեյմանի և շահ Մուլթան Զուսեյնի գահակալության օրոք, որոնց միասնական գահակալությունը կազմում է շուրջ քառասունվեց տարի (1666–1722 թթ.)<sup>95</sup>:

Մեֆյան իշխանության հարկային քաղաքականության կապակցությամբ Շաայի Հասան Ջալալյանցի «Պատմություն Համառուս Աղուանից երկրի» աշխատության մեջ հանդիպում ենք հետևյալ տեղեկության, ուր հեղինակը ժամանակի պարսիկ իշխանավորների վերաբերմունքի վերաբերյալ նկատում է. «Չայս ամենայն, գոր գրեցաք՝ նորահնար չարիք էր, գոր եղին ի վերայ առացնոյ սահմանեալ հարկացն, որ և առացինն էս ծանրագոյն էր բեռն ի վերայ ժողովրդեան, այժմս փոխանակ թեթեացու-

<sup>92</sup> Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 325, 326:

<sup>93</sup> فرير رائد دهبو، برگزیده شرح سفرنامه شاردن ترجمه: حسین هزیریان/ حسن امدی، تهران، نشر فرزان، 159-158. روز، 1388. صص. (Ronald W. Frier, Bargoziideh Safarnameh Sharden, tarjome Hosein Hazhirian/ Hassan Asadi, Tehran, nashre Farzan rouz, 1388, pp. 158-159).

<sup>94</sup> 230. پيتر جسون/ اورس لاکهارت، تاريخ ايران، ص.

<sup>95</sup> Նույն տեղում, էջ 230-231:



ցանելոյ, զայս քան ևս յաւելին ի վերայ»:<sup>96</sup> Իրանական պետության կառավարման համակարգի թուլացման պատճառների վերաբերյալ Եսայի Հասան Ջալալյանի դիտարկած հանգամանքը ևս համակարգի ուժճացման գործընթացի պայմաններում հանդիսացավ այն գործոնը, որն արագացրեց պետության կազմաքանդման գործընթացը:

Սեֆյան հարստությունը տասնութերորդ դարի առաջին տասնամյակներում տնտեսական, քաղաքական և գաղափարական դիտանկյունից ճգնաժամի մեջ էր գտնվում: Պետության ֆինանսական խնդիրները և իշխող խավի մեջ տեղի ունեցող հակամարտությունները թուլացրել էին ևս երկրի ռազմական վրացի բարձրաստիճան զինվորական ղեկավարները, զինալայկոնների համայնքները, սուննի քոչվոր ցեղերը, որոնք ապրում էին կայսրության սահմաններում և կովկասյան վիլայեթներում, Բելուջեստանում, Խուզիսթանում և Աֆղանստանում, քաղաքականապես օտարված էին և հաճախ չէին ենթարկվում կենտրոնական իշխանությանը: Մի փոքրիկ աֆղանական բանակ կարողացավ 1722 թվականին կործանել Սեֆյան հարստության հիմքերը, և վիլայեթներում տեղակայված բանակներից ոչ մեկը չօժանդակեց և օգնության ձեռք չմեկնեց շրջափակման մեջ գտնվող Սեֆյան շահին: Վերջին տասնամյակների ընթացքում անուշադրության մատնված բանակը, կուտակված ներքին անհանդուրժողականության պատճառով որևէ միջոցի ձեռնարկելը անիմաստ էր համարում<sup>97</sup>:

Իրանում պետության կառավարման գործը կազմակերպելու համար գոյություն է ունեցել ուղեցույցների պատրաստման ավանդույթը: Պարսկական այդօրինակ հին աղբյուրներից է կոլե Նասիր ալ-Թուսի Նիզամ ալ-Մուլքի «Միասաթ-նամեն», որը Սկյուդկյան պետության վարչակառավարման ու հարկային համակարգն արտացոլող կարևոր աղբյուրներից է, նաև Համդալյան Մուսթավֆի Ղազվինիի կողմից գրված «Նուզհաթ ալ-դուլլը», որը վերաբերվում է Իրանի մոնղոլական ժամանակաշրջանի աշխարհագրական բաժանումներին և հարկահանման եղանակին: Երկրի կառավարման համար Սեֆյան հարստության ժամանակաշրջանում ևս գոյություն են ունեցել վարչական կառավարման ուղեցույցներ և կանոնակարգեր:

Սեֆյան հարստության գահին տիրացած աֆղանների համար իխստ աներաժեշտ էր պետական կառույցի ղեկավարման և վարչական բաժանումների շուրջ ձեռք բերել համապատասխան գիտելիքներ և տեղեկություններ: Նրանց թվում էր, որ նման ուղեցույցների օգտագործումը կնպաստի երկրի վարչական կայունության, ղեկավարման գործընթացը արդյունավետ իրականացնելուն, որի միջոցով հնարավոր կլինի վերադարձնել երկրի նախկին փառքը:<sup>98</sup> Նմանօրինակ պահանջից ելնելով գրի առնվեց «Թագքիթաթ ալ-մուլուք» (Արքաների հիշատակարան) աշխատությունը, որը վերաբերում է Իրանում վարչական համակարգի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների հիմնահարցերին այն ժամանակաշրջանում, երբ Սեֆյան պետական համակարգն արդեն ճգնաժամի մեջ էր, արքունիքը գրավված էր աֆղանների կողմից, ինչի արդյունքում երկրի նոր կառավարում

<sup>96</sup> Եսայի Հասան Ջալալյանց, Պատմութիւն Համառօտ Ազունանից երկրի, Էրուսաղէմ, 1868, էջ 16:

<sup>97</sup> Գորան Ջան, مقاومت شكننده تاريخ تحولات اجتماعى ايران (از سويوه تا سالهاى پس از انقلاب اسلامى), ترجمه: احمد تدئين, تهران: انتشارات مؤسسه خدمات فرهنگى ققنوس, 1377, ص. 159.

<sup>98</sup> يوسف رحيم لوء، مقاله: معنى تازہ باب در سازمان ادارى حكومت صفوى، نشریه دانشكده ادبيات و علوم انسانى دانشگاه تبريز، شماره 133، صص. 10-9.

ձևավորելու նպատակով անհրաժեշտություն էր առաջացել համակարգված ուսումնասիրելու և ներկայացնելու Սեֆյան պետականության հիմնական սկզբունքները աֆղանների կողմից դրանք օգտագործելու նպատակով: Աշխատությունը գրվել է 1726 թվականին Աշրաֆ Աֆղանի հրամանով և Սեֆյան Իրանի վարչական կառույցի ծալքերին լավատեղյակ պաշտոնյա Միրզա Սամի'այի կողմից: Պարսիկ գիտնական զոկտ. Մուհամմեդ Թալի Դանեշվահաժուհը գրքի հեղինակ Միրզա Սամի'այի մասին գրում է՝ «Հավանաբար Թագբիրաթ» ալ-մուլուքի անհայտ հեղինակ Միրզա Սամի'ան նույն ինքը Ամիր Մուհամմեդ Սամի ֆարխանեն է, Սեֆյան շրջանի «Ռուսթամ ալ-թավարիխ» պատմագրական աշխատության հեղինակ Ամիր Շամսեդդին Մուհամմեդ ֆարխանեի եղբայրը, որի տղան Ամիր Մուհամմեդ Հուսեյնը և թողը Աղա Մուհամմեդ Հաշեմ Ասեֆ Հուսեյնին հայտնի էր Ռուսթամ ալ հոքամա անունով»: Այսպիսով, Դանեշվահաժուհը բացահայտում է, որ Միրզա Սամի'ան «Ռուսթամ ալ-թավարիխի» հեղինակի հետ անմիջական ազգակցական կապ է ունեցել»<sup>99</sup>:

«Թագբիրաթ ալ-մուլուքում» ներկայացված են Սեֆյան Իրանի վարչական կառուցվածքը, Սեֆյան կենտրոնական ապարատի ու շրջաններում գործող պաշտոնյաների գործառույթներն, հասարակության մեջ եղած բաժանումները, ուր տեղեկություններ կան ժամանակի տնտեսական հարաբերությունների վերաբերյալ, նշվում են մարզերի հարիմների պարտականությունները, եկամուտները և նրանց կողմից վճարվող հարկերը, տեղեկություններ և վիճակագրական սվյալներ են հաղորդվում քա-

ղաքներում տեղակայված զինվորական ուժերի և կառույցների եկամուտների, ծախսերի և պաշտոնյաներին վճարվող աշխատավարձերի մասին: Գիրքը բաղկացած է հինգ գլխավոր բաժիններից, ուր խոսվում է պաշտոնատար անձանց և նրանց նկատմաների աշխատանքների և պատասխանատվությունների մասին: Կրոնական պաշտոնների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ նրանում եղած բացատրությունները հակիրճ են, սակայն բավականաչափ լուսաբանող: Գիրքը արտացոլում է Սեֆյան հարստության անկման ժամանակաշրջանը, քանի որ դիվանական պաշտոնների բաժանումների մեջ նշվում է մուլաբաշի պաշտոնը, իսկ այդ պաշտոնը ձևավորվել էր Սեֆյան շան Սուլթան Հուսեյնի գահակալության վերջին տարիներին:

Երկրի ղեկավարման համար Սեֆյան տիրակալների ձևավորված իշխանության նպատակն էր կառավարումը ամբողջությամբ կենտրոնացնել շահի ձեռքում՝ սահմանելով ներքին և արտաքին խիստ հսկողություն, ձևակերպել վարչական ղեկավարման համար տր և կազմակերպված համակարգ: Այդ համակարգի օգնությամբ վերահսկել երկրի ներքին կյանքը ամենայն թախանդությամբ, որի շնորհիվ ավելի քան երկու դար Սեֆյան իշխանավորներին հաջողվեց ղեկավարել երկիրը: Այսպիսով, այդ համակարգը արտացոլող և ժամանակի սկզբնաղբյուրների մեջ լավագույն կերպով նկարագրող աշխատություններից է «Թագբիրաթ ալ-մուլուք» երկը:

«Թագբիրաթ ալ-մուլուքից» գատ Սեֆյան ժամանակաշրջանից պահպանվել է «Ղասթուր ալ-մուլուք» (Թագավորների կար-

<sup>99</sup> دانش پژوه محمد تقی، مقاله: دستورالملوک میرزا رفیعا و تذکره الملوک میرزا سمیعا، منبع: زبان و ادبیات مجله دانشکده ادبیات و علوم انسانی دانشگاه تهران، مرداد 1347، شماره 63 و 64، ص 476

գը)<sup>100</sup> աշխատությունը, որը ևս ներկայացնում է ժամանակաշրջանի վարչակառավարման համակարգը: Այն առաջին անգամ իրանցի պատմաբան Դանեշիաժուհի աշխատասիրությամբ երեք հատվածներով հրատարակվել է «Թեհրանի պետական համալսարանի» պատմաբանասիրական ֆակուլտետի պարբերականի մեջ: «Դասթուր ալ-մուլուքի» հեղինակն է Մուհամմեդ Ռաֆի՛ Անսարին, կամ ինչպես նրան կոչել են ժամանակին՝ Միրզա Ռաֆի՛ան: Գրքի հեղինակն այն պատրաստել էր նախքան աֆղանների կողմից Սպահանի գրավումը, շահ Մուլթան Հուսեյնի գահակալության ժամանակաշրջանում (1694-1722 թթ.): և նրա անունից: Միրզա Ռաֆի՛ան գրադեցրել է *մուսթավֆի ալ-մամալեքի* պաշտոնը:

Իրանցի հետազոտող դոկտ. Մուհամմեդ Թաղի Դանեշիաժուհը գրում է. «Նմանատիպ աշխատությունների պատրաստումը ընդունված է եղել կազմել Սեֆյան յուրաքանչյուր գահակալի օրոք և դրանք գրվել են ժամանակի գահակալող շահի անունից: Երկու աշխատություններն էլ (խոսքը «Դասթուր ալ-մուլուքի» և «Թագքիթաթ ալ-մուլուքի» մասին է) գրվել են մինևույն սկզբնաղբյուրի հիման վրա, որը հսկանաբար ավելի ծավալուն է եղել և յուրաքանչյուրի մեջ գոյություն ունի տեղեկություն, որ մյուսի մեջ բացակայում է, ուստի Սեֆյան ժամանակաշրջանի վարչական և հասարակական պատմության ուսումնասիրության դիտանկյունից երկու սկզբնաղբյուրների տեղեկությունները միասնաց լրացնում են<sup>101</sup>», որով ենարավոր է

դրանում ավելի ամբողջական պատկերացում կազմել Սեֆյան Իրանի վարչական պատմության և նրա զարգացման գործընթացի վերաբերյալ:

«Դասթուր ալ-մուլուքը» ժամանակաշրջանի հասարակական, տնտեսական և քաղաքական բազմաթիվ հարցեր ընդգրկող աշխատություն է, որը հանդիսանում է Սեֆյան Իրանի պետականավարման կառուցվածքի համապարփակ տեղեկագիր, ներկայացնելով ղեկավարման կառույցի գործընթացներն ու ծանրանալով հիմնականում հետևյալ խնդիրների վրա՝ երկրի տնտեսության և երկրագործության վիճակի բարելավման, ղեկավարման, վարչական գործընթացի և զինվորական կառույցի ու նրա ատոլիանակարգության վերաբերյալ: Այն կարևոր է նաև երկրի քաղաքական աշխարհագրությանը, ժամանակաշրջանի պաշտոնների և աշխատանքների, ինչպես նաև նրանց եկամուտների և տնտեսական իրավիճակի շուրջ իր կարևոր և օգտակար մատրասների ու տեղեկությունների պարունակությամբ<sup>102</sup>:

Վերջին շրջանում այդ երկու աշխատություններից գառ, նմանօրինակ թեմայով երեսն է եկել և շրջանառության մեջ դրվել մի այլ կարևոր աղբյուր ևս: Այն հրատարակվել է Յուսեֆ Ռախիմի ջանքերով 1992 թվականին և կոչվում է՝ «Ալդաթ վա մավաջե-ե դորեն-ե սալաթին-ե Մաֆալի» (Սեֆյան միապետների ժամանակաշրջանի պաշտոնների անվանումները և վարձատրությունները):<sup>103</sup> Այս աշխատության հեղինակը Միրզա Ալի Նադի Նասիրին է, որը շահի *մաջլեսնեխս*<sup>104</sup> է եղել: Գիբը

<sup>102</sup> دانش یزوه محمد تقی، دستورالملوک، صص. 495، 504.

<sup>103</sup> میرزا علی تقی نصیری، القاب و مواجب دوره سلاطین صفوی، تصحیح دکتر یوسف رحیم لو، انتشارات دانشگاه فردوسی، مشهد، 1371.

<sup>104</sup> Սեֆյան վերջին շահի Շահ Մուլթան Հուսեյնի (1105/1694-1135/1722) *մաջլեսնեխս* է եղել:

<sup>100</sup> میرزا رفیعا، دستور الملوك، به كوشش و تصحيح محمد اسماعيل مارچينكوفسكى، ترجمه على كرابايدى، با مقدمه منصور صفت گل، به سفارش مركز اسناد و تاريخ ديپلوماسى، تهران، وزارت امور خارجه، مركز چاپ و انتشارات، 1385، مقدمه اول.

<sup>101</sup> دانش یزوه محمد تقی، دستورالملوک، صص. 484.

ամբողջությամբ չի պահպանվել, ու նրա սկզբնական բաժնի էջերից որոշ հատվածներ պակասում են: Այնուամենայնիվ երկը մյուս երկու աշխատությունների համեմատությամբ զանազանվում է նրանով, որ տվյալ աշխատության մեջ կատարվում են արժևորումներ պաշտոնը կրող անհատների և նրանց ժամանակաշրջանի ու իրավիճակի վերաբերյալ: Այդ աշխատությունը լրացնում է «Թագքիրաթ» ալ-մուլուքի» և «Դասթուր ալ-մուլուքի» արժեքավոր տվյալները ժամանակաշրջանի պաշտոնների վերաբերյալ:

Ժամանակաշրջանի պաշտոնների և նրանց գործառույթների մասին բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել պատմական վավերագրերում, որոնք մեծ արժեք ունեն պատմական իրականության ոչ միայն բնութագրման, այլև վերաարժեքավորման և ժամանակաշրջանի վարչական պատմության իրականության արտացոլման տեսակետից: *Քալանթարի* պաշտոնի վերաբերյալ հետաքրքրական մանրամասներ է բովանդակում Իրանի ազգային գրադարանի վավերագրերի ազգային կենտրոնում պահպանվող շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակը, որով Միրզա Մուհամմեդ Ջաբերին նշանակվում է Սպահանի *քալանթար*: Հրովարտակը կարևոր է Սեֆյան շահերի կողմից ենթականերին պաշտոնի նշանակման եղանակի և պարտականությունների գատորոշման ու նրանց պարտականություններին ծանոթանալու տեսանկյունից: Նշանակելով վերոհիշյալին այդ պաշտոնում՝ նրան հրահանգվում էր՝ «... որպեսզի նա, կատարելով իր պարտականությունները, բարեխղճորեն վերահսկի, որ ուժեղների կողմից թույլերը և ենթակաները ճշման չենթարկվեն... Իսկ մայրաքաղաքի բոլոր *ղազիները* և բնակիչները, պետք է նշված քալանթարին իրենց գլխավորը համարելով, ենթարկվեն նրա խոսքին ու որոշումներին և

չիրաժարվեն այդ բոլորից, ինչպես նաև արհեստների վարպետները, գյուղապետերը և շրջանների գլխավորները սուսնց նրա գրավոր թույլտվության որևէ հարցում իրենց ենթակաների նկատմամբ ինքնազուրկ որոշումներ չկայացնեն, քանի որ նրա միջոցով է կատարվում այդ անհատների պաշտոնների փոփոխության իրավունքը...»<sup>105</sup>: «Թագքիրաթ» ալ-մուլուքի» մեջ Սպահանի քալանթարի պարտականությունների վերաբերյալ տեսնում ենք մոտավորապես նույն բացատրությունը, ինչ վերը մեջ բերված վավերագրում: Փաստորեն վավերագիրը գալիս է հաստատելու ժամանակաշրջանի սկզբնադրուր «Թագքիրաթ» ալ-մուլուքի» մեջ պահպանված տեղեկությունը քալանթարի պաշտոնի վերաբերյալ:

Ժամանակի հայ հեղինակների մոտ ևս վարչական պատմության և «Թագքիրաթ» ալ-մուլուքի» բովանդակությամբ կապվող նյութերի կապակցությամբ հանդիպում ենք որոշ ակնարկների: Հայ հեղինակները տեղեկություններ են հաղորդում ժամանակի մի շարք պաշտոնների վերաբերյալ: Եսայի Հասան Ջալալյանը իր աշխատության մեջ անդրադարձել է դրանցից մի քանիսին, որոնց մեջ հանդիպում ենք նաև «Թագքիրաթ» ալ-մուլուքի» մեջ. «Եւ դարձեալ որպէս սովորութիւն է Պարսից իշխանութեան՝ յամենայն քաղաքս տէրութեան իւրեանց, և ի վերայ ամենայն երկրի, պետս և գլխաւորս զօրաց կացուցանել, որպէս *խան, սուլդան, դուլբեկի, վեզիր, դարուդայ, և թիռլուտար*»:<sup>106</sup>

<sup>105</sup> Իրանի ազգային գրադարանի վավերագրերի ազգային կենտրոնում վավերագիր համար 997-61:

<sup>106</sup> Եսայի Հասան Ջալալյանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 16:

## Մեֆյան Իրանի վարչական բաժանումները:

Հետաքրքրական են «Թագքիրաթ ալ-մուլուքի» տեղեկությունները Մեֆյան Իրանի անկման ժամանակաշրջանի սահմանների և վարչական բաժանումների վերաբերյալ: Ինչպես հայտնի է, գրքում երկիրը բաժանված է չորս գլխավոր վիլայեթների և տասներեք բեկլարբեկությունների: Երկրի հարավում՝ Արաքստանի, հարավ արևմուտքում՝ Լուրիստանի, հյուսիսում՝ Վրաստանի, իսկ արևմուտքում Քուրդիստանի վիլայեթներն էին գտնվում: Համաձայն «Թագքիրաթ ալ-մուլուքի», Մեֆյան Իրանի բեկլարբեկությունները 13-ն էին. «Առաջին՝ Ղանդահար, երկրորդ՝ Շիրվան, երրորդ՝ Հերաթ, չորրորդ՝ Ագարբայջան, հինգերորդ՝ Չուխուր-Սաադ<sup>107</sup>, վեցերորդ՝ Ղարաբաղ և Գյանջա (Գանձակ),

<sup>107</sup> Չուխուրսադ կամ Երևանի վիլայեթի կուսակալությունը (վիլայեթ, խանություն, փաշայություն, բեկլարբեկություն, սարդարություն) ձևավորվել է կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում: Թուրքմենական մի քանի ցեղեր XIV դարի վերջերին արդեն միավորված էին ոմն Ամիր-Սաադի իշխանության ներքո, և դրանք իրենց ցեղապետի անունով հետագայում կոչվեցին սաադյուններ: Երևանունով են կոչվել նաև այդ ցեղերի բնակության շրջանները՝ հին Արշարունիք կամ Երասխաձոր (այժմ Կաղզվան), Ճակատք (Սուրմալու) ու մասամբ Մասյացոտն գավառները և հարակից մի քանի շրջաններ: Դրանք բոլորը միասին կազմեցին մի կուսակալություն, որը Ամիր-Սաադի անունով օտարները կոչեցին Չուխուր-Սա'դ կամ Չուգուր-Սաադ, իսկ հայերը՝ Սաաթի փոս կամ Մահաթափոս (Մաադիփոս): Հ Փափազյանը, վկայակոչելով Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային ֆոնդերից մի կալվածագիր (Մաթոթիկուսական դիվան, թղթապանակ 1 գ, վավ, 1004), գրում է, որ «Չուխուր-Սա'դ» անվան առաջին հիշատակությունը, ինչքանով մինչև այժմ է հայտնի, վերաբերում է 1428 թվականին, միաժամանակ նշելով, որ այդ անունը պետք է տրված լիներ Ամիր-Սաադի կենդանության օրոք՝ XIV դ. վերջերին: Մեզ հետաքրքրող ժամանակների պարսկական մատենագրության մեջ «Չուխուր-Սաադը» թարգմանվել է «Երջանիկ փոս» կամ «Երջանիկ հովիտ» իմաստով: Այդ

յոթերորդ՝ Ագարաբադ, ութերորդ՝ Քոնգիլուխ, իններորդ՝ Քիրման, տասներորդ՝ Մերվ Շահիջահան, տասներկերորդ՝ Ալիշաբար, տասներկերորդ՝ Սուրբ Մեշհեդ և տասներեքերորդը՝ թագավորանիստ Ղազվին»<sup>108</sup>

Մեֆյան Իրանի ներքին բաժանումների կապակցությամբ այլ հիշատակության ենք հանդիպում Կրուսինսկու ճամփորդական հուշագրության մեջ: Կրուսինսկին նշում է. «Մեֆյան շահ Իսմայիլի ժամանակից մինչև շահ Սուլթան Հուսեյնի ժամանակաշրջանը երանք ղեկավարել են տասներկու երկիր, Առաջին Իրաքը (աջեմի), երկրորդ՝ Խուզիսթան, երրորդ՝ Լուրիստան, չորրորդ՝ Ֆարս և Քերման, հինգերորդ՝ Մեքրան, վեցերորդ՝ Սեմսան, յոթերորդ՝ Ղանդահար, ութերորդ՝ Ջաբրիլեթան, իններորդ և տասներորդ՝ Խորասան և Մազանդարան, տասներորդ Գիլան, տասներկերորդ՝ և տասներկուերորդ՝ Ագարբայջան,

կուսակալության Չուգուր-Սաադ անունը գործածական է եղել պարսկական ու թուրքական մատենագրության մեջ: Մեր աղբյուրները, ինչպես սովեթ. Չուգուր-Սաադ վիլայեթը սովորաբար կոչել են Մահաթափոս: Օտարածին այդ անունների հետ մրա-դի գործածության մեջ էին մնացել նաև հին հայկական վարչատերիտորիալ միավորների՝ Արարատյան երկրի, Կոտայք գավառի և այլոց անունները, որոնք չնայած տերիտորիալ իմաստով լիովին չէին համընկնում նշվածների հետ: Չուգուր-Սաադը, Մահաթափոսը, Արարատյան երկիրը և մյուսները գործածությունից դուրս էին եկել, դրանցից միայն առաջինը շարունակվում է որոշ չափով գործածական մնալ թուրքական ու պարսկական աղբյուրներում՝ ընդհուպ մինչև Արևելյան Նայաստանը Ռուսաստանին միացնելը: (Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1500—1800 թթ.), Երևան, 1971, էջ 139):

<sup>108</sup> 5. میرزا سیدعلی، تذکره الملوك، تهران، انتشارات امیرکبیر، 1368، ص. 5.

որը բաղկացած է Երևանից և Շիրվանից, ինչպես նաև Վրաստանից ու Դաղստանից»<sup>109</sup>

Երկրի վարչական բաժանումների հարցում ժամանակաշրջանի այլ աղբյուրների բովանդակած տվյալները մասնակի կերպով տարբերվում են «Թագքիրաթ» ալ-մուլուքի» տեղեկություններից: Կրուսինսկու հիշատակած տարբերակում նախ նշվում են տասներկու երկրի (կամ վիլայեթի) անուն «Թագքիրաթ ալ-մուլուքի» տասներեք բեկլարբեկության փոխարեն, որոնցից միայն երեքը՝ Քերմանը, Խորասանը («Թագքիրաթի» մեջ Սուրբ Մեշհեդ) և Ագարբայջանը «Թագքիրաթի» մեջ հիշատակված բեկլարբեկությունների ցանկից են: «Թագքիրաթում» հայկական տարածքները նշվել է Չուխուր-Սաադ անունով, իսկ Կրուսինսկին նրանց ընդգրկել է Ագարբայջանի վիլայեթի և նրան ենթակա շրջանների կազմի մեջ «Երևան» անվանումով:

Այս հանգամանքը պայմանավորված է թերևս այն իրողությամբ, որ 15-րդ դարից Թավրիզ կենտրոնով «Ագարբայջան» վարչական միավորի մեջ էին ներառվում հարակից «հին Աղվանքն ու Պատմական Հայաստանի Արցախ և Մյունիք նահանգներն ամբողջությամբ և Վասպուրական ու Այրարատ նահանգների պրնեյան գավառների մեծ մասը»<sup>110</sup>: Մեֆյան ժամանակաշրջանում Ատրպատականում պաշտոնավարող վեզիրին հաճախ հանձնարարվում էր այդ շրջանի բեկլարբեկի հետ միասին քննել ու արգելել Դարբադի ու Չուխուր-Սաադի բեկլարբեկությունների տարածքում տեղի ունեցող անօրինակա-

նությունները<sup>111</sup>: Տվյալ դեպքում «Ագարբայջան» վարչական միավորը տանում էր ավելի լայն վարչական իմաստ, ինչպես «Արմենիա» վարչական միավորը Արաբական խալիֆայության կազմում, որն ընդգրկում էր ամբողջ պատմական Հայաստանը, նաև Աղվանքն ու Վրաստանը մինչև Կովկասյան լեռնաշղթա<sup>112</sup>: Շարդենի ուղեգրության մեջ նշվում է, որ հարկային առումով Սեֆյան Պարսկաստանը բաժանված էր չորս մասի. Իրաք, Ֆարս, Ագարբայջան և Խորասան<sup>113</sup>: Իսկ «Թագքիրաթ ալ-մուլուքում» վերոհիշյալ բաժանումը արտահայտված է չորս ավարջե-նիխներին հատկացված մասում<sup>114</sup>:

Բացի այդ, Շարդենի կողմից վարչական բաժանումների կառավարությամբ պահպանված հիշատակության մեջ կարդում ենք. «Իրանցի աշխարհագրագետները երկիրը բաժանել էին քսանչորս էյալեթների (վիլայեթների), որոնք բաղկացած էին հինգ հարյուր քառասուն զիսավոր կենտրոններից և վաթսուն հազար գյուղերից»<sup>115</sup>: Թեև Շարդենը չի նշել, թե որոնք են այդ քսանչորս էյալեթները, սակայն կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք Մեֆյան պետության ավելի փոքր վարչական միավորների հետ, ինչպիսիք են խանություններն ու սուլթանությունները:

<sup>109</sup> سفرنامه کرویستسکی ( یادداشت‌های کتشیس لهستانی عصر صفوی، ترجمه: عبدالرزاق دهبلی مفتون، 23 ص. 1363، تهران، Safarameh Khusinski (Yaddashthaye keshishe lahestani asre Safavi), tarjome Abdalrazage Denbeli Maftoun, Tehran, 1363, p. 23).

<sup>110</sup> Հ. Փավազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրեր, պրակ Ա, Երևան, 1968, էջ 144:

<sup>111</sup> Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտականք, պրակ III, Երևան, 2005, վավ. 24, 40, 45, 47, 52, 53, 55:

<sup>112</sup> Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 16, 132:

<sup>113</sup> Tadhkirat al-muluk, A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorovsky, London, printed by W. Heffer and sons LTD., 1943, p. 162.

<sup>114</sup> Տես ստորև, էջ 174-5:

<sup>115</sup> 54 Ronald W. Frier, Bargozideh (Ronald W. Frier, Bargozideh Sharh-e Safarameh-ye Sharden, p. 54).

Սեֆյան ժամանակաշրջանի մեկ այլ ճանապարհորդ Թավերիեն իր հուշագրության «Իրանի տարածքը և վիլայեթների բաժանումը» գլխում Սեֆյան Իրանի վարչական բաժանումների կապակցությամբ գրում է. «Ուրեմն կարելի է Իրանի իսկական վիլայեթները, նրանց գտնվելու վայրը և ներկա ժամանակում իրար նկատմամբ ունեցող հարաբերությունները և այդ վիլայեթների մեջ գոյություն ունեցող քաղաքների անունները թվարկել ըստ հետևյալի՝ առաջին՝ Հայաստանի (Արմանեսթանի) վիլայեթ, երկրորդ՝ Դիարբեքի, երրորդ՝ Քուրդիստան, չորրորդ՝ Արարական Իրաք, հինգերորդ՝ Աջամի (Պարսկական) Իրաք, վեցերորդ՝ Շիրվան, յոթերորդ՝ Գիլան և Մազանդարան, ութերորդ՝ Ասթարաբադ, իններորդ՝ Բաքթրիա (Bactriane) և Սոդդիանա (Sogdiane), տասներորդ՝ Խորասան, տասներկերորդ՝ Զարուլեսթան (Paropamisus), տասներկուերորդ՝ Մաջեսթան (Միսթան), տասներեքերորդ՝ Արախոսիա (Arachosie), տասնչորսերորդ՝ Մեքրան, տասնհինգերորդ՝ Քերման, տասնվեցերորդ՝ Ֆարսեսթան (կամ՝ Ֆարս), վերջին վիլայեթը Խուզիսթանն է։<sup>116</sup> Թավերիեն յուրաքանչյուր վիլայեթի անվան հետ նշում է նաև այն քաղաքներն ու շրջանները, որ ընդգրկված են տվյալ վիլայեթի կազմի մեջ։ Թավերիենի կողմից նշված վիլայեթների անունները համեմատելով «Թագրիբարթի» մեջ նշված չորս վիլայեթների ու տասներեք բնկլարբեկությունների հետ՝ հանդիպում ենք ութ նոր անունների, իսկ ամենից հետաքրքիրն այն է, որ նրա մոտ վիլայեթների անունների նշման առաջին տեղում է գտնվում Հայաստանը։

<sup>116</sup> سفرنامه تاورنیه، ترجمه: حمید ارباب شیرانی، انتشارات نیلوفر، تهران، 1382، صص 11-15.  
(Safarnameh Tavernieh, tarjome Hamid Arbab Shirani, entesharate Niloufar, Tehran, 1382, pp. 11-15).

Սեֆյան ժամանակաշրջանի Իրանի սահմանների հետ կապված ժամանակի հայ հեղինակների մոտ ևս հիշատակումներ են պահպանվել։ Եսայի Հասան Զալայանցի «Պատմություն Համառոտ Աղուակից երկրի» աշխատության մեջ հեղինակը ընդհանուր կերպով ներկայացնում է Սեֆյան Իրանի տարածքը՝ հատկապես մանրամասն կանց առնելով նրա մեջ ընդգրկված Կովկասյան տարածքների վրա. «Ընդ ժամանակս թագաւորութեան ազգին Պարսից՝ որ են կրօնիք Մահմետականի, յորում տիրելին բռնակալութեամբ՝ սկսեալ ի Կովկասային լեռնէ և ի յեզերաց Կասպիական ծովուն, (որ Երկաթի Դուռն կոչի,) մինչև ի Մազանդարան և Աստարապատ, և անտի սահմանօքն Զօգայեկու հասեալ ի Խորասան, և ի Ղանտահար բերդ, և անտի ձգեալ յեզր ծովուն Հնդկաց ի Բանտար քաղաք և այսր ի Շիրազ և միջոցաւ երկրաւ հասեալ մինչև ի Բաբելոն (այսինքն Պաղտադ.) անդէն և այսր հասեալ սահմանօք հասեալ մինչև ի Համաստան և ի ծովն Վանայ. Զորմէ և սահմանօքն Մարաց հասեալ ի Խոյ և ի Սալմաստ և Նախջաւանաւ հասեալ ի յԵրասխ գետ և անտի Սահաթիս Կաղզուանաւ և Կողբաւ անցեալ ի գետն Ախուրեան՝ որ կոչի Արփայ-չայի: Եւ անտի անցեալ Ղաղղուլի անուամբ նա հանգիւ և ի սահմանս Վրաց ի Տփլիսի քաղաք և ի Կախէթ՝ իւրովք բոլոր Թեմիսք և Թումանօք: Եւ ապա հաստանի ի լեռնս Կովկասու, (այսինքն՝ Դարբանդ,) և ի տեղի կայից գլխաւորի լեռնորդացն, զոր Շամխալն անուանեն, և անուն տեղոյ նորին Թարխու կոչեցեալ: Արդ՝ ի յայս միջոցի ծոցօց երկրիս արեւելեաց խառն ընդ հարաւ և ընդ հյուսիս կողմանս Եւրոպիոյ՝ տիրեալ էին ազգն Պարսից, որ Ղզլպաշն կոչիւր, ունելով զաթոռ և զգան արքայաւ նիստ մայրաքաղաքն Շօշ, (այսինքն է՝ Ասպահան) և անդ կալով

թագաւորացն՝ տիրեն և իշխեն վիճակեալ իւրոց հնազանդեաց  
ազգացն՝ ձգեալ յաջ և յահեակ գլեւս իշխանութեան իւրեանց»<sup>117</sup>:

Երկրի տնտեսական գործունեության և գանձվող հարկերի  
կապակցությամբ բեկլարբեկությունները բաժանվում էին ավելի  
փոքր հատվածների, որոնք կոչվում էին խանություններ: Գրքի  
մեջ մատնանշված վարչական միավորներից գատ նան նշվել են  
մի շարք անուններ, որոնք կապվում են ժամանակաշրջանի  
քոչվոր ցեղախմբերի հետ, որոնք նա իրենց հերթին վճարումներ  
էին կատարում պետությանը, և որոնց մասին նա գիրքը տեղե  
կություններ է պահպանել:

«Թագքիրաթ ալ-մուլուքի» վերջաբանի երկրորդ հոդվածը  
անդրադառնում է բեկլարբեկությունների եկամտուներին և  
աշխատողներին, ինչպես նաև հաքիմների և սուլթանների  
եկամտուներին, ծախսերին և այդ գործընթացը կազմակերպելու  
հանգամանքով պայմանավորված երկրի վարչական այլ  
բաժանումներին:

Մեֆյան Իրանի վարչական բաժանումների կապակցու  
թյամբ և, մասնավորապես, «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ եղած  
բաց թողումներից կարելի է նկատել այն պարագան, որ  
հիշատակված երկրորդ հոդվածի մեջ չորս վիլայետների  
(Խուզիսթան/Արաբստան, Լուրիստան, Վրաստան և  
Քուրդիստան) վալիությունների վարչական ներքին  
բաժանումների և նրանցից կատարված գանձումների  
վերաբերյալ որևէ նշումներ չկան: Իսկ երկրի վարչական  
բաժանումների քարտեզը հաշվի առնելով՝ նկատելի է, որ երկրի  
կենտրոնական մասը չի մտել որևէ վարչական շրջանի կազմի

մեջ, որի պատճառը թերևս նշված տարածաշրջանում գտնվող  
հակալական Լուր կոչվող անապատն է:

Վ. Մինոբակին իր աշխատության մեջ յուրօրինակ կերպով  
է անդադարձել Մեֆյան Իրանի վարչական բաժանումների  
հարցին, հիմք ընդունելով «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ նշված  
վարչական շրջանները, ներկայացնում է յուրաքանչյուր վարչա-  
կան շրջանը, մատնանշելով դրանց աշխարհագրական դիրքերը:  
Սակայն նրա կողմից կատարված ուսումնասիրության մեջ նկա-  
տելի են մի շարք բացթողումներ: Որոշ տեղանունների մասին  
նրա ուսումնասիրության մեջ որևէ տեղեկություն չի նշվել  
ինչպես Ռոքհան, Քարմուղ բնակավայրերի աշխարհագրական  
դիրքերի մասին, որոշ աշխարհագրական անուններ նրա կողմից  
չի գրվել գրքի մեջ մատնանշված եղանակով՝ օրինակ «Թուման-ե  
Նախիջևանը»<sup>118</sup> գրվել է «Նախիջևան» ձևով, «Ղալե-ե Բայեզիդը»  
(Բայեզիդի բերդ)՝ «Բայազիդ» ձևով<sup>119</sup>: «Թագքիրաթ ալ-մուլուքի»  
երկրորդ գլխի նախաբանում նշված Ղալամրո-ե Ալիշաքարի բեկ-  
լարբեկության մասին, վերջաբանի երկրորդ հոդվածում որևէ  
հիշատակում չենք նկատում, սակայն վերջաբանի հավելվածի  
երկրորդ հոդվածում Իրաքի և ենթակա շրջանների բեկլարբեկու-  
թյան համար նշված սահմանները (համաձայն Մինոբակու) նույն  
այդ Ղալամրո-ե Ալիշաքարին են վերաբերում<sup>120</sup>: Քուրդիստանը  
հիշատակվել է բեկլարբեկությունների կազմի մեջ<sup>121</sup>, այն ինչ

<sup>117</sup> Եսայի Նաան Զալալեանց, նշվ. աշխ., էջ 1, 2:

<sup>118</sup> Նախիջևանը իր շրջակա գավառներով, որ իլյանների ժամանակ  
առանձին «թուման» դասնադրվ, Մեֆլիների օրոք նա շարունակում էր  
կոչվել «Թուման-ե Նախիջևան» (Հայ Մոզավորի Պատմություն, հ. 4,  
Երևան, ՄՍՄ ԳԱ հրատ., 1972, էջ 251):

<sup>119</sup> Համեմատի իր Tadhkirat al-mulūk, p. 166, և 76-75. میرزا سمیعاً، تذکره الملوك، ص. 84

<sup>120</sup> 84. میرزا سمیعاً، تذکره الملوك، ص. 84

<sup>121</sup> Նույն տեղում, էջ 85:



Քուրդիստանը իրականում վախժայություն է: Իսկ Քոնզիլունեն հիշատակվել է Ֆարս անունով<sup>122</sup>: Ղազվին մայրաքաղաքը անվան տակ բերված *բեկլարբեկության* մասին որևէ հիշատակում չկա, փաստորեն հեղինակի կողմից ամբողջությամբ մոռացության է ենթարկվել:

Համեմատելով եվրոպական, հայկական և պարսկական սկզբնաղբյուրները սեֆյան ժամանակաշրջանի վարչական բաժանումների դիտանկյունից պահպանված այլ տվյալների հետ, կարելի է հաստատել, որ որոշ սկզբնաղբյուրներ նշանակալի տարբերությամբ, իսկ որոշներն էլ առավել մոտ են եղել սեֆյան անկման ժամանակաշրջանին վերաբերող սկզբնաղբյուր «Թագրիբաթ ալ-մուլուքի» մեջ ներկայացված վարչական բաժանումներին:

### Արևելյան Հայաստանը Սեֆյան Իրանի վարչական համակարգում

Պարսկաստանին անցած հայկական նահանգներում, այսինքն՝ Արևելյան Հայաստանում, վարչական կայուն համակարգ ստեղծվեց 1639 թ. հաշտությունից հետո՝ կազմակերպվեցին ինքնուրույն վարչական միավորներ (խանություններ): Այդ խանություններից իր քաղաքական և ստրատեգիական նշանակությամբ կարևոր էին համարվում Երևանի և Ղարաբաղի խանությունները: Երևանի խանությունը կոչվել է նաև սարդարություն կամ բեկլարբեկություն, իսկ նրա խանը՝ *սարդար* կամ *բեկլարբեկ*: Այդ խանությունը իր գոյության սկզբից մինչև XVIII դ. առաջին կեսը Արևելյան Հայաստանի և Այսրկովկասի մյուս խանությունների համեմատությամբ հանդիսացել է առաջնակարգ

վարչական և ռազմական միավոր: Նրա վրա դրված էր պարսկական պետության արևմտյան սահմանի պաշտպանության ինդիքը թուրքական բանակի հարձակումներից: Սեֆյան Իրանի վարչական համակարգի կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի հայկական տարածքներ հանդիսացող Չուխուր-Սաաղի և Ղարաբաղի բեկլարբեկությունները, իրենց աշխարհագրական դիրքի պատճառով, մշտապես գտնվել են Սեֆյան շահերի հատուկ ուշադրության կենտրոնում: Հայկական այդ երկու շրջանները կարևոր դեր են ունեցել Սեֆյան պետության արտաքին ու ներքին հարաբերություններում:

Սեֆյան ժամանակաշրջանի հեղինակավոր պատմագիրներից Իսրահայր Բեկ Թորքեման Մունշին բազմաթիվ անգամներ իր աշխատության մեջ հիշատակում է հայկական տարածքների Երևանի, Երևանի բերդի, Չուխուր-Սաաղի և Ղարաբաղի անունները, ուր նաև նշել է «Փոքր Հայք» կամ, հենց իր լեզվով ասած, «Փոքր Արմենիայի» մասին: «Փոքր Արմենիայի» մասին առաջին անգամ նշվում է աշխատության առաջին հատորում, Սեֆյան շահ Մուհամմեդ Խոդաբանդեի գահակալության շրջանում օսմանյան թուրքերի հետ տեղի ունեցող պատերազմների նկարագրության առիթով, ուր հեղինակը ակնարկում է Չուխուր-Սաաղը օսմանցիների անցնելու մասին՝ «...Չուխուր-Սաաղ բարեշեն շրջանը, որ Փոքր Արմենիայի<sup>123</sup> մեծ մասն է, անցավ թշնամիների ձեռքը...<sup>124</sup>»: Այնուհետև աշխատության երկրորդ հատորում հեղինակը շահ Աբբաս Ա-ի գահակալության քսաննեկերորդ տարվա իրադարձությունների շարադրանքում, գրում է՝

<sup>123</sup> Իսրահայր Մունշին «Փոքր Արմենիա» անվանում է Արևելյան Հայաստանը:

<sup>124</sup> اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد اول و دوم، چاپ پنجم، تهران، انتشارات امیر کبیر، 1392، ص. 293

«Այս դեպքերից հետո Կարսի բերդը հարգարժան խանի ջանքերով անցավ մեր թագավորության ենթակաների հսկողությանը, Կարսի վիլայեթը Փոքր Արմենիայի տարածքներից է, որ գտնվում է Երևանի և Էրզրումի միջև»<sup>125</sup>: Նույն հաստորում շահ Աբբաս Ա-ի գահակալության քսաներեքերորդ տարվա դեպքերը նկարագրելիս խոսելով Թիֆլիսի մասին նշում է այդ գլխի հետևյալ ենթագլխում՝ «Հիշատակում այն իրադարձությունների, որոնք տեղի ունեցան Լոռիի, Թիֆլիսի ու Թումանուխի (Դմանիս) բերդերի և Գյանջայի (Գանձակ) բերդի ու Ղարաբաղի մուքի գրավումից հետո», հեղինակը Թիֆլիսի գրավման ժամանակ հիշատակում է քրիստոնյա հայերին և նշում. «...Այդ քաղաքի բնակիչները հիմնականում բաղկացած էին քրիստոնյա հայերից, վրացիներից ու փոքր քանակությամբ մուսուլմաններից, իսկ քաղաքի գանազան վայրերում նկատելի էր քրիստոնեական հնագույն աղոթավայրեր, եկեղեցիներ»<sup>126</sup>:

Հարկ է ավելացնել, որ Սեֆյան Իրանի պատմական աշխարհագրությանը վերաբերող մի այլ աղբյուր՝ «Մոխթասար-ե մոֆիղը», թեև Սեֆյան Իրանի աշխարհագրությանը նվիրված աշխատություն է, գրքի հեղինակ Մուհամմեդ Մոֆիղը մեծապես ազդվել է Համդալլահ Մուսթուֆիի «Նուզհաթ ալ-դուլուր» գրքից և իր աշխատությունը ձևակերպել է նրա օրինակով՝ գլխավորաբար կենտրոնանալով վիլայեթների, քաղաքների և բնակավայրերի աշխարհագրական դիրքի վրա, ուր սակայն վարչական բաժանմանը անդրադարձ չի կատարվել:

«Մոխթասար-ե մոֆիղ» գրքի «Ղարաբաղ» գլխում հանդիպում ենք հետևյալ բացատրությանը. «Մի երկիր է, որը բաժանվել

է մի քանի շրջանների ու գյուղերի, այնտեղ էին բնակվում հարգարժան *բեկլարբեկերից* նրանք, որ մեծ թվով գնեվորական են ունեին իրենց հրամանի ներքո: Պատմագիրները նաև հիշատակում են, որ այդ երկիրը գտնվում է Շիրվանի ու Ագարբայ քանի միջև և հանդիսանում է Բարդալի ենթակա շրջաններից մեկը»<sup>127</sup>:

«Մոխթասար-ե մոֆիղ» գրքում Չուխուր-Սաադին և Երևանի վերաբերվող հատվածում կարդում ենք. «Բուլոբի համար պարզ է, որ դար ալ-մուլթ Չուխուր-Սաադը նույն Երևանն է, որ գտնվում է Ջանգու գետի ափին: Իսկ որոշ աշխարհագրական բաժանումներում այն պատկերացումը գոյություն ունի, որ այդ վիլայեթը Բարդալի ենթակա շրջաններից է, իսկ որոշներն էլ Բարդալ՝ Առանի մաս են համարել: Իրականում ճիշտն այն է, որ Բարդալ՝ն գտնվում է Առանի կազմում, իսկ Չուխուր-Սաադը առանձին երկրամաս է, որ ընդգրկում է հինգ շրջան, երեք քաղաք և վիլայեթ ու վեց բերդ»: «Մոխթասար-ե մոֆիղի» Երևանին նվիրված գլխում կարդում ենք հետևյալը. «Մի վիլայեթ է, որին ենթակա են շատ տարածքներ, որ շրջապատված է աներևակայելի գեղեցիկ և դրախտային այգիներով: Հապատակ բնակիչների մեծ մասը քրիստոնյաներ են»<sup>128</sup>:

Ժամանակաշրջանի վարչական պատմության կարևոր աղբյուր «Դասթուր ալ-մուլուրում» նա հանդիպում ենք հայության և հայկական բեկլարբեկությունների հետ կապված հիշատակումների: Հեղինակը թվարկելով վարչական բաժանման

<sup>125</sup> 740, ص. 1, جلد اول و دوم, ص. 740

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 718:

<sup>127</sup> مختصر مفید (جغرافیای ایران زمین در عصر صفوی)، بگوشتن ایرج افشار با همکاری محمد رضا ابوبی

مهزیزی، تهران، 1390، ص 168.

<sup>128</sup> Նույն տեղում, էջ 180:

արդյունքում ձևավորված բեկլարբեկությունները՝ նշում է «հինգերորդ՝ Չուխուր-Մաադ, վեցերորդ՝ Ղարաբադ»<sup>129</sup>:

Թեև «Թագքիրաթ ալ-մուլուքի» գրվելու ժամանակ (1726) հայկական այդ տարածքները գտնվել են օսմանյան և ռուսական տիրապետության ներքո և աֆղանները չեն վերահսկել նշված տարածքները, այդուհանդերձ «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ նրանք ներառված են պարսից պետության ավանդական վարչական կազմի մեջ:

Վերը նշված սկզբնաղբյուրներում և «Թագքիրաթ ալ-մուլուքում» հայկական երկու բեկլարբեկությունների՝ Չուխուր-Մաադի և Ղարաբադի կապակցությամբ պահպանված ուշագրավ տվյալները հաստատում են այն տեսակետը, որ հայկական երկու բեկլարբեկությունները շարունակ գտնվել են Սեֆյան շահերի ուշադրության կենտրոնում և նույնիսկ մինչև Սեֆյան հարստության անկման շրջանը կարևոր տեղ են զբաղեցրել Սեֆյան իշխանության վարչական համակարգում:

#### Կրոնական ու արդարադատության համակարգ

Սեֆյան կրոնական և արդարադատության համակարգի գործունեության հիմնական սկզբունքները ուսումնասիրելու արդյունքում պարզվում է, որ այդ երկու կառույցները աշխատում էին սերտորեն փոխկապակցված ու համակարգված կերպով: Շահի վարչական կառույցի մեջ կար *ղիվանբեկի* կոչվող պաշտոնյան, որը հոգևորական չէր, սակայն դատավորները և կրոնական առաջնորդները նրա ենթակա պաշտոնյաներն էին: Կենտրոնական կառույցի մեջ *սադրեր* էին *ղիվանբեկիին* ուղղորդում և խորհուրդներ տալիս: Վիլայեթներում նույնպես *սադրերի*

կողմից նշանակված կրոնական դատավորներն էին նմանօրինակ աշխատանք կատարում և դատական հարցերի բնույթյան ընթացքում օգնում էին *հաքիմներին*: Այդ կապակցությամբ Մուստոֆ բացատրում է. «Սադրե խասսեին վիլայեթներում ուներ իր ներկայացուցիչները: Նրանք կրոնական ղեկավարներ և ուսուցիչներ էին, որոնք դատական հարցերում օժանդակում էին հաքիմներին, և հաքիմներն առանց նրանց խորհրդատվության և իրավունքի որևէ որոշում չէին կայացնում»<sup>130</sup>:

*Ղիվանբեկիի*<sup>131</sup> պարտականությունների կապակցությամբ «Թագքիրաթ ալ-մուլուքում» մանրամասն բացատրություններ են տրվում լիարժեքորեն ներկայացնելով *ղիվանբեկիի* աշխատանքի գրեթե բոլոր գործառույթները:

*Սադրը*, որը նշանակվում էր շահի կողմից, նրա ազգականներից էր: Նա բացի կրոնական և հոգևոր հովվի պարտականությունից, զբաղվում էր նաև արքունի *վանֆային* տարածքների ինսամակալությամբ: Նա ի գործ էր այդ հողերից գոյացած եկամուտներն իր պատասխանատվությամբ օգտագործել և ծախսել:

Արդարադատության համակարգի մեջ կարևոր դեր էր վերապահված մի այլ սադրի՝ *սադր-ե ամմեին* կամ *սադր-ե մամալեքի*: Նա կրոնական հարցերում համարվում էր շահի ներկայացուցիչը, որը նույնպես ենթարկվում էր *սադր-ե խասսեին* և *ղիվանբեկիին*: *Սադրե ամմե* իր ներկայացուցիչներն ուներ վիլայեթներում, այս բարձրաստիճան հոգևորականները ևս իրենց հեթոթին ընտրվում էին *սադր-ե խասսեի* կողմից: Այսպիսով, նկատելի է, որ Սեֆյան կենտրոնական իշխանության

<sup>129</sup> میرزا رفیعا، دستورالملوک ص. 186

<sup>130</sup> سنسون، وضع ایران در زمان شاه سلیمان صفوی، به اهتمام تقی تفضلی، تهران، 1985، ص. 40-39  
Sanson Vaze Iran dar zamaneh shah Soleymane Safavi, be ehtemame Taghi Tafazoli, Tehran, 1985, pp. 39-40

<sup>131</sup> میرزا سمیعا، تذکره الملوک، ص. 12-13

կողմից խտորեն վերահսկվում էր *հաքիմների* գործունեությունը, սակայն *վալիների* նկատմամբ նմանօրինակ հսկողություն չէր կատարվում:

Շրջանների բոլոր հոգևոր ներկայացուցիչները ընտրվում էին *սադր-ե խասսեի* և *սադր-ե ամմեի* կողմից, որոնք ևս իրենց պարտականություններին անցնելուց առաջ պիտի ստանային շահի հավանությունը: Արբունական վակֆային հողատարածքները վերահսկվում էին *սադր-ե խասսեի* և նրա ներկայացուցիչների կողմից, իսկ մնացյալ վակֆային հողատարածքները՝ *սադր-ե ամմեի* և նրա ներկայացուցիչների կողմից:

### **Հարկահանության գործընթացը**

Սեֆյան Իրանի տնտեսական հարաբերությունների համակարգում ամենից կարևոր ոլորտներից էր հարկահանությունը: Սեֆյան պետության մեջ տնտեսական կառույցների մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում հարկահանման համակարգին:

Հարկերը պիտի հավաքեին *հաքիմները*, որոնց գործունեության սահմանը նախապես որոշված էր կենտրոնական իշխանության գործակալների կողմից իրենց տրամադրված ուղեցույցով: Այդ գործակալներն էին *վեզիրները*, (որոնք համարվում էին ֆիհանսական գործակալներ և աշխատում էին *մուսթովֆի ալ-մամալեքի* ուղղակի հսկողության ներքո) և *վադիեենիսը* (որը տեղեկատվության պարտականություն ուներ սադր-ե ազամի հսկողության տակ և գործում էր որպես նրա ներկայացուցիչ): Այս գործիչները աշխատում էին տեղական իշխանություններից (հաքիմներից) անկախ: Յուրաքանչյուր վիլայեթի եկամուտներից նախապես որոշված չափով (դրամական և գույքային եղանակով) հարկեր էին գանձվում և ուղարկվում պետական գանձարան, վիլայեթների եկամուտների մի մասը տրամադրվում էր տեղական իշխանություններին, իսկ որոշ հատված տրամադրվում

էր տվյալ վիլայեթում տեղակայված գորքի աշխատավարձերի վճարման համար:

*Մուսթովֆի-ե դիվան-ե մամալեքը* իր գործակատարների միջոցով հսկում էր հաքիմների կողմից հարկերի հավաքման գործընթացը, որպեսզի այն իրականացվի համաձայն կենտրոնական իշխանության կողմից որոշված կանոնակարգի: Պետական գաղտնի գործակալների կառույցը ևս հսկում էր հարկերի հավաքման աշխատանքը: *Մուսթովֆի-ե դիվան-ե մամալեքը* ուղղակիորեն ենթարկվում էր *սադր-ե ազամի* ե:

Երկրի կենտրոնական կառույցի այդ երկու պաշտոնյաների՝ *մուսթովֆի-ե խասսեի* և *մուսթովֆի-ե մամալեքի* միջև գոյություն ուներ հարկահավաքման աշխատանքի բաժանում և խիստ աստիճանակարգություն, որոնք բացատրվում են «Թագքիրաթ ալ-մուլուքում»:

«Թագքիրաթ ալ-մուլուք» պաշտոնյաների աշխատավարձերի վերաբերյալ իր հաղորդումներով կարևոր սկզբնաղբյուր է ևս բանակի և զինվորական կառույցների համար ծախսվող գումարների քանակի և եղանակի պարզաբանման առումով և:

«Թագքիրաթ ալ-մուլուքի» հավելվածի երկրորդ հոդվածը տեղեկություններ է պարունակում վիլայեթների կառավարիչների, նրանց աշխատավարձերի և աշխատակիցների քանակի, *բեկլարբեկությունների հաքիմների* և *սուլթանների* եկամուտների և ծախսերի կապակցությամբ, ուր նշվում են սահմանային ամբիբների համար որոշված գումարները և սպասավորների քանակը: Հեղինակը նախ նշում է ընդհանուր գումարը, այնուհետև նրա բաղկացուցիչ մասերը:

Այդ ցանկը ներկայացնում է տասնհինգ *բեկլարբեկությունների* և Քրդստանի ու Արաբստանի *վալիությունների* անունները: Նախ հեղինակը գրքի սկզբում իր նշած տասներեք *բեկլարբեկություններից* երկուսի՝ Դալամրո-ե Ալիշաքարի և Դար ալ-սալ-

թանև Ղազվինի, աշխատողների և եկամուտների կապակցությամբ որևէ տեղեկություն չի հաղորդում, իսկ մյուս կողմից էլ տալիս է Դար ալ-մարգի և ենթակա շրջանների, Իրաք (Աջեմի) և ենթակա շրջանների, Քրոյստանի և Արաբստանի վալիի աշխատողների քանակը և նրանց եկամուտների թիվը: Հարկ է նշել, որ «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ, բացի *բեկլարբեկությունների* ընդհանուր եկամուտներից նշվել է նաև նրանց ենթակա շրջանների եկամուտները: Առավել շատ աշխատողները գրանցված են Զուխուր-Սաադում: Հայկական երկու *բեկլարբեկությունների* կողմից վճարվող հարկերի գումարի չափը, մյուս *բեկլարբեկությունների* վճարների համեմատ, Ազարբայջանից հետո գտնվում էին երկրորդ և երրորդ տեղերում, որոնց եկամուտի ընդհանուր գումարը ավելի բարձր էր, քան մնացած *բեկլարբեկությունների* եկամուտները, հատկապես համեմատելով Խորասանի և Սուրբ Մեշհեդի հետ, որոնք իրենց հերթին երկրի կարևոր *բեկլարբեկություններից* էին: Նկատելի հսկայական մեծ տարբերությունը ակնհայտորեն մատնանշում է այն հանգամանքը, որ Արևելյան Հայաստանի *բեկլարբեկությունները* ոչ միայն ռազմական այլ նաև տնտեսական առումով շատ կարևոր դիրք էին զբաղեցնում Մեֆյան համակարգում:

«Թագքիրաթ ալ-մուլուքի» հավելվածի երրորդ հոդվածը պետական բյուջեի աղյուսակն է, որտեղ նախ նշված են եկամուտները, ապա՝ ծախսերը: Հիշյալ տեղեկությունները արժեքավոր են քննարկվող ժամանակաշրջանի Իրանի տնտեսության ուսումնասիրության դիտանկյունից:<sup>132</sup>

Երրորդ հոդվածում նշված թվերի մեջ մեծ տարբերություններ կան, հեղինակը ուղղակի նշում է եկամուտների թվերը, որին ավելացնում է քասրի (մի փոքր ավելի) բաժը, որը թարգմանության մեջ նշել ենք + նշանով: Նախնական գումար-

ման մեջ նախ կրճատվել են մանր գումարները, որոնք, սակայն, վերջնական գումարման ժամանակ ընդհանուր գումարի մեջ նորից հաշվվել են, ինչը ընդհանուր գումարների մեջ հաշվի տարբերության պատճառ է դարձել: Ուստի այս պարագայում ավելի ճշգրիտն այն է, որ նշվի գրքում մեջ բերված ընդհանուր գումարները, որովհետև նկատելի են որոշ բաժիններում հեղինակի կողմից ուղղակի մոտացության ենթարկված կամ ընդհանրապես չնշված թվական տվյալներ, իսկ թվերը տառերով գրվելու պատճառով ևս տառասխալներ են թույլ տրվել<sup>133</sup>:

Երրորդ հոդվածը բաղկացած է երկու գլխից՝ եկամուտների և դրանց գանձման բաժինների ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ: Վիլայեթների եկամուտների վերաբերյալ «Թագքիրաթ ալ-մուլուքում» եղած հիշատակումների հիման վրա ստորև բերված աղյուսակում ներկայացնում ենք ընդհանուր պատկերը<sup>134</sup>:

Վիլայեթների	Աղյուսակ 1	
	Վիլայեթների տարեկան	
Քերման	17713	թուման և 7000 դինար
Խուզիսթան	117639	թուման և 5850 դինար
Իրաք (Աջեմի)	213416	թուման և 6058 դինար
Ֆարս	142001	թուման և 3000 դինար
Ազարբայջան	161969	թուման և 8400 դինար
Դարոլմարգ	69102	թուման և 7000 դինար
Շիրվան	63784	թուման և 8900 դինար
Ընդհանուր գումար	785718	թուման և 1908 դինար

<sup>133</sup> Tadkhirat al-Muluk, p. 208:

<sup>134</sup> میرزا سمیعاً، تذکره الملوك، ص. 91-88

<sup>132</sup> میرزا سمیعاً، تذکره الملوك، ص. 16

Աղյուսակի տվյալների ուսումնասիրությամբ պարզվում է, որ այստեղ ևս հեղինակի նշած *վիլայեթների* անունները չեն համապատասխանում գրքի նրկրորդ զվսի նախաբանում բերված չորս *վիլայեթների* անունների հետ, քանի որ դրանցից և ոչ մեկը չի ներգրավվել *վիլայեթների* եկամտոտների և ծախսերին վերաբերող այդ հոդվածի մեջ: Կատարված բացատրությունների և վերլուծությունների հիման վրա պարզվում է, որ «Թագրիբաթ ալ-մուլուքի» մեջ պահպանված տնտեսական տվյալները համակարգված կերպով չեն պահպանվել և հեղինակը հիմնականում հավելվածների հատվածում կատարել է լրացումներ, ինչպես նաև դուրս թողել որոշ *բեկլարբեկություններ*, որոնց մասին թվական տվյալներ չի ունեցել: Եկամտոտների մեծ մասը ծախսվում էր, որպես պաշտոնյաների աշխատավարձեր և մնացալը օգտագործվում արքունիքի համար:

**«Թագրիբաթ ալ-մուլուքի» ձեռագրերն ու հրատարակությունները**

«Թագրիբաթ ալ-մուլուք» աշխատության առաջին ձեռագիր օրինակը հայտնաբերվել է Օսմանյան կայսրության կառույցին վերաբերող Մուլթան Աբդուլ Համիդի գրադարանում, որը 1924 թվականին դարձել է Լոնդոնի Բրիտանական թանգարանի սեփականությունը, ուր պահպանվում է OR9496 համարի ներքո:

Ձեռագիր այլ օրինակներ հետազայում հայտնաբերվել են Իրանի զանազան գրադարաններում, որոնք ընդօրինակվել են տարբեր ժամանակշրջաններում: Օրինակներից մեկը գտնվում է Թեհրանի Համալսարանի պարսկերեն լեզվի բանասիրական ֆակուլտետի գրադարանում, ձեռագրի գրիչն է Ալի Մուհամմեդ Հաբիմ Մուհարամ իբն Մուհամմեդը, որը գիրքը ընդօրինակել է 1245/1829 թվականին: Գրքի մի այլ ձեռագիր օրինակ պահպանվում է Իրանի արքունական գրադարանում 1760 համարի ներքո, մեկ ձեռագիր օրինակ ևս 1257/1841 թվականին պատրաստվել է Ամիր Մահմուդ խան Դունբուլիի պատվերով և վերջապես մեկ այլ օրինակ ևս պատրաստվել է Մուհամմեդ Շահ Դաջարի


պատվերով 1257/1841 թվականին: «Թագրիբաթ ալ-մուլուքը» իսկրահայտ արևելագետ Մինորսկու կողմից ուսումնասիրության ենթարկվելով՝ հրատարակվել է Քեմբրիջում 1943 թվականին: Գրքի հաջորդ հրատարակությունը կատարվել է պարսիկ անվանի գիտնական Մուհամմեդ Դաբիր Միադիի աշխատասիրությամբ նույն Բրիտանական թանգարանում պահպանվող լուսանկարային տարբերակի վրայից Թեհրանում 1332/1953 թ.: Իրանցի անվանի գիտնական Մասուդ Բաջարիան, Մինորսկու կողմից հրատարակված աշխատությունը անգլերենից պարսկերենի է թարգմանել, որով գիրքը ամբողջական մեկ հատուկում վերահրատարակվել է 1334/1955 թվականին Թեհրանում:<sup>15</sup> Այնուհետև «Թագրիբաթ ալ-մուլուքը» բազմիցս վերահրատարակվել է: Ներկա թարգմանությունը կատարվել է Թեհրանում 1378/1999 թվականին հրատարակված օրինակից:

Մեֆյան Իրանի վարչական պատմության բազմակողմանի լուսաբանումը համաշխարհային պատմության և իրանագիտության խնդիրներից է և կարևորվում է պետությունների վարչական կառույցների ձևավորման և կայացման հոլովույթի դիտանկյունից, ոչ միայն Իրանի այլև Հայաստանի արևելյան մասի վարչատարածքային բաժանումների ուսումնասիրման համար, որը կարող է օգտակար հանդիսանալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների ապագա գիտական ուսումնասիրությունների տեսակետից:

**Ժ. Մեջբանաբարյան**

15. داتش بزوه محمد تقى، مقاله، دستورالملوك ميرزا رفيعا و تذكره الملوك ميرزا نعمتجان، صص. 475-476

ՀԱՆՈՒՆ ԲԱՐԵԳՈՒԹ ԵՎ ՈՂՈՐՄԱԾ ԱՍՏՈՒԻ



Փառաբանում ենք Աստծուն, որ մեզ ուղղորդեց քայլել ճշմարիտ ուղղությամբ: Փառք երկնքի ու երկրի վրա ամենակարող Աստծու լավագույն զավակ ու ամենաճշմարիտ Մարգարե Մուհամմեդին նրա սերնդին ու հետևորդներին: Հուսով ենք, որ մեր կողմից նրանց ուղղված աղոթքները և մաղթանքները

<sup>136</sup> «Թազբիրաթ ալ-մուլուբի» բնագրի առաջին էջի լուսանկարը, վերցվել է Վ. Մխերթկու կողմից նրատարակված գրքում անկա ձեռագրի ֆոտոպատճենից:

ընդունվեն բարձրյալի և ճշմարիտ Աստծու կողմից: Եվ ահա աս համառոտ գրություն է, որը կոչվում է **Թազբիրաթ ալ-մուլուբ** և բովանդակում է Սեֆյան թագավորների օրոք ընդունված կարգի համաձայն բարձր աստյանի պաշտոնյաներից յուրաքանչյուրի ծառայության գործելակերպի վերաբերյալ, որը գերագույն հրամանով հակիրճ ու արագ ներկայացվեց Նորին Մեծությանը: Բարկացած է հինգ զլուխներից ու վերջաբանից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

*Մուլլաբաշիի* և թագավորանիստ Սպահանի *շարի* անդամների մասին, որը բաղկացած է հինգ ենթազլուխներից (ֆաս)

Առաջին ենթազլուխ: Մուլլաբաշիի պաշտոնի բացատրությունը

Նա բոլոր մուլաների գլխավորն էր: Սեֆյան թագավորների նախկին ժամանակներում *մուլլաբաշիությունը* որոշակի պաշտոն չի եղել, այլ ամեն ժամանակաշրջանի կրոնական հարցերին ամենազիտակը որպես *մուլլաբաշի* շահերի ժողովում գահին մտա որոշված նստելու տեղ ուներ և իմաստուններից ու *սեյդներից* ոչ ոք չէր կարող շահին ավելի մտա նստել: Նա բացի այն, որ իր պարտականության համաձայն խնդրում էր աստվածաբանություն ուսումնասիրողների ու խեղճերի համար, ազատություն տառապյալներին բռնությունից, զթություն մեղավորների համար, *շարի'աթական* հարցերի քննություն, աղոթքների և *շարի'աթով* թույլատրելի գործերի ուսուցում, ոչ մի դեպքում այլ հարցերի չէր միջամտում: Ծառ Սուլթան Հուսեյնի գահակալու-

թյան վերջին տարիներին Միր Մուհամմեդ Բադեր<sup>137</sup> անունով գիտակ հոգևորականը արժանացավ *մուլաբաշի* պաշտոնին, թեև իր գիտելիքներով զիջում էր իրեն ժամանակակից Աղա Ջամալին<sup>138</sup> և [ղարձակ շահի] մերձավոր զրուցակիցը: [Նա] հիմնադրեց Չահարբադի հոգևոր դպրոցը անձամբ դարձավ այնտեղի ուսուցիչը: Նա զբաղվում էր արդար գործարքներով, իսկ կրոնական նվիրատվություններն ու ողորմությունը շահը նրան էր ուղարկում, որպեսզի չբավորներին բաժանվի: Նրա մահվանից հետո Մուլա Մուհամմեդը *մուլաբաշի* դարձավ, որը բացի նշված [հոգևոր] դպրոցում դասավանդելուց զբաղվում էր *մուլաբաշի*ի վերապահված այլ աշխատանքներով:

**Երկրորդ ենթագլուխ: Մադարաթ-ե խասսե և ամմեի պաշտոնների բացատրությունը**

Ընդհանուր առմամբ սադարաթի պաշտոնի բացատրիկ պարտականությունը *շարի հաքիմների* և կրոնական [հաստա-

տությունների] *վակֆերի մուբաշիրների* նշանակումը, բոլոր *սեիդների*, *ուլամաների*, ուսուցիչների, *շեյխ-ու-խալամների*, *փիշևանագների*, *դագների*, *մութավալլիների*, Ղուրանի գիտակների<sup>139</sup>, հոգևոր դամբարանների, դպրոցների, մզկիթների, սրբավայրերի աշխատողների, *վակֆերի վեզիրների*, *նագերների*, *մութուվֆիների* և *վակֆային վարչության* մյուս բոլոր աշխատողների, հանգուցյալների լոգանք կատարողների և զերեզմանափորների նկատմամբ վերահսկողությունն է: Չորս դեպքերի՝ մարդասպանության, կուսությունից զրկման, ատամի կտրման և կուրացման համար կազմվող դատավարությունները բարձրաստիճան *դիվաներեկին* առանց հարգարժան *սադրերի* ներկայության չէր անցկացնում: *Շարի* մյուս *հաքիմները* չէին միջամտում այս չորս զլխավոր մեղքերի [քննությանը], [որոնք] ողորմած *սարքար բարձրաստիճան սադր-ե խասսեին* վերաբերող ու նրան վերապահված *շարի'աթական* գործերից է, եւ է վճիռը կայացնում և այդ կապակցությամբ *սադր-ե մամալեքը* որևէ իրավասություն չունի: Յուրաքանչյուրի աշխատանքի հակիրճ նկարագիրը հետևյալն է.

Բարձրաստիճան *սադր-ե խասսեն* շարաթ և կիրակի օրերը *դիվաներեկին* հետ միասին Ալիդափու պալատի պահակագործի ատյանում (քեշիքխանե) դիվան են անցկացնում: Իրանի զանազան մահալներում, Եզդի, Աբարդուհի, Նա'ինի, Արդեսբանի, Ղումշեի, Նաթանզի, Մահալաթի, Ղեյլջանի, Խանսարի, Բարու-

<sup>137</sup> Մոհամմադ Բադեր Մազլեսին (1627-1699թթ.) Սեֆյան շահ Մուլեյմանի օրոք *շեյխ-ու-խալամն* էր, իսկ շահ Մուլթան Հուսեյնի իշխանության տարիներին հասելով իր փառքի գագաթնակետին՝ ստանում է նոր ու ամենաբարձր հոգևորականի՝ *մուլաբաշի* պաշտոնը (R. BRUNNER, Majlesi, Moḥammad-Bāqer, Encyclopedia Iranica, available online: <http://www.iranicaonline.org/articles/majlesi-mohammad-baqer> (accessed on 17 February 2019).

<sup>138</sup> Խոսքը թերևս Սեֆյան պետության նույն ժամանակաշրջանի նշանավոր իրավագետ, աստվածաբան Ջամալ ալ-Դին Մուհամմեդ բ. Հուսեյն Խանսարիի մասին է, որը հայտնի էր նաև Աղա Ջամալ Խանսարի անվամբ (մահ. 1713 թ.): «Վերջինս հեղինակ է տասնյակից ավելի կրոնագիտական աշխատությունների ([http://fa.wikishia.net/view/اكا\\_جمال\\_خونساري](http://fa.wikishia.net/view/اكا_جمال_خونساري)):

<sup>139</sup> «Հակեթ» բառի հոգևակին է *کاهن* (հոֆագ), որը Ղուրանը անգիր իմացողների անվանումն է:



բուղի, Ֆարիդանի, Վարարի, Մագդաշի, Քիարի, Չափուղի, Ջարֆաղդանի, Քամարեի, Ֆարահանի, Քաշանի, Ղումի, Սավեի, Մագաղարանի, Ասթարաբաղի, Քրայելիի, Հաջիլարի և Քարուղ-ջամի *շարի հաքիմներին սադր-ե խասսե* է նշանակում, իսկ նշված շրջաններում նրան վերաբերող գործերը *սադարաթի նա-յեքին* և *սադր-ե խասսեի* մյուս *մուբաշիրներին* է վերապահված:

Բարձրաստիճան *սադր-ե մամալեքի* պարտականությունն է նշանակել ընդհանուր պետության նահանգների, Ագարբայջան, Ֆարս, Իրաք ու Խորասանի *շարի հաքիմներին*, նաև դամբարան-ների, դպրոցների, մզկիթների և նմանօրինակ այլ վայրերի *վակ-ֆերի մուբաշիրներին*, բացի այն ամենից, ինչ մտնում է *սադր-ե խասսեի* իրավասությունների մեջ, որ շարադրվեց վերը: Որոշ թագավորների ժամանակ *խասսեի* և *ամնեի սադրերի* պարտա-կանությունները մեկ անձ էր իրականացնում: Ընդհանրապես, *վակֆային մուբաշիրների* նշանակումը կամ աշխատանքից հե-ռացումը, եթե նշանակովի է, *խասսեի* և *ամնեի սադրերի* պար-տականությունն էր, իսկ եթե *շարի'աթական* լինի, ապա *շարի հաքիմներից* ու *սադրերից* ոչ մեկը չէր կարող դրան միջամտել, քանի որ *շարի'աթով* ում, որ *վակֆերի վակիֆը մութափալլի* էր նշանակել ու լիազորել, *մուբաշիրը* նա էր լինելու, որի փոփոխու-թյունը դեմ է մարգարեի սրբազնագույն *շարի'աթին*:

**Երրորդ ենթագլուխ: Թագավորանիստ Սպահանի դագիի պաշտոնի լացատրությունը**

Կարգն այն էր, որ Սպահանի *դագին*, [ամեն օր] բացի ուրբաթ օրերից իր տանը զբաղվեր ժողովրդի *շարի'աթական*

վեճերի պաշտոն *շարի'աթի* ու անբիժ մարդկանց օրենքներին համապատասխան քննությամբ: Շեյխ Ջաֆարի ժամանակներից սկսած Սպահանի *դագին* էին դիմում բացակայողի և որբերի կարողության յուրացման գործերով: Ցանկացած դատական վեճի համար, որ *դագին* հրաման էր գրում, *դիվանի* պաշտոնյաները լրատ կարգի գործադրում էին:

**Չորրորդ ենթագլուխ: Թագավորանիստ Սպահանի շեյխ ուլ-խալամի պաշտոնի բացատրությունը**

Նշված պաշտոնը կրողը իր տանն էր գբաղվում *շարի* վիճաբանությունների վերահաստությամբ՝ կարգադրելով այն, ինչ օրինական է և արգելելով, այն անթույլատրելի: *Շեյխ ուլ-խալամի* ներկայությամբ էր կատարվում *շարի'աթական* ամուսնալուծու-թյունը: Բացակաների (բնակության վայրից բացակայողներ, ճա-նապարհորդներ և այլն...) և որբերի ունեցվածքի տնօրինման խնդիրները [ևույեպես] հաճախ *շեյխ ուլ-խալամի* [էր քննում], որից հետո [գործի քննությունը] հանձնվում էր *դագիններին*:

**Հինգերորդ ենթագլուխ: Ղագի ասքարի պաշտոնի բացատրությունը**

Հին ժամանակներում *դագի ասքարը դիվանբեկիի* հետ պա-հակակետերում զբաղվում էր հաղթական բանակի *շարի*'ի դատա-կան հարցերով: Իսկ երբ Սպահանի համար *սադր* նշանակվեց և որոշվեց որ *դիվանբեկին սադրի* ներկայությամբ զբաղվեր նրանց մեջ ծագած *շարի* վեճերի դատավարությամբ, *դագի ասքարը* դա-դարեց գալ *դիվանբեկիի* ատյանը: Սեֆյան հարստության վերջին

շրջանում *դագի ասքարի* աշխատանքը սահմանափակվեց նրանով, որ հաղթական բանակի զինվորականները իրենց բռնիկների *թանխահի* հրամանների պատճենները, որ երկրի տարբեր կողմեր էին ուղարկում, նրա կնիքով էին հաստատած լինում: Մինչև որ բռնիկների *թանխահի* հրամանագրերի պատճենը *դագի ասքարի* կնիքով չէր հաստատվում, *վիլայեթների բեկլար-բեկերը* և *հաքիմները* պատճենին հավատ չէին ընծայում և *թանխահ* չէին տալիս:

### ՎՈՒՆ ԵՐԿՐՈՐ՝

**Բարձրաստիճան (ալիջահ) տիտղոսը կրող մեծ ամիրներին մասին, որը բաղկացած է մեկ նախարանից և տասնչորս**

**ենթազուխներից (Ֆասլ)**

**Նախարան**

**Ամիրների աստիճանների բացատրությունը**

Պետք է նշել, որ Իրանի ամիրները երկու տեսակի են. առաջինը արքունիքի մեջ չմտնող *ամիրներ*, որոնց նան անվանում էին սահմանային *ամիրներ*: Այս տեսակը բաժանվում էր չորս խմբի՝ առաջինը՝ *վալիներ*, երկրորդը՝ *բեկլարբեկեր*<sup>140</sup>, երրորդը՝ *խաներ* և չորրորդը՝ *սուլթաններ*:

*Վալիները* պաշտոնի աստիճանով ու դիրքով *բեկլարբեկերից* ավելի բարձր են, իսկ *բեկլարբեկերի* դիրքը ավելի բարձր է *խաներից*: *Բեկլարբեկության* տարածքներում նրանք, ովքեր նրա

<sup>140</sup> Բնագրում «բիկլարբեկի» է այդ ամիրների տիտղոսը, սակայն օգտագործում ենք հայերենում ընդունված տարբերակը՝ «բեկլարբեկ» ձևով:

տարածքին կից շրջաններում *հաքիմ* են դառնում, *բեկլարբեկի* ենթական ու *դուլբեկին* են, որոնք նրա գեկուցմամբ պաշտոնաթող են արվում կամ նշանակվում: Այս առումով յուրաքանչյուր շրջանի *սուլթանները* ենթարկվում են այնտեղի *խաներին*: *Վալիները* Իրանում չորսն են, որոնց անունները համաձայն իրենց դիրքի և կարևորության, հերթականությամբ հետևյալ կերպ են՝

Առաջինը Արաբստանի *վալին* է, որն իր իշխանական դիրքով, բազույթյամբ, ցեղերի և ցեղախմբերի բանակով մնացյալ *վալիներից* ավելի բարձր ու պատվարժան է, այնուհետև Լուրիստանի *վալին* է, որի մահմեդական լինելը հաշվի առնելով ավելի բարձր էր, քան Վրաստանի (Գուրջիստանի) *վալին* և Վրաստանի Իրանին պատկանող շրջաններն են Քարթլին, Կախեթը և Քիֆլիսը, իսկ դիրքի առումով Վրաստանի վալիից հետո աստիճանով Քուրդիստանի *վալին* է, որի նստավայրը Սանանդաջ քաղաքն է, իսկ նրանից հետո բախթիարի ցեղի *հաքիմն* է, որը հին ժամանակներից մեծ հարգանք ու պատիվ ուներ:

Իսկ հարգարժան *բեկլարբեկերը* տասներեքն էին: Առաջին՝ Ղանդահարինը, երկրորդ՝ Շիրվանինը, երրորդ՝ Շերաֆին, չորրորդ՝ Արաբաջանինը, հինգերորդ՝ Չուխուր-Սաադինը, վեցերորդ՝ Ղարաբաղ և Արսալանից, յոթերորդ՝ Ասթարաբադինը, ութերորդ՝ Քոհզիլուեինը, իններորդ՝ Քերմանինը, տասներորդ՝ Մերվ Շահիջահանինը, տասներկերորդ՝ Արսաբինը, տասներկուերորդ՝ Սուրբ Մեշեդինը և տասներեքերորդ՝ Բազավորանիստ Ղազվինինը:

Երկրորդ տեսակը՝ օրինյալ արքունիքի *ամիրներն* են: Բոլորը աշխարհակալ շահի պալատում ներկա են լինում և

յուրաքանչյուրը զբաղեցնում է հատուկ պաշտոններ: Այս աշխատության գրության նպատակը նրանցից յուրաքանչյուրի, պաշտոնի ինչպես նաև Սպահանի այլ պաշտոնյաների գործառույթների գրանցումն է: Առաջին հերթին պետք է իմանալ, որ արքունի ամիրները չորսն են և կոչվում են հաղթական պետության հենասյուներ. առաջինը՝ *ղոռոչի բաշի*, երկրորդ՝ *ղուլլար-աղասի*, երրորդ՝ *իշիբ աղասի բաշի* և չորրորդը՝ *թուֆանկչիաղասի*, այս չորս հոգին մեծ *վեզիրի*, *ղիվաներեկի* և *վաղե'ենեխի* հետ, թվով ընդամենը յոթը, վաղ ժամանակներից համարվում էին խորհուրդի (ջանաղի) ամիրներ: Շահ Սուլթան Հուսեյնի գահակալության վերջին տարիներին որոշ խորհրդակցություններում ավելացան *նագերը*, *մուսթովֆի ալ-մամալերը* և *ամիր շեքար-բաշին*, իսկ եթե խորհուրդը (ջանաղին) անհրաժեշտ համարեր *սեփահաալարին* Իրանի շրջաններից մեկն ուղարկել, ապա վերջինիս ներկայությունը խորհուրդի նիստին պարտադիր է:

### Երկրորդ գլխի առաջին ենթագլուխ: Մեծ վեզիրի պաշտոնի բացատրությունը

Գերագույն *ղիվանի* բարձրաստիճան մեծ *վեզիրը* և Իրանի *էթեմաղ ուլ-ղովլեն* պետության հենասյուներից և արքունի ու Իրանի սահմանային *վիլայեթների* բոլոր *ամիրներից* ամենագլխավորն է, *ղիվանի մալիյաթի* բոլոր գործարքները, Իրանի բոլոր շրջաններից ու Սպահանից պետական գանձարան ու այլ բոլորաթ ուղարկված ամբողջ *վջուհաթը* առանց *էթեմաղ ուլ-ղովլեի թալիղեի* ու հրամանի չէր իրականացվում: Պաշտոնյաների նշանակման և այլ բոլոր հրամանագրերը նախ պիտի նրա

կնիքով հաստատվեին, այնուհետև՝ գերագույն, սրբազնագույն, արքայական կնիքով զարդարվեին: [Նա] պետք է *ղիվանի մալիյաթի* շատացման ու երկրի *վջուհաթի* և ուղարկվածների տևորինման հարցում ծայրահեղ ջանասիրություն ցուցաբերի: Պետք է թույլ չտա, որ որևէ մեկը կարգուկանոնին և հաստատված մշտական ավանդույթին հակառակվի ու արդարությունից հրաժարվի: Եթե հաղթական երկրի *ամիրները* ու հենասյուները իրենց կարգազանց արարքներում նրա հրամանին չենթարկվեն, նա այդ ծառաների կապակցությամբ պայծառափայլին պետք է զեկուցի և գործադրի այնպես, ինչպես, որ բարձրագույն, սրբազնագույն հրամանագրով կկարգադրվի: Իսկ այն անհատները, որոնք *ղիվանի* պաշտոնյա են նշանակվում, եթե դա [շահի] բերանացի հրամանագրով չի եղել և յուրաքանչյուր դասի ավագանու զեկուցմամբ է կատարվում, մինչև, որ մեծ *վեզիրի թալիղեն* չստացվի, նրանց ծառայության ու պաշտոնի նշանակման հրամանագիրը չի տրվում: Եթե մերձավոր պաշտոնյաների կողմից հրամանագիր է տրվում մեկի նամակին ի պատասխան, ապա մինչև, որ վեզիրի կնիքով չկնքվի, արեգակնային կնիքով չի հաստատվում: Մասնակի ծառայությունները, [որպիսիք են] թագավորական գրագրատան գրագիրների, *խասսեի* ու *բոլու-թաթի ամիրների* նշանակումը, որոնք չեն կատարվում սրբազնագույնին զեկուցմամբ բարձրաստիճան *մուսթովֆի ալ-մամալեքի*, *նագեր-ե բոլութաթի* և մերձավոր պալատական *խասսեի մուսթովֆիի* հանձնարարականների հիման վրա «գերագույն-ղիվանի բարձրաստիճան *վեզիրի» թալիղեով*, ծառայության մասին հրամանագիր է տրվում և չպետք է սրբազնագույնին զեկուցվեն: Բոլոր *վիլայեթների բեկլարբեկերի*, *հաքիմների*, *սուլթանների*,

վեզիրների, մասնակի ու ամբողջական թահվիրդարների, մութասադդիների, գաբիթների ու այլոց վճարումների ու դիվանի ամիրների հաշվարկների օրինակները վերոհիշյալ պատվար-  
ժանի (մեծ վեզիրի) թա'լիդեից հետո գրանցվում էին դաֆթարում  
և մեծ մուսթովֆիները հաշվարկը հստակեցնում էին և մարման  
մասին ստացական տալիս: Եթե դիվանի մալիյաթի հաշվարկի  
ձևերից որևէ մեկով պակասող կամ ավելցուկ էր լինում, մեծ  
վեզիրի ներկայությամբ վճարմանը փակվում էր շահող կողմի  
օգտին, որպեսզի բարի աղոթքներ հղվեն [շահին] և ուսյաթները  
հանդարտվեն, ինչպես որ հին գումարը անօրինական, իսկ վեճը  
արդարացի համարելով՝ [գումարի] կրճատման թա'լիդե տրված  
լինելու [դեպքում էր արվում]: Գերագույն գրագրատան ու  
խասսե-ե շարիֆեի գրագիրները մեծ վեզիրի թա'լիդեի վրա են  
հենվում և այդ բովանդակությունը հարատևող մատյաններում  
գրանցում: Պետության պահակագորային ատյանը (քեշիքխանեն)  
ևս մեծ վեզիրների դիվանի համար է հիմնադրվել, ուր հասարակ  
ժողովուրդն իր խնդիրների կապակցությամբ Մեծ վեզիրներին  
ուղղակի կարողանային դիմել: Նաև դիվանի բոլոր գրություն-  
ներն ու ծախսի փաստաթղթերը գրանցվում են մատյաններում,  
սահեբջամների, թահվիրդարների և թահսիրդարների ստացա-  
կաններն ու բոլոր ցածրից մինչև բարձր պաշտոնյաների թա'լի-  
դեները հաստատվում են մեծ վեզիրների կնիքներով և ինչպես  
որ կարգադրի, այնպես էլ գործադրվում է: Բոլոր ամիրները  
իրենց պաշտոնի և դիրքին համապատասխան են միմյանց կողք  
նստում պահակագորային ատյանում, ինչպես որ արբունի  
ժողովում: Ամիրներից, պաշտոնավոր անհատներից, մեծ մուս-  
թովֆիներից ու հարգարժան յաներից, վեզիրներից և հրամանա-

գրով [թույլատվություն] ունեցողներից բացի ոչ ոք իրավունք  
չունի պահակագորային ատյանում գտնվելու:

Երկրորդ գլխի երկրորդ ենթաբաժին: Հաղթական պետության  
հենասյուն հանդիսացող բարձրաստիճան դոռչի բաշիի  
պաշտոնի բացատրությունը

Վերոհիշյալը, հզոր պետության հենասյուն հանդիսացող  
ամիրներից ամենագլխավորն էր ու բոլոր ցեղերի ու ցեղախմբերի  
ղեկավարը: Դիվանին ծառայող բոլոր դոռչիների թիուկները,  
համեսալեները, թանխանները, բարձրաստիճան դոռչի բաշիի  
հաստատումից հետո մեծ վեզիրի հաստատման են ներկա-  
յացվում: Թանխանի ստացումը, տեղական ծառայությունը,  
[շրջանների] կատավարումը, սուլթանի ու յուզբաշիի պաշտոն-  
ները, բոլոր դոռչիների թիուկն ու ոռճիկները իրականացվում էին  
համաձայն դոռչի բաշիի կողմից կատարված առաջարկի և մեծ  
վեզիրների [կողմից տրված] թա'լիդեով: Դոռչիներին վերաբերող  
հարցերը հիշյալ գլխավոր պաշտոնյան՝ բարձրաստիճան դոռչի  
բաշին էր քննում ու լուծում տալիս: Դոռչի բաշիները համարվում  
են պետության հենասյուներից ամենագլխավորը, և դոռչիների  
շարքն անցածներից յուրաքանչյուրի ծառայության, ոռճիկի,  
թիուկի, համեսալեի ու ին'ամի բոլոր հրամանագրերը վերոհիշյալ  
բարձրաստիճանի [դոռչի բաշիի] թողարկով ու կնիքով են հաս-  
տատվում: Այդ [հրամանագրերի] նախնական օրինակը ազնվա-  
զույկի [շահին] ներկայությամբ վեզիրը ու վերոհիշյալ պաշտո-  
նյալի մուսթովֆին ներկայացնում են: Վերոնշյալ բարձրաս-  
տիճանը խորհրդի անդամ (ջանադի) ամիրներից է:

**Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխ: Պետության հենասյուն հանդիսացող դուլլարադասիի պաշտոնի բացատրությունը**

Վերոհիշյալը *դոռչի բաշիք* հետո ամենից կարևոր և հզոր պետության հենասյուն հանդիսացող *ամիրներից* է, *խասսե-ե շարիֆեի սարքարի* բոլոր *դուլամների* ղեկավարը, որի հավանությանը բոլոր *դուլամների թիուլները, համեսալեն* ու *բարաթով* [վճարվող] ոռճիկները և նրանց տրվող *ին'ամը* գերագույն *դիվանի* բարձրաստիճան *վեզիրն* է գրում: *Թանխանի* հատկացումը, շրջաններում կառավարման ծառայությունը, *յուզբաշիությունը*, բոլոր *դուլամների թիուլը*, աշխատավարձն ու *ին'ամը* *դուլլարադասիի* խնդրագրի հիման վրա մեծ *վեզիրների թա'ի-դեով* է շնորհվում: *Ղուլամներին* վերաբերող բոլոր հարցերը վերոհիշյալ ղեկավար բարձրաստիճան *դուլլարադասին* է քննում ու վճռում: Վերոնշյալ խմբի ծառայության, աշխատավարձերի, *թիուլների, համեսալենների* և *ին'ամի* հրամանագրերը վերոհիշյալի [*դուլլարադասիի*] *թողրայով* ու կնիքով հաստատվելով, բարձրաստիճան մեծ *վեզիրի* կողմից էր գրվում և նրա մեկ օրինակը *վեզիրն* ու վերոհիշյալ պաշտոնյայի *մուսթովֆին* ներկայացնում է ազնվագույնին [շահին]: Վերոնշյալ բարձրաստիճանը խորհուրդի (*ջանադի*) *ամիրներից* է համարվում:

**Երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխ: Գերագույն դիվանի իշիք ադասի բաշիի պաշտոնի բացատրությունը**

Վերոհիշյալին է վերապահված բոլոր *յասավուլ-ե սոհրաթների, դիվանի իշիք ադասիների, ադաների, դոնապանների, արքունի մունեստիկների, ժողովի գործերի արարողակարգի* ու

գլխավորներից մինչև ամենից ցածրի նստելակարգի կազմակերպումը: Եթե նրանց կարգի դասավորության մեջ խախտում նկատվեր, նման վրիպման համար *դիվանի իշիքադասին* էր պատասխանատու: *Ամիրների* կարգում [վերջինս] *դուլամների* և *դոռչիների* գլխավորն է: Վերոհիշյալ բարձրաստիճանը արքունի բոլոր *ադաների* գլխավորն է և իր ենթակաների ոռճիկները, *թիուլը* և *համեսալեն* [հաստատվում են] նրա դիմումի համաձայն և եթե մեծ *վեզիրը* [դրանք] ստորագրում է, [համապատասխան] հրամանագիր է հրապարակվում, որով որոշվում էր գումարի փոփոխության չափը, որ ցանկանում են իրենց ծառայության դիմաց ունենալ: *Բարաթով* [տրվող] աշխատավարձերի, *համեսալենների* և *թիուլների* մանրամասները վերոհիշյալի [իշիք ադասի բաշիի] հայեցողությամբ և կնիքով էին [հրապարակվում]: Վերոհիշյալի ենթակաների ծառայության ու ոռճիկների ավելացման հրամանագրերը, *թիուլներն* ու *բարաթով* աշխատավարձերը այն պատվարժանի *թողրայով* ու կնիքով են հաստատվում: Նրա հանձնակատարներից են գերագույն *դիվանի լաշբարենկիսը* և *սարիաթենկիսը, վեզիրը* և *մուսթովֆին*: Այն ժամանակ, երբ վերոհիշյալ բարձրաստիճանը իր ենթակաների կարգն է ստուգում կամ ճանապարհորդության է ուղարկում, նրա հանձնարարականը *սարիաթենկիսներն* ու նրա գրագիրներն են գրում, *լաշբարենկիսները* վերոհիշյալ բարձրաստիճանի ներկայությամբ այն ընթերցում են և հրամանագիրը, որ վերոհիշյալ ղեկավարը նրանց մասին տալիս է, նրանց անունների տակ է գրվում: *Խասսե-ե շարիֆեի* վարչության *փիշքաշենկիսը* շահի համար որպես *նովրուզի* և այլ [անվան տակ] բերված նվերները, բացի

ուտելիքներից, որոնք *խասսեի սարքարի փիշքաշն* են, մանրամասն ցուցակագրում և այդ ցուցակը հանձնում է բարձրաստիճան *իշիրադասի բաշիին*: Ուտելիքները, որ որպես *փիշքաշ* էին բերում, դրանց տերը բարձրաստիճան *նազեր-ե բոյութաթն* էր, և ևս հանձնարարում էր հավելյալ ցանկ կազմել, որն ըստ գումարային ցանկի և ուղարկման ստիթի *բոյութաթի սահեբջամ'երն* ու *մոշրեֆները* արձանագրում էին *ուուզնամչեում*: Նա պարտականություն ուներ տեղեկացնել արքունիք՝ թագավորի ոտքը պազելու համար ներկայանալ ցանկացողների և նրանց մասին, ում այդ հանձնարարված է: Այս աշխատանքը բացառապես նրան է և ոչ ոք չի կարող դրան միջամտել:

#### **Մերկորդ գլխի հինգերորդ ենթագլուխ: Բարձրաստիճան թուֆանկյիադասի բաշիի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալը *մինբաշիների, յուզբաշիների, մունեստիկների, ռիբաների* և բոլոր հրացանակիրների ղեկավարն է: Նրա բոլոր ենթակաների *թիուլը, համեսալեն, բարաթով* աշխատավարձերը և *ին'ամը* նրա թույլտվությամբ ու հանձնարարականով գերագույն ղիվանի բարձրաստիճան *վեզիրի* կողմից էր հաստատվում: *Ֆուսխանի* ստացումը, հրացանակիրների ու մունեստիկների *մինբաշիությունը, հրացանակիրների, նրանց համեսալեի* ու ռոճիկների նշանակումը նրա գեկուցագրով (է կատարվում) ու գերագույն *ղիվանի վեզիրի* կողմից հաստատված լինելու դեպքում, (դրան համապատասխան) ազնվագույն հրամանագիր է հրապարակվում: Հրացանակիրներին վերաբերող գործերը վերոհիշյալ բարձրաստիճանն է քննում ու պարզում և նրանց

ծառայությանը, *թիուլին, համեսալեին, բարաթով թանխահին* վերաբերող հրամանագրերը վերոհիշյալ բարձրաստիճանի *թող-բայով* ու կնիքով են (հաստատվում): Հրացանակիրների ցուցակի գրանցումները վեզիրը և հիշյալ պաշտոնյայի *մուսթովֆին* նրա ներկայությամբ են գեկուցում Նորին Մեծությանը:

#### **Մերկորդ գլխի վեցերորդ ենթագլուխ: Բարձրաստիճան նազեր-ե բոյութաթի պաշտոնի մանրամասն բացատրությունը**

Վերոնշյալի պարտականությունն այն էր, որ տարվա սկզբում, առաջին վեց ամսվա համար *թալիոչն* էր գրում, որպեսզի *բոյութաթի մոշրեֆը խասսե-ե շարիֆեի վարչության* վեց ամսյակի *իխրաջաթը* մի *մուհասիլի* հետ *վիլայեթներից* հրամանագրին համապատասխան կանխիկ ու բնամթերքով ստացվող *համեսալեն* հանելուց հետո *սահեբջամ'երի* ծանուցմամբ մոտավոր հաշվարկեր: *Բոյութաթի վեզիրը* հիշյալ հաշվարկը ընթերցում էր *բոյութաթի նազերի* մոտ և տեղեկացնում նրան: *Բոյութաթի վեզիրն*, իր հերթին, *էթեսնաթ ուլ-դուվեհին* գրում էր և *նազերն* էլ կերում էր, որ *սարքար-ե խասսեի բոյութաթի* վեց ամսյա *իխրաջաթը* պատվարժաններն այսքան են նախատեսել, և կարգադրել, որպեսզի արքունի գանձարանի *սահեբջամ'ը* հաշվարկի գումարի ստացման հանձնարարականներ հանձնի *սահեբջամ'երին*: *Սահեբջամ'երն* այդ հանձնարարականները արքունի գանձարանի *սահեբջամ'ին* հանձնելով գումար էին ստանում: Քանի որ տարին մեկ անգամ էր գնվելիք գույքերի կամ պիտույքների համար արժեք որոշվում, և (սահմանված) կարգ էր,

որ *նազեր-ե բոյութաթն* իր եկթականերից մեկին հրահանեզեր, *բոյութաթի վեզիրը, մուխթասիբ ակ-մամալէրը*, Սպահանի *մուսթովֆիին* և համբարության ավագին մեկտեղ հավաքի և բուրբը [միասնաբար] հստակեցնելին վաճառվելիք ապրանքների գները *դիվանի* օգտին և ապրանքի նմուշը, նաև գնացուցակը հանձնակատարներն ու *նազեր-ե բոյութաթը սահերջամ'երին* հանձնելին, որպեսզի *սահերջամ'երը* տարվա ընթացքում այդ ապրանքը անհրաժեշտության դեպքում նախապես կնքված օրինակին համապատասխան ու նշված գնացուցակի գնով գնեն ու վճարեն ապրանքի տիրոջը: Որոշ այլ ապրանքներ *սահեր-ե նասըրը* պետք է ամսեամիս որպես *իլթիզամ* յուրաքանչյուրի ավագից վերցնի *մուխթասիբ ակ-մամալէրին* հանձնի, որպեսզի նա այդ *իլթիզամը* տնօրինի և նրանց հիման վրա սակագնի գրություն գրի և այդ առթիվ *նազեր-ե բոյութաթին* դիմում հղվի և իրողությանը վերահասու լինի: Եթե իմանա, որ որևէ ապրանքի գին բարձր էր նշվել, որպեսզի անարդարություն չլիներ ու այդ կապակցությամբ "անեծք" չլիներ, ապրանքի գինն իջեցնում է ու հանձնում *սահերջամ'երին*, որպեսզի *բոյութաթի* պատասխանատուները համաձայն ծախսերի մնացածը հանելով *սահերջամ'երից* փաստաթուղթ ստանան և յուրաքանչյուր *ռուսումաթի* 1/20ը (դահնիմը) սակագնի գրության մեջ նշի և *նազերն* այն կնքելով իր ծախսերի համար օգտագործի: *Նազերը* պետք է խիստ կարգադրի, որպեսզի պատասխանատուները ամսեամիս *մուղարարիներին ռուզնամներում նազեր-ե բոյութաթի* կնիքով ներմուծեն, ինչպես, որ շահին դիմելով փաստաթուղթ են անցկացրել, որի մեջ նշված է այն ամենը, որ ավելացվել է *խասսե շարիֆեին*,

խորհուրդի, հյուրերի կամ տեղի ունեցած այլ դեպքերի վերաբերյալ: Ամեն ամիս *ռուզնամները* պետք է *բոյութաթի վեզիրին* ներկայացվեն, որպեսզի հիշյալ վեզիրը [դրանք] փաստաթղթերի հետ համեմատի և հաստատի: *Նազերն* էլ կնքելով հետո հավաքելով հանձնում է [էր] *թահվիլի մուսթովֆիին*, որպեսզի վերջինս զատորոշի *սահերջամ'երի* հատկացումներն ու ծախսերը: Ուտելիքների պատրաստման արհեստանոցները նա վեց ամիսը մեկ նրանց սեփականատերերին և *մուսթովֆիներն* էլ տարին մեկ որոշում էին հատկացումներն ու ծախսերը: Եթե *ռուզնամները* ու փաստաթղթերը հետաձգվում էր, *խասսեի սարքարի* տարեկան մեծ գումարի վնաս էր հասցվում: Այն ինչ, որ հատկացվում էր *վիլայեթներին* որպես *համեսալե նազերի* կողմից *մուխասիլ* էր նշանակվում, որպեսզի նա *վիլայեթները* գնա, ապրանքները ստանա և ուղարկի: Երբ որևէ պատճառով, հիշյալ ապրանքը *բոյութաթ* չէր ուղարկվում, *սահերջամ'երը* այդ մասին *նազեր-ե բոյութաթի* կնիքով հաստատված [գրությունը] ներկայացնում էին *է'թեմաղ ուլ-դուլէին* և փոխարենը արքունի գանձարանից կամ գումար, կամ ըստ կարգի ապրանք, ստանալով օգտագործում էին: Տարին մեկ անգամ *բոյութաթի* աշխատողների ստուգում էր անցկացվում նրանց աշխատավարձերի ու թույլտվությունների հանձնարարականները *նազեր-ե բոյութաթն* է տալիս: Յուրաքանչյուր ապրանք իր ժամանակին էր *նազերը* գնում և մթերում, որպեսզի դիվանի օգտին լինի և տարվա ընթացքում եթե ապրանքի գինը բարձրանար, դիվանին վնաս չհասներ: Տարին մեկ անգամ *նազերը* գնում էր ուղտերի

ատողջական ընդհանուր վիճակը, ստուգում նրանց գիրությունը, նիհարությունը, թուլությունն ու պիտանելությունը: Աշնան սկզբին ճարտարապետին հանձնարարվում էր ստուգել շենքերի վերանորոգման կարիքները և համապատասխանաբար, *դիվանի* շահերից էլնելով *թանխահ* ներկայացնել: Շահի կողմից ում որ *ին'ամ* ու *խալ'աթ* էր շնորհվում, դրա փաստաթուղթը պետք է հաստատվեր *էթեմաղ ուլ-դովլեն* ստորագրությամբ և *նազերի* կնիքով: *խասսե-ե շարիֆեի* հագուստների, *ամիրների* շքեղ *խալ'աթների* և այլնի համար տարեցտարի տրամադրվող կտորեղենի կապակցությամբ *նազերը* տարվա սկզբում *թալիդե* էր կազմում, որը *էթեմաղ ուլ-դովլեն* ստորագրում էր, [որից հետո] *նազերի* ենթակաները *օլթաները* գնալով դրանք ուղարկում էին: Բաղնիքների, սառնարանի ինչպես նաև խոհանոցի համար ձմեռվա ցախի և այլնի պատրաստությունները պետք է իր ժամանակին և տարեկան ծախսին համապատասխան *նազերը* տեսնի, [ինչպես նաև] այսոնների ու ուղտերի համար զարու և ձոռոխի պաշարը հոգա: [Նա] օրական պետք է ստուգեր օգտագործված նյութի, *խասսեի* ուտելիքի ու սպասավորների լավին ու վատին, շատ ու քչին, որպեսզի *թահվիլդարները* ցածրորակ ապրանքներ չթողարկեին: *Նազերը* նաև պետք է արգելեր, որ *բոյութաթի թահվիլդարներն* ու աշխատողները չլիսն *ռայաթների* ու խեղճերի ունեցվածքը, ոչինչ առանց տիրոջ համաձայնության չգնեին, որպեսզի անեծքի պատճառ չլիներ և զինը-համաձայն նախապես որոշված արժեքի տրվեր: Ինչ կարգի ծախս էլ լիներ առանց *նազերի* գիտության չպետք է կատարվեր: Շահի *դուլամներից* ու սպասավորներից ոչ ոք առանց *նազերի*

կողմից *թալիդեի* ոչինչ չէր կարող տանել: Բարձրաստիճան *նազեր-ե բոյութաթը* բոլոր երեսուն երեք գործող արհեստանոցների պատասխանատուն ու ղեկավարն է և *սահերջամ'երի*, անգամ *ամիրախոռ բաշիի*, *ջաբադար բաշիի* գլխավորն է: *Սահերջամ'երի* մեծ մասի խնդիրները վերաբերում էին *բոյութաթի նազերին*:

### Երկրորդ գլխի յոթերորդ ենթագլուխ: Բարձրաստիճան մուղարբաբ ալ-խազան ղիվանբեկիի պաշտոնի բացատրությունը

Վերոնշյալը մեծ *ամիրներից* է և այս պաշտոնյայի պարտականությունն այն է, որ յուրաքանչյուր շաբաթվա մեջ չորս օր *սադրերի* հետ միասին ներկա գտնվի *զիվանբեկիների* համար հատկացված ատյանում չորս արարքների՝ սպանություն, կուսությունից զրկում, կուրացում և առաժի կտրում, մեղավորների հարցաքննությանը: Նա վերահսկում էր երկրի մյուս դատարանները, որպեսզի որևէ անարդարության ու չարաշահման գյուղացիների ու քաղաքացիների [նկատմամբ չգործվի], նաև [քննում էր] չորս- հինգ թումանից ավելի գումարի պարտքի ու պահանջի վեճերը: *Դիվանբեկիի* պարտականություններից էր *շարի'աթի* պատվիրանների գործադրումը և քաղաքի կարգուկանոնի պաշտպանությունը, որպեսզի ուժեղների կողմից թուլերին վնաս չհասնի: Նրանց համար, ում նկատմամբ բռնությունն ու անարդարությունը կատարվել է քաղաքի մտապաշտում, մինչև տասներկու մոդոն տարածության վրա,



*ղիվանբեկին* իրեն ներկայացված դիմումի հիման վրա *թալիդե* էր գրում ուղղված *դոռչիին* ու մյուս ենթականերին, որպեսզի քննություն անցկացնեն: Եթե հայցվորը հետավոր վայրից էր բողոք ներկայացնում, ապա սպանության գործի համար կարգն այնպիսին էր, որ վերջինս պարտավոր էր հինգ թուման *խլթիզամ* վճարել, որպեսզի *ղիվանբեկին* և *ղիվանի* գրագրի կողմից *թալիդե* գրվեր և հրամանագիր հրապարակվեր *խլթիզամի* գումարը *արվաբ-ե շամ*<sup>1</sup> էր արվում *մուհասիլին* իսկ հիշյալ հրամանագիրը՝ գրանցում մատչաններում և տալիքի ու առնելիքի հարցում այլ գումարների կարգին համապատասխան էր արվում: Շաբաթվա երկու մյուս օրերն էլ իր տանն էր գրադվում *'ուրֆի* գումարային վեճերի քննությամբ: *Ղիվանբեկին* վերաբերող դատավարություններից յուրաքանչյուրում, եթե վեճը վերաբերվում է *ղիվանի մալիյաթին* կամ վիճակ կողմերից մեկը հանդիսանում էր մեծ *վեզիրի* ենթականերից մեկը, նրան ուղարկում է մեծ *վեզիրի* մոտ: Նմանապես, եթե վիճող կողմերից մեկը *դոռչի, դուլամ*, զինվորներից կամ *բոյութաթի* գործապետներից է, նրա ղեկավարին է հանձնում: Իսկ *ղիվանի* ունեցվածքն հետևյալ կապ չունեցող այլ քաղաքաբնակների ու գյուղացիների վեճերի քննությունը նրան է հանձնված և նա է դրանց լուծում տալիս: Եթե *վիլայեթների* բնակիչների մի խումբ *բեկլարբեկերից, հաքիմ-ներից* կամ *վալիներից* ունեցած իրենց բողոքներով ուղիղ նրան են դիմում, այլ ոչ թե մեծ *վեզիրներին*, ապա *ղիվանբեկին* է բողոքի արդարացիությունը պարզում և նրանց բողոքի բովանդակությունը ներկայացնելով շահին՝ պետության շահերը ու երկրի օրենքները հաշվի առնելով՝ քննություն անցկացնելու համար:

## Երկրորդ գլխի ութերորդ ենթագլուխ: Բարձրաստիճան ամիր շեքարբաշիի պաշտոնի բացատրությունը

Վերոնշյալը պատվարժան *ամիրներից* է: Բոլոր *դուշիները* նրա ենթականերն են և նրանց ծառայությունը, խնդիրների զեկուցումն ու *ին'ամի* խնդրագիրը վերոհիշյալ պատվարժանին են վերաբերում: Վերոհիշյալ մարդկանց պահանջները, *թան-խահը, թիուլն* ու *համեսալեն* այդ պատվարժանի թույլտվությամբ ու բարձրաստիճան մեծ *վեզիրի* հրամանագրով են հատկացվում: Այնն տարի վերոհիշյալ պատվարժանի *թալիդեով* գերագույն արքայական գրագրատանը նրա նշանակած *դուշիների* պատրաստման համար նրան *թանխահ* է տրվում, որը ստանալով այն բարձրաստիճանը ըստ հաստատված կարգի բաժանում էր իր ենթականերին:

## Երկրորդ գլխի իններորդ ենթագլուխ: Բարձրաստիճան թեղանոթաձիգների պետի (թուպչի բաշի) պաշտոնի բացատրությունը

Վերոնշյալը բոլոր *յուզբաշիների, մինքաշիների*, թեղանոթաձիգների և թեղանոթաձագության մունետիկների գլխավորն է: Նրա ենթակաների *թիուլը*, աշխատավարձերը, *համեսալեն, բարաթն* ու *ին'ամը* այդ պատվարժանի թույլտվությամբ ու գերագույն *ղիվանի* բարձրաստիճան *վեզիրի* հրամանագրով են հատկացվում: Թեղանոթաձիգների *մինքաշիության* ու *յուզբաշիության*, մունետիկների ղեկավարության ու թեղանոթաձագության մունետիկների ծառայությունը, նրանց ենթակաների ու հիշյալ ողջ բազմության ոռոհիկների, *թիուլի* ու *համեսալեի*

ևշանակումը հիշյալ բարձրատիճանի դիմումով է շնորհվում և գերագույն *դիվանի* բարձրատիճան *վեզիրի թալիդեի* հիման վրա ազնվագույն հրամանագիր է հրապարակվում: Թնդանոթաձիգներին և օրինյալ հրետանուն վերաբերող գործերը քննում ու պարզում էր: Մարդկանց վերոհիշյալ խմբի ծառայության հրամանագրերը, *թիուլը*, *համեսալեն*, *ին'ամը* և *բարաթի թանխահները* վերոհիշյալ բարձրատիճանի *թողրայով* ու կնիքով էին հաստատվում: Թնդանոթաձիգների ցանկը ներկայացնում են *վեզիրը* և հիշյալ վարչության *մուսթովֆին* արքայական ներկայությամբ:

**Երկրորդ գլխի տասերորդ ենթազուխ: Բարձրատիճան ամիրախոռ բաշի-է ջելոուի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի պարտականությունն այն է, որ ներկա գտնվի Նորին Մեծության կողմից *խասսե-է շարիֆեի* ախոսների, *փիշ-բաշ* արված կենդանիների և այլնի ստուգմանը կամ երբ նա *խասսեի* ձիերն էր հեծնում: Ախոսների կարգ ու կանոնի [պահպանությունը], ախոռապետի, ձիապանների ու ջուր մատակարարողների [ևշանակումը] նրան էր վերապահված: Հիշյալ աշխատողների, *խասսեի ջելոդարների* ու մյուս սպասավորների, ներքինիների, *դուլամների* ու այլ գործավորների *թալիդեները ամիրախոռ բաշի-է ջելոուն* էր գրում: Նշված անձանց ստուգման ցուցակը *նազեր-է բոյութաթին* ներկայացվելուց հետո բարձրատիճան *ամիրախոռ բաշիի* հաստատմանը: Վերոհիշյալ բարձրատիճանը բացի *խասսեի ջելոդարներից* հաստատում է նաև *ջելոդար բաշիին* ու ախոսների մնացյալ աշխատողներին, որոնց մասին նշվեց. նաև պայտագործներին ու անասնաբույժներին:

Որից հետո այն ստորագրվելով գերագույն դիվանի բարձրատիճան *վեզիրի* կողմից՝ նրանց *թանխահ* էր տրամադրվում:

**Երկրորդ գլխի տասնմեկերորդ ենթազուխ:**

**Բարձրատիճան ամիրախոռ բաշի-է սահրա-ի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանք [այն է, որ] ամեն տարի ընտանի կենդանիների հսկիչի հետ ձիերի երամակների մասին գեկուցի *խասսեի սարքարին* և արդյունքները ուսումնասիրելով և գեկուցման ցուցակն իր ձեռքով պատրաստելով *արբաբ-է թանվիլի սարքարին* ներկայացնի: Անասնակերը և երամակների համար անհրաժեշտ այլ բաները ըստ ընդունված կարգի պատվելիների հաշվարկով և *ամիրախոռ բաշի-է սահրայի* ու կենդանիների *նազերի* թույլտվությամբ ու հաստատմամբ *թանխահ* է տրամադրվում: Արգելափակների (դուրդաթ) տնօրինումն ու պահպանումը վերոհիշյալ բարձրատիճանի պատասխանատվության տակ է: Վերոհիշյալ բարձրատիճանին է վերապահված *ամիրախոռների*, *բուլբ բաշիների*, ձիապանների ու ախոսների մյուս աշխատողների նշանակումն ու հաստատումը:

**Երկրորդ գլխի տասներկուերորդ ենթազուխ:**

**Բարձրատիճան մուղարբաբ ալ-խաղան դրախտային հավաքի մաջլեսների պաշտոնի բացատրությունը**

*Վաղէ'եննիսների* պաշտոնի պարտականություններն հետևյալն են, որ [այլ երկրների] թագավորներից Իրանի շահերին գրված նամակների պատասխանները, հարատևող *դաֆթարների* հիման վրա պաշտոնների [ևշանակումների], ծառայության, *հա-*

*մեալեի* ու *թիուլի* հրամանագրերը և շահի կողմից «բերանացի» կարգադրված ամեն տեսակի հրամանագրերը, որ կոչվում են «մոշաֆենե», կամ գերագույն դիվանի բարձրաստիճան *վեզիրի թա'իդեով* կամ երբ մեծ *ամիրները* ու *մուղաբրարները* որևէ բան որպես ուղերձ [շարադրելով] «բարձրագույն հրամանով» ձևակերպմամբ *վադե'ենևիսին* էին հանձնում՝ նրա ծանուցմամբ ու գրչագիր *թողրայով* հաստատում էին: Գրչով *թողրա* գրելը *վադե'ենևիսի* հատուկ պարտականությունն է և որևէ մեկը դրա իրավունքը չունի: Վերոհիշյալ բարձրաստիճանը համարվում էր խորհրդի անդամ (չանադի) և հատուկ ու ընդհանուր նիստերի մասնակից է, որը երկրի տարբեր շրջաններից *ամիրների* ու *հաքիմների* գերագույն գահին ուղղված խնդրագրերն ու հայցերը, շահի կողմից հղվում են *մաջլեսևևիսին*, որպեսզի արքայական ներկայությամբ հատուկ և ընդհանուր նիստերի ժամանակ ընթերցվեն և պատասխանները գրի առնվեն: Այն ինչ, որ պետք է հրամանագրով հրապարակվի *վադե'ենևիսի* նշած օրինակի հիման վրա, վերջինիս ենթակա *ռադամևևիսներն* են գրում: Հայցերի պատասխանները *վադե'ենևիսները* կետ առ կետ արքայական հրամանին համապատասխան իրենց ձեռքով գրում են և իրենց համապատասխան տեղում գրանցում: *Վադե'ենևիսների* ենթակաները 10-ն են՝ հետևյալները, որոնց միջոցով էլ պատրաստվում են Լորին արքայական Մեծությանը ներկայացվող խնդրագրերը:

-Հրաման գրողները և այդ հրամանները մատյաններում գրանցողները՝ 7 հոգի

*Ռադամևևիսները*, որոնք պատ- Գերագույն *դիվանի ռադամ*-  
բաստում էին *դաֆթարներից նևիսը* և 3 այլ անձ, որոնք

պատճենները (մոտավադե)՝ 2 նրան օգնական էին նշանակ-  
վում, և հրամանագրերի

գրանցման պատասխանա-  
տուները՝ 5 հոգի:

Նրանք, որոնք բարձրաստիճան հարգարժանի հայեցողությամբ ընդգրկվում էին գրասենյակային աշխատանքի մեջ, 3 հոգի էին՝

- Նրանք, որոնք նրա հայեցողությամբ էին ծառայություն մատուցում՝ 2 հոգի;

- Նամակ գրողներ, 1 հոգի:

Խնդրագրերի պատրաստելը *վադե'ենևիսի* պարտակա-  
նությունն է, և այն բոլոր խնդիրները, որոնք [բարձրացվում էին] պաշտոններին և պետության օգտին ներկայացվող խնդրագրե-  
րում, եթե պետական շահերին համապատասխանում էին, նրանց էին վստահվում: Յուրաքանչյուր տարի Մպահանի *վջու-  
հաթից* նրանց *թանխահ* էր տրվում երեսույն թուման որպես բոլթի գին՝ հրովարտակների գրության, գրանցման ու *դաֆթարների սարրեշթեի* համար: Երբ, որ իրենք որևէ խնդիր ունեին ներկայացնելու իրենց կամ այլոց կողմից, նրանք անարգել կարող էին շահին ներկայանալ ու զեկուցել հատուկ և ընդհանուր նիստերի ժամանակ: Ում կողմից էլ լինեք խնդրագիրը և ինչպի-  
սին էլ այն լինեք, դրա ընթերցումը շահի ծառաների ներկա-  
յությամբ ու պատասխան գրելը ոչ ոք բացի *մաջլեսևևիսից* չի կարող անել: Այդ պատճառով *վադե'ենևիսին* (պատմագիր) նաև *մաջլեսևևիս* են անվանում: Եվ գրագիրներից զատ միայն մեծ *վեզիրն* է իր աստիճանակարգով [արքունիքում] ավելի բարձր ու [շահին] ավելի մոտ: Հին ժամանակներից *վադե'ենևիսը* մշտապես գտնվելով թագավորի ծառայության մեջ, մասնակցում էր արքունական հատուկ և ընդհանուր ժողովներին: Բոլոր կողմ-

նակի ու կարևոր հարցերի քննության ժամանակ *վաղե նենկս-ների* խոսքն ու զեկուցումը հեղինակավոր ու որոշիչ է եղել:

**Երկրորդ գլխի տասներեքերորդ ենթագլուխ:  
Բարձրաստիճան մուսթովֆի ալ-մամալեքի պաշտոնի  
բացատրությունը**

Վերոնշյալը համարվում է մեծ *ամիրներից*: Նրա պաշտոնն ու աշխատանքը նշանակալի են. թագավորության ամբողջ տարածքում *դիվանի մալիյաթի* հետ կապված բոլոր գործարքները *դաֆթարների* հիման վրա ամեն *վիլայեթում* գտնվող իր *ամիրներին* նրա կողմից տրված ցուցումներին համապատասխան պետք է կատարվեն և խստորեն հետևեն դրանց: *Բեկլարբեկերի, խաների, հաքիմների ու սուլթանների* բոլոր թիուլներն ու համեսալենները, *վեզիրների, մուսթովֆիների ու քալանթարների ռուսումաթը*, ինչպես նաև գրագիրների, զինվորականների աշխատավարձերը, *վագիֆեները, սոյուրդալները* ու այլ զբանցված հատկացումները, որոնք նրա կնիքով հաստատվում էին, գործադրվում ու *թանխահ* էին արվում: Գերագույն *դիվանի վեզիրները* առանց վերոհիշյալի հաստատման *դիվանի մալիյաթից* ոչինչ չէին կարող գործարքի մեջ ներգրավել: *Դիվանի մալիյաթում* վերոհիշյալի թույլտվությունն ու հաստատումը կարևոր էր: Գերագույն *դիվանի* գրագիրները յուրաքանչյուր վարչության գլխավորի հաստատումից հետո տալիս էին նրա վավերացմանը: *Նագերը, դաֆթարի դարուդա, սահեր թովջիհը, զարբեթեննիսը, ավարեջեննիսներն* ու մյուս բոլորը նրա ենթականերն են: *Նասսեի* վարչությանը ու *արբաբ-ե թահվիլի վճուհաթին* վերաբերող գործարքները, որոնք *խասսեի* ու *արբաբ-ե թահվիլի մուսթովֆիի*

պատասխանատվության տակ են՝ ինչպես, որ վերոհիշյալը (*մուսթովֆի ալ-մամալեքը*) հատկացնի, այնպես էլ *թանխահ* են արվում: Բացառությամբ *վագիֆենների, մուսֆուլթայան և խասսեի* վարչության հրամանագրերի, աշխատանքի անցնելու ու մնացյալ մնացած բոլոր տեսակի ծառայությունների *թանխահների* հրամանագրերը, անկախ նրանից *դիվանի, խասսեի, թե արբաբ ալ-թահավիլի դաֆթարից* են *թանխահ* արվել, [նրա] կնիքով են հաստատվում: *Դիվանի դաֆթարի* գրագիրներին սխալների համար պատասխանատվության ենթարկելը նրա պարտականություններից է: Թագավորության տարածքում աշխատող *մուսթովֆիները* նրա թույլտվությամբ պետք է նշանակվեն:

Վերոնշյալի գրագիրները, որոնք գրագրությամբ են գրավում բարձրաստիճան *մուսթովֆի ալ-մամալեքի* մոտ և հրամանագրով են [նշանակվել] *դիվանի* այդ ծառայությանը, հիևզն են: Նրանց պաշտոնն ու աշխատանքն այն է, որ *դաֆթարի* գործարքներին վերաբերող բոլոր հրամանագրերը, նշանակումները, *թանխահները, համեսալենները, թիուլները, մուսֆուլթայանները, սոյուրդալները* և այլն, կարդան, ճշտեն և այն, ինչ կարգին համապատասխանում է, վերոհիշյալ բարձրաստիճանի կնիքով ու ստորագրությամբ հաստատել տան, իսկ այն, ինչ կարգին հակառակ է, մատյանի հիման վրա պատասխան գրեն ու թղթի տիրոջը վերադարձնեն: Այլ ծախսերի բաժինների ծանուցման ու ուղղորդման նպատակով *խալխսի* գրագիրները, որոնք վերոհիշյալ բարձրաստիճանի (մուսթովֆի ալ-մամալեքի) ենթականերն են, գրանցում էին պաշտոնների [նշանակումների] ծառայությունների, *թիուլների, համեսալենների, քարաթով թանխահների, ին՝ ամի, սոյուրդալների*, ապահարկության և այլ դրամական գործարքնե-

րի վերաբերյալ հրամանագրերը: Գրագիրները չորսն էին, որոնցից ոչ մեկն այժմ ողջ չէ:

**Երկրորդ գլխի տասնչորսերորդ ենթազույն:**

**Բարձրաստիճան խալիֆաթ ալ-խալաֆայի պաշտոնի բացատրությունը**

Լրա աշխատանքն այն է, որ Շեյխ Մեֆի ալ-դին Իսհակի<sup>141</sup> ժամանակվա կարգին համապատասխան յուրաքանչյուր ուրբաթ զիշեր բոլոր սուֆիներին և դերվիշներին աղոթավայրում հավաքի և միասնաբար հստակ արտասանեին հետևյալ ճշմարիտ խոսքը <sup>142</sup> «الله اعلم: [Լա] ուրբաթ զիշեր դերվիշներին հաց, հազվա և ուտելիք է բաժանում, իսկ այլ առիթներով՝ [միայն] հաց և ուտելիք: *Խալիֆաները* երկուսն են, [կա նաև] մեկ գլխավոր սպասավոր և աղոթատեղիի մի քանի *ամրիներ*: *Խալիֆան* նշանակվում էր թագավորության ամբողջ տարածքում օրինականության պահպանման և անօրինականության արգելման համար: Աշխատում էին, մարդկանց ուղղորդելու համար դեպի ճշմարիտ ուղի: Նշանակումը կատարվում էր *թա'հրզեով*, որի հիման վրա հրովարտակ էր հրապարակվում:

<sup>141</sup> Շեյխ Մեֆի ալ-Դին Իսհակը (1525-1354) Սեֆյանների սուֆիական միաբանության հիմնադիրն է, որի անվան հետ էլ կապվում է Սեֆյան պետության անվանումը:

<sup>142</sup> Չկա Աստված բացի Ալլահից:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐ

Այն պաշտոնների բացատրությունը, որոնց հետ օգտագործվում են «մուղարբաբ ալ-խադան» և «մուղարբաբ ալ-հազրաթ» բառակապակցությունները: Այն բաղկացած է երկու հոդվածներից (մաղալե):

### Երրորդ Գլխի Հոդված Ա

*Մուղարբաբների* մի խումբը նրանք են, որոնց [Նորին Մեծությանը] մտախնայան պատճառով և ծառայողական աստիճանակարգով կոչում են *մուղարբաբ ալ-խադան*, և երկու տեսակի են լինում:

#### Առաջին տեսակը

Բարձր պաշտոն ունեցող ներքիններն են: Նախկին Սեֆյան շահերի ժամանակներում ներքինները սպիտակամորթ չեն եղել, իսկ սևամորթ ներքիններից ով, որ ավելի խելացի, ճարպիկ ու արժանավոր է եղել, նրան հարեմի ներքինապետ են դարձրել՝ նրան վերապահելով բոլոր սև ներքինիների ղեկավարումը: Սահմանային կամ պալատական ամիրների կողմից հղված բոլոր խնդրագրերը առաջին հերթին հանձնում էին հարեմի հարգարժան *իշիքադասի բաշիին*, որը հատուկ գրասենյակ ուներ: Իսկ հարեմի *իշիքադասի բաշին* էլ իր հերթին դա տալիս էր հարեմի ներքինիների գլխավորին, վերջինս էլ հարեմում դա հանձնում էր շահին, որից պատասխան ստանալով, *ամիրներին* գրասենյակում և *իշիքադասի բաշիին* անձամբ էր ասում, թե խնդրագրի կապակցությամբ շահն ինչ է կարգադրել: Մեկ այլ աչքի ընկնող ներքինու, որն իր արժանավորությամբ ու վստահելիությամբ հավասար էր հարեմի ներքինապետին, դարձնում են

արքունի գանձարանի *սահեբջամ*<sup>143</sup>, որի ներքին ու արտաքին բոլոր գումարային և ապրանքային գույքերի էլ ու մուտքը դեպի հարեմ նրան էր վստահված: Գանձարանի բանալիների պահպանակը նույնպես մի սեանորթ ներքինի է, որը ենթարկվում էր գանձարանի *սահեբջամ*՝ին և գանձարանի մնացած բոլոր աշխատողները ևս նրան էին ենթարկվում, որոնք ևս ունեին անկախ գործելու հնարավորություն և վստահելիներից են եղել: Նախորդ շահ Աբբաս Ա-ի ժամանակ հարյուր հոգի վրացի *ղուլամներ*ից ներքինացվում է և նրանցից մեկը, որն առավել վստահելի էր, նրանց *յուզբաշին* է դարձվում, և մի *յուզբաշի* էլ նշանակվում է սև ներքինիների գլխավոր, որին ենթակա էին հարյուր սև ներքինի: Մինչև շահ Սուլթան Հուսեյնի ժամանակները սպիտակ ներքինիների *յուզբաշին* Իբրահիմն էր, իսկ սև *յուզբաշիններ*ը՝ Էլիաս Ազան: *Յուզբաշիններից* յուրաքանչյուրը պատվելի հարեմի շրջակայքում բնակարան, գույք ու *թիուլ* [ունեթ] և ինչպես, որ հայտնի էր համապատասխան *դաֆթարներից*, իրեն ու իր ենթականերին հատկացված ռոճիկն էին ստանում: Նույնպես *ջարադար բաշի*ի աշխատանքն ու վերահսկողությունը, որ նախկին շահերի ժամանակ ղզլբաշների մոտիկներին էր վերապահված, շահ Սուլեյմանը և շահ Սուլթան Հուսեյնը սպիտակ ներքինիներին էին հանձնարարում: Մահմուդ Ազան սկզբում որոշ ժամանակ *ջարադար բաշի* էր, հետո՝ *նազեր*: Նրա մահվանից հետո *ջարադար բաշիությունը* [հանձնվեց] Իսմայիլ Ազային, որը սպիտակ ներքինի էր իսկ *նազեր*ի պարտականությունը վերադարձավ ղզլբաշներին: Հանդերձատան (ռաբիբխանեի) ավագի ծառայությունը ևս հանձնարարվում էր վստահելի ներքինիներին:

րին: Եվ մտա ծառայության և թաշկինակի դարդի<sup>144</sup> պահպանությունը հանդերձատան ավագներին է վստահված: *Խասսեհի ղուլամները* շահերի թիկունքում են կանգնում և հատուկ դայակ ունեն: Մանկահասակ հասարակ *ղուլամները*, որոնք դեռ մորուք չունեին հատուկ դայակ և ուսուցիչ ունեին, որոնք զբաղվում էին նրանց դաստիարակությամբ, իսկ երբ մորուքն աճում էր ու հասունանում էին, մտնում էին *ղուլլար աղասիների* ենթակաների շարքը:

#### Առաջին հոդվածի երկրորդ տեսակը

Այն *մուղարբաբների* աշխատանքի մասին է, որոնք ներքինիներից չէին և նրանց *մուղարբաբ ալ-խազան* էին կոչում, և այս տեսակը բաղկացած է ութ ենթագլուխներից (ֆասլ):

#### Առաջին ենթագլուխ: Մուղարբաբ ալ-խազան

##### հեթմ բաշիի պաշտոնի բացատրությունը

Վերոնշյալը արքունի բժիշկների գլխավորն է, որը շահի ընդհանուր ու հատուկ նիստերի մասնակիցն ու գրուցակիցը լինելով՝ սիրված ու հարգված էր: Նրա պարտականությունն է Նորին Սրբազնագույնի բուժումը, թող նրա անվան համար մեք զոհաբերվեք, շահի գարկերակի ստուգումը նրա բացառիկ պարտականությունն է: Բժիշկների աշխատավարձը, *ինձանը* և ծառայությունը նրա հաստատմամբ, թույլտվությամբ ու դիմումով էր որոշվում, որոնք մեծ *վեզիրները* և *բոյութաթի նազերները* գործադրում էին: Վերոհիշյալ բարձրաստիճանի ենթականերից

<sup>143</sup> Նավի տեսքով ոսկեգոծ տուփ, որի մեջ թաշկինակ կամ անուշաբույր օծանելիք էր պահպանվում:

էր խասսե շարիֆէի 'աթարբաշին: Ոչ արքունի բժիշկների բժշկության արգելումը գիտելիքների անբավարարության պատճառով ևս նրան էր վերապահված: Եթե վալիներինց ու բեկլարբեկերինց որևէ մեկը, սեփահսալարը կամ սարդարը բժիշկ էին խնդրում Նորին Մեծությանից, վերոհիշյալ բարձրաստիճանի (իեթիմ բաշիի) մոտ էին ուղարկում: Նախկին շահի ժամանակվա բժիշկները, բացի Միրզա Ռահիմ հեթիմ բաշին, որը տարեկան 400 թուման համեսալե ոռճիկ ուներ, շուրջ 68 հոգի սպասավոր ունեին և ստանում էին 1796 (հազար յոթ հարյուր ինսուն վեց) թուման և 6366 (վեց հազար և երեք հարյուր վաթսուն վեց) դինար, որը բարաթով որպես համեսալե ու թանխահ էր հատկացվում:

#### **Երկրորդ ենթագլուխ: Մուղարբաբ ալ-խաղան մու՛ալլիբ բաշիի պաշտոնի բացատրությունը**

Վերոհիշյալը գլխավոր բժշկի հրամանով ներկայանում էր արքունիք, որ եթե շահը կամ նրա մոտիկ մարդիկ որևէ գործի ձեռնարկման, ճանապարհորդության նոր հագուստ հագնելու ու կտորը կտրելու [ձևելու] համար ամենից բարենպաստ ժամը հրամայեր գտնել, հայտներ [նրանց]: Հարստության սկզբնական տարիներին լուսնի և արեգակի խավարման, թագավորների ծննդյան օրվա կապակցությամբ դոռչի բաշիների և ամիրների կողմից վճարվող ողորմության գումարները արքունի ամենախմաստուն ու լավ գիտնականները, երբեմն նաև մոնաշեմբաշիներն էին բաժանում կարիքավորներին: Այն ժամանակներից, երբ մուլլաբաշի նշանակվեց, այդ գումարները նա էր պատվարժան անձանց էր բաժանում: Կարճ ասած, լուսնի ու

արեգակի խավարման, [թագավորի] ծննդյան օրերի կապակցությամբ կարիքավորներին ողորմության գումարի հասցնելը մոնաշեմբաշիի ու մուլլաբաշիին էր վերապահված:

#### **Երրորդ ենթագլուխ: Մուղարբաբ ալ-խաղան մու՛ալլիբ ալ-մամալեթի պաշտոնի բացատրությունը**

Աշխատանքը, որը հնագույն ժամանակներից [վերապահված] էր մու՛ալլիբներին (ոսկու և արծաթի որակը վերահսկողներին), այն էր, որ վարպետները նրանց գիտությամբ ու վերահսկողությամբ ոսկին ու արծաթը որոշված կարգին համապատասխանող հարգով ու կշռով դրամահատարանում հատեին դրամը, որ դիվանին ծառայող դրամահատները ձևավորել էին [Նորին Մեծության] արեգակնային հայացքին արժանացնելով: Քանի որ թագավորության գործերի հաջողությունը պայմանավորված էր խութթայով և դրամով, իսկ դրամը վստահված էր մու՛ալլիբներին, ուստի այս պաշտոնյաները վայելում էին հատուկ վստահություն ու հարգանք: Այն բոլոր աշխատանքները, որոնք վերաբերում էին արքունի դրամահատարանին կազմակերպվում էր նրա միջոցով: Նա ներկա էր լինում բոլոր հատուկ ու ընդհանուր կիստերին և նրան չէր արգելվում դրանց ժամանակ իր խնդիրների մասին զեկուցել և խնդրանքները բերանացի ուղղակիորեն շահին ներկայացնելը: Նախկին շահերը ևս դրամահատարանի հետ կապված ու նրան վերաբերող ինչ գործ էլ լիներ մու՛ալլիբներին էին կանչում ու նրանց հանձնարարում: Եթե գառաբի բաշին և մու՛ալլիբը տարբեր անձիք էին, ապա մու՛ալլիբին էր վերապահված գառաբի բաշիներին, ինչպես նաև դրամը հատողներին, փորագրողներին, դրամի առք ու վաճառ-

քով զբաղվողներին, ոսկերիչներին և դրամահատարանի ստորև նշվող ինն գործիքների վարպետներին և բոլոր աշխատողներին նշանակելու, աշխատանքից հեռացնելու ու պատժելու իրավունքը: Դրամահատարանի ինը գործիքների վարպետներն են՝

- 1- Չուլման (սաբբաբի) գործիք: Այս գործիքով աշխատողը բանվորը ոսկու խառը և արծաթի քիչ պարունակությամբ կտորը բուրայում գտնու ու մաքրում է:
- 2- Տափակեցնելու (դորսբուրի) գործիք, որով ոսկու մաքուր ձուլվածքը ծեծելով տափակեցնում են:
- 3- Դարբնի (ահանգյարի) գործիք: Այն բանից հետո, երբ դորսբուրը իր գործն ավարտեց, երկաթագործի թեժ ձողով ոսկին ձուլակտորների են վերածում:
- 4- Անիվ քաշելու (չարխբաշի) գործիք: Երկաթագործի աշխատանքից հետո, անիվ քաշող արհեստավորը ոսկին և արծաթը պողպատի անցքերով են անցկացնում:
- 5- Հառման (դաթթաի) գործիք: Այդ գործիքով ոսկին և արծաթը հառում են դրամի պատրաստման համար:
- 6- Մեծելու (քահլեբուի) գործիք: Այդ գործիքով ոսկու ձուլակտորները *արասիի* և *փանջշահիի* [պատրաստան] համար տարածում են:
- 7- Սպիտակեցման (սաֆիդգարի) գործիք: Այդ գործիքով աշխատողները ոսկու ձուլակտորները սպիտակեցնում են:
- 8- Ճշման (թախշբուհի) գործիք: Աչքաչափով թերի քաշ ունեցող առանձնացած-արչափն նորից է թողարկել տալիս:
- 9- Դրամահատման (սեքքեբուի) գործիք: [Այս գործիքով] դրամահատ վարպետները ամեն օր զբաղվում են դրամահատման աշխատանքով:

Այս աշխատանքը վերապահված է միայն *մու'ալլիբներին* և այլ աշխատողները դրան մասնակից չեն: Արքայական հրամանագրով կարգադրված է, որ երկրի բոլոր *զարիթները*, *մուսթասաշիբները*, արհեստավորներն ու աշխատողները, ոսկեզօծողները, ոսկերիչները, դրամավոխները, պղնձագործներն ու ձուլող վարպետները առանց *մու'ալլիբներին* կամ նրա ենթականերին տեղեկացնելու առևտուր չանեն և նրա նշանակման ու պաշտոնագրվման դրոշումներին ենթարկվեն: Ոսկու «ամբողջ հարգը», որ մաքրումից հետո ստացվում է, այն է, որի հարգը համապատասխանում է դրաթի<sup>144</sup> հին *աշրաֆիի* հարգին: Արծաթի երեսպատման համար օգտագործվող *մաքուր* ոսկու հարգը նս պիտի հավասարվի հին դրաթի դրամի որակին: Դրամահատարանում երեսպատման համար ոսկին սովորաբար 5 տոկոս է օգտագործվում, երբ պահանջվում էր, որ ոսկու ծածկույթը ոսկեխուս ու ծանր լինի, բարձրը՝ 10 տոկոս, իսկ ամենաբարձրը 15 տոկոս էին անում:

Որակյալ արծաթի չափանիշն այն է, որ արծաթի մեկ բաժնից երբ հնոցում հավված արծաթը դուրս էր գալիս պղնձաձուլական գործիքից վերցնելուց հետո ծայրերից կոտռների ձևով դուրս եկող պղպջակներ ունենա: Այդ պատճառով էլ մաքուր արծաթին *կոտռավոր* են անվանում: Եվ ամենից որակյալ արծաթը այն է, որ եթե 100 *միսղալ* կոտռավոր արծաթ էին հալեցնում, կորուստը չի գերազանցում 4/6-րդից մինչև 1 *միսղալը*:

Եկամտի մասը, որը *զարիթը*, *զառաթի բաշիները*, *թահվիլ-դարները* գանձում են հօգուտ *խասսե-ե շարիֆեի* վարչության

<sup>144</sup> Հնարավոր է, որ լինի Վենետիկյան օսկեդրամի՝ դուկատի ձևափոխված անվանումը:



վաջերի են անվանում: *Ղիվանի* վարչության *վաջերի* նրամահատարանում հատված ուկուց ու արծաթից հին ժամանակներից հետևյալն է եղել. ոսկու մեկ *միսղալի* համար 30 դինար, արծաթի մեկ *միսղալի* համար՝ 2 դինար: Ավելի ուշ *մու'այյիրները* աստիճանաբար գերագույն *ղիվանի* վարչության պահանջներին ընդունաջելով *վաջերի* չափը բարձրացրին և հաստատեցին. ոսկին՝ մեկ *միսղալի* համար 50 *դինար*, արծաթը՝ մեկ *միսղալի* համար 5 *դինար*: Իսկ այն տարի, որ նախկին շահը այցելում էր Ղազվին, *աբասիի* կշիռը 7 *դանգ* էր բոլորով: Երբ շահը նշված ճամբորդությունից վերադարձավ, նախքան Սպահանի շրջափակումը, Մուհամմեդ Ալի անունով *մու'այյիր ալ-մամալեթը* գերագույն *ղիվանի* բաժինը և *խասսեի* վարչության եկամուտը ավելացնելու համար՝ տեղեկացնելով շահին ու նրա հավանությունը ստանալով, *աբասիի* կշիռից մեկ *դանգ* պակասեցնելով, սկսեցին հատել 6 *դանգ* [կշռով] *աբասի*: Այն թվականից հետո մինչև շահ Մահմուդի գահ բարձրանալու տարվա 9-րդ ամիսը *գաուբխանեի վաջերի* նախկին շահի հրամանի համաձայն նույն կերպ էր գանձվում և իրացվում՝

**Ոսկի:** Դրամ՝ 1 *միսղալից* 50 *դինար*

**Արծաթ:** 1 *միսղալից*՝ 33 *դինար* [կամ] 1/2 *թասուջ* և 2 *շա'իր*

**Նախկին վաջերին՝** [ոսկու 1 *միսղալից*] 5 *դինար* էր, [արծաթի] մեկ *միսղալից* 1/7-ը. 28 *դինար* և 1/2 *թասուջ* և 2 *շա'իր*

Երբ սուլթան Մահմուդին տեղեկացրին, որ *աբասիի* կշռի 6 *դանգը* նախկին թագավորների դրամն արժեզրկում է, հրամայեց որ նապաստակի տարվա ռումագան սրբազան ամսից *աբասին* դրամահատարանում հատեն 5 շահի 9,5 *դանգ* կշիռով, իսկ ոսկու և արծաթի *վաջերի* հետևյալ կերպ՝

**Ոսկի**

Յուրաքանչյուր *միսղալից* նախկին կարգին համաձայն:

**Դրամ:**

50 *դինար*

**Վրայի շերտը:**

100 *դինար*

**Արծաթ**

**Մետաղադրամ - միսղալից** 10 *դինար*

**Կանխիկ և արծաթ՝ օղակներով - [միսղալից]** 16 *դինար*

Պետք է *խասսեի* վարչության օգտին *գարթ* արվեր և տարբերությունը վերացվեր: Այդ պատճառով հինգշահիանոց դրամները շատ տարածում ստացան, և հատվելուց հետո տարբեր կողմեր տարվեցին: Նույնիսկ այն քաղաքներում, որոնք չէին հպատակվել, [նշված դրամները] շրջանառվում են: [Դրամի] կեղծումը օգուտ չէր բերում, եթե այդ կշիռով ոսկուց էին այն հատում: Այժմ Նորին Գերագույն սրբազանագույն բարեբախտ Մեծության դրամներն են. *փանջշահի*՝ շահ Մահմուդի ժամանակվա 9,5 *դանգ* կշռով և *աշրաֆի* ոսկին, որ հատվում է հին կարգով՝ 4,5 *դանգ* [չափով], և փառք Ալլահին Սպահանում ու երկրի տարբեր կողմերում շատ ընդունված ու շրջանառվող է: Նախկին թագավորների ժամանակ դրամահատարանի *վաջերիի* ամբողջ հասույթը ամենահաջող տարում, երբ բազմաթիվ առևտրականներ տարբեր կողմերից մեծաքանակ ապրանք էին բերում և [Սպահան] քաղաքը բարձրության մեջ էր, [այնպես, որ] դրամահատարանում 9 դագահների վրա աշխատող 400 աշխատողները ամեն օր աշխատում էին՝ դրամահատարանում 500-ից 600/700 *թուման* վարձին էին տալիս, որից *մուսթաաջիրը*, որը սովորաբար *ղիվանի* ամբողջ վարձակալումից վճարում էր 1000 *աշրաֆի*

և 100 դասթաջե քիլա<sup>145</sup>, որի արժեքը մոտավորապես 250 թուման էր հաշվվում և հետևյալ կերպ ուղարկում էր պետական գանձարան: 350 թուման էլ *մու'այյիբի, գառաբի Բաշիի* և պատվելի *խասսեի* վարչության մյուս պաշտոնյաներին էր վճարվում: Պետական գանձարանին նշված գումարից գառ ոչինչ չէր տրվում: Վաղ ժամանակներից սկսած մինչ այժմ *խասսե շարիֆեի* վարչությանը հանձնվող գումարի 1/16-ը հատկացվում էր *մու'այյիբ ալ-մամալեբին* որպես աշխատավարձ:

**Չորրորդ ենթագլուխ:** Մուղարրաբ ալ-խաղան մոնջի ալ-մամալեբի պաշտոնի բացատրությունը

Վերոհիշյալի աշխատանքը, ծառայության, *թիուլի, համեսալեի, թանխահի*, աշխատավարձերի կապակցությամբ [հրապարակված] և արքայական օրհնյալ այլ հրովարտակաների [վրա]՝ և *ղիվանբեկիի* կողմից տրվող հրամանագրերի՝ բոլորի վրա *մոնջի ալ-մամալեբը* կարմիր թանաքով և ոսկեջրով *թողրա* է գրում հետևյալ կերպ՝

- «Աշխարհասաստ հրաման եղավ» գրությամբ *ղիվանբեկիի* հրապարակած *հոքմերի* վրա,
- «Արքայական հրաման եղավ» գրությամբ՝ *թանխահի*, պարտագումարների, զինվորականների *թիուլների, սոյուրդալների* և *համեսալեների հոքմերի* վրա,

<sup>145</sup> Մինորսկին ենթադրում էր, որ դա հավանաբար հատուկ մեծ չափի դրամներ էին, որոնք կշռով հավասար էին 2 թումանի ոսկու, որ կշռում էր 711 հատիկ (Tadhkirat al-mulūk, p. 61):

- «Արքայական հրամանագիր հրապարակվեց» գրությամբ նամակներին ի պատասխան և *սադրերի միսալների* հիման վրա [հրապարակված հրովարտակաների վրա]:

*Մոնջի ալ-մամալեբը թողրան* է նկարում, սուֆիների տոհմաձառը և նրանց *սոյուրդալները* [շնորհող արքայական հրամանագրերը] գրում: Նրա ենթակաները գրագրատանը քսանութ հոգի են՝ ըստ հետևյալի՝

*Դիվանի մոնջի*՝ 1 հոգի Գրագրատան գրագիրների թիվը՝ 28 հոգի<sup>146</sup>

Բայց ներկայումս ոչ մեկը չկա: *Թողրայի* ոսկեջուրը և կարմիրը [թանաքը] գծվում էր բացառապես միայն *մոնջի ալ-մամալեբի* գրչով: Նա արքունիքին մտո կանգնած անձնավորություններից էր, որը ներկա էր գտնվում բոլոր ընդհանուր ու հատուկ [արքունական] հավաքներին և գրագրատան բոլոր քարտուղարների և գրագիրների աշխատավարձերը, նրանց համապատասխանությունն ու պատրաստվածությունը վերոհիշյալ *մուղարրաբ ալ-խաղանի* պատասխանատվության տակ է: Բոլոր սուլթանների ժամանակներում *մոնջի ալ-մամալեբները* սիրված ու հարգված, բազում շնորհներով օժտված անձիք են եղել:

**Հինգերորդ ենթագլուխ:** Մուղարրաբ ալ-խաղան

արքայական կնիքի մոհրդարի պաշտոնի բացատրությունը

Ինչպես պարզվում է նախկին *մոհրդարի* գրանցամատյանից, նա Ղամի *մահալի* և այլ վայրերի *թիուլ* ուներ՝ սկզբում 364

<sup>146</sup> Մինորսկու մոտ 27 հոգի է:

թումանի, ապա 1365 թուման և 1 դինարի չափով: Երբեմն նշված *թուլը* հանվել են, և փոխարենը նրանց կառավարմանն է հանձնվել որևէ շրջան, երբեմն էլ ընդունված կարգի համաձայն *մոհրդարի* պաշտոնը տրվել է առանց *թուլի*: Իսկ այժմ արքայական կնիքի *մոհրդարի* (պաշտոնը) աշխարհի դաբալեն (շահը) նախկին կարգի համաձայն *մուղարբար ալ-խադան* Ալլահդադ Բեկին է շնորհել: Նրա պաշտոնը համարվում է կարևորներից մեկը, որը մասնակից էր արքայական դրախտային հավաքույթների նիստերին: *Մոհրդարի* պաշտոնը էին ժամանակներից եղել է այն, որ բոլոր *ռադամները*, որոնցով [նշանակվում էին] *վեզիրները*, *մուսթովֆիները*, *քալանթարները* և [հատկացվում] *ամիրների* ու *հաքիմների սոյուրդալների*, *մուաֆուսթյան*, *թիուլներ* փաստաթղթերը, որոնք մատյանների մեջ գրանցվելուց հետո վերոհիշյալ *մոհրդարի* մոտ գտնվող արքայական կնիքով [հաստատվում էին]՝ կնիքը դնելով հրամանի անկյունում, որտեղ հրամանագրի տեսակի անվանումն էր: Վերջին ժամանակներում այս կարգը չի պահվում, և [մոհրդարը] իր *ռուսումը* հավաքում է որպես մատյանում գրանցման գումար:

**Վեցերորդ ենթագլուխ: Մուղարբար ալ-խադան շարաֆ-ե նաֆազի կնիքի մոհրդարի պաշտոնի բացատրությունը**

Նրա աշխատանքն էր թագավորական կնիքի դիմաց *շարաֆ-ե նաֆազ* կոչված փոքր կնիքը<sup>147</sup> դնելը *ամիրների*,

<sup>147</sup> Շարաֆ-ե նաֆազի կնիքը դրվում էր այն հրովարտակների (հոքմերի) վրա, որոնց թողրայում «շարաֆ-ե նաֆազ» (հրավարակման արժանացավ) բառերը կան, իսկ արքայական կնիք եզրագծի ներսում

*վեզիրների*, *մուսթովֆիների*, *լաշքարենիսների* և արքայական բանակի կամ երկրի մնացյալ պաշտոնյաների նշանակումների մասին բոլոր հրամանագրերի ներսի անկյունում: Եթե պաշտոնյաները *մոհրդարներին* հասնող *ռուսումներից* խուսափելու համար *մոհրդարին* դրանք չէին տվել կնքելու, նրանք իրենց հատկացված *մուղարբարին* հստակեցնում էին գերագույն *դիվանի թուլջիհի դաֆթարի* մատյանների հիման վրա և ստանում, անկախ նրանից պաշտոնյաների նշանակումների հրամանագրերն իրենց մոտ գտնվող կնիքով կնքել էին, թե ոչ: *Շարաֆ-ե նաֆազի* կնիքի *ռուսումը* հետևյալն է. առաջին տարում որպես *դուշուլլուքի* ձևակերպում վճարվում էր 835 [յուրաքանչյուր թումանից].

Այն, ինչ գանձվում էր երկրի իշխանության ու կառավարման *ռադամներից*, յուրաքանչյուր թումանի համար 303 դագրեկի<sup>148</sup>:

Այն, ինչ գանձվում էր *սոյուրդալների* ու *մուաֆուսթյան* հրամանագրերի համար՝ յուրաքանչյուր թումանից 520 *դինար* էր:

Հետագա տարիներին, նաև արքայական կնիքի դեպքում *դուշուլլուք* էլ չէր գանձվում:<sup>149</sup>

Մաննայի բանաստեղծական տողերն են (31 م. سلمات سليمان): S6 u նման հրովարտակներ (Ք. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ 9, վավ. 1, 49, 58, 61):

<sup>148</sup> 1 դագրեկին = 5 դինար = 1/10 շահի = 1/2000 թուման Chardin, IV, 182 (Tadhkirat al-mulūk, p. 63):

<sup>149</sup> Փաստորեն ցանկացած հրամանի հաստատման համար կնիքով հաստատումը կատարվում էր վճարովի կարգով, որի չափը հիշատակվել է «Թագքիրթա ալ-մուլլուքի» մեջ:

**Յոթերորդ ենթագլուխ: Մուղարբաբ ալ-խադան արեգակնային մատանու կնիքի դավաթղարի պաշտոնի բացատրությունը**

Մինչ վաղե՝ եննիսները բայազի ու դաֆթարի ռադամների վրա թողրա էին նկարում, վերոհիշյալը կնքում էր այն արեգակնափայլ կնիքով: Նրան տարեկան 30 թուման աշխատավարձ և դրա վեց ամսվա չափով էլ թիուլ էր հատկացված: Նա նաև ամիրներին, հաքիմներին ու մյուսներին տրվող պաշտոնի եկամուտներից յուրաքանչյուր թումանից 100 դինար ռուսում էր ստանում: Ծառայության հրամանագրերի համար ևս յուրաքանչյուր թումանից 50 դինար և դուշուլլուք է ստանում, թանխահի ու վարձակալության հրամանագրերի յուրաքանչյուր թումանից՝ 25 դինար: Նա ընդհանուր հավաքներում զինակիր զորջինների շարքում էր կանգնում՝ հին դավաթղարի կողքին, որը նաև փարվանները կնքողն էր:

**Ութերորդ ենթագլուխ: Մուղարբաբ ալ-խադան դավաթղարի պաշտոնի բացատրությունը**

Նշված դավաթղարին վերապահված էր այն հրամանագրերի կնքումը, որոնց վրա մոնջի ալ-մամալեքը թողրա էր նկարել: Նրան տարեկան 30 թուման աշխատավարձ և դրա 6 ամսվա չափով էլ թիուլ էր հատկացված: Ծառայության հրամանագրի համար [թումանից] 50 դինար դուշուլլուք էր ստանում: Իսկ թանխահի հրամանագրերի համար մամալեքի վարչությունից և վարձերից ևս պաշտոնապես կես շահի էր ստանում: Նա զինու-

կիր զորջինների շարքում, կանգնում էր նետակիր (սադադի) զորջինի կողքին, որը նաև շարաֆ-ե նաֆազի մոտորարն էր:

**Երրորդ գլուխ: Հողված Բ**

Այն խմբի մասին, որոնց կոչում են մուղարբաբ ալ-հագրաթ և որը բաղկացած է երկու դասից (սենֆ):

**Առաջին դաս: Բաղկացած է չորս ենթազվսից (ֆաս):**

**Առաջին ենթագլուխ: Մուղարբաբ ալ-հագրաթ պատվավոր հարեմի իշիքադասի բաշիի պաշտոնի բացատրությունը**

Այս աշխատանքը վստահված է այն ծառաներին, որոնք առավել տարիքով էին ու արքունիքում ավելի երկար էին աշխատել և արքունիքի վստահելի, բարեպաշտ, և ուղղամիտ ծառաներից էին: Նրանք զիշեր-ցերեկ հարեմում ներկա էին, և հարեմի դռնապանները և իշիքադասիները նրանց ենթականերն էին: Հարեմի մեջ կիրառվող կարգի, հրամանները, արգելքները և օտարերկրացիներին վերաբերող ընդհանուր կարգ ու կանոնը (փոխանցելը) հարեմի իշիքադասի բաշիի պարտականությունն էր: Նրա ենթակաների աշխատավարձերի ու աշխատանքի հաստատումը վերոհիշյալ մուղարբաբ ալ-հագրաթ իշիքադասի բաշիի պարտականությունն է:

**Երկրորդ ենթագլուխ: Յասսավուլ-ե սոհբաթի պաշտոնի բացատրությունը**

Յասսավուլ-ե սոհբաթ կարող էին լինել միայն ազնվատոհմիկ ամիրների որդիները և հին ժամանակներում 8-9 հոգուց

ավելի չէին լինում, հատուկ նիստերում նրանք *իշխրադասի բաշիի* փոխարեն ծառայություն էին մատուցում, իսկ ընդհանուր նիստերում կանգնում էին շահի դիմաց: Մինչ հավաքությունների ընթացքում *իշխրադասիներն* էին ծառայություն մատուցում, նրանք բոլոր գերագույն *դիվանի իշխրադասիի* ենթականերն էին, և նրանց աշխատավարձերի որոշումը վերահիշյալին է վերապահված:

**Երրորդ ենթագլուխ: Հավաքների (մաջլեա) իշխրադասիների պաշտոնի բացատրությունը**

Այս խումբը [ընտրվում էր] *ամիրների* ու հարգարժան *աղաների* որդիներից, որոնք արժանի էին [շահի] ներկայությամբ ծառայելու ընդհանուր ժողովում որպես նիստի *իշխրադասի*: Նա *իշխրադասի բաշիի* ենթական էր Նրա աշխատավարձը, աշխատանքն ու իրավասությունները հաստատում էր *դիվանի իշխրադասի բաշին*:

**Չորրորդ ենթագլուխ: Դոնապանների (դափուչի) պաշտոնի բացատրությունը**

Երկու դոնապան կան. մեկը՝ *դիվանի* դոնապան և մյուսը՝ մասնավոր հատվածի (*խավաթի*) դոնապան, որոնցից յուրաքանչյուրը ունեն բազմաթիվ ենթականեր: Ղեկավարման հրապարակի (մեյդանե դալաթխանե) դոնան, խոհանոցի ու չորս ջրավազանների վերահսկողությունը *դիվանի* դոնապանների [պատասխանատվության տակ է], իսկ մասնավոր հատվածինը՝ համապատասխան դոնապանի: Նրանք ու նրանց ենթակաները

ենթարկվում են *դիվանի իշխրադասի բաշիին*: Նրանց աշխատավարձերը, աշխատանքն ու իրավասությունները հաստատում է գերագույն *դիվանի իշխրադասի բաշին*: Բոլոր *յասավուլե սոհրաթներն* և *իշիք ադասիները* կոչվում են *մուդարրաբ ալ-հազրաթ*:

**Երկրորդ դաս:** Վերաբերում է *բոյութաթի սահեբջամ'երի* աշխատանքին և բաղկացած է 18 գլխից (Ֆաալ) և 2 կարգերից (գաբեթե):

**Առաջին կարգ**

**Արքունի գանձարանի ու մյուս բոյութաթի սահեբջամ'երից յուրաքանչյուրի պաշտոնի բացատրությունը**

Նրանց աշխատանքը ընդհանրապես այն է, որ ինչպես, որ *մոշրեֆները* կանխիկով ու ապրանքով հաշվարկեն *բոյութաթի* տարեկան կարիքների համար [անհրաժեշտ գումարը] ցուցակով կամ խնդրագրով *բոյութաթի նագերին* ներկայացնեն: [Տուցակագրի] հանգամանակից քննությունից ու ավել-պակասը ճշտելուց հետո *բոյութաթի վեզիրը նագերի* կողմից գնևուցագիր է գրում մեծ *վեզիրին*: Գերագույն *դիվանի* բարձրաստիճան *վեզիրի թալիզեով* *բոյութաթի սահեբջամ'երը* ստացական գրելով *թանխահ* են ստանում: Սակայն քանի դեռ ստացականները չեն կնքվել *բոյութաթի վեզիրի, արբաբ-ե թանվիլի մուսթովֆիի* և *հագերի* կողմից, հանձնվելիցը չի հանձնվում *սահեբջամ'երին*:

## Երկրորդ կարգ

Բացատրում է բոլորթաթի սահեբջամ'երի աշխատանքները և բաղկացած է 16 ենթագլխից (ֆասա):

### Առաջին ենթագլուխ

Արքունի գանձարանի *սահեբջամ'ի* աշխատանքն այն է, որ նշված *մուղարրաբ ալ-խաղանը* աստժո պաշտպանության տակ գտնվող երկրների ու թագավորանիստ Սպահանի կանխիկ *վջու-հաթի* գումարները, որ պատկանում էին *ղիվանի*, հանձնվում էր նրան [արքունի գանձարանի *սահեբջամ'ին*: Եթե *ղիվանի մալիյաթի ամիլներից, հաթիմներից և մուրաշիրներից* որևէ մեկը ուշացնում էր *վջուհի* ուղարկումը արքունի գանձարան, նրա *սահեբջամ'ն* իր ենթականերին որպես *մուհասեկ* ուղարկում էր *վիլա-յեթներ'* գումարները գանձելու, որպեսզի ստանան և իրենց *արվաթ-ե ջամ'* արված համարեն: Սպահանի տարբեր խավերից [գանձվող] *մալիյեն* և հյուրերի ծախսի համար եախատեսվող նպաստը (մադադ-ե խարջը), որը կազմում էր 3000 *թուման*, մեծ *վեզիրներ* Մուհամմեդ Մո'մեն խանը և Շահ Ղուլի խանը՝ յուրաքանչյուրն իր ժամանակ, վստահում էր [այդ գործը] ենթակաների պետին: Աղա Քամալ *սահեբջամ'ը* նախկին շահին ղիմեց և իր վստահված Հաջի Մեհդի Խանին լիազորեց, որպեսզի ամեն տարի [գումարը] ստանա և ուղարկի պետական գանձարան: Նրան էին հանձնվում *խասսե-ե շարիֆեի* այն բոլոր լավագույն իրերը գոհարեղենից և *վիլշքաշ* արված կտորեղենից, գրբերից, կենդանիների մորթեղենից, ոսկեխուռ գործվածքերենից և այլ նվերներից, որոնք հանձնվում էին *խասսե շարիֆեի* վարչու-

թյանը, բոլորը նրա միջոցով էր հանձնվում արքունի գանձարանին: Գանձարանի *սահեբջամ'ը* չափազանց վստահելի ու կարող [անձ է]: Գանձարանի բանալիների պատասխանատուն ևս մեծապատիվ ներքինիներից մեկն է:

### Երկրորդ ենթագլուխ: Ջինանոցի (ջաբախանեի) մասին

*Ջարադար բաշին* ամենահարգված պաշտոնյաներից մեկն է, որին ենթարկվում են զինանոցի բոլոր աշխատողները և նրանց ոռճիկներն ու աշխատանքի հաստատումը կատարվում է նրա թույլտվությամբ: Ջինանոցի *մոշրեֆը* նույնպես ազդեցիկ է և օրինելավ զինանոցին փոխանցված ամբողջ *վջուհը*, ներառյալ գոհարագարոյ և այլ զենքերը, կապարն ու վառողը, վերոնիշյալ վարչության *մոշրեֆի* ծանուցմամբ ու մատյանին համապատասխան հանձնվում են *սահեբջամ'ի*ե. *Ջարադար բաշին թահվիլդար* է նշանակում հանդերձատան զինանոցների բոլոր պիտույքների համար, թե՛ Երևանի և թե՛ այլ բերդերում ու *վիլայեթներում*: *Վիլայեթների հաթիմները* ևս նրան ենթարկվում են, ու ըստ արժանավույն վերաբերվում, որովհետև վերոնշյալը համարվում է շահական արքունիքի պատվարժան ու ազդեցիկ պաշտոնյաներից:

### Երրորդ ենթագլուխ

*Խասսեի* կարի արհեստանոցի (*ղալաջիխանե*) *մուղարրաբ ալ-հազրաթ սահեբջամ'ը*: Մերձավոր [պալատականներից] է և նրա աշխատանքի մանրամասները հետևյալն են, որ ստորև երկու պարբերությամբ (ղաֆե) կշարադրվեն:

## Առաջին պարբերություն

Այն իրերի մասին է, որոնք հանձնվում էին նշված *սահեբ-ջամ'ին*: Դրանցից են արքայական հատուկ հագուստները, այնպես, որ թանկարժեք կտորեղենը, որը *խասսե-ե շարիֆեի* վարչությունը կտրելու համար ընտրել էր, արքունի գանձարանի *սահեբջամ'ը* հանձնում էր *խասսեի* կարի արհեստանոց, որպեսզի *մոնաջեմ բաշիի* որոշած ու այդ մասին սրբազնագույնին (շահին) հայտնած ժամին գլխավոր դերձակը (խայաթբաշի) բարձրաստիճան *նազերի* ներկայացուցչի, նաև կարի արհեստանոցի *սահեբջամ'ի* և *մոշրեֆի* ներկայությամբ կտրի: Ի վերջո կարված հագուստները, հանձնվում են նշված *սահեբջամ'ին* մյուս կարված հագուստների հետ: Այն կտորները, որոնք նվիրվել են, *խալ'աթի* համար են կամ գնվել են, [նույնպես] պիտի հանձնվեն նշված *սահեբջամ'ին*: Կտորների գնելու կարգը այդ վարչությունում հետևյալ եղանակով էր. բարձրաստիճան *նազերը* կանչում է [գործին] լավատեղյակ անձանց և նրանց ցուցումով որոշում գինը, նրանց կնիքով հաստատում արժեքի մասին գրությունը, որի հիման վրա գրվում է գնման փաստաթուղթը: Այս կերպ է հստակեցվում Քաշանի և այլ *վիլայեթներից* գնվող կտորեղենի գները և դրան համապատասխան գնացուցակներ են հղվում, ստացականներ գրվում և տրվում *վեզիրների* ու գործավորների օգտագործմանը: Ավելի թանկարժեք իրերը, որոնք որևէ առիթի համար են կարվում, ևս այդ վարչությանն են հանձնվում: Բսկ *խալ'աթը*, որ պատրաստվում էր մեծ *ամիրների* համար և, որոնք [շահի կողմից] հագած էին, ևս այս վարչություն-

նում էին հավաքվում: Մասնաբը և *լոնդրան* ևս նշված *սահեբ-ջամ'ին* էր հանձնվում:

## Երկրորդ պարբերություն

Վերահիշյալ *սահեբջամ'ին* եկթակա աշխատողները, դերձակ, գուլպա կարող, կանաչի վերնագգեստ (չաղշուր) կարող, *լոնդրա* կարող, արդուկ անող, բուրդ գգող, հարթեցնող, գլխարկ կարող:

## Չորրորդ ենթացվուխ

*Ամիրների* կարի արհեստանոցի (*դալլաջիխանե*) *սահեբ-ջամ'ը* մերձավոր պաշտոնյաներից է: Նրա պաշտոնը և վերոհիշյալ վարչության կարգը հետևյալն է. որ *հաքիմներին*, *վեզիրներին*, *քալանթարներին*, *մինբաշիներին*, *յուզբաշիներին*, ինչպես նաև այն անձանց, որ *ամիրների* աստիճան չունեն, տրվող *խալ'աթները*, որ կարվել են Սպահանում և Քաշանում, հանձնվում են այդ վարչությունում: Բսկ եթե *կաբա* կամ վերնագգեստ (բալափուշ) է շնորհվում որպես *խալ'աթ*, կարգն այնպես է, որ անհատը, որը շահից լսել էր բանավոր [կարգադրությունը], խնդրագիր էր գրում մեծ *վեզիրին* և գերագույն *դիվանի վեզիրի* հրամանագիրն ու բարձրաստիճան *նազերին* թույլտվությունը ստանալով, *կաբան* ու վերնագգեստը տրվում էր այդ վարչության կողմից: Եթե ցանկանում են որևէ մեկին պատվո թագի արժանացնել, այդ վարչությունում կարվում էր ոսկեզօծ կտորից և նախ այնտեղ պատրաստվում, ապա տրվում էր օգտագործման:

## Հինգերորդ ենթազույլա

*Ճարքաշ բաշին* և *մաշ'աղար բաշին մուղարբարներից* են և նրանց աշխատանքի պարտականությունները երկուսն են:

**Առաջին:** Կապվում է նրան հանձնվող իրերի հետ, որոնք հետևյալներն էին, գորգեր, կարպետներ, թաղիքե թիկնաբարձեր, ներքևակ, վրաններ և նրա պարագաները, ճրագ և մոմակալներ, ասեղնագործ թաշկինակ, մոմ, հալած ճարպ (ճրագու), օճառ, պարան, ժապավեն, գույնզգույն թաղիքե պարկեր, կարպետ, շագանակագույն թաղիք, *միլաք*, մոմլաթ, չիթ(հասարակ կտոր), ժաներիզ, *լոնդրա*, պղնձե տաշտ, պատուհանի թուղթ, սուսինձ, լապտեր, թանաքաման (մուշաքղան), փայտի պիտույքներ, թամբուսարք կամ գահավորակ և նրա ծածկը (քաջավեհ և քաջավեհ փուշ)<sup>150</sup>:

**Երկրորդ:** Անձիք, որ ենթակա են *ֆարքաշբաշիին* հետևյալը են՝ վրան կարողները, *լոնդրա* կարողներ, ճրագ ու մոմեր պատրաստողներ, հավաքարարներ և սնդուկ պատրաստողներ:

**Վեցերորդ ենթազույլա:** Միվեխանեի ու նրան վերաբերող մյուս արտադրանքի (ձմերուկ, վարուեզ, խաղող, տոսն մածուկ, թամրենեեղի<sup>151</sup>, կանաչի, ծիրան, և այլ մրգեր) *սահեբջամ'ի* պաշտոնի բացատրությունը

Որքան անհրաժեշտ է, ոսկյա, արծաթյա և պղնձյա ամանեղեն է տրամադրվում վերոհիշյալ *սահեբջամ'ին*: Մթերք-

<sup>150</sup> Քաջավեն՝ չորտանիների ամրացվող նստարաններ: Քաջավեհ-փուշ քաջավեհի վրա ամրացվող ծածկոց:

<sup>151</sup> Շնդկական մրգի տեսակ, որի մածուկը օգտագործվում է ճաշատեսակների մեջ:

ների հանձնումը և ստացումը կատարվում է այն կարգի համաձայն, որ գրված է *հավիջխանեում*<sup>152</sup>: Թե՛ որոշված և թե՛ հավելյալ ծախսերը, կատարվում են *հավիջխանեի* կարգին համապատասխան:

## Յոթերորդ ենթազույլա: Սպանդանոցի (ղանաթի) սահեբջամ'ի պաշտոնի բացատրությունը

Ոչխարները, որոնք բերվում էին գանազան վայրերից, *նազեղի* այդ վտահելի անձի ներկայությամբ էին մորթվում: [Մորթվող կենդանու] միսը, դմակը, անմշակ ճարպը, զուլար, լյարդը և կաշին նրա տնօրինմանն են հանձնվում: Իսկ երբ այդ վարչությունում ոչխար չլիներ և միսը շուկայից պիտի գնվեր, ապա այն կատարվում էր *սահեբ նասաղի*, *մուխթասիր ալ-մամալեթ* ու այդ գործի ավագների կողմից սովյալ ամսվա համար որոշված գնով: Գնումը պետք է *նազեղի* կնիքով հաստատվեր, որպեսզի *ղիվանի* ունեցվածքին վնաս չհասցվեր: Գառը և այն, ինչ որ անհրաժեշտ էր *խասսեին* և ծառաներին մտագործների վարպետը որպես *իլթիզամ* արժեքի պայմանագիր գրում ու հանձնում է, որպեսզի ըստ այդմ ծախսեր արվեն:

## Ութերորդ ենթազույլա: Աբղարխանեի սահեբջամ' պաշտոնի բացատրությունը

Նրա պատասխանատվության տակ են կուծերը, ոսկյա և արծաթյա զավաթները, լվացվելու շրամանները (մութահարե-

<sup>152</sup> Բնագրի մեջ այս պարբերությունը լուսանցքում է գրված:



ներ), կաշվե ջրամանները (հուսեյնիները), սառույցի պարկերը, սառնարանի պիտույքները և թասերը (դուլչե):

**Իներորդ ենթագլուխ: Ուղտերի ախոռի (շոթորխասի) սահեբջամի պաշտոնը և նրան տրամադրված իրերը**

Այդ իրերն են կենդանիների վրա գցվող թամբուսարքի կտորները, ծածկոցները, թամբառակի թաղիքը, սանձ, պարան և այն ամենը, ինչ վերաբերում էր ուղտերի ախոռին և *արվաբ-է ջամ*՝ են արվել վերոնիշյալ վարչության *սահեբջամի*ն: Տարին մեկ անգամ *նազերը բոյութաթի վեզիրի* հետ միասին գնևում են ուղտերին, նրանցից լավն ու վատը առանձնացնում, և ուղտերից որը, որ սատկում է, նրան խարանով *սահեբջամի* ցուցակից դուրս են գրում: Խարանը (թամդան) *նազերի* ներկայությամբ դաճում են:

**Տասներորդ ենթագլուխ: Մրճատան (դահվե խանեի) սահեբջամի պաշտոնի բացատրությունը**

Նրա տրամադրության տակ են ոսկյա, արծաթյա և պղնձե սրճեփներ, սրճադաց, սուրճ թովելու տապակներ, սուրճի գավաթներ և մատուցարաններ:

**Տասնևկերորդ ենթագլուխ: Արքունական շինությունների թահվիդարներին տրամադրվածի մասին**

[Նրանց] տրամադրված գույքը [հետևյալն է]. գորգեր, բարձեր, թաղիք, կարպետներ, թաղչեփուշներ (սփսփի դարակների ծածկեր) և այլն, իսկ գորգերը թափ տալը և աւլելը *սարայդարի* պարտականությունն է:

**Տասներկուերորդ ենթագլուխ: Ռեքարխանեի սահեբջամի պաշտոնի բացատրությունը**

[Նրա պատասխանատվության տակ են] *խասսեի* բաղնիքների, սպիտակեղենը, և դրա մեջ մտնող պարագաները. վերմակ, բարձեր, *խասսեի* հատուկ թիկնաբարձեր, հագուստ, և հորթի [բրդից] գորգեր, որոնց մեջ իրենց իրերը ճամբորդության ժամանակ հավաքում էին սպասավորները, կոշիկները, այդ թվում նաև երկարաճիտք, գուլպաները, աղոթագորգերը և դրանց վերաբերող պիտույքները:

**Տասներեքերորդ ենթագլուխ: Լուսարարության (մաշ'ալխանեի) և երաժշտանոցի (նադարեխանեի) սահեբջամի պաշտոնի բացատրությունը**

[Նրա պատասխանատվության տակ են] ոսկյա, արծաթյա և պղնձյա ջահերը, ճրագների յուղերը, դմակները (ջեզղալե), յուղով ներծծված կտորները (նավալե), մեծ ու փոքր թմբուկներն, եղջերվափողերը, շեփոթները, գուռաները: Երաժշտանոցի ու լուսարարության աշխատողները *մաշ'ալդար բաշիի* ենթակայության տակ են, և տարեցտարի *նազերի* կնիքով և *էթեմայ ուլ-դովլեի* հրամանով հաստատված ցանկին համապատասխան են աշխատավարձ ստանում:

**Տասնչորսերորդ ենթագլուխ: Պահեստի (անբարի) սահեբջամի պաշտոնի բացատրությունը**

Նրան է հանձնվում այն, ինչ որ որպես անասնակեր (գարի, ծղոտ, յոնջա, և կորեկ), հատկացվում է գուրեի չորքոտանիներին, ջորիների քարավաններին կերակրելու համար: Կենդանիներին

վրա գցվող թամբերը, փալանները, դուլերը, սանձերը, մեծ թաղիքն պարկերը, պայտերը, մեխերը, կապերը, մտրակները, թաղիքն ծածկերը, պարկերը, պիտոները լուսավորելու լրացուցիչները հանձնվում էին *անբարդար բաշիին*:

### Տասնհինգերորդ ենթագլուխ: Ախոռի (Էստաբլի) սահեբջամի պաշտոնի բացատրությունը

Վարչության բոլոր ձիերը, ջորիներն ու ավանակները հիշյալ *սահեբջամի* ն են հանձնվում:

### Տասնվեցերորդ ենթագլուխ: Արբունի շարքաթխանեի սահեբջամի պաշտոնի բացատրությունը

Վերոհիշյալ *սահեբջամի* աշխատանքն այն է, որ նրա պատասխանատվությանն են հանձնված *շարքաթխանեի* բոլոր իրերը՝ ոսկյա, արծաթյա, չինական, ջնարակապատ, հախճապակյա, պղնձյա սպասքը, շաքարը, շաքարավազը, դեղաբույսերը, սուրճը, ծխախոտը, ապակին, գլխիկը, խողովակն ու նարգիլեն մյուս պարագաները, հեղկանու<sup>153</sup> և այլ պահածոները, լիմոնի հյութը, վարդաջուրը, գանազան օշարակներ, թթուներ, օծանելիքներ և այլն: *Խասսեի*, սպասավորների, *մուղարբաբների* ու մյուս կերակրվողների ամենօրյա հատկացումները կատարվում են նախորդ օրը հաստատված փաստաթղթին համապատասխան, իսկ այն, ինչ ավելացվում էր, պետք է նշվեր այդ օրվա հաստատված փաստաթղթում: Նա իրավունք չունի արձանգ փաստաթղթի իր ծախսի համար որևէ բան դուրս գրել:

### Տասնյոթերորդ ենթագլուխ: Ջառափի բաշիի պաշտոնի բացատրությունը

Վերոհիշյալ պարտավոր է ուշադրությամբ հետևել, որպեսզի դրամահատները ըստ կարգի անթերի կերպով *աշրաֆի* և *արասի* դրամները հատեն և գեղծարարություն չկատարեն, նաև հսկեն, որտեղ էլ որ կեղծ դրամ պատրաստեն *սահեբ և սասադին* տեղիկացի: Եթե [կատարված] մեղքը փոքր է, կարգազանցին տեղում [պիտի] պատժեր, իսկ մեծ լինելու պարագային պետք է գեկուցեր Նորին արքայական Մեծությանը, որպեսզի ըստ այդմ բարձրաստիճան *դիվանբեկին* գործադրի և ջանա, որ այլ վայրում դրամ չհատեն, այլ միայն դրամահատարանում և թույլ չտա, որ անմաքուր ոսկուց դրամ հատվի: *Ջառափի բաշին դիվանի մալի թահվիլդարն* է. դրամահատարանի *մոշրեֆը մու'այլիր ալ-մամալեբի* կամբով ու կարգադրությամբ է *վաջբեբի* գումարը *արվաբ-ե ջամ'* անում *գառափի բաշիին*: Ջառափի բաշին համաձայն *մու'այլիր ալ-մամալեբի* հրամանի հաշիվների մեջ կատարվող սխալները նվազեցնելու նպատակով: Օրեցօր նա [գառափի բաշին] գրում ու ներկայացնում է իր *ռուզնանեն մու'այլիր ալ-մամալեբին* և վերջինս ամեն ամիս ճշտում է նրա հաշիվները ըստ եղելության և *մու'այլիր ալ-մամալեբի* կողմից նշանակված գրագրի հետ, որ կցված է *մոշրեֆին*, մատյանի թվերը համեմատելով ստուգում, որպեսզի *զաբիթին* հանձնված *վշունի* հետ որևէ տարբերություն չլինի և *դիվանը* վնաս չկրի: *Ջառափի բաշիի* և *մոշրեֆի* աշխատանքի ընդունումն ու հեռացումը կատարվում է *մու'այլիր ալ-մամալեբի* կողմից:

<sup>153</sup> Կամ խնկակաղին- Դեղաբույս :

Տասնութերորդ ենթագլուխ: Արշունի գանձարանի

սարաֆրաշիի պաշտոնի բացատրությունը

Նրա աշխատանքն այն է, որ բոլոր *աշրաֆիները* (դրամները) և սպիտակ ոսկեղենը, որոնք հավաքում են *վիլայեթներից* կամ որպես *վճուճաթ* [բերվում] արքունի գանձարան, *սահեք-ջամը* ստանում է *մոշրեֆի*, վճարողի կամ նրա *վարիի* ներկայությամբ գնեում է, տեսակավորում [դրամները], լցնում պարկերի մեջ և կեքելով [դրանք] հանձնում *սահեքջամին*, որպեսզի ինչպես, որ կկարգադրվի, համապատասխանաբար ծախսվի: Եթե ոսկեղանը կեղծ կամ ցածրորակ լինի, առանձնացնում ու հանձնում են նրա տիրոջը:

#### ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐ

Այն բաղկացած է երկու մասից (մաղսաղ):

##### Մաս առաջին

*Բոյութաթի վեզիրի* և *արբաբ-ե թանվիլի մուսթովֆիի* ու արքունի *բոյութաթի մոշրեֆի* աշխատանքի մասին է և այն բաղկացած է երեք ենթագլխից (ֆասլ):

**Առաջին ենթագլուխ: Բոյութաթի Նորին Գերազանցություն վեզիրի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի պարտականությունն այն է, որ *խասսե-ե շարիֆեի* վարչության արհեստանոցների բոլոր ծախսերը նրա ենթակաները փաստաթղթերով ու *ռուզնամներով* նրա խիստ կարգադրությամբ օրական, շաբաթական և ամսեկան իրեն հասցնեն, որպեսզի նշված վեզիրը *խասսեի* վարչությունից

աշխատավարձ ստացող մի գրագրի հետ դրանք համեմատի և ստուգի և համոզվելուց հետո, ստորագրելով, վեզիրի կնքմանը տա, այնպես, որ *ռուզնամներում* գրանցման ու փաստաթղթի [տրամադրման] ուշացում տեղի չունենա, և *խասսե շարիֆեի* վարչությանը վնաս չհասնի: Նիստի կամ տոն օրերին *նազերն* է հաստատում, որքան ուտելիքներից, հյուսթեղենից և թթուներից պետք է օգտագործվեր: *Բոյութաթի վեզիրը* ուսումնասիրում, հաշվում ու գրառում է կատարում իր մոտ, որպեսզի, երբ փաստաթուղթ ներկայացվի, ծախսվածից ավելին զրված չլինի: *Բոյութաթում* ինչպիսի գործարք էլ, որ կայացվի, քանի դեռ *բոյութաթի վեզիրը* վրան գրառումը չի կատարում, նազերը չի կկերում: *Նազերն* առանց *բոյութաթի վեզիրի* ներկայության չի ստուգում աշխատողների ցանկը, ուղտերին և ուղարկված կտորեղենի արժեքները: Սպահանի արհեստանոցների համար զևվող կտորեղենի ու գույքերի գները *նազերը* որոշում է *բոյութաթի վեզիրի* ու տեղյակ անձանց մասնակցությամբ: Իսկ երբ *նազերը բոյութաթի վեզիրի* փոխարեն այլ անձի է մասնակից դարձնում [այդ գործին], ապա դա չարաշահում, կեղծիք ու ռոնձգություն է դառնում: *Բոյութաթի* աշխատողների աշխատավարձերը, ինչպես, որ դրանք արձանագրված են ցուցակում, տրվում են համաձայն *բոյութաթի վեզիրի* գրի առած, *նազերի* կնիքով ու *էթեմաղ ալ-դովլեի* հրամանագրով հաստատված կողմից փաստաթղթերի: Նրանք, ովքեր ծառայության էին գնացել կամ ազատվել, վերադարձից հետո ներկայանալով կարգադրության, հաստատման, հրամանագրի ու վերոհիշյալ գրառման բո-

վանդակությանը համապատասխան են աշխատավարձ ստանում:

### **Երկրորդ ենթագլուխ: Արբաբ-ե թահավիլի մուսթովֆիի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ *սահերջամ'երի* հանձնվող բոլոր կանխիկ գումարների, ոսկեղենի, գոհարագարդ իրերի, արձաթեղենի, մորթեղենի, կտորեղենի, հագուստեղենի, ուղտերի, չորքոտանիների, այլ իրերի և մնացած ամեն ինչի ճշգրիտ մատյան պահի և *դիվանի* ունեցվածքը վնաս չկրի: Ամեն ամիս նա *ռուզնամեները մոշրեֆներից* վերցնելով, ինչպես, որ հաշվվել էր *արբաբ-ե թահավիլի* մատյաններում, հաշվարկ է ներկայացնում *սահերջամ'երին* և ըստ կարգի ճշգրտելով յուրաքանչյուրի մնացորդն ու ավելցուկը՝ առանց *նագերի* կնիքի չի արտոնում ոչ մեկի ծախսերը:

### **Երրորդ ենթագլուխ: Արքունի բոյութաթի մոշրեֆների պաշտոնի բացատրությունը**

*Մոշրեֆների* աշխատանքը *ռուզնամեների* [գրառումներն] ու իրենց պատասխանատվության տակ գտնվող արհեստանոցների փաստաթղթերի գրությունն է՝ առանց ուշացումների: Եթե *ռուզնամեների* գրառումները հետաձգվեն, *խասսե-ե շարիֆի* վարչությանը մեծ վնաս կհասցվի: Եթե *սահերջամ'ներն* ու *մուհասեկները իխրաջաթն* ու փաստաթղթերը նրանց չներկայացնեն պետք է *բոյութաթի նագերին* տեղեկացնեն, և բարձրաստիճան *նագերը* մեկին հանձնարարում է, որպեսզի այդ փաստա-

թղթերը նրանց հասցնի: *Մոշրեֆներն* առանց փաստաթղթի նույնիսկ մեկ *դինար* կամ մի *ման* բեռի հաղորդում *ռուզնամեներում* չեն գրանցի: Իսկ եթե փաստաթղթի վրա գործի ոչ պատասխանատու անձանց ստորագրությունն ու կնիքն է դրված, դրանք հետ է վերադարձնում: Քանի դեռ *սահերջամ'երը* կանխիկ գումարի ու բնամթերքի ակնկալվող մնացորդ մաս ունեն, այդ գումարն ու բանակը գալիք տարվա հաշիվների մեջ չպետք է մտցվեն:

### **Մաս երկրորդ**

Գերագույն արքունի գրագրատան *վեզիրների*, եկամտի (ջաւ'ի) ու ծախսի *մուսթովֆիների դաբուդայի, ազաբ բաշիին* ու մյուսների աշխատանքի մասին, որը բաղկացած է քսան<sup>154</sup> ենթագլխից (Ֆասլ):

### **Առաջին ենթագլուխ: Մուղարրաբ ալ-հազրաթ**

**արքունի գրագրատան (դաֆթարխանեի) նագերի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ ստուգելուց հետո կնքի ծառայությանը վերաբերող, բոլոր գինևորականներին կեցության օգնություն, *մուսաֆություն, սոյուրդալ* ու *վագիֆե* տրամադրող *ոալամները, համեսալե, թիուլ* ու *թանխան շնորհող հոքմերը*: Նրա կողմից կնքվում են նաև երկրի բոլոր պաշտոնյաներին ու հաշվապահ ծառայողներին պաշտոններ շնորհող բոլոր գրագրատների հրամանագրերը, շուկումներից հետո: Նաև Աստոծ

<sup>154</sup> Պիտի հիշեցնել, որ թեև այստեղ հեղինակը գրում է քսան ենթագլուխ բայց գրքում բերվել է ընդամենը տասնութե ենթագլուխ:

պաշտպանության տակ գտնվող շրջանների բոլոր աշխատողների՝ *վեզիրների, մուֆասսադդիների, մուսթաաջիբների, գարիթների* ու *դիվանի մալիյյաթի մուքաշիրների* հաշիվների փակումը վերոհիշյալ *մուդարրաթ ալ-հազրաթի* հատուկ աշխատանքն է: Նա իր ենթակայության տակ ինը հոգի գրագիր ունի, որոնցից ութը գրանցում ու գրառմամբ հաստատում էին տարբեր վարչություններից [տրված] *համեսալեների, թանխահի*, նշանակումների մասին հրամանագրերը, մեկ անձ էլ հաշվարկների ու հրամանագրերի ճշգրտումներից հետո «գրառվեց» (اخذ) ու «եղավ» (اجاز) [ձևակերպմամբ] վավերացնում այն:

#### **Երկրորդ ենթագլուխ: Գրագրատան (դաֆթարխանե)**

##### **դարուդայի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի պարտականությունը ամբողջ գրագրատան կարգուկանոնի [պահպանումն] ու *ազաբների* և գրասենյակի մյուս աշխատողներին պատժելն է: *Դաֆթարի* աշխատողների միջև տեղի ունեցող վեճերը նրա ներկայությամբ էին լուծվում: Նա նաև կնքում էր բոլոր նշանակումների, հաղթական գործերի *թանխահի, համեսալեի* ու ծառայության հրամանագրերին կցված [ցանկերը]: 'Դիվանի բոլոր աշխատողների՝ *վեզիրների, մուսթաաջիբների, գարիթների, մուֆասսադդիների* ու *դիվանի մալիյյաթի մուքաշիրների* հաշիվները փակում ու ճշգրտում է *մուդարրաթ ալ-հազրաթ* գրագրատան *նազերը*:

#### **Երրորդ ենթագլուխ: Ղոռչիների վարչության վեզիրի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ կնքի *սեփահսալարների* ու *սարդարների* կողմից գրված տեղեկանքները, հավաստագրերն ու փաստաթղթերը ռազմերթների ժամանակ [ղոռչիների] ներկայության ու ծառայության, ինչպես նաև այն, որ գրվում էր նախկին ծառայողների վերաբերյալ, որից հետո գերագույն դիվանի բարձրաստիճան մեծ *վեզիրի* հրամանագրով ու *ղոռչի բաշիի* թույլտվությամբ հիշյալ վարչությունում գրառում են կատարում, որպեսզի այնտեղ առանց որևէ խոչընդոտի այն գործադրեն: *Ղոռչիների, յուզբաշիների* ու *յասավուլ-ե դուռերի* հետ կապված մնացյալ իրողությունները ևս *ղոռչիի վեզիրի* կողմից են հաստատվում: *Յուզբաշիների, յասավուլ-ե դուռերի*, զինակիր և նոր (ջաղիդ) *ղոռչիների* ծառայության բոլոր ցուցակները, տեղեկանքներն ու փաստաթղթերը այդ *վեզիրների* կողմից են արձանագրվում և նրանց ծառայության *թիուլի* ու ռոճիկի ավելացման հրամանները նրանք են գրում և հասցեագրում, կնիք էին դնում *ռոճիկի, թիուլի, համեսալեի* ու *ին'ամի* հրամանագրերին, *թանխահի բարաթների* ու զեկուցագրերին: *Ղոռչիների* ստուգման օրերին նշված *վեզիրը* այդ վարչության *մուսթովֆիի* հետ միասին, արքայական հանդիսությանը շահի ներկայությամբ ընթերցում է այդ անձանց *թիուլին*, աշխատավարձերին և *համեսալեի* վերաբերող ցանկերը:

**Չորրորդ ենթագլուխ:** *Ղառչիների վարչության մուսթովֆիի պաշտոնի բացատրությունը, որը դիվանի աշխատող չորս հոգի գրագիր ունի [իր տրամադրության տակ]*

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ կազմի ծառայության հրամանագրերի անհատական ու տարեթվային մատյանները՝ ոռճիկի չափերի, *ին՛ամի, թիուլի, համեսալեի*, պարտքի ու բացակայության [մասին տվյալներով]: Պաշտոնական փաստաթղթերը, ներկայության ու բացակայության տեղեկանքները, հեռացման կամ մահվան գրությունները հիշյալ *մուսթովֆիի* մոտ են և նրա գրագիրների կողմից համապատասխան գրանցում է կատարվում, որպեսզի դրա համաձայն վարչության գրագիրները *ջալ՛* անեն հեռացվածների, բացակայած օրերի, ռազմերթին միա՛նալու տարբերությունը աշխատավարձերի բաժինը մահացածներին հատկացված *համեսալեի* ու *թիուլի* հետ և *դիվանի* օգտին *գաբթ* (առգրավեն) անեն: Հիշյալ վարչության գրագիրներն էին գրում *դոռչիների* մուրհակները, *թանխահը, թիուլը* և *համեսալեն*, գրանցում նրանց վերաբերող *թիուլի*, ոռճիկի, *համեսալեի, բարաթով* ստանալիք և ծառայության հրամանագրերը, որոնք արձանագրվելուց հետո նշված վարչության *մուսթովֆի*ն ստորագրում ու կնքում է:

**Հինգերորդ ենթագլուխ:** *Ղուլամների վարչության վեզիրի պաշտոնի բացատրությունը:*

Վերոնշյալի աշխատանքն այն է, որպեսզի առանց խաչընդոսի գործադրի *սեփահսալարների, սարդարների* գրություններն ու հավաստագրերը, ինչպես նաև նախկին ծառայող-

ների ներկայության ու ռազմերթերի ծառայությունների վերաբերյալ, որոնք [հաստատվել էին] գերագույն *դիվանի* մեծ *վեզիրի* հրամանագրով և բարձրաստիճան *ղուլարադասի* ստորագրությամբ: *Ղուլամ յուզբաշիների, յասավուլ-ե դուտերի, դուլամների*, հրետանու մուսետիկների (ջառչի-և ջազայերի անդազ) և այլոց ստանալիքների, *համեսալեի, թիուլի* ու աշխատավարձերի մնացած հանգամանքները *դուլամների վեզիրն* է կնիքով հաստատում: *Յուզբաշիների, յասավուլ-ե դուտերի* և մյուս նոր *ղուլամների* ծառայության ցանկերը, հաստատումներն ու փաստաթղթերը նշված *վեզիրների* մոտ էին, որոնք այդ անձանց ծառայության հրամանագրերը, *թիուլային* ավելացումներն ու աշխատավարձերն էին գրում ու հասցեագրում հրամանով և վերնագրերով արձանագրում էին: [Նա] էր կնքում հիշյալ անձանց աշխատավարձերի չափը, *թիուլը, համեսալեն, բարաթով թանխահը* և ծառայության հրամանագրերի, նրանց *թիուլի, համեսալեի* և պահանջված *թանխահի* ներդիրները: *Ղուլամների* ստուգման օրը նշված *վեզիրն* այդ վարչության *մուսթովֆիի* հետ միասին ներկայանում են արքայական *դիվանի* նիստին և շահի առջև ընթերցում այդ անձանցից յուրաքանչյուրի կարգին, *թիուլի*, աշխատավարձերի ու *համեսալեի* չափերին վերաբերող ցանկերը:

**Վեցերորդ ենթագլուխ:** *Ղուլամների վարչության մուսթովֆիի պաշտոնի բացատրությունը, որը հինգ հոգի դիվանի գրագիր ունեք*

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ ճշգրտորեն պահեր [ղուլամների] անհատական մատյանները՝ ծառայության հրա-

մաների թվականների, աշխատավարձերի չափեր, *ինձամի, թիույի, համեսալեի*, կանչման, ներկա-բացակայության (մասին տվյալներով): Պաշտոնական գրությունները, ներկայության ու բացակայության տեղեկանքները և հեռացման ու մահվան փաստաթղթերը պահվում են այս վարչության *մուսթովֆիի* ու նրա գրագիրների մոտ և ըստ այդմ վարչության գրիչները *ջամ'* են անում, որպեսզի հեռացվածների աշխատավարձերն ու բացակայության և ռազմերթից վերադարձի տարբերությունը *ղիվանի* տնօրինմանը հանձնվի: Հիշյալ անձանց ստանալիք գումարների, *թանխահի, թիույի, համեսալեի* որպիսությունը, [դրա] գրանցումը, *թիույի* և աշխատավարձերի արձանագրումը, *ռադամներն* ու *հոքմերը*, նրանց *թիույի* ու աշխատավարձի հիշյալ վարչության գրագիրների [պարտականությունն] է, որոնց գրանցումից ու գրությունից հետո *մուսթովֆիին* ստորագրում և կնքում է:

**Յոթերորդ ենթագլուխ: Հրացանակիրների վեզիրի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ ռազմերթերին նախկին ծառայողների ներկայության ու ծառայության վերաբերյալ *սեփահսալարների* ու *սարդարների* կողմից գրված գրություններն ու տեղեկանքները բարձրագույն *ղիվանի* բարձրաստիճան *վեզիրի* հրամանագրին ու *թուֆանկչաղասի* հաստատմանը համապատասխան ստորագրի, որպեսզի այդ վարչությունում առանց խոչընդոտի այն գործադրվի: Հիշյալ վարչության *վեզիրներն* են հաստատում նաև հրացանակիրներին, *յուզբաշիներին, մինբաշիներին, մուևետիկներին* և այլոց վերաբերող

գրությունները: *Մինբաշիների, յուզբաշիների* և մուևետիկների ծառայության ցանկերը, հաստատումներն ու տեղեկանքները նրանց [հիշյալ պաշտոնյայի] մոտ են, որը գրում է նրանց ծառայության հրամանագրերը, *թիույի* ու աշխատավարձերի ավելացումները և հասցեագրում դրանք: Նա է կնքում ծառայության ու աշխատավարձերի հրամանագրերի ներդիրները, աշխատավարձերի, *թիույի, համեսալեի, ինձամի* ու *բարաթով թանխահի* բովանդակությունը: Հրացանակիրների ստուգման օրը եզված *վեզիրն* այն վարչության *մուսթովֆիի* հետ միասին արքայական *ղիվանի* նիստի ժամանակ շահի առաջ ընթերցում է եզված խմբից յուրաքանչյուրի կարգի, *թիույի*, աշխատավարձի ու *համեսալեի* չափի անհատական փաստաթուղթը:

**Ութերորդ ենթագլուխ: Հիշյալ [հրացանակիրների] վարչության մուսթովֆիի պաշտոնի մանրամասները, որն իրեն ենթակա ղիվանի չորս գրագիր ունի**

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ հավատարմորեն պահի անհատական տվյալները, ծառայության հրամանագրերի հրապարակման տարեթվերի, աշխատավարձերի, *ինձամի, թիույի, համեսալեի*, կանչման ու մշտական զինվորագրության վերաբերյալ: Հիշյալ *մուսթովֆին* ու նրա գրագիրներն են պահում պաշտոնական գրությունները, ներկա-բացակայության, [աշխատանքից] հեռացման ու մահվան փաստաթղթերը և դրանց համապատասխան նրա զրչով *ջամ'* է արվում, որպեսզի հեռացվածների աշխատավարձերի, բացակայության ու ռազմերթին մասնակից դառնալու օրերի տարբերության բաժինը *ղիվանի* տնօրինմանը

հանձնվի: Հիշյալ վարչության գրագիրներն էին գրում այդ անձանց ստանալիքի, *թանխահի, թիուլի* ու *համեսալեի* որպիսությունը, գրանցում նրանց հրամանագրերը, աշխատավարձերը, *համեսալեն, բարաթն* ու մյուս [տվյալները] որից հետո հանձնում էին վերը նշված *մուսթուվֆիի* ստորագրմանն ու կնքմանը: Այդ վարչության հաշվապահությունը մշտապես *ղուլամների* վարչության *մուսթուվֆիի* էր վարում: Այդ երկու վարչություններից յուրաքանչյուրում չորս հոգի գրագիր են աշխատում:

**Իններորդ ենթագլուխ: Արքունի հրետանու վեզիրի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքը նախկին ծառայողների որպիսության, ռազմերթերին ներկայության և ծառայությունների վերաբերյալ *սեփահսալարների* ու *սարդարների* գրած հավաստագրերի [ստուգումն էր], որ գերագույն *դիվանի* բարձրաստիճան *վեզիրի* հրամանագրով բարձրաստիճան հրետանու պետի (*թուփչի բաշիի*) հաստատմամբ, այդ վարչության *վեզիրը* ստորագրում էր, որպեսզի առանց արգելիքի այդ ատյանում զործադրեն: *Ղուլամների վեզիրն* է մակագրում նաև թնդանոթաձիգներին, *մինբաշինների, յուգբաշինների* ու թնդանոթի մուսետիկներին վերաբերող այլ բոլոր գրությունները: *Մինբաշինների, յուգբաշինների*, մուսետիկների ու մյուս նոր հրացանակիրների ծառայության փաստաթղթերը նշված *վեզիրների* մոտ են պահվում, որոնք նրանց ծառայության, հավելյալ *թիուլի* ու աշխատավարձերի հրամաններն են գրում ու հասցեագրում նաև կնքում ծառայության, աշխատավարձերի, *թիուլի* ներդիրներն ու աշխատա-

վարձերի, *թիուլի, համեսալեի, ին'ամի, բարաթով թանխահի* չափերը: Թնդանոթաձիգների ստուգման օրը նշված *վեզիրն* այդ վարչության *մուսթուվֆիի* հետ միասին Նորին Արքայական Մեծության դրախտային հավաքում ընթերցում է այդ անձանցից յուրաքանչյուրի կարգերին, *թիուլի, աշխատավարձերի, համեսալեի* չափի մասին փաստաթղթերը:

**Տասներորդ ենթագլուխ: Հիշյալ [թնդանոթաձիգների]**

**վարչության մուսթուվֆիի պաշտոնի մանրամասները, որը դիվանի աշխատող չորս գրագիր ուներ**

Վերոհիշյալի աշխատանքն այն է, որ ճշգրտորեն պահի անհատական մատյանները՝ ծառայության հրամանների հրապարակման տարբեթվերով, աշխատավարձերի, *ին'ամի, թիուլի, համեսալեի* չափերի ու մշտական զորակոչման մասին [տվյալներով]: Վերոհիշյալ *մուսթուվֆիի* ու այդ վարչության գրագիրներին մոտ են պահվում պաշտոնական ներկա-բացակայության, հեռացման և մահվան մասին փաստաթղթերը, և դրանց համապատասխան այդ սաբքարի գրչով ջամ է արվում, որպեսզի հեռացվածների աշխատավարձերը և բացակայության օրերի ու ռազմերթին մասնակցելու միջև տարբերությունը դիվանի տնօրինմանը հանձնի: Նրանց ստանալիքի, *թանխահի, թիուլի* ու *համեսալեի* գրությունը, հրամանագրերի արձանագրումը և այդ անձանց *թիուլի*, աշխատավարձերի, *համեսալեի* ու *բարաթի* որպիսությունը այդ սաբքարի գրագիրներին [պարտականությունն] է, որոնք գրելուց ու գրանցելուց հետո հիշյալ *մուսթուվֆիի* կողմից ստորագրվում և կնքվում են:



Տասնմեկերորդ եկթագուլի: Գերագույն դիվանի  
լաշքարենիսի պաշտոնի բացատրությունը, որը դիվանի  
հարեմի ու այլ աղաների, դուշխների, յասավուլների,  
դոնապանների վարչության վեզիրն է

Նա է կնքում նրանց թիուլի, համեսալեի ու ին'ամի բովան-  
դակությունը, գերագույն պալատի ու սահմանային [շրջանների]  
բոլոր մեծ *ամիրների, բեկլարբեկների*, հարգարժան *հաքիմների*,  
*սուլթանների*, հարգարժան *խաների բարաթով* աշխատավար-  
ձերի ու *համեսալեի* հրամանագրերը, նշված անհատների, նաև  
բոլոր աշխատողների, պատվարժան *մուսթովֆիների*, մանր ու  
խոշոր ավագանու, գրասենյակների գրագիրների, սահմանային  
[շրջանների] *մուսթովֆիների*, բժիշկների, աստղագուշակների,  
*նագերների, քալանթարների* նշանակումների հրամանագրերը,  
*ամիրների* ու պալատի *մուղաբրաբեների, աղաների, դուշխների*,  
*յասավուլների, դիվանի* դոնապանների, *սահեբջամ'ների*, արհես-  
տանոցների *դուլամ* չհանդիսացող պատվելի աշխատողների *տո-  
յուրդալների, մուաֆույայան*, վարձակալման, *վագիֆների* հրա-  
մանները, *յասաղիների* ու *չերիքի* ցուցակները: Նա է գրում նաև  
հիշյալ խմբի անձանց ծառայության հրամանագրերը: *Սեփահ-  
սալարների* և *սարդարների* ռազմերթի ժամանակ նրանց հետ  
ներա ներկայացուցիչն էր ուղարկվում, որպեսզի տեղում ճշգրտո-  
րեն պահեր նրանց ներկա-բացակայությունների, արտաքինի  
նկարագրության ու աշխատավարձերի չափերի մատյանը և  
գերագույն պալատ ուղարկելը: *Ամիրների, հաքիմների* և սահմա-  
նային *սուլթանների* անհատական մատյանը նա նրա պատաս-  
խանատվության տակ է: Մուսուլման օրերին *սարիսաթի* վարչու-  
թյան հետ գործ ունեցող պաշտոնյաները *սարիսաթենիսի* հետ  
ստուգման օրինակները ընթերցում և գրի էին առնում:

Տասներկուերորդ եկթագուլի: Գերագույն դիվանի  
սարիսաթենիսի պաշտոնի բացատրությունը:

Նա բոլոր նշված ծառայողների հրամանագրերի գրու-  
թյունից ու դրանց կնքումից գատ [մուացած հարցերում] *լաշքար-  
ենիսի* գործերին մասնակից է, նաև *սեփահսալարների* ու *սար-  
դարների* հետ իր տեղակալին ուղարկելու հարցում: Նա է վար-  
չության պաշտոնյաների *մուսթովֆի*ե: Բոլոր պաշտոնյաների ու  
գործավորների *թանխահի* որպիսությունը, նրանց *թիուլի*, աշխա-  
տավարձերի, *համեսալեի* ու պարտամուրհակով ստանալիքների  
չափը [բովանդակող] անհատական մատյանները նրա տնօրի-  
նության տակ են: Նշված անձանց նշանակումների, *թիուլների*,  
*համեսալենների* ու այլ հրամանագրերը գրությունից, հաստատու-  
մից ու գրանցումից հետո *սարիսաթենիսի* ձեռքով մակագրվում  
են:

Տասներեքերորդ եկթագուլի: Ջաբեթենիսի պաշտոնի  
բացատրությունը

Վերոնշյալի աշխատանքը այն է, որ բացի *խասսեի* ու  
*ավարեջեի* վարչությանը ջամ' արված *վզուհաթից*, արքայական  
երկրի դիվանի բոլոր արտադրություններն ու անշարժ գույքը,  
*ռահդարիի* ու ծխախոտի վաճառքի տուրքերն ու պարտավո-  
րությունները, տարածքների մշակության *ջահաթը, չոբանբեկի*  
գորակոչման եկամուտները *իլթիզամները*, հնդիկներից գանձվող  
զլխահարկը, անասնահարկն ու գերագույն դիվան պաշտոնյա-  
ների *ռուսումաթը* ամբողջովին *գաբեթենիսի* միջոցով հաշ-  
վարկվյն և այն ներկայումս Միրզա Աբու-լ-Հասանին է վատահ-  
ված: Այդ վարչությունը տասնհինգ հոգի աշխատող ուներ, որոն-

ցից չորսը ողջ էին և մնացյալ տասնմեկը մահացան շրջափակման ընթացքում և նրանից հետո: Ընդհանրապես նրանց մեծ մասից ոչ մեկը չի մնացել:

**Տասնչորսերորդ ենթագլուխ: Գերագույն դիվանի սահեր թովջիհի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքը հետևյալն է. վերահսկել ծախսերի վարչության բոլոր պաշտոնյաների [հաշվարկները], ստորագրել ու կնքել նրա գրասենյակում կատարվող բոլոր տեսակի գործարքները: Նա տասներկու գրագիր ուներ, որոնցից յուրաքանչյուրը բանակի մի գորամասի մատյանն էր պահում: Գերագույն *դիվանի* նշանակումների, ծառայության, *թիուլի*, աշխատավարձերի, *համեսալեի*, *մուաֆուջան*, *սոյուրդալի*, *վագիֆենների* ու նմանատիպ այլ բոլոր հրամանագրերն ու գրությունները, անկախ այն բանից [վերաբերում են դրանք] *դիվանին*, *խասսեհին* թե *արբաբ ալ-թահավիլին*, այդ պաշտոնյայի կողմից են հաստատվում: Նրա կողմից են հաստատվում նաև թագավորության բոլոր հաշվարկները, բացառությամբ արքունի *բոյու-թաթի սահթեբջամների* և շինությունների *թահվիլդարների*, որոնք *արբաբ ալ-թահավիլի* վարչությունում են, նմանապես նաև *խասսեհի* վարչության բոլոր վճարողների ու *թահվիլդարների* հաշվարկների օրինակները, որոնք հրամանագրերով են գործարքները կնքել: Բոլոր պաշտոնական գրությունները նույնպես պետք է գերագույն *դիվանի թովջիհի* կողմից հաստատվեին, որոշներն էլ նրա կողմից գրվեին: *Համեսալեի* ու մյուս *վջուհաթի* հաստատումները պետք է ամբողջությամբ գրանցվեն ու ստորագրվեն

*սահեր թովջիհի* և նրա գրագիրների կողմից: Գերագույն *դիվանի* պաշտոնյաների *ռուսումաթի* կարգը պահող մատյանը և *չորսերկիհի* ու մյուս *վջուհաթի* գանձման հանձնարարականները (դասթուր ալ-ամալը) այդ վարչության գործն են: Աշխարհակալ [շահի] հանձնարարականները [ևս] այդ վարչությունում է պահվում, որպեսզի անհրաժեշտության դեպքում, իրողության մասին գրություն տրվի և դրան հակասակ չգործեն ու հավելագրում որևէ մեկի հանդեպ տեղի չունենա: Բանակի թվի և թագավորության *հարիմների* եկամուտների չափը այդ վարչությունից է հայտնի դառնում: Ներկայումս նրա գրագիրներից շատերը այլևս չեն աշխատում:

**Տասնհինգերորդ ենթագլուխ: Նորին արքայական Մեծության գրագրատան դաֆթարդարի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ մակագրի *վեզիրների* և *մուսթոֆֆիների* հրամանագրերը, նաև, *յասսավուլ-է սոհբաթների*, *իչիք ադասիների* և *ադաների սոյուրդալները*, *մուաֆուջուն* ու *թանխահ* աշխատավարձերը: Նախորդ տարիների մատյանները, որոնց հազվադեպ էին անդրադառնում և գրագրատան պահեստում էին, հանձնվում էին *դաֆթարդարին* և նրանց պահպանությունը վերջինիս պարտականությունն էր:

**Տասնվեցերորդ ենթագլուխ: Ազաբ բաշիհի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալը *ազաբների* ու *ֆառաշների դաֆթարի* պետն է, պահեստում չպահվող մատյանները նրան են հանձնվում և եթե

կորնն, նա էր պատասխանատու: Ըստ կարգի *ռադամների* ու *հորմների* մատյանը նա է ստորագրում:

**Տասնյոթերորդ ենթագլուխ: Վաքիլի դուշուլլուքի գաշիթի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ արքունի գրագրատանը հրապարակվող աշխատավարձերի և այլ հրամանագրերից նա հավաքում է գերագույն *դիվանին* պատկանող *վաքիլին* ըստ կարգի հասնող *դուշուլլուքը* կանխիկ գումարով: Կանխիկը իր մատյանում գրանցում է, իսկ այն, ինչ որ կանխիկ չէին վճարել, ստանալիքի գումարից էր հանվում, և տարվա վերջում դրա չափը հստակեցվում էր և գրասենյակից *թանխահ* էր արվում ու տրամադրվում, որպեսզի [գումարը] ծախսեն նրա վրա, որ անհրաժեշտ էր: Հրամանագրերի ներսի վրա *գաբիթն* իր ձեռքով նշում էր, որ «*դուշուլլուքը* ստացվել է»:

**Տասնութերորդ ենթագլուխ: Ավարեջեննիսների պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքը այն է, որ գրանցի անունները գրասենյակի իրողությունների մատյաններում: *Մուսթաաջիրների*, *գաբիթների*, *մութաաադդիների* և *դիվանի մալիյաթի* մյուս *մուբաշիրների* ծախսերի փաստաթղթերում «ջնջված» և որոշնե-րում «հետագոտման» գրի: *Համեսայեի*, *թիուլի* և այլ հրամանագրերը, որոնց որպիսությունը գերագույն *դիվանի վեզիրի* ու *մուսթովֆի ալ-մամալերի* հրամանով [հաստատվում է], տրվում են [ավարեջեննիսին] ու հասցեագրվում: Ըստ կարգի նույն կերպ են վարվում նաև սահմանային ու *վիլայեթների ամիրների* և *վեզիրների* *մալիյաթ* տրամադրված լինելու [դեպքում], ինչպես

նաև *հաքիմների*, *քալանթարների*, *մուսթովֆիների*, *լաշքար-նիսների*, *մալիքների*, ցեղերի ու ցեղախմբերի առաջնորդների, *մահալների* ղեկավարներին *դաֆթարից* որպես պատճեն (մուսավաղե) հրապարակելու դեպքում: Անկախ այն բանից օրինակ արքունիքի, սահմանային, թե այլ պաշտոնյաներից են: [Ավարեջեննիսները] պատճենների վրա գրում են «գրի առևվեց», իսկ [խսկական] հրամանագրերի վրա «տեսա» և հետո արձանագրում են: Փաստաթղթերը ստանում, գրառում էին կատարում հրամանագրերի վրա և գրանցման տեղում ստորագրում էին, որպեսզի պաշտոնական փաստաթուղթ դառնա: Եվ նշված կարգով էին վարվում *իթթաների*, *սոյուրդալների*, *մուսալլամության*, *մուաֆության*, ապրուստի օգնություն տրամադրող ու օրինական այլ հրամանագրերի հրապարակման դեպքում:

**ԳԼՈՒԽ ՉԻՆԳԵՐՈՐԴ**

Թագավորանիստ Սպահանի արքունիքի *ամիրներից* յուրաքանչյուրի աշխատանքի վերաբերյալ, որը բաղկացած է տասնչորս ենթագլխից (ֆաալ)

**Առաջին ենթագլուխ: Ֆեղասարի վարչության վեզիրի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքը *մուլքերի*, հողագործական տարածքների, այգիների ու այլ կապվածքների, ջրաղացների ու ջրանցքների բարեկարգումն է: [Լա] պարտավոր է նշված վարչության *մահալների*, անշարժ գույքի ու *վակֆերի* այլ հասույթի չորրորդ մասը *ոսյաթներից* ու *մուսթաաջիրներից* ստանա և

կարգադրված ծախսերին հատկացնի: Նա պետք է լավագույնս ջանա *մահալը* բարեկարգել և հողագործությունն ավելացնել:

### Երկրորդ ենթագլուխ: Թագավորության վակֆերի

#### մուսթովֆիի պաշտոնի բացատրությունը

Վերոհիշյալի աշխատանքն այն է, որ [երբ] բոլոր *վեզիրները*, *մուսթովֆիները*, *մութասադդիները*, *մութավալիները*, *խասսների* և մյուս շրջանների *վակֆերի մութաշիրները* իրենց բոլոր հաշվարկները ներկայացնեն *վակֆայիների* գրասենյակ, հիշյալ *մուսթովֆիի* հաշվարկները հաստատի, ծախսի փաստաթղթերը ջնջի, հաշիվները փակի ու յուրաքանչյուրին հրահանգների ցուցակ է տալիս, որպեսզի դրան համապատասխան գործարք իրականացնեն: Պաշտոնական հրամանագրերն ու *միսալները*, որ հրապարակվում են, գրվում են *վակֆերի դաֆթարի* օրինակներից գրագիրների ու *միսալների սենեկի* կողմից: Հրամանագրերը գրագրատան *դարտդայի* կողմից կնքվելուց հետո [մուսթովֆիին ևս] կնքում ու ստորագրում էր:

### Երրորդ ենթագլուխ: Թագավորանիստ Սպահանի վեզիրի պաշտոնի բացատրությունը

Վերոհիշյալի աշխատանքն այն է, որ կառավարի *խալիսեի մահալները* և տևորինի *վջուհաթի* ու խանութների մի մասը: Նա պարտավոր է հսկել, որպեսզի *մահալներից* ոչ մեկը բարձիբողի ու անմշակ չմնա: Նա *մուսթաաջիրին* ու *ոսյաթին* տալիս է այն, ինչ անհրաժեշտ է համարում հողագործության համար՝ սերմնացու կամ այլ նպաստ՝ փոխհատուցումը բերքից ստանալով: Նա

*խասսե-ե շարիֆեի* վարչության համար *գարիթ* ու *մուսթաաջիր* է հայթայթում՝ թույլ չտալով, որպեսզի *խասսեի* վարչությանը վնաս հասնի: Նա այն *մահալների* համար, որտեղ *ոսյաթ* չկա, հողագործ *ոսյաթներ* է գտնում և բոլոր ջանքերը գործադրում է, որպեսզի ժամանակին հավաքվեն *դիվանի* համար գանձվող հարկերը: Սպահանին վերաբերող *վջուհաթի* կապակցությամբ, որի գործարքները այնտեղի *մուսթովֆիի* պատասխանատվության տակ են, փաստաթղթեր են հանձնվում *բոյութաթի սանեք-ջամերին*, որոնցում *համեսալեն* ու մյուս փաստաթղթերը վերոհիշյալ *վեզիրի* կողմից են հրամանագրվում: *Մուսթովֆին* պահում է այդ փաստաթղթերը և *վեզիրի*, *բալանթարի* ու *մուսթովֆիի* կնիքով [հաստատված] *բարաթով հավալե* է արվում ու [գումարը] գանձվում: Եթե երկնային կամ երկրային աղետի պատճառով բերքը ոչնչացած լինելով՝ ստուգման կարիք է լինում, զեկուցագիր է հղվում Նորին Մեծությանը կամ Գերագույն *դիվանի* մեծ *վեզիրին*, որից հետո կարգադրվում է, որպեսզի *վեզիրներն* ու *ամիրները* բերքը և հողը չափագրող-հաշվարկողների (ոհա՛մասա՛) ու բանիմաց գրագիրների հետ այդ *մահալը* գնալով ստուգեն և որոշեն [վնասի չափը]: Ընդունված կարգի համաձայն գյուղացուն հասանելիք մասնաբաժինը (աքիրա) հանելուց հետո մնացածը *դիվանի գաբթին* տրվելով՝ *ոսյաթներին* է վստահվում և մթերվում այդ մանալում, որից հետո *թահիվիդար* է նշանակվում ու *թանխահ* արվում *դիվանի հավալե* ունեցողներին: *Վեզիրի* պարտականությունն է հողագործներին հավաքելը, հողագործության ավելացումն ու զարգացումը, շենքերի, ջրանցքների, խանութների, տների ու *խալիսեի* վերանորոգումը, *-ոսյաթ-*

ների ինչպես նաև ենթակաների և աշխատողների պաշտպանությունը, որպեսզի որևէ մեկի կողմից նրանց նկատմամբ բռնություն տեղի չունենա և ղեկավարների նշանակումը, որը *քալանթարի* տեղեկացմամբ [է կատարվում]:

Սպահանի *վեզիրը թանխահ* ստանալով՝ ծախսում է *ղիվանի* կարիքների համար, իսկ տարվա վերջին իր ձեռքին եղած օրինական փաստաթղթերը ներկայացնում է գերագույն *ղիվանի վեզիրի* հրամանագրի [համար], որին համապատասխան *մուսթուվֆիին* ստուգում է նրա հաշվապահական փաստաթղթերը և դրանց մնացորդն ու պակասորդը: Գերագույն *ղիվանի վեզիրի* հրամանագրից հետո նրա գործարքների մի արձանագրություն է ուղարկվում *խասսեի* բարձրաստիճան *մուսթուվֆիին*, որը կատարում է անհրաժեշտ մասհանումներ ու ճշգրտումներ: *Վեզիրին* տրամադրվում էին նաև *ղիվանի* մի քանի աշխատողներ՝ նրան *ղիվանի* ծառայություններ մատուցելու համար: *Մահալի* ստուգման փաստաթուղթը քանի դեռ գերագույն *ղիվանի վեզիրի* հրամանագրով չէր հաստատվել օրինական ուժ չունեն և *ղաֆթարներում* չէր գործադրվում: Երջանի ստուգման ժամանակ գերագույն *ղիվանի* կողմից մի վստահված անձ էր նշանակվում, որի ներկայությամբ *ամիլներն* ու մյուս հանձնակատարները պետք է ստուգումը անցկացնեին:

**Չորրորդ ենթագլուխ : Փոխանցման (էթեղայի) վարչության վեզիրի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի պարտականությունն այն է, որ կատարի *մուլքերը*, հողագործության տարածքները, բարեկարգի այգի-

ները, անշարժ գույքը, ջրաղացներն ու ջրանցքները և յուրաքանչյուր *մահալի* բերքի հաշվարկված մասը գյուղացիներից ու վարձակալներից գանձվում է նրա իմացությամբ և [նրա] կնիքով հաստատմամբ: Իսկ այն *մահալները*, որ անկարգ ու անմշակ են, այն ինչ որ անհրաժեշտ է հողագործության կազմակերպման համար, տրամադրվում է վարչության *մալիյաթից*. սերմացու, նպաստ ու օգնություն և սպա փոխհատուցվում բերքով: [Վեզիրը] անշարժ գույքի համար *գաբիթ* ու *մուսթաաջիր* էր գտնում՝ թույլ չտալով, որպեսզի *խասսե-ե շարիֆեի* վարչությանը վնաս հասնի: Եթե որևէ *մահալ ույայթ* չունի, հայթայթում է ու հողը մշակել տալիս: Եթե երկրային կամ երկնային աղետի պատճառով կամ այլ ... ստուգման կարիք կա, գերագույն *ղիվանին* այդ մասին զեկուցվում է, ենթականերից մեկին կարգադրվում է *վեզիրների, ամիլների, չափագրող-հաշվողների* բանխմաց գրագիրների հետ այդ *մահալը* գնալ, ըստ կարգի ստուգել ու որոշում կայացնել և գյուղացուն հասանելիք մասնաբաժինը (աբիրա) հանելուց հետո, մնացածը հանձնվում է *ղիվանի գաբթիե*. [Վեզիրը պետք է ջանա] ավելացնել ու զարգացնել հողագործությունը, նորոգել շինությունները, ջրանցքները, խանութները, *խալխե* ու *վակֆային* [հողերի վրա գտնվող] պաշտպանել վճարողներին, որպեսզի որևէ մեկի կողմից երանց նկատմամբ բռնություն ու ճնշում չգործադրվի: [Նա է նշանակում] ղեկավարներին, որպեսզի իր լիազորությամբ որքան, որ անհրաժեշտ լինի [գումար], վարչության *մուսթուվֆիից* ստանա և ծախսի *ղիվանի* կարիքների համար: Տարվա վերջում հաշվապահական փաստաթղթերը ներկայացնի գերագույն *ղիվանի վեզիրի* հրամանագրի

համար, որին համապատասխան վարչության *մուսթովֆին* հաշվարկներն անի: Նրա գործունեության փաստաթուղթը գերագույն *դիվանի վեզիրի* հրամանագրով հաստատվելուց հետո ուղարկվում է *խասսեի* բարձրաստիճան *մուսթովֆին*, որպեսզի ինչպիսի հանում ու ճշգրտում, որ կլինի, վերոհիշյալը գործադրի:

**Հինգերորդ ենթագլուխ: Վերոհիշյալ վարչության  
Նորին Գերագանցություն մուսթովֆիի պաշտոնի  
բացատրությունը**

Նրա հատուկ [պարտականությունն] է բերքից ու կալվածքներից *հավալե* ու *իթլաղ* անելը, *դիվանի վզուհաթը* վճարողների, *ռայաթների* և հիշյալ *վեզիրի գարթին* հասկացված *վակֆերի* հաշվարկների հստակեցումը: Անհրաժեշտ քանակի գրողներ ունի իր ենթակայության տակ, որ առանց իր իմացության և կնիքի, *մութավաջջեհաթի* որևէ գործարք չի կատարվում: Բոլոր *ռայաթների* ու վճարողների հաշվարկների հստակեցումից հետո, որն ըստ ընդունված կարգի *ամիլներն* ու հանձնակատարները ամեն տարի աղեղնավորի ամսին *դաֆթարում* փակում են, *մուսթովֆիի* կնիքով վնդջանահաշվարկ [ստացական] է տրվում: Նա ամեն տարի հիշյալ վարչության *մութավաջջեհաթի* մուտքի ու ծախսերի ցուցակը գերագույն *դիվանի վեզիրի* հրամանագրով հաստատված փաստաթղթերի հիման վրա գրում [ներկայացնում] է *խասսեի* վարչությանը, որպեսզի եթե օրինական փաստարկ կամ ճշգրտում ունենան, *խասսեի մուսթովֆին* գործադրի:

**Վեցերորդ ենթագլուխ: Նորին գերագանցությունը  
քալանթարի պաշտոնի բացատրությունը**

*Մահալների քյադիտուդաների* ու արհեստավորների ավագների նշանակումը վերոհիշյալի [պարտականությունն] է: Հետևյալ էղանակով, որ յուրաքանչյուր *մահալի*, արհեստավորական համքարության ներկայացուցիչներն ու գյուղի բնակիչները, ում որ վստահելի են համարում, իրենց կողմից որոշում, նրա անունով համաձայնագիր են գրում և աշխատավարձ որոշում նրա համար, ապա *նադիրի* կնիքով հաստատելով, *քալանթարին* են ներկայացնում և նշված անձի համար հրաման և *խալաթ* ստանում, որից հետո նա զբաղվում է նրանց գործերի կարգավորմամբ: Տարվա առաջին երեք ամիսը *քալանթարը* և *նադիրը* մեկին են նշանակում, որպեսզի բոլոր համքարությունների ներկայացուցիչներին համախմբի բոլոր համքարությունները և նրանց ուղեկցի Սպահանի արքունիքի *նադիրի* մոտ: Ցուրաքանչյուրի *բոնիչեն* որոշվում է և *նադիրե* այն կնքելով հանձնում է *քալանթարին*: Այնուհետև *վեզիրի* կնիքով հաստատված *բարաթներով քալանթարն* ու *մուսթովֆին* բաշխում են յուրաքանչյուր համքարության *բոնիչեն* ըստ *հավալեների դաֆթարի* ու [նրանց վրա դրված] *դիվանի մութավաջջեհաթի* գումարները՝ ըստ *քալանթարի* ցուցման, իսկ *դիվանի մուհասիլները* դրանց համապատասխան ստանում են:

Գրասենյակային աշխատանքները կատարելու համար *դիվանի* մի քանի աշխատողներ ուներ իր տրամադրության տակ: Նրա պարտականությունն էր համքարությունների միջև *բոնիչեի* չափի կապակցությամբ ծագած խնդիրների և այլ աշխատանքային հարցերի պարզաբանումն ու կարգավորումը, որպեսզի ինչ-

պես, որ պետության կարգն ու օրենքն է, նրան համապատասխան գործադրեն: Եթե որևէ կերպ ենթակաների և գյուղացիների նկատմամբ բռնություն գործադրվի, այն բանից հետո, երբ *քալանթարին* բողոքեն, նրա պարտականությունն էր *ռայաթի* շահերը պաշտպանել և եթե ի վիճակի է, վերականգնել [ռայաթի իրավունքները], այլապես գեևուցի *ղիվանի վաքիլներին*<sup>155</sup> թույլ չտալով, որ ուժեղների կողմից թույլերի նկատմամբ բռնություն գործադրվի և անեծքի պատճառ լինի: Նա մշտապես պետք է ջանա բարելավել *ռայաթների* դրությունը, որպեսզի սպահովի բարի աղոթքները սրբազնագույն ետության հասցեն:

### **Յոթերորդ ենթագլուխ: Սպահանի դարուդայի պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալը *ղիվանբեկի* ենթակայության տակ է, և նրա աշխատանքը քաղաքի ներսի ու դրսի պաշտպանությունն է, որպեսզի ոչ ոք անկարգություն ու բռնություն չգործի: [Նա] պետք է արգելի պոռնկությունը, հարբեցողությունը, խաղամոլությունը և *շարին* հակառակ այլ արարքները, որպեսզի ոչ ոք դրանք չկատարի: Իսկ եթե կկատարեն, պատժին և հանցանքին համապատասխան մեղաավորներից տուգանք գանձի: [Նրա պարտականությունն էր] զիջերները երեք ժամ անց մեկ ժամ Գեսարիայի դարբասի մոտ կանգնել և ապա իր ենթակաների հետ ձի հեծած քաղաքի մի կողմը [գնալ], ստուգել [քաղաքի այդ հատվածը], մինչ նրա մյուս ենթակա հսկիչները քաղաքի մյուս կողմերում էին շրջում: Նա միայն լուսաբացի շեփորի հնչելուց<sup>155</sup> հետո էր գնում իր բնակարանը: Ընդունված կարգ էր, որ *դռոչիների*,

*ղուլամների, աղաների*, հրացանակիրների և թղառնաթափներին վարչությունից նրան ենթականեր հատկացնելը, որպեսզի ըստ իր հայեցողության նրան ծառայեն իրենց ղեկավարի գլխավորությամբ, *մահալներից* որում, որ նա կնշանակի՝ զիջեր ու զօր այնտեղ մնալու ու պաշտպանելու, որպեսզի որևէ մեկը բռնություն, անկարգություն ու անօրինական գործողություն չկատարեր: Դարուդային [պետք է] հասցնեին այն ամենի մասին, ինչ այդ *մահալում* տեղի էր ունեցել, որպեսզի նա դրանք պարզեր ու [մեղավորներին] պատասխանատվության կանչեր: Ամեն զիջերը այն խումբը այդ *մահալում* շրջում էր:

Համաձայն եղած կարգի՝ վեճերը, որոնք մինչև 5 թումանի և անգամ 12 թումանի [շուքը] էին, անկախ նրանից քաղաքում, թե գյուղերում էին, քննվում էին *դարուդայի* կողմից, իսկ դրանից [բարձրերը]՝ *ղիվանբեկի* կողմից: *Դիվանբեկի* և *դարուդայի* միջև ընդհանուր կարգն այնպիսին էր, որ այն, ինչ որ *դարուդան* քննում էր, *ղիվանբեկին* կարող էր միջամտել, իսկ երբ գործը *ղիվանբեկին* էր հասնում, այլևս *դարուդան* իրավասու չէր: *Դարուդային* ենթակա հսկողներից *միրեշար* կոչվողներն էին, որոնք նույնպես իրենց խմբով զիջերները թաղամասերում շրջում էին, որպեսզի թաղամասերում գողություններ չպատահեին, իսկ գողության դեպքում պարտավոր էին *դարուդային* զեկուցել: Ետ ստացված գողույնի 2 դանգը ըստ ընդունված կարգի նրանն է, մնացած 4 դանգը, *ղիվանբեկին* ու *դարուդային* տեղեկացնելով, պետք է տիրոջը հանձնել: Եթե նա գողին չի գտնում, որոնման համար ժամանակ էր պահանջում, և եթե ժամանակը լրանալուց հետո դարձյալ [գողին] չի գտնում, գողացված գույքի համար նա իր ունեցվածքից տուգանք է վճարում:

<sup>155</sup> Գիջերվա ժամը երկուսին:

## Ութերորդ ենթագլուխ: Նորին Գերագանցություն

### մուխթասիբ ալ-մամալեքի պաշտոնի բացատրությունը

Այն բանից հետո, երբ *սահեբ նասաղը* ամսեամիս ապրանքների գների *իլթիզամը* հավաքում էր համբարությունների ավագներից, իր գործն ավարտված էր համարում և [հաստատման] կնիքը փոխանցում է *մուխթասիբ ալ-մամալեքի*։ Վերջինս դրանց յուրաքանչյուր կետ հաստատելով՝ ուղարկում է բարձրաստիճան *նազեր-ե բոյութաթին*, որը դրանք ուսումնասիրելով կնքում ու հանձնում է *սահեբջամ'երին*, որպեսզի դրանց համապատասխան *մոշրեֆները* գնվելիք ապրանքների փաստաթղթերը գրեն։ Եթե ապրանքների գնահատման հարցում արհեստավորներից որևէ մեկը նրա որոշմանը հակառակ է վարվում նրան փայտն գլխարկի (թախթե բոլահ) է արժանացնում<sup>156</sup>, որպեսզի դաս լինի մյուսների համար: *Մուխթասիբ ալ-մամալեքը* թագավորության բոլոր վայրերում իր ներկայացուցչին է նշանակում, որպեսզի նրա հաստատմամբ համբարությունները ամսեամիս ապրանքները մարդկանց վաճառեն և այնտեղի *ոսյաթներն* ու խեղճերը, հանգիստ ու բարվոք, բարի օրինակը հղեն սրբազնագույնի էությանը:

## Իններորդ ենթագլուխ: Նորին Գերագանցություն նաղիբի պաշտոնի բացատրությունը

*Նաղիբի* պարտականությունն էր հստակեցնել համբարությունների *բոնիչեն*: Ամեն տարվա առաջին երեք ամսում [նա]

<sup>156</sup> Պատմի ձև, որի ժամանակ մեղավորին ծայրերի գանգեր ամբարցած փայտն գլխարկ էին հագցնում ու ծաղրոծանակի ենթարկում:

մարդ էր նշանակում, որը հավաքում էր բոլոր համբարությունների *բյաղխուդաներին* և փոխհամաձայնությամբ ու համաձայն օրենքի, իրավունքի, ընդունված կարգի և թագավորության տարածքում գործող կանոնների որոշվում է յուրաքանչյուրի *բոնիչեն* [Ըստ այդմ] ցուցակ է գրի առնում, կնքում և հանձնում *բալանթարի* տեսչությանը, որպեսզի այդ տարվա *դիվանի մուխավաջջենարը* դրան համապատասխան բաշխվի ու *թովջիհ* արվի: Բացի այդ, յուրաքանչյուր համբարություն, երբ ավագ վարպետ էր որոշում, *նաղիբի* հավանությամբ պետք է դա արվեր, որը նրան ներկայացնելով *բալանթարին*, նրա [անունով] հրամանագիր է ձեռք բերում: *Նաղիբի* պարտականությունն էր նաև դերվիշների, ձեռնածուների ու նրանց նմանների նշանակումը:

## Տասներորդ ենթագլուխ: Թագավորանիստ Սպահանի միրաբի պաշտոնի բացատրությունը

Նրա պարտականությունն էր ռոզգման ջրանցքների վերահսկիչների նշանակումը, առունների ու ջրհորների մաքրումն և Ջայնեղեռուղ [գետի] ջրի հասցնելը Սպահանի բոլոր *մահալներին*, որոնք այն օգտագործում են խմելու համար ըստ յուրաքանչյուրին հասնող չափաբաժնի: Այնպես, որ *մահալների ոսյաթները* իրենց *հակկաբեի* հարցում չարաշահում չանելին և թույլ չտար ուժեղների կողմից թույլերի նկատմամբ *հակկաբեի* հարցում անարդարություն գործվեր: Նրա պարտականությունն էր պարզել ու որոշում կայացնել յուրաքանչյուր շրջանի հողատերերի ու *ոսյաթների* միջև *հակկաբեի* շուրջ ծագած վեճերի կապակցությամբ, որը հաստատում էին *վեզիրը*, *բալանթարը* և *մուսթովֆիե*:



**Տասներկերորդ ենթագլուխ: Ֆեյզասարի վարչության Նորին  
Գերագանցություն մուսթովֆիի պաշտոնի բացատրությունը**

Նրա պարտականությունն է այդ վարչությանը պատկանող *մահալների*, այգիների, ջրաղացների և անշարժ գույքի եկամուտների ու ծախսերի մատյանի պահելը: Նա է պահում նաև հիշյալ վարչության եկամուտների ու ծախսերի փաստաթղթերը՝ արտոնված նրա *վեզիրի* հրամանագրով, գում *շարթենանչեները*, *բարաթեները* և ստուգում *ռայաթեների*, վարձակալների և *մալիյաթ* վճարողների հաշիվները՝ հանձնում իր կնիքով հաստատված ստացականներ:

**Տասներկուերորդ ենթագլուխ: Սպահանի Նորին**

**Գերագանցություն մուսթովֆիի պաշտոնի բացատրությունը**

Նրա պարտականությունն է թագավորանիստ Սպահանի *վեզիրի գաբթին* [հատկացված] *ռայաթեներին* ու *դիվանի վճուհաթ* վճարողներին *հավալե* ու *իթլաղ* [արվող] բոլոր *վճուհաթի* ու եկամուտների հաշվարկների ստուգումն ու հստակեցումը: [Իր] ենթակայության ներքո չորս գրագիր ունի: Առանց *մուսթովֆիի* կնիքի *վճուհաթի* ու եկամուտների հետ կապված որևէ գործարք տեղի չի ունենում: Ամեն տարի ըստ ընդունված կարգի աղեղնավորի (տոյեմբեր- դեկտեմբեր) ամսին *ամիլներն* ու հանձնակատարները բոլոր *ռայաթեների* ու հարկ վճարողների հաշվարկները հստակեցնելով ու ճշտելով *դաֆթարում* վերջնահաշվարկ է արվում ու *մուսթովֆիի* կնիքով ստացական տրվում: Ավանակ պահողների, հողագործների, և այլոց ցուցակները, որոնք անհատական էին *թուլջիե* արվում, Սպահանի *դաֆթարում* էին գրի առնվում և կնքվում *ամիլների* կողմից: Հիշյալ

*մուսթովֆիի* ամեն տարի պատրաստում է Սպահանի *վեզիրի գաբթում* գտնվող *մահալների վճուհաթի* ու բերքի եկամուտների ու ծախսերի արձանագրությունը գերագույն *դիվանի վեզիրի* կողմից հաստատված փաստաթղթերին համապատասխան, որն էլ իր հերթին *խասսեի* վարչությանն է հասցվում, որպեսզի եթե ստարկություն կամ ճշգրտում կլինի գործադրի:

**Տասներեքերորդ ենթագլուխ: Թագավորանիստ Սպահանի  
բերքը հաշվարկողի (ոհա'ի) պաշտոնի բացատրությունը**

Վերոնշյալի աշխատանքն այն է, որ ամեն տարի իր *ամիլների* ու հանձնակատարների հետ գնա ու ստուգի Սպահանի *մահալների* բերքը. մի մասը քառորդի կարգով, մի մասը՝ ինչպես, որ կա և մի մասն էլ՝ երկրային կամ երկնային աղետի ենթարկված լինելու [կարգով]: *Ամիլների* ու պատասխանատուների ներկայությամբ նա բերքից նմուշներ է վերցնում, կշռում և դրա հիման վրա *ամիլները* հաշվում են եկամուտը և *ռայաթեների* ու մյուս հարկատուների *արվաբ-ե ջամ'ը*: Այն բանից հետո, երբ ստուգման փաստաթուղթը հաստատվում է մեծ *վեզիրի* հրամանագրով, այն գործադրման ուժ է ստանում, որին համապատասխան վարչության գրագիրները իրենց մատյաններում *արվաբ-ե ջամ'* են անում հարկատուներին և վերջնահաշվարկ կատարում:

**Տասնչորսերորդ ենթագլուխ: Այգիների մոթասաղղիի  
պաշտոնի բացատրությունը**

Նրա աշխատանքն է մշտապես հետևել *դիվանի* այգիների բարեկարգմանը, այս նպատակով անհրաժեշտ ջանք գործադրել

և տարվա բոլոր եղանակներին ծառ տնկել, ծաղիկ աճեցնել և հնարավորինս գույնզգույն ծաղիկները ու արաջին մրգերը շահին մատուցել՝ ի ցույց հանելով իր քարի ծառայությունը: Այգեպանին, որ սխալ էր գործել, նա է պատժում, հեռացնում կամ *նազեր-է բոյութաթին* նրա մասին զեկուցում և նրան փոխարինող նշանակում: Մինչև, որ *մութասադդին* չհաստատի նրա աշխատանքը, այգեպանի աշխատավարձն ու ապրուստի միջոցները այգու տքնաջան աշխատանքի համար չեն տրվում: [Նա պարտավոր է] տարվա յուրաքանչյուր եղանակին բոլոր հանդիսություններին ծաղկեփնջեր մատակարարել:

#### ՎԵՐՁԱԲԱՆ

Գերագույն դիվանի պաշտոնյաների աշխատավարձի գումարների ու չափերի, Իրանի սահմանային ու վիլայետների *ամիրների* եկամուտներն ու նրանց ենթակաների քանակը: Այն բաղկացած է երեք հոդվածներից:

#### Առաջին հոդված

Գերագույն դիվանի մեծ ամիրների ու պաշտոնյաների աշխատավարձերն ու պարգևատրումները

#### Գերագույն դիվանի վարչիը

Նրա արձակուրդի ժամանակ *գարբիթ* էր նշանակվում, որպեսզի նրան [վաքիլին] հատկացված *դուշուլուքը* գանձի, որի 10-ից կեսը (1/20-ը) *գարբիթին* էր: *Դիվանի վաքիլի* համար

աշխատավարձ չէր հատկացվել, իսկ նրան հասնող *ռուսումաթը թումանով* այնպես էր, ինչպես ստորև նշվում է:

- *Իխրաջաթից՝* 126 դինար և 1,5 դանգ
- *Ամիրներին, մուդարրաբներին ու աղաներին* վճարվող *թանխահից՝* 192 դինար:
- *Ամիրներին* հատկացված *թիուլներից* և այլ [հատկացում]ներից, *թիուլից՝* 357 դինար, *համեսալեից՝* 238 դինար:
- *Ամիրների ինձամից* և այն խմբից որոնք ենթականեր չեն, *տոյուդալներից, մուաֆութուներից,* աշխատավարձերից, *մուսալլամիություններից, ամիրների ջանասիրության* (հաղղալ-սա'իի) [համար վճարվող գումարներից]՝ 714 դինար:

Գերագույն դիվանի վեզիրը աշխատավարձ չունի, և ստորև նշվող *ոսամ ալ-վոզարա, ինձամ* ու *ռուսումաթն* է [նրան] հատկացվում՝

- *Ռասամ ալ-վոզարան* և այլն որոնք *մահալներից* էին որոշված
- *Ռասամ ալ-վոզարա-* 803 թուման և 3000 ու քիչ ավելի<sup>157</sup>
- *Համեսալեի ինձամից՝* 20 թուման կանխիկ և մնացածը բնասթերքով՝ 7 թուման ու 7000+ [դինար]:  
*Թումանից ռուսումաթը* հետևյալ մասերով՝
- *Հաղղալ-դարարով* տրվող վարձակալությունից՝ 500 դինար:
- *Թիուլից՝* 330 դինար, *համեսալեից՝* 220 դինար:

<sup>157</sup> Քիչ ավելին այսուհետև կենվի + նշանով:

- *Ամիրները* ու պետական ծառայող չհանդիսացողների *ին'ամից, սոյուրդալից, մուաֆութուկից* ու *մուսալլամիութունից, ամիլների հաղդ-ալ-սա իից*՝ 714 *դինար* Այսբանը:

**Մեծ սատրերը** (ստանում են) բոլոր *սոյուրդալների*, իրենց հատկացված *վակֆային մահալների հաղդ ալ-թոուլիայի* ու *հաղդ ալ-նազարայի ուշրը* և 1/20-ը: Միբզա Աբութալերը իր *սադր* եղած ժամանակ 1380 *թուման* էր ստանում որպես ապրուստի նպաստ և *համեսալէ* հատկացում:

**Ղոռչի բաշին, դուլարադասին, թուֆանկչադասին և թուֆչի բաշին**, նրանց *վեզիրները*՝ յուրաքանչյուրն իր ենթականերից հետևյալն էր ստանում՝

Ավագանուց՝

*ին'ամից*, հատկացված աշխատավարձից, *թիուլից*՝ 500 *դինար*, ամենամյա և մեկամյա հատկացված *թանխահից*՝ 100 *դինար*

*վեզիրից*՝

*ին'ամից*, հատկացված աշխատավարձից, *թիուլից*՝ 100 *դինար*, ամենամյա և մեկամյա հատկացված *թանխահից*՝ 100 *դինար*,

Իսկ նրանց աշխատավարձերը և *թիուլը* այնպես է, ինչպես, որ յուրաքանչյուրի անվան տակ նշվում է.

**Ղոռչի բաշին**, որին որպես *թիուլ* հատկացվել էր Քազե-րունը<sup>158</sup> ու նաև *հաղդ ալ-թոուլիեն*՝ 2391 *թուման* և 7200+ *դինար*

**Թուֆանկչադասին**, որին հիմնականում Աբարդուեի *օլթան* էր պատկանում՝ 711 *թուման* և 5300 *դինար* ու քիչ ավելի,

**Ղուլարադասին**, որին Գուլիայեզանի *օլթան* էր պատկանում անոնց գումարի [նշման]:

**Թուֆչի բաշին**, որին Շեֆթի *օլթան* էր պատկանում՝ 500 *թուման*:

**Դիվանի իշիբադասի բաշինները**, որոնց էր վստահված Ռեյի կառավարումը և որոնք իրենց հատկացված գորք և *ռուսում* ունեին հետևյալ կերպ.

- Գերագույն *դիվան* բերվող *փիշրաշների* ստացվող տասանորդը (դահյեքը), որը բաժանվում էր նրա ու *փիշրաշ-նևիսի* միջև:

- Ուլտերի *դադանեից*՝ 50-ից մեկը, գաններից ու ուլերից՝ 50-ից մեկական զույգ:

**Հարեմի [իշիբադասի բաշին]** 300 *թուման* աշխատավարձ ունի:

#### Ամիրախոռ բաշինները

[*Ամիրախոռ բաշի-է*] *ջեռն* 182 *թուման* և 4000+ [դինար] աշխատավարձ էր ստանում և ստորև նշված *ռուսումն* է հատկացված *ամիրախոռ բաշիին, թահվիլդարին* և *ամիլներին*, որոնցից յուրաքանչյուրի բաժինը պարզ չէ:

Բոլոր տեսակի *փիշրաշներից* ով էլ, որ մատուցում է, և այն ամեկից, ինչ *ին'ամ* է արվում տասանորդ է գանձվում և այդ տասանորդից երկու 1/10 [մասերը] *մոշրեֆին* են:

Այն, ինչ որ, որպես աշխատավարձ էին վճարում, 1/20-ը գանձվում էր: Եվ այս 1/20-ից երկու 1/10-ը *մոշրեֆին* էր հատկացվում, իսկ մնացածը *ամիրախոռին* ու *ամիլներին* է:

<sup>158</sup> Քազերուն՝ քաղաք Իրանի Ֆարս նահանգում:

*[Ամիրախոռ բաշի-է] սահրան* 80 թուման աշխատավարձ ունի, որը գործնականում դառնում էր 127 թուման և 5000+ [դինար]: Այն օրինակի մեջ, ուր նշվում են *ռուսումները ամիրախոռ բաշի* տվյալները միասնաբար են՝ առանց նշելու ջեռն և սահրա բառերը: Ենթատեքստից հայտնի է, որ այն, ինչ այտոներից է ստացվում, վերաբերում է *ամիրախոռ բաշի-է սահրային* և այնուհետև *փիշքբաշի* ու *ին'ամի ռուսումը մոշրեֆը* հաստատել է, որպեսզի հետևյալ կերպ գանձվել՝

Յուրաքանչյուր ձիու *փիշքբաշից*՝ 3000 *դինար*:

Յուրաքանչյուր ձիու *ին'ամից*՝ 5000 *դինար*:

Եվ այն, ինչ ստացվում է *փիշքբաշի* և այլ *ին'ամի* մեկ *թումանից* հետևյալ կերպ է բաժանվում:

[Ամիրախոռին]<sup>159</sup> 3000 *դինար*, *սահեբջամ'ին*՝ 3000 *դինար*, *մոշրեֆին*՝ 2000 *դինար*, *ջեռողարներին*՝ 2000 *դինար*, *խասսեհ* ու պահեստի (ամբար) շրջանների ձիապահներին՝ 1000 *դինար*:

Արարները, Մեքքայի պատվարժանները, սրբավայրերի բնակիչները, շահսնանները<sup>160</sup> և հյուրերը, որոնք նվերներ են բերում, *դուշուլուք* չեն վճարում, և նրանց տրվող *ին'ամից* [ևս] *դուշուլուք* չի գանձվում:

<sup>159</sup> Նշված չէ պաշտոնը:

<sup>160</sup> Իրանի հյուսիս-արևմտյան, գլխավորապես Մուղանի ու Արդեբիլի շրջաններում բնակվող թյուրքական ծագում ունեցող ցեղախմբեր, որոնք միավորվել են 16-18-րդ դարերի միջև ընկած մի ժամանակահատվածում: Վկայություններ կան այն մասին, որ 17-րդ դարի կեսերին գոյություն են ունեցել «շահսնան» կոչվող ոստիկանական ջոկատներ (R. Tapper. Shahsevan, Encyclopedia Iranica, online edition, available <http://www.iranicaonline.org/articles/shahsevan> accessed 17.07.2019):

*Դիվաներեկին* 500 թուման աշխատավարձ և 15 թումանի *թիուլ* ուներ, որը հավելյալ 92 թուման 3845 *դինար* էր բերում, որ աշխատավարձն ու *թիուլը* միասին 592 թուման և 3845 *դինար* էր կազմում, որ ժամանակաշրջանում 1000 թուման է ստացել, սուգանքներից էլ՝ 1/10 ռուսում:

Ամիր *շեքարբաշին* 800 թուման աշխատավարձ, *թիուլ* և հետևյալ *ռուսումն* է ունեցել՝

- Շիրվանի ձկնորսներից որպես հատուցում որոշված՝ 100 թուման:

- Որպես *ռուսում* Դար ալ-մարզի *ամիր շեքարբաշին*ի տրվող *ին'ամից*՝ 150 թուման:

- Ջուղայի հայության կողմից տրվող ամենամյա *ին'ամից*՝ 50 թուման և Սպահանի գրադաշտականներից՝ 20 թուման:

- Կենդանիների մորթը մաշկողների, գլուխ եփողների, հավ վաճառողների, ազավիի պահողների, որսի ձեռնոց (բահլե) կադողների և այլ նմանատիպ [անձանց] *դարուդայությունից* ևս անորոշ չափով *ռուսում* էր ստանում:

*Նազեր-է քոյութաթը* 360 թուման և 1000+ [դինար] աշխատավարձ, *թիուլ*, *համեսալե* և *ռուսում* էր ստանում և հետևյալ կերպ:

Նախկին *սահեթ թուլջիհի* գրության համաձայն՝

- *Գարաքյարաղների* բերած ամեն *թումանից* 220 *դինար ռուսում* է գանձվում, որից 100-ը *նազերի* բաժինն է:

- Քնումների 1/20-ից 10 թուման 500 *դինար ռուսում* է գանձվում, որից 50 *դինարը նազերի* բաժինն է:

Ինչպես, որ հաստատել են *բոլորթաթի մոշրեֆները* և որը ընդունված կարգն է՝

- Գնումների արժեքի 1/20-ի 1/10-ը:
- Ջինվորականների աշխատավարձերից ու հարկերից կանխիկով տրվում է *թումանից 366 դինար և 4 դանգ*:
- Ջինվորականներին որպես աշխատավարձ տրվող *բարաթով* բնամթերքի 1/20-ը գանձվում է, որից 1/10-ը *նագերհին* է:
- *Վեզիրների* և այլոց ուղարկածի արժեքի 1/100-ը:
- *Ռուսում* ունի նաև *ին'ամի* 1/10-ից և փիշքաշի 1/20-ից:

**Վենդանիների նագերը** 150 *թուման* աշխատավարձ ունի, և Բարա Շեյխ Ալիի ախոռների համար գանձվող ձիածածկոցների ու հանդերձանքի գնման ընդունված 1/20-ից 1/10 *ռուսում* էր ստանում:

**Գրագրատան նագերը** 225 դինար<sup>161</sup> և 6800 [դինար] քիչ ավելի *ռուսում* և աշխատավարձ էր ստանում:

Ըստ հնուց [գործող] կարգի նա ստանում էր՝ վարձակալության [յուրաքանչյուր] *թումանից 14 դինար* և 3,5 *դանգ*, *ամիրների թանխահից 2 դինար*, *թիուլից՝ 7 դինար*:

*Համեսալեից՝ 4 դինար* ու 4 *դանգ*:

*Ամիրների* ու մյուս ծառայության մեջ չգտնվող անձանց *ին'ամից*, նաև *սոյուրդալներից* ու աշխատավարձերից 14 *դինար ռուսում* է ստացել:

<sup>161</sup> Բնագրում 5 դինար է:

Վերջերս հրամանագրով կարգադրվել էր աշխատավարձերի 1 *թումանից 50 դինար*, մեկամյա ու ամենամյա *թանխահից՝ 20 դինար*:

**Արքայական կնիքի մոհրդարը** յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ 30 *թուման* էր ստանում որպես կնիքի կապի գին, նաև *ռուսում* ուներ հետևյալ կերպ ամեն մեկ *թումանից՝*

- *Ամիրների թիուլից՝ 260 դինար*, *ամիրների* ու ծառայող չհանդիսացող անձանց *ին'ամից սոյուրդալներից, մուաֆություններից, իքթաներից*, աշխատավարձերից և *ամիրներին* տրվող *հաղդ ալ-սայիից՝ 520 դինար*:
- *Ամիրների* ամենամյա աշխատավարձերից՝ 133 *դինար* և 2 *դանգ*:
- *Ամիրների* աշխատավարձին տրվող *թանխահից՝ 66 դինար* և 2 *դանգ*:

«Շարաֆ-ե նաֆազի» կնիքի *մոհրդարը* ստանում է մեկ *թումանի* հաշվով՝

*Ամիրների թիուլից*, աշխատավարձերից, *ամիրների հաղդ ալ-սայիից* ու որոշված աշխատավարձերից 315 *դինար*, *ամիրների համեսալե* աշխատավարձերից՝ 157 *դինար* և կես *ռուսում*:

**Ռուշնալ բաշին** 311 *թուման* և 600+ [դինար] աշխատավարձ, *թիուլ* և *համեսալե* է ստանում հետևյալ մասերով՝

- Յուրաքանչյուր մորթված ոչխարի գլխի համար՝ 20 *դինար*,
- Յուրաքանչյուր գառան համար՝ 10 *դինար*:
- Գառան մորթի համար՝ 10 *դինար*:
- Խոհանոցի գնումների յուրաքանչյուր 100 *դինարից 60 դինարը* նրա հատույթն է:

**Հորմերի դավաթղաքը** 24 թուման և 2000+ [դինար] աշխատավարձ ու թիուլ ունի, նաև հետևյալ *ռուսումն* է ստանում՝

- Վարձակալությունների յուրաքանչյուր *թումանից* 18 *դինար* և 1,5 *դանց*:
- *Ամիրների, մուղարրաբների և աղաների թիուլից*՝ 25 *դինար*:
- *Ամիրների և այլոց համեսալեից*՝ 16 *դինար*,
- *Բարաթով* [զումար]ներից՝ 8 *դինար* ու 2 *դանց*:

**Ռադամների դավաթղաքը** 43 թուման և 1000+ [դինար] աշխատավարձ, *թիուլ* և *հորմերի դավաթղաքի* կարգով *ռուսում* էր ստանում:

**Մուխթասիբ ալ-մամալեքը** հիսուն *թուման* աշխատավարձ և 253 *թուման* ու 3000+ [դինար] տեղական *ռուսում* էր ստանում հետևյալ կերպ՝

Ղազվիևից՝ 16 *թուման* [և] 1100 *դինար*, Համադանից՝ 17 *թուման* [և] 370 *դինար*, Քերմանից՝ 3 *թուման* և 7000 *դինար*, Մուրբ Մեշեղից՝ 12 *թուման*, Արդեբիլից՝ 21 *թուման* [և] 1200 *դինար*, թագավորանիստ Թավրիզից<sup>162</sup>՝ 60 *թուման*, Մազանդարանից՝ 10 *թուման*, Աբասարադից, Գանջայից, Երեսանից և Ուրմիայից՝ 12 *թուման* [և] 5000 *դինար*, Ֆարսից՝ 5 *թուման* և 3463 *դինար*, Ղափանաթից՝ 4 *թուման*, Խոյից՝ 15000 *դինար*, Գարմրուդից՝ 7 *թուման*, Անքուբից՝ 1 *թուման*, Մարաբից՝ 5 *թուման*, Մուղանաթից՝ 4 *թուման*, Ջանուզից՝ 5000 *դինար*,

<sup>162</sup> Ընդունված էր նաև նախկին մայրաքաղաքներն էլ նույն կերպ անվանել, ինչպես արդեն գիտենք զրքի պատրաստման ժամանակ Սպահանն էր Իրանի մայրաքաղաքը:

Մարանդից՝ 15000 *դինար*, Ջավանշիրի բնակչությունից և Ութուզիքից: ? [որևէ թիվ զրված չէ]:

Սպահանի դարուղայի *ռուսումը* զանազան անվանումների տակ 300-ից մինչև 500 *թուման* էր լինում:

[Նախկինում] **գրագրատան դարուղան** 57 *թուման* ու 8000+ *դինար* աշխատավարձ և *թիուլ* էր ստանում: Շահ [Մուլթան] Հուսեյնի ժամանակ Բարաթամ աղային հատկացված *թիուլը* մոտ 200 *թուման* էր կազմում, և տեղի *ռուսումը*, որ 73 *թուման* 7430 *դինար* էր, նաև [ամեն] *թումանից* հետևյալ մասերով էր ստանում.

- Վարձերից՝ 5,5 *դինար*,
- *Ամիրների թանխանից*՝ 2,5 *դինար*,
- *Ամիրների թիուլից*՝ 7,5 *դինար*,
- *Ամիրների համեսալեից*՝ 5 *դինար*,
- *Ամիրների* ու ծառայության մեջ չգտնվող անձանց *ինձամից*, *սոյուրդայից* և այլն՝ 15 *դինար*:

**Ֆարաշխանեի դարուղան** 10 *թուման* և 3760 *դինարի թիուլ* և 95+ *թուման* *ռուսում* ուներ դերձակներից, նկարիչներից և այլ համբարություններից:

**Մուսթովֆի ալ-մամալեքը** ըստ ստորև նշվածի նաև հաշվապահության տուրք (ռասմ ալ-Էսթիֆա) էր ստանում:

Հաշվապահության տուրքը և այլն

- Հաշվապահության տուրքը [Սպահանի] *մահալից*՝ 302 *թուման* 958 *դինար*,
- Հաշվարկի տուրք (ռասմ ալ-հեսաբ)՝ հաշվարկների 1 *թումանի* հաշվից՝ 30 *դինար*,
- *Ամիրների, մուղարրաբների և աղաների թիուլից*՝ 45 *դինար*,

- *Ամիրների* և այլոց *համեսալեհից*՝ 30 *դինար*,
- *Ամիրների, մուղարբարների* և *աղաների բարաթով թանխահից*՝ 15 *դինար*,
- *Ամիրների* ու ծառայության մեջ չգտնվող անձանց *տոլուրդայից* և այլևից, *ամիրների հաղդ ալ-սայիից*՝ 90 *դինար*:

**Մաջլեսնիսը** 300 *թուման* մուղարբարի աշխատավարձ և ապրուստի նպաստ ուներ և *ամիրների թխուլների, համեսալեհի* և այլնի հաշվարկի յուրաքանչյուր *թումանից* 200 *դինար* *ռուսում* և 30 կապ անգլիական թղթի արժեքի գումար էր [նրան] որպես *ին'ամ* հատկացվում Սպահանի *մուսթովֆիի* և *վեզիրի գարթում* գտնվող *մահալին վջուհաթից*:

**Խասսե-ե շարիֆեի մուսթովֆին** նախկին տարիներին հաշվարկի տուրքի յուրաքանչյուր *թումանից* 30 *դինար* էր ստանում, որն իր և գրագիրների միջև բաշխվում էր [հետևյալ կերպ] 4 *դանգը* [իրեն] և 2 *դանգը* [նրանց]: Հետագայում վերոհիշյալի և գրագիրների հաշվարկի տուրքը որոշվեց յուրաքանչյուր *թումանի* համար 45 *դինարի* [չափով]: *Խասսեի մահալների* մնացյալ *ռուսումները մուսթովֆի ալ-մամալեքի* հրամանով էր որոշվում: 21 *թուման* և 5000 [դինար] կանխիկ և 2129 *ման* նախկին կշռով բնամթերք էր հատկացվել շրջանի *ռուսումից* Գիլանի և Սպահանի *ավարեջեննիսի*:

**Մոնջի ալ-մամալեքը** ստանում էր 150 *թուման* և 7000+ *դինար* ու քիչ ավելի աշխատավարձ և [հետևյալը ամեն] *թումանից՝ ամիրների, մուղարբարների* ու *աղաների թխուլից՝* 25 *դինար*, *համեսալեհից՝* 16 *դինար* 4 *դանգ*, *ամիրների* և ծառայության մեջ չգտնվող անձանց խմբի *ին'ամի, տոլուրդալների* և

այլևից՝ 50 *դինար*, *ամիրների* ու *մուղարբարների թանխահից՝* 8 *դինար* ու 2 *դանգ*, վարձերից՝ 17 *դինար* և 1,5 *դանգ*:

**Ղոռչիների, դուլամների և հրացանակիրների վեզիրները** հետևյալ աշխատավարձն էին ստանում: *Ղոռչիների վեզիրը՝* 100 *թուման*, *դուլամների վեզիրը՝* 100 *թուման*, հրացանակիրների *վեզիրը՝* 50 *թուման*, հրետանու *վեզիրը՝* 50 *թուման*: Յուրաքանչյուրին *ին'ամի, թխուլի* և որոշված աշխատավարձի յուրաքանչյուր *թումանից* 200 *դինար*, և մեկամյա ու ամենամյա *թանխահի [թումանից]* 45 *դինար* *ռուսում* էր հատկացվել:

**Ղոռչիների, դուլամների և հրացանակիրների մուսթովֆիները** հետևյալ աշխատավարձն էին ստանում: *Ղոռչիների՝* *մուսթովֆին* 50 *թուման*, *դուլամների մուսթովֆին* և հրացանակիրների *մուսթովֆին*՝ 30-ական *թուման*, հրետանու *մուսթովֆին*՝ 30 *թուման*: Նաև աշխատավարձերի, *ին'ամի* ու *թխուլի* յուրաքանչյուր *թումանից* 100 *դինար*, մեկամյա և ամենամյա *թանխահից* 25 *դինար* *ռուսում* էին ստանում:

**Չաբեթեննիսը** 89 *թուման* և 3500 [դինար] ու քիչ ավելի աշխատավարձ ուներ, 19 *թուման* էլ՝ տեղական *ռուսում*, նաև ամեն *թումանից* հետևյալը՝ *ամիրների, մուղարբարների և աղաների թխուլ՝* 11 *դինար*, 1,5 *դանգ*, *ամիրների* ու ծառայության մեջ չգտնվող անձանց *ին'ամ*, *տոլուրդայից* և այլն՝ 22,5 *դինար*, *ամիրների, մուղարբարների և աղաների համեսալե՝* 7,5 *դինար*, *բարաթով* [վճարվող գումարներից]՝ 3 *դինար* և 4 *դանգ*, ամեն *թումանից* 30 *դինար* հաշվարկի տուրք (ոսում ալ-հեսաբ) էր վճարում:

**Մահեթ թովֆինը** 20 *թուման* աշխատավարձ և 2 *թուման* ու 1500 *դինար* տեղական *ռուսում*, և [ստորև նշվածի] ամեն *թուման-*

ևից հետևյալն ունի՝ վարձերից՝ 22,5 դինար, ամիրներին աշխատավարձերի թանխահից՝ 3 դինար և 4,5 դանգ, զինվորականներից 20 դինար, ամիրների, մուղարրաբների և աղաների թիուլից 11 դինար և 1,5 դանգ, զոռչիների, հրացանակիրների, զուլամների ու թղանթաձիգների թիուլից՝ 50 դինար, ամիրների և այլոց համեսալեից՝ 7,5 դինար, զոռչիների և այլոց համեսալեից՝ 50 դինար, ամիրների ու ծառայող չհանդիսացողների ին՝ամից՝ 22,5 դինար, զոռչիների և այլ զինվորականների ին՝ամից՝ 50 դինար, սոյուրդալից, մուաֆությունից և այլն 22,5 դինար ռուսում ուներ:

**Իրաքի (Արաղի) ավարեջեննիսը՝** 14 թուման աշխատավարձ և 55 թուման ու 2000 դինար տեղական ռուսումից և [հետևյալն] ուներ [ստորև նշվածի ամեն] թումանից, վարձակալությունից՝ 8 դինար և 1 դանգ, ամիրների ու մուղարրաբների թիուլ՝ 11 դինար ու 1,5 դանգ, նրանց համեսալեից՝ 7,5 դինար, ամիրների և ծառաներ չհանդիսացողների խմբի ին՝ամ, սոյուրդալ և այլն՝ 22,5 դինար, մուղարրաբների և աղաների թանխահից՝ 3 դինար ու 4,5 դանգ ռուսում: Նրան էր հատկացվում նաև հաշվարկի տուրք յուրաքանչյուր թումանից՝ 15 դինար:

**Ազարբայջանի ավարեջեննիսը՝** 50 թուման աշխատավարձ և այլ ռուսումաթ ուներ Արաղի ավարեջեննիսի կարգով, իսկ նրա տեղական ռուսումաթը զիվանի օգտին է բռնագրավվել:

**Ֆարսի ավարեջեննիսը՝** 15 թուման աշխատավարձ և 103 թուման [և] 7000 դինար ու քիչ ավելի տեղական ռուսումաթ [ունի] Ֆարսի հարկերից դուրս, տեղական ռուսումի և այլ ռուսումները Իրաքի ավարեջեննիսի կարգով:

**Սորասանի ավարեջեննիսը** 15 թուման աշխատավարձ և 68 թուման ու 6000 [դինար] ու քիչ ավելի տեղական և այլ ռուսումաթ ինչպես, որ Իրաքի ավարեջեննիսը:

**Հանքերի ավարեջեննիսը՝** 20 թուման աշխատավարձ և այլ ռուսումաթ ունի ինչպես, որ Իրաքի ավարեջեննիսը:

**Լաշարենիսը՝** 3 թուման և 1250+ դինար և քիչ ավելի թիուլ ունի և հետևյալ ռուսումը [ստորև նշվածի] ամեն թումանից, վարձակալությունից՝ 18 դինար ու 1,5 դանգ, ամիրների, մուղարրաբների ու աղաների մեկամյա թանխահից՝ 8 դինար ու 2 դանգ, մուղարրաբների, յասավուլների ու բոյութաթից բացի մյուս բոլոր աշխատողների աշխատավարձերից՝ 40 դինար, ամիրների, մուղարրաբների, ու աղաների թիուլից՝ 25 դինար, ամիրների, մուղարրաբների ու աղաների համեսալեից՝ 16 դինար ու 4 դանգ, ամիրների ու ծառաներ չհանդիսացող անձանց ին՝ամից՝ 50 դինար ռուսում, աշխատողների աշխատավարձից ու հարդ ալ-սայիից 50 դինար, սոյուրդալ, մուաֆություն, մուսայլամություն և իրթաից՝ 50 դինար: Եվ փիշքաշներից, որոնցից տասանորդ էր գանձվում, 1/10-ը նրան ու սարխաթեննիսին էր հատկացվում:

**Մարխաթենիսը** 12 թուման աշխատավարձ և [ստորև նշվածից հետևյալ] ռուսումն ունի ամեն թումանից, վարձակալությունից՝ 5 դինար ու 4 դանգ, ամիրների, մուղարրաբների ու աղաների մեկամյա թանխահից՝ 3 դինար ու 4 դանգ, աղաների, մուղարրաբների և յասավուլների թանխահից՝ 20 դինար, ամիրների ու այլոց թիուլից՝ 8 դինար, նրանց համեսալեից՝ 5 դինար ու 2 դանգ, ամիրների ու ծառա չհանդիսացողների խմբի ին՝ամ, սոյուրդալ, մուաֆություն, աշխատավարձեր և ամիլների հարդ



ալ-ասիից՝ 16 դինար, փիշքաշի ռուսումը այնպես է, ինչպես լաշքարենիսինն է:

**Քեշքենիսերը՝** 2 հոգի էին և 37 թուման աշխատավարձ էին ստանում:

**Բաղայայի արձանագրողը՝** 20 թուման աշխատավարձ ուներ:

**Փիշքաշենիսը՝** 15 թուման աշխատավարձ ուներ և փիշքաշից ստացվող տասանորդից 1/10-ը նրա ռուսումն էր:

**Դաֆարդարը** 9 թուման աշխատավարձ և 21 թուման և 6300 դինար մահալների և [հետևյալ] ռուսումն ուներ ամեն թումանից, վարձակալության համար 2 դինար ու 4,5 դանգ, ամիրների թանխահից՝ 1 դինար ու 1,5 դանգ, ամիրների թիուլից՝ 3 դինար ու 4,5 դանգ, համեսալեից՝ 2,5 դինար, ամիրների ու ծառաչհանդիսացողների խմբի ին՛ամ սոյուդղալ և այլն 7,5 դինար:

**Նազերի գրասենյակի քարտուղարը՝** 19 թուման աշխատավարձ ուներ և վարձակալության համար՝ յուրաքանչյուր թումանից 1,5 դինար ռուսում:

**Արքունի գանձարանի մուշթեֆը՝** ին՛ամի տասանորդից, իսալ՛աթից և փիշքաշի 1/20-րդից գանձվող ամեն թումանից 3000 դինար, գնումների համար գանձվող 1/20-րդ ռուսումի ամեն թումանից՝ 133 դինար ու 2 դանգ, կանխիկ գումարով որպես հարկ վճարվող աշխատավարձի ամեն թումանից՝ 60 դինար, գինվորականներին որպես թանխահ բարաթով տրվող ապրանքի 1/20-ի ամեն թումանից 3000 դինար, նաև նրանն է վեզիրների, ամիրների ու գարաջարաղների կողմից ուղարկված ապրանքների արժեքի 1/100-ը և ջուլիակագործության արտադրանքից 1/200-ը:

**Ամիրների կարի արհեստանոցի (դայաջիխանե) մուշթեֆին** է հատկացված. [յուրաքանչյուր] իսալ՛աթի տասանորդի ամեն թումանից 1200 դինար, վեզիրների և ամիրների ուղարկվածի 1/100-ը, գնումների 1/100-ի ամեն թումանից՝ 130 դինար ու 2 դանգ:

**Արդարխանեի մուշթեֆին** է հատկացված ուղարկվածի 1/100-ը և գնումներից հավաքվող 1/20-ի ամեն թումանից 133 դինար ու 2 դանգ:

**Գրադարանի (քեթաբխանե) մուշթեֆը՝** արդարխանեի մուշթեֆի նման էր ռուսում ստանում:

**Ռասսեի կարի արհեստանոցի մուշթեֆին** էր հատկացված վեզիրների և ամիրների ուղարկվածների 1/100-ը և գնումներից [գանձվող] 1/20-ից 33 դինար և 2 դանգ, փիշքաշից, իսալ՛աթից և բարաթով տրվող ապրանքներից 1966 դինար ու 4 դանգ ռուսումը:

**Հավիջխանեի, խոհանոցի, թռչնարանի ու սպասքի լվացքատան մուշթեֆը** մեկ անձ էր, որին էր հատկացվում 30 թուման աշխատավարձ և որպես ին՛ամ տրվածի 2/100-ը, որպես աշխատավարձ տրվածի 1/100-ը, և գնումների 1/20-ը և 2 դանգը: Ամեն օր մեկ ավսե ուտելիք առավոտյան և մեկ ավսե էլ երեկոյան, 6 հատ հաց, [որից] երկուսը հատուկ (խասսե) և չորսը՝ խարջի<sup>163</sup>:

**Մոհանոցի մուշթեֆն՝** ուներ հետևյալ ռուսումը. որպես ին՛ամ տրվող ոչխարների տասանորդից 20 դինար և գնումների

<sup>163</sup> Մինորսկին հենվելով Շարդենի հադորդման վրա, բացատրում է, որ «խասսե» բարձրակարգ, առաջին աստիճանի հացն էր, իսկ խարջին՝ սովորականը (Tadhkirat al-mulūk, p. 94):

1/20-ից 20 *դինար*, նաև [հատկացում] առավոտյան և երեկոյան ուտելիքներին:

**Միվեխանեի, դուրխանեի և սպանդանոցի մուշրեֆը** մեկ անձ է, որը 20 *թուման* աշխատավարձ ուներ և հետևյալ *ռուսումն* ուներ՝ *փիշրաշի* 1/100-ը և *ին'ամի* 100 *դինարից* 2-ը և զենք պատրաստող համբարություններից փոխանցվող 1/20-ի ամեն 5 *դինարից* մեկը, տրվող աշխատավարձի 1/20-ի տասանորդը և գնումներից 2 *դանգը*:

**Շարքաթխանեի մուշրեֆը** 35 *թուման* աշխատավարձ ուներ և նրան էր հատկացված ուղարկվածների 1/100-ը, գնումների 1/20-ից՝ *արքաբ-ե թահավիլի* փոխանցվող *նազերին* ու *մուսթովֆիհին* հատկացված երկու տասանորդը հանելուց հետո, 2 *դանգ*՝ *Լա ռուսում* էր ստանում նաև *փիշրաշեներից* և *ին'ամից*:

**Շե'քրաֆխանեի մուշրեֆը**՝ 15 *թուման* աշխատավարձ և յուրաքանչյուր մեկ *թուման ռուսումից*, որ հավաքվում էր 33 *դինար* ու 2 *դանգ ռուսում* էր ստանում:

**Ղուշխանեի մուշրեֆն** ուներ 60 *թուման* և 4900+ [դինար] աշխատավարձ և որոշ չափի *ռուսում* շների ու որսի թռչունների կերակրի 1/20-ի ամեն *թումանից*:

**Հրետանու մուշրեֆն** ուներ 20 *թուման* աշխատավարձ և վատող պատրաստելու համար [գանձվող] տասանորդի *ռուսումից* 266 *դինար* ու 4 *դանգ*:

**Արքունի գանձարանի սահեբջամ'ին** հետևյալն էր հատկացված ըստ մատյանում գրվածի.

*Ին'ամի* տասանորդից և *փիշրաշի* 1/20-ից հավաքվող *ռուսումի* ամեն *թումանից* հետևյալ կերպ էր բաշխվում.

- *սահեբջամ'*՝ 3000 *դինար*,
- *արքաբ ալ-թահավիլի մուսթովֆի*՝ 1000 *դինար*,
- *քելիդդար*՝ 2400 *դինար*,
- *ազարներ*՝ 300 *դինար*,
- *մուշրեֆ*՝ 3000 *դինար*:

Գնումների 1/20-ը ևս հետևյալ կերպ [էր բաշխվում].

- *նազեր*՝ 1000 *դինար*,
- *մուշրեֆ*՝ 2366 *դինար* և 4 *դանգ*,
- *արքաբ-ե թահավիլի մուսթովֆի*՝ 1000 *դինար*,
- *սահեբջամ'*՝ 5363 *դինար* և 2 *դանգ*:

Բնամթերքից որպես աշխատավարձ տրվող 1/20-ը [էր բաշխվում] հետևյալ կերպ՝

- *սահեբջամ'*՝ 3000 *դինար*,
- *արքաբ-ե թահավիլի մուսթովֆի*՝ 1000 *դինար*,
- *մուշրեֆ*՝ 3000 *դինար*,
- *քելիդդար*՝ և այլև. *քելիդդար*՝ 2400 *դինար*, *ազարներ*՝ 300 *դինար*:

Իսկ ըստ *մուշրեֆի* գրածի՝ հետևյալ կերպ էր *ռուսում* գանձվում. Այն, ինչ կանխիկ որպես աշխատավարձ էին տալիս, ըլրա ամեն *թումանից* 200 *դինար ռուսում* էր գանձվում, որից 20 *դինար խոսսե-ե շարիֆեի* վարչության համար էր և մնացալից 120 *դինարը* հատկացվում էր

սահերջամ'ին:

**Ռեքարխանեի սահերջամ'ը** 489 թուման և 1000+ [դինար] աշխատավարձ, 50 թուման ամենամյա ին'ամ և հետևյալ ռուսումն էր ստանում:

**Ձև Ա.**

Հասան բեկի [հաստատած] կարգի համաձայն:

Հանձնված *փիշքաշի* և այլնի Այն ամենից, որ որպես *ին'ամ* 1/100-ը են տալիս. տասանորդից *սահերջամ'ին* 30 *դինար* Դերձակին (դայչաջի)՝ 50 *դինար*

Այն ամենից, ինչ որ համքարություններին էր տրամադրվում պատրաստելու նպատակով և այն ամենից, որ յուրաքանչյուրին տրվում էր որպես աշխատավարձ, 1/20-ի 4 մասերը *սահերջամ'ին* էր

**Ձև Բ.**

Համաձայն դրախտաբնակ [շահ]ի ժամանակի յուրաքանչյուրին տրվող *խալ'աթի* համար, իրական արժեքից տասանորդ էր գանձվում և հետևյալ կերպ բաշխվում:

<i>Ղուշուլլուք</i> ՝ 1 թումանից 1000 <i>դինար</i>	Կարի արհեստանոցի <i>Ամիլներ</i> ՝ 550 <i>դինար</i>
<i>Թահվիլդար</i> ՝ 240 <i>դինար</i>	<i>Մոշրեֆ</i> ՝ 120 <i>դինար</i>
<i>Արբաբ-ե թահվիլի մուսթովֆի</i> ՝ 40 <i>դինար</i>	<i>Ազաբներ</i> ՝ 120 <i>դինար</i>
Սպասավորներ (փիշխեղմաթ-ներ)՝ 30 <i>դինար</i>	<i>Ռեքարդյարներ</i> ՝ հավասար կերպով 450 <i>դինար</i>
	<i>Քելիդդար</i> ՝ 33 <i>դինար</i> [և] 2

Բողչա<sup>164</sup> գործողներ՝ 100 դանգ

*դինար*

*Ազաբներ*՝ 66 *դինար* ու 4 *դանգ*

**Նուսսեի կարի ու դերձակի արհեստանոցի** (դայչաջիխանե, իսլայթխանեի) **սահերջամ'ը** 40 թուման աշխատավարձ և հետևյալ ռուսումն էր ստանում:

*Խալ'աթի ղուշուլլուքի* տասանորդը, աշխատավարձի 1/20-ը և *փիշքաշի* 1/20-ը

<i>Նազեր-ե բոյութաթ</i> ՝ 100 <i>դինար</i>	<i>Արբաբ-ե թահվիլի մուսթովֆի</i> ՝
<i>Սահերջամ</i> ՝ 399 <i>դինար</i> ու 2 <i>դանգ</i>	90 <i>դինար</i>
<i>Մոշրեֆ</i> ՝ 196 <i>դինար</i> ու 4 <i>դանգ</i>	
<i>Քելիդդար</i> ՝ 33 <i>դինար</i>	Սպասավոր (փիշխեղմաթ)՝ 25
<i>Ազաբներ</i> ՝ 162 <i>դինար</i> ու 2 <i>դանգ</i>	<i>դինար</i>

Գնումների՝ 1/20-ից 1000 *դինար*:

<i>Նազեր-ե բոյութաթ</i> ՝ 100 <i>դինար</i>	<i>Արբաբ-ե թահվիլի մուսթովֆի</i> ՝
<i>Սահերջամ</i> ՝ 533 <i>դինար</i> ու 2 <i>դանգ</i>	100 <i>դինար</i>
<i>Մոշրեֆ</i> ՝ 266 <i>դինար</i> ու 4 <i>դանգ</i>	
Այն, ինչ <i>գարաքյարաղները բոյութաթ</i> բերելով՝ ստացական էին ստանում:	

*Սահերջամ*՝ 1/100

*Մոշրեֆ*՝ 1/100

**Տարրաշխանեի սահերջամ'ին** 70 թուման և 3241,5 *դինար* աշխատավարձ և հետևյալ ռուսումն էր հատկացված՝

Գնումների 1/20-ից՝ 1000 *դինար*:

<i>Նազեր</i> ՝ 100 <i>դինար</i>	<i>Արբաբ-ե թահվիլի մուսթովֆի</i> ՝
---------------------------------	------------------------------------

<sup>164</sup> Բուղչան հատուկ տեսակի բառակուսի կտոր էր, որի մեջ հազուստները դասավորում ու կապում էին:

Սահեբջամ՝ 533 դինար ու 2 100 դինար

դանգ Մոշրեֆ՝ 266 դինար ու 4 դանգ

Փիշքաշի 1/20-րդից 1000 դինար:

Ազարներ՝ 200 դինար Սահեբջամ՝ 533 դինար ու 2

Մոշրեֆ՝ 266 դինար ու 4 դանգ դանգ

Բևամթերքի 1/20-ից, որ որպես աշխատավարձ է տրվում և

ին՝ամի տասանորդից 1000 դինար

Նազեր՝ 100 դինար

Արբաբ-ե թահավիլի մուսթովֆի՝

Սահեբջամ՝ 533 դինար ու 2 100 դինար

դանգ Մոշրեֆ՝ 266 դինար ու 4 դանգ

**Զինխանեի սահեբջամին** 60 թուման և 5846 դինար

աշխատավարձ և հետևյալ ռուսումն է հատկացված:

Ին՝ամի տասանորդից ու փիշքաշի 1/20-ից՝ 1000 դինար:

Սահեբջամ՝ 500 դինար

Մոշրեֆ՝ 200 դինար

Զինդարներ և ջելոդարներ՝ 200 Ազարներ՝ 100 դինար

դինար

Տրվող աշխատավարձի 1/20-ից և ամբողջ գումարներից՝ 500

դինար:

Նազեր՝ 50 դինար

Արբաբ-ե թահավիլի մուսթով-

Սահեբջամ՝ 263 դինար ու 4 ֆի՝ 50 դինար

դանգ Մոշրեֆ՝ 133 դինար ու 2 դանգ

Այն ամենից, ինչ փոխանցում էին վեզիրներն ու

գարաքյարադները գանձվում էր 1/20:

Նազեր՝ 100 դինար

Սահեբջամ՝ 1 դինար

Մոշրեֆ՝ 100 դինար

Արբաբ-ե թահավիլի մուսթովֆին ու ամիլը, որն ուղարկում են

բևամթերքը կես-կես՝ 200 դինար

**Համիլիխանեի սահեբջամը** 15 թուման աշխատավարձ և

հետևյալ ռուսումն է ստանում:

Փիշքաշների 1/20-ից՝ 100 դինար

Նազեր՝ 10 դինար

Սահեբջամ՝ 26 դինար ու 4

Մուսթովֆի՝ 10 դինար

դանգ

Մոշրեֆն ու ազարները հավա-

սարապես՝ 53 դինար ու 2 դանգ

վեզիրների և ամիլների կողմից ուղարկվող 100 թումանից 4

թումանը հավասարապես բաժանվում է նազերի, մուսթովֆիի,

սահեբջամի և մոշրեֆի միջև:

Գևումների 1/20-ից՝ 100 դինար

Նազեր՝ 10 դինար

Սահեբջամ՝ 53 դինար ու 2

Մուսթովֆի՝ 10 դինար

դանգ

Մոշրեֆը 26 դինար ու 4 դանգ

**Սպանդանոցի սահեբջամին** հատկացված էր 8 թուման և

7400 դինար աշխատավարձ և հետևյալ ռուսումը:

բևամթերային հարկից, որ բերում էին խասսե-ե շարիֆեի

վարչություն և ամիլների ուղարկած կանխիկ գումարից և

ոչխարների գնումից 2/100-ը գանձվում է և հավասար կիսվում

սահեբջամի և մոշրեֆի միջև:

**Միվելխանեի սահեբջամին** հատկացված է 20 թուման

աշխատավարձ և հետևյալ ռուսումը:

Ին՝ամի տասանորդից և փիշքաշի 1/20-ից:

Նազեր՝ 800 դինար

Մոշրեֆ՝ 1800 դինար

Մուսթովֆի՝ 900 դինար

Ազարներ՝ 1800 դինար

Սահեբջամ՝ 3800 դինար

Քելիդդար և դուշուլյուքի՝ 1000



**Աբղարիսանեի սահեբջամը** 87 թուման և 6000+ [ղինար] աշխատավարձ և գնվածի 1/20-ից 266 *ղինար* ու 4 *դանգ* և ուղարկվածի 1/100-ը որպես *ռուսում* էր ստանում:

**Գրադարանի սահեբջամը** ստանում էր 50 թուման աշխատավարձ և անորոշ գումարի *ռուսում բասմաչիից, գարբուբից, թղթագործից* (քաղազգար), մկրատագործից ու ոսկեզօծողից:

**Խոհանոցի սահեբջամը**՝ 9 թուման աշխատավարձ ուներ իսկ *ռուսումը* հայտնի չէ:

**Ախտոի սահեբջամը**՝ 12 թուման աշխատավարձ և *ռուսում* էր ստանում *փիշքաշից* և *ին'ամից* այնպես, ինչպես *ամիրախոռ բաշիի* անվան տակ է գրվել:

**Սրճատան (դահլեխանեի) սահեբջամը** 50 թուման աշխատավարձ, շափի կշռով 2000 *ման* ցորենի *ին'ամ* և անորոշ չափի *ռուսում* էր ստանում:

**Նկարչատան (նաղաշխանե) սահեբջամը** 30 թուման ամենամյա *ին'ամ* և նկարչության պիտույքների 1/20-ից 15 *ղինար* և 206 *ղինար* ու 4 *դանգ* *ռուսում* էր ստանում:

**Դեղատան (աթարխանե) սահեբջամը** 10 թուման աշխատավարձ և *ռուսում* էր ստանում գևումներից ու ուղարկվածներից այնպես, ինչպես մյուս *բոլորթաթը*:

**Արքունի գանձարանի սառաֆրաշին**՝ 10 թուման աշխատավարձ և այն ոսկուց, որ հանձնում էին գանձարան, յուրաքանչյուր թումանից 20 *ղինար* էր ստանում և եթե ոսկին կեղծ լիներ կամ թեթև կշռեր, նա պետք է վնասը հատուցեր:

**Երկրորդ հոդված**

Սահմանային *ամիրների* աշխատավարձերի և *թուլների, բեկլարբեկերի* ենթականերից յուրաքանչյուրի, *հաքիմների ու սուլթանների*, ընդհանրապես Իրանի եկամուտների և ծախսերի մասին հակիրճ

Այսպիսով, սահմանային *ամիրների* եկամուտները և յուրաքանչյուր *վիլայեթում* նշանակված նրանց աշխատողների թիվը հետևյալ կերպ մանրամասնությամբ ձեր ուշադրությանն ենք հանձնում:

**Ազարբայջան.**

Թավրիզի ու նրան ենթակա շրջանների *բեկլարբեկություն*՝ 34234 թուման և 4906,5 *ղինար*:

[Բեկլարբեկ]

Եկամուտ	Մատայողներ
2337 թուման և 8317 <i>ղինար</i>	900 հոգի

Աստարայի *հաքիմ*

Եկամուտ	Մատայողներ
5052 թուման և 5357 <i>ղինար</i>	300 հոգի

Մարաղայի և մողաղղամ ցեղի *հաքիմ*

Եկամուտ	Մատայողներ
3729 թուման և 7450 <i>ղինար</i>	2700 հոգի

Աֆշար ցեղի *օլբայի հաքիմ*

Եկամուտ	Մատայողներ
7390 թուման և 3747 <i>ղինար</i>	2200 հոգի

Ղարաջաղաղի *հաքիմ*

Եկամուտ	Մատայողներ
---------	------------

828 թուման և 4200 դինար	200 հոգի
Եկամուտ	Չորսի <sup>165</sup> հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
1168 թուման և 9640 դինար	700 հոգի
Եկամուտ	Քավարդի <sup>166</sup> հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
257 թուման և 7050 դինար	100 հոգի
Եկամուտ	Ղափանաթի հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
820 թուման և 5560 դինար	188 հոգի
Եկամուտ	Վարքահանի հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
195 թուման և 9500 դինար	85 հոգի
Եկամուտ	Գարմուղի հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
136 թուման և 890 դինար	25 հոգի
Եկամուտ	Աղբբա ցեղի հաքիմ
Եկամուտ	Մառայողներ

<sup>165</sup> Բնագրում տառի կետերի բացակայության պատճառով գրված է «Չորս»: Չորսը գավառակ է Պարսկահայաստանի Խոյի գավառում (Թ. Ն. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, շ. Ն. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 271):

<sup>166</sup> Կավարդ կամ Կավարտ, գյուղ Ղափանի շրջանում, որ հիշատակված է Տաթևի վանքի հին հարկացուցակում, ըստ որի հարկը 8 մրավոր (դրամ) էր և նոր ժամանակների «Քյոթուկ» մառայանում (Թ. Ն. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, շ. Ն. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1988, էջ 966):

310 թուման և 2550 դինար	150 հոգի
Եկամուտ	Հաշթոռուղ և Թաք-թաքի հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
119 թուման և 6532 դինար	115 հոգի
Եկամուտ	Մաղաքի <sup>167</sup> հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
729 թուման և 3709 դինար	1179 հոգի
Եկամուտ	Լահիջան Ալեֆի հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
874 թուման և 5390 դինար	590 հոգի
Եկամուտ	Ղումբուլի ցեղի հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
319 թուման և 9096 դինար	141 հոգի
Եկամուտ	Ուջատուղի հաքիմ
Եկամուտ	Մառայողներ
510 թուման և 2095 դինար	70 հոգի
Եկամուտ	Աբղալուրի <sup>168</sup> հաքիմ

<sup>167</sup> Թերևս պետք է լինի Մարաբա (Մարական, Մարաբան, Մարաքենդ) տեղանունը, որը Պարսկահայաստանի Խոյ գավառում է, Կոստուրի ստորին հոսանքի և Աղչա գետի խառնման վայրում, բարբեր հովտում: Ուսումնասիրողներն այն նույնացնում են միջնադարում Վասպուրականի ճվաշ գավառում հիշատակվող Մառական ավանին (Թ. Ն. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան, շ. Ն. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 724):

<sup>168</sup> Հաս Միևրսկու այդ ցեղը հիշատակվում է Իսքանդար Մունշու պատմության մեջ և շամլու ցեղի ցեղախմբից էր (Tadhkirat al-mulūk, p. 165):

Եկամուտ Մառայողներ  
88 թուման և 5723 դինար 100 հոգի

*Մարաբի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
845 թուման և 1706 դինար 9 հոգի

*Շադադի ցեղի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
326 թուման [և] 2022 դինար 319 հոգի

*Ջունուզի<sup>169</sup> և Ղարնիյարադ բերդի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
455 թուման և 5280 դինար 150 հոգի

*Մեշքիևի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
136 թուման և 9856 դինար 60 հոգի

*Մուղանաթի արոտավայրերից Ալևահար օլթայի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
2202 թուման և 2222 դինար 50 հոգի

*Փաշաբ բերդի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
57 թուման և 5090 դինար 15 հոգի

*Սալմասի լաքի սուլթանի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ

349 թուման և 3748 դինար 100 հոգի

*Թալիշի Ղարաաղաջի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
216 թուման և 8352 դինար 40 հոգի

*Այնալու շահիստանի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
1660 թուման և 980 դինար 80 հոգի

*Սուլթանիեի և Ջենջանի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
1660 թուման և 2059 դինար 873 հոգի

**Չուխուր-Մաադի և ենթակա շրջանների բեկլարբեկություն<sup>1</sup>**

25910 թուման [և] 6326 դինար

*Բեկլարբեկություն*

Եկամուտ Մառայողներ  
20539 թուման 2860 հոգի

*Թուման-ե Նախիջևանի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
3461 թուման և 4346 դինար 799 հոգի

*Մակուսի հարքիմ*

Եկամուտ Մառայողներ  
580 թուման և 2808 դինար 150 հոգի

<sup>169</sup> Գյուլ է Ղարսկահայաստանում, Մարանդի գավառում, Մարանդ քաղաքից մոտ 16 կմ հյուսիս. Մարանդ - Ջուղա ճանապարհի վրա (Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 324):



Ջառուզիբիլի<sup>170</sup> հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
438 թուման [և] 4675 դինար	200 հոգի

Սաղարաքի<sup>171</sup> հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
65 թուման և 4358 դինար	54 հոգի

Բայազեդի բերդի հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
306 թուման և 3387 դինար	100 հոգի

Շադիլլուի հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
20 թուման	30 հոգի

Ղունրուլի բրդերի հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
10 թուման	40 հոգի

<sup>170</sup> «Ջառուզիբիլի - جزوه جبلی» անվանումը XVII դարից տարածվում էր Շար գավառի վրա (Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 26, Բ. Կոստիկյան, հրովարտակներ, պրակ Գ, վավ. 37, Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները Նոբրիդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 13): Այն ծագել է Շար գավառի «Ջառ-ը» և նրա Տպել բնակավայրի «Ջիբիլ - جبلی» արարատառ տարբերակների կցումից (Ա. Ա. Հակոբյան, Ա. Հ. Միմոնյան, Ղազի վանքի նորահայտ արձանագրությունը և Տպելի տեղադրության հարցը: Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ): Ե., 1998, հմ. 1-2, էջ 231):

<sup>171</sup> Սաղարաք կամ Սաղարաք. գյուղ Նախիջևանի ԻՀ Իլլիչևսկի շրջանում, Երևան-Նախիջևան ավտոմայրուղու վրա, Արաքս գետի ձախ կողմում, Սաղարաքի դաշտում (Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Եզվ. աշխ., հ. 4, էջ 459):

Մաղազբերդի հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
115 թուման և 6572 դինար	54 հոգի

Ղարաբաղի բեկլարբեկություն և ենթակա շրջաններ՝

24726 թուման ու 978 դինար

Բեկլարբեկություն

Եկամուտ	Շառայողներ
Ղարաբաղի արքաբները,	1430 հոգի

որոնք հայտնի է, որ

Կախեթից են՝ 28614 թուման և

9435 դինար

Ջակամլի հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
5998 թուման և 5980 դինար	1200 հոգի

Բարդայի հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
3792 թուման և 2735 դինար	515 հոգի

Ահնաբաղի<sup>172</sup> հաքիմ

Եկամուտ	Շառայողներ
---------	------------

<sup>172</sup> Մինորսկու կարծիքով դա Հախսայտն է, որը նույն ձևով, առանց կետերի հիշատակվում է Իսքանդար Մունշու երկում, Թիֆլիսից Գյոքչա ընկած ճանապարհին (Tadzhkirat al-muslik, p. 167): Արաբատառ գրության տարբերությունն հետևանքով կարող է լինել նաև Ահնազար տեղանունը, որը Թումանյանի շրջանի Լոռի Փամբակի գավառի մեջ մտնող Ահնիձոր գյուղի անվան տարբերակներից է, որը մտել է Ղարաբաղի կամ Գանձակի բեկլարբեկության մեջ (Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Եզվ. աշխ., հ. Ա, Երևան, 1986, էջ 150):

852 թուման և 5930 դիևար	700 հոգի
<i>Ջավանշիրի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
2102 թուման և 8000 դիևար	832 հոգի
<i>Բարգուշատի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
341 թուման և 2750 դիևար	300 հոգի
<i>Ղարաաղաջի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
636 թուման և 5434 դիևար	210 հոգի
<i>Լոռի ու Փանքաքի<sup>173</sup> հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
1545 թուման և 8434 դիևար	550 հոգի
<i>Արասբարի օլթայի և Բայազեղլու գեղի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
601 թուման և 8345 դիևար	300 հոգի
<i>Սամավի և Թերքավար<sup>174</sup> օլթայի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
300 թուման և 2945 դիևար	47 հոգի

<sup>173</sup> Թերևս Փամբակն է ճիշտը, սակայն զրբում Փանքակ ձևով է գրվել:

<sup>174</sup> Հևարավոր է ընթերցման նաև հետևյալ տարբերակները՝ Սոմայի և Թարթոր, Թարգավատ, որոնք գավառակներ են Պարսկահայաստանում, առաջինը Ուրմիա լճի հյուսիսային կողմում, երկրորդը՝ նույն լճի արևմտյան կողմում, որոնք սակայն դուրս են Ղարաբաղի բեկլարբեկության տարածքից (Թ. Խ. Հակոբյան, Մ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 656, հ. 2, էջ 441):

<i>Շիրվանի բեկլարբեկություն և ենթակա շրջաններ</i>	
<i>Բեկլարբեկություն</i>	
Եկամուտ	Մառայողներ
21983 թուման և 9033 դիևար	2581 հոգի
<i>Սալիանի և Ղուբայի Ղուլխանի հարիմ</i>	
Սալիան	
Եկամուտ	Մառայողներ
3342 թուման և 3845 դիևար	860 հոգի
Ղուբա	
Եկամուտ	Մառայողներ
7700 թուման	
<i>Արեշի և Շաքիի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
8476 թուման և 2465 դիևար	355 հոգի
<i>Դերբենդի՝ Բաբ ալ-արվաբի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
6487 թուման և 3955 դիևար	1600 հոգի
<i>Ալիաուտի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
8084 թուման և 4727 դիևար	230 հոգի
<i>Բաղբուրեի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
500 թուման	100 հոգի
<i>Չմշգազաքի և Աղդաշի հարիմ</i>	
Եկամուտ	Մառայողներ
1002 թուման և 6195 դիևար	30 հոգի

**Խորասան- Հերաթի բեկլարբեկություն և ենթակա շրջաններ**

*Հերաթի բեկլարբեկություն*

Եկամուտ	Շառայողներ
15277 թուման և 6034 դինար	2682 հոգի

*Մարուչաղի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
3989 թուման և 5531 դինար	603 հոգի

*Ֆարսի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
4989 թուման և 6873 դինար	603 հոգի

*Խավաֆի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
1434 թուման և 2624 դինար	271 հոգի

*Ջամի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
1682 թուման և 220 դինար	500 հոգի

*Բալա-Մորղաբի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
883 թուման և 3466 դինար	100 հոգի

*Փանջդեհի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
958 թուման և 4673 դինար	150 հոգի

*Բադղիսի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
109 թուման և 6151 դինար	30 հոգի

**Քարաջի (Քարդիս)<sup>175</sup> հաքիմ**

Եկամուտ	Շառայողներ
442 թուման և 3737 դինար	199 հոգի

*Ռուդումի (Ռուրմի)<sup>176</sup> հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
450 թուման և 7091 դինար	500 հոգի

*Ղուրի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
103 թուման և 1600 դինար	30 հոգի

*Թունի հաքիմ*

Եկամուտ:	Շառայողներ
1290 թուման և 3100 դինար	300 հոգի

**Մուրբ Մեշեդի բեկլարբեկություն և ենթակա շրջաններ**

*Բեկլարբեկություն*

Եկամուտ	Շառայողներ
7443 թուման և 9195 դինար	670 հոգի

*Սերախսի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
2099 թուման և 3024 դինար	437 հոգի

*Նիշապուրի հաքիմ*

Եկամուտ	Շառայողներ
---------	------------

<sup>175</sup> Փակագծում նշված է տեղանվան Մինորսկու առաջարկած ընթերցման տարբերակը (Tadhkirat al-mulūk, p. 102):

<sup>176</sup> Փակագծում նշված է տեղանվան Մինորսկու առաջարկած ընթերցման տարբերակը (Tadhkirat al-mulūk, p. 102):

2170 թուման և 8600 դինար	719 հոգի
<i>Թորշիզի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
994 թուման և 2972 դինար	616 հոգի
<i>Արիվերդի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
3588 թուման և 7828 դինար	550 հոգի
<i>Ազադվարի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
139 թուման և 3533 դինար	21 հոգի
<i>Նեսայի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
2812 թուման և 337 դինար	555 հոգի
<i>Սարգևվարի հաքիմ, որն ամբողջ Խորասանի վեզիրն է</i>	
Եկամուտ	Շառայողներ
1302 թուման և 1151 դինար	277 հոգի
<i>Իսֆարայիևի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
918 թուման և 7208 դինար	130 հոգի
<i>Հորվազի և Յասարուևի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
216 թուման և 7353 դինար	45 հոգի
<i>Դարունի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
2923 թուման [և] 1329 դինար	1320 հոգի
<i>Թորբաթի հաքիմ</i>	

Եկամուտ	Շառայողներ
379 թուման և 4701 դինար	55 հոգի
<i>Բեզավանդադի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
117 թուման և 1287 դինար	50 հոգի
<i>Դառ ալ-դարար Ղանդահար և ենթակա շրջանների հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
-	1123 հոգի
<i>Զամին-դավարի և Ղուրիանի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
Կանխիկ՝ 2015 թուման [և] 306 դինար	463 հոգի
<i>Շառեր՝ 8331 ծառ, առանց գնի մատնանշման</i>	
<i>Քուշքի հաքիմ</i>	
Եկամուտ	Շառայողներ
1847 թուման և 8920 դինար	199 հոգի
<i>Քորի Լուքե ցեղի, Բադղիսի, Թիմուրի և Ալի Խաջե ու Միր Արևֆ Բելուչի հաքիմ՝</i>	
<i>Աշխատավարձ՝ 30 թուման</i>	
<b>Մերվի բեկլարբեկություն և այլն՝</b>	
<i>Մերվի բեկլարբեկություն</i>	
Եկամուտ	Շառայողներ
7193 թուման և 6140 դինար	2352 հոգի
<i>Միսթանի հաքիմ</i>	

Եկամուտ  
1291 թուման և 4980 դինար  
Մտայողներ  
1000 հոգի

**Աստարաբադի բեկլարբեկություն և ենթակա շրջաններ՝  
Բեկլարբեկություն**

Եկամուտ  
10553 թուման և 4860 դինար  
Մտայողներ  
1503 հոգի

**Քիրայի (Գիրայ)<sup>177</sup> օլջայի հաքիմ**

Եկամուտ  
1406 թուման և 145 դինար  
Մտայողներ  
500 հոգի

**Հաջիլարի հաքիմ**

Եկամուտ  
659 թուման  
Մտայողներ  
320 հոգի

**Ջալայերի հաքիմ**

Եկամուտ  
72 թուման [և] 7000 դինար  
Մտայողներ  
100 հոգի

**Քրաչուբի և տափաստանին հարող բուլոքի հաքիմ**

Եկամուտ  
200 թուման  
Մտայողներ  
30 հոգի

Քոբլանի (Գոբլանի) և այլնի հաքիմ՝ Գոբլանի հաքիմ... Եամուօքի  
հաքիմ...<sup>178</sup>

Դար ալ-մարգ [Գիլան] և այլն՝

**Քասաբի հաքիմ՝**

<sup>177</sup> Փակագծում նշված է տեղանվան Մինորսկու առաջարկած ընթերցման տարբերակը (Tadhkirat al-mulūk, p. 103):

<sup>178</sup> Բնագրում տվյալները բացակայում են:

Եկամուտ  
5052 թուման և 5354 դինար  
Մտայողներ  
1200 հոգի

**Քահդումի հաքիմ**

Եկամուտ  
1207 թուման և 4943 դինար  
Մտայողներ  
200 հոգի

**Ռանքուսի հաքիմ**

Եկամուտ  
3903 թուման և 6947 դինար  
Մտայողներ  
450 հոգի

**Թոնքաբուսի հաքիմ**

Եկամուտ  
2142 թուման և 5040 դինար  
Մտայողներ  
575 հոգի

**Քերմանի հաքիմ**

Եկամուտ  
Մտայողներ

**Իրաքի բեկլարբեկություն**

Ղալամոռու [Համադան] և ենթակա շրջաններ՝

**Ղալամոռուի բեկլարբեկություն**

Եկամուտ  
7779 թուման և 9755 դինար  
Մտայողներ  
700 հոգի

Գառուս և Ջարին-քամար և Թաղանամին օլջայի հաքիմ

Եկամուտ  
973 թուման և 9917 դինար  
Մտայողներ  
140 հոգի

**Հաշթադ ջոֆթ օլջայի հաքիմ**

Եկամուտ  
Երբեմն գումար՝ 227 թուման և  
4740 դինար  
Մտայողներ  
57 հոգի

Երբեմն՝ առանց գումարի  
[մատնանշման]

*Հարսիների հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
328 թուման և 3900+ [դինար]	150 հոգի

Մնացյալ ամիբները որոնք հպատակ չեն

Եկամուտ	Մատայողներ
-	-

*Քաղհորի հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
3271 թուման և 4000 դինար	1000 հոգի

*Խավար և Սեմնանի հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
2180 թուման և 2015 դինար	500 հոգի

*Սավե և Հավեի հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
1309 թուման և 2093 դինար	250 հոգի

*Ռեյի օլքայի հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
1862 թուման և 7550 դինար	150 հոգի

*Քուրդիստան և այլն՝*

*Բեկլարբեկություն*

Եկամուտ	Մատայողներ
-	1000 հոգի

*Խորխորեի հարքիմ*

Եկամուտ

Մատայողներ

362 թուման [և] 7000 դինար

*Ջավանուդի հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
1100 թուման	100 հոգի

*Ալրամանի հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
1100 թուման	100 հոգի

*...՝ հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
2300 թուման	200 հոգի

*Ֆեյլի<sup>179</sup> Լորեսթանի հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
-	-

*Բախթարի*

Եկամուտ	Մատայողներ
3370 թուման և 3320 դինար	Իրաքի ճանապարհորդության ժամանակ 361 հոգի

*Բանեի օլքայի հարքիմ*

Եկամուտ	Մատայողներ
-	50 հոգի

*Ֆարս*

*Քոհգիլուի բեկլարբեկություն և ենթակա շրջաններ՝  
Բեկլարբեկություն*

<sup>179</sup> Ֆեյլին լորական ցեղի անվանում է:

Եկամուտ Մատայողներ  
12000 թուման 2000 հոգի  
...[Քոհզիլուի]՝ հարքիմ

Եկամուտ Մատայողներ  
6747 թուման [և] 7562 դինար 500 հոգի  
ու 4,5 դանգ

Բահրեյնի հարքիմ  
Եկամուտ Մատայողներ  
3839 թուման 899 հոգի

Զեյդաբադաթի հարքիմ  
Եկամուտ Մատայողներ  
1833 թուման և 5313 դինար 600 հոգի

Սարվեսթանի հարքիմ  
Եկամուտ Մատայողներ  
1343 թուման [և] 5002 դինար 150 հոգի

Դոուրադի հարքիմ  
Եկամուտ Մատայողներ  
5877 թուման [և] 7450 դինար 478 հոգի

Օրինկալ Բանդար Աբասի և այլնի հարքիմ  
Բանդարի հարքիմ  
Եկամուտ Մատայողներ  
4860 թուման 1078 հոգի

Դաշթեսթանի հարքիմ  
Եկամուտ Մատայողներ  
2000 թուման 200 հոգի

Արաբեսթանի Վալի՝  
Սեմիրամի հարքիմ

Եկամուտ Մատայողներ  
1045 թուման և 6108,5 դինար 150 հոգի

**Երրորդ հոդված**

**ԻՐԱՆԻ ՎԻՒԱՑԵԹՆԵՐԻ ԵՎԱՍՏՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՄԵՐԻ  
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Եկամուտ**

Կանխիկ	Բնամթերքով (ջենև)
785623 թուման և 8809 դինար	Մումիա <sup>100</sup> 8,5 Բազե՝ 4 ձևեր ման ու 80 միսդալ; Յասադի մարդ՝ 500 հոգի

**Դիվանի վարչություն**

Կանխիկ	Բնամթերքով
608652 թուման և 3403 դինար	Մումիա՝ 8,5 ման Բազե՝ 4 ձևեր [և] 80 միսդալ Յասադի մարդ՝ 500 հոգի

**Իրաքի ավարեջեի վարչություն**

**Հանքերի վարչություն**

Կանխիկ	Բնամթերքով
1423 թուման և 200+ դինար	Մումիայից՝ 8,5 ման ու 70 միսդալ Քերման 17713 թուման և 7000+ դինար

Խորասանի ավարեջեի Զարեթեի վարչություն

<sup>100</sup> Բնական կարմիր ներկանյութ:

վարչություն	
5186 թուման և 6000+ [ղինար]	7542 թուման և 800+ <i>ղինար</i>
<i>Խասսեի</i> վարչություն	Հանքերի վարչություն
3432 թուման և 4700+ <i>ղինար</i>	1223 թուման և 800+ <i>ղինար</i>
	Իրաքի <i>ավարեջեի</i> վարչություն
	339 թուման [և] 2500+ <i>ղինար</i>
	Խուզիսթան
Կանխիկ	Բազե
117629 թուման և 5850 <i>ղինար</i>	4 ձեռք
Խորասանի վարչություն	<i>Խասսեի</i> վարչություն
92582 թուման և 6300+ <i>ղինար</i>	5255 թուման և 6100+ [ղինար]
Իրաքի վարչություն	<i>Արբար ալ-թահավիլի</i>
	վարչություն
207 թուման և 4700+ <i>ղինար</i>	Կանխիկ՝ 405 թուման և 6000 [ղինար]
	Բնամթերքով՝ բազե 4 ձեռք
	<i>Խասսեի</i> վարչություն և այլն
	176971 թուման և 2405 <i>ղինար</i>
<i>Խասսեի</i> վարչություն	<i>Արբար ալ-թահավիլի</i>
	վարչություն
186224 թուման 5489 <i>ղինար</i>	746 թուման և 6916 <i>ղինար</i>
	Իրաք
	213416 թուման և 6058 <i>ղինար</i> , 500 հոգի
Իրաքի <i>ավարեջեի</i> վարչություն	<i>Խասսեի</i> վարչություն
Կանխիկ Յասադի մարզ	66152 թուման և 340+ <i>ղինար</i>
126768 թուման 500 հոգի	
1000+ <i>ղինար</i>	

<i>Ջարթեի</i> վարչություն	Հանքերի վարչություն
19423 թուման և 4500+ <i>ղինար</i>	821 թուման և 1300+ <i>ղինար</i>
<i>Արբար ալ-թահավիլի</i> վարչություն	
251 թուման և 5800+ <i>ղինար</i>	
	Ֆարս
Կանխիկ ու գույքի արժեքը	Բնամթերք
142001 թուման և 3000+ [ղինար]	Մուսիա՝ 8,5 ման և 70 միսդալ
Ֆարսի <i>ավարեջեի</i> վարչություն	<i>Ջարթեի</i> վարչություն
76464 թուման և 3000+ <i>ղինար</i>	37158 թուման և 2800+ <i>ղինար</i>
Խասսեի վարչություն	Արբար ալ-թահավիլի
	վարչություն
26189 թուման և 4000 <i>ղինար</i>	39 թուման և 5000 <i>ղինար</i>
<i>Ջարթեի</i> վարչություն	Հանքերի վարչություն
15003 թուման և 2400+ <i>ղինար</i>	4178+ թուման
	Ազարբայջան
	161969 թուման և 8400+ <i>ղինար</i>
Ազարբայջանի <i>ավարեջեի</i>	... <sup>(1)</sup> ի վարչություն (?)
վարչություն	
126437 թուման և 6900+ <i>ղինար</i>	2177 թուման և 4900+ <i>ղինար</i>
<i>Ջարթեի</i> վարչություն	<i>Խասսեի</i> վարչություն
26826 թուման և 400+ <i>ղինար</i>	6156 թուման և 5800+ <i>ղինար</i>
	Դար ալ-մարզ [Գիլան]
	69100 <i>ղինար</i> <sup>(1)</sup> [--] թուման և 7000+ <i>ղինար</i>
<i>Խասսեի</i> վարչություն	<i>Ջարթեի</i> վարչություն

<sup>181</sup> Հստ Մինոսպուտ պետք է լինի 186.224 (Tadhkirat al-muʿin, p. 106):



68198 թուման և 9200+ դինար

10 թուման

Հանքերի վարչություն

907 թուման և 7900+ դինար

Շիրվան

63784 թուման և 8900+ դինար

Զարեթի վարչություն

8477 թուման և 2100 դինար

Ազարբայջանի վարչություն

49400+ դինար

Արբար այ-թահավիլի

վարչություն

50 թուման

Խասսեի վարչություն

849 թուման և 500+ դինար

Հանքերի վարչություն

4547 թուման [և] 6800+ դինար

\*\*\*\*\*

**Օսխներ**

Կանխիկ

325273 թուման և 6000+ դինար

Դիվանի վարչություն

507400 թուման և 6300+ դինար

Թիուլ և համեսալե աշխատավարձ

Կանխիկ

491896 թուման և 5700 դինար

Թիուլ և թիուլի փոխարեն

Կանխիկ

375366 թուման

3000+ դինար

Յասադի մարդ

Քալիորից՝ 500

Այլ

Յասադի մարդ Քալիորից՝

500 հոգի

Խասսեի վարչություն

117873 թուման և 9300+ դինար

Այլ

Յասադի մարդ Քալիորից՝

500 հոգի

Համեսալե աշխատավարձ

116530 թուման և 2400+

դինար

հոգի

Նորին Մեծություն շահի մոր

վաքիլ և այլք

2191 թուման և 6300+ դինար

Ն.Մ. շահի

մոր վաքիլ

2000 թուման

Ն.Գ.

Մարիամ

Բեգումի

վաքիլ

191 թուման և

6300+ դինար

Սպասավոր (Ֆարրաշ)

5956 թուման և 5000+ դինար

Թիուլ

4404 թուման և

4800+ դինար

Աշխատավարձ

1552 թուման

300+ դինար

Բժիշկներ

4998 թուման [և] 1300+ դինար

Թիուլ

Համեսալե

աշխատավարձ

Ասիրներ և Հաքիմներ

Կանխիկ

396792+

թուման

Թիուլ և

Թիուլի

փոխարեն

Կանխիկ

349500

թուման և

4303+ դինար

Այլ

Յասադի

մարդ՝ 500

Այլ

համեսալե

աշխատա-

վարձ

-

յասադի՝ 500

հոգի

Յասավուլ-ե տոբաթ

Հարեմի ու դիվանի իշխրադասի

ները և աղաները՝ 4721 թուման

և 7420 դինար

Թիուլ

2746

թուման

4000+

[դինար]

Աշխատավարձ

1975 թուման

և 2300+

[դինար]

Բոյութաթի ամիլներ

6542 թուման և 1000+ դինար

Թիուլ

Աշխատավարձ

1076 թուման և 4700+ դինար	3921 թուման և 6500+ դինար	1289 թուման <sup>182</sup> 5300+ դինար	5252 թուման և 5300+ դինար
<i>Յասավուլներ</i>		<i>Թումաչիներ</i>	
1587 թուման և 5700+ դինար		1942 թուման և 5000+ [դինար]	
<i>Յասավուլներ</i>		<i>Թիուլ</i>	
378 թուման և 7380+ դինար		434 թուման և 1300+ դինար	
Աշխատավարձ		Համեսալե աշխատավարձ	
1208 թուման և 3000+ դինար		1508 թուման և 3700+ [դինար]	
<i>Ղոռչիներ</i>		<i>Ղուլամներ</i>	
25572 թուման և 6700+ [դինար]		18261 թուման և 5200+ [դինար]	
<i>Թիուլ</i>		<i>Թիուլ</i>	
4473 թուման և 1100+ դինար		6378 թուման և 5500+ [դինար]	
Աշխատավարձ		Աշխատավարձ	
21089 թուման և 5300+ դինար		11882 թուման և 9700+ դինար	
Հրացանակիրներ		Փագուրի ցեղի հավատի	
<i>Ռիբաներ</i> և այլ ծառայողներ, որ հայտնի են որպես հրացանակիրներ		մարտիկներ և այլք <i>համեսալե</i>	
21960 թուման և 3300+ [դինար]		2777 թուման և 5850+ [դինար]	
Աշխատավարձ		Ֆարսի եռավահանգիստների և այլ վայրերի պահակները	
21701 թուման և 9700+ [դինար]		2124 թուման և 8700+ դինար	

<sup>182</sup> Բնագրի հրատարակության մեջ վրիպակով է նշված թիվը՝ հետևյալ կերպ՝ 89 թուման և 89 թուման, ճիշտ գումարը վերականգնել ենք Մինորակու հետազոտությանը հրատարակված բնագրի ֆարսիսիլե օրինակից (Tadhkirat al-mulūk, p. 127):

Վրացի կանայք և այլ անձիք	
7892 թուման և 1700+ [դինար]	
<i>Թիուլ</i>	<i>Համեսալե աշխատավարձ</i>
1524 թուման և 3500+ դինար	6367 թուման և 8200+ դինար
	Փոխանցում (թահվիլ)
	40391 թուման և 4509 դինար
<i>Բոյութաթի սահեբջամները</i>	Ախոռների <i>ամիլներն</i>
	ընդունված կարգով և այլն
33447 թուման և 5500+ դինար	943 թուման և 9000+ դինար
Բահրեյնի հաքիմը	Այլ: Կամֆորայի մոմ
մարգարիտի գետնների	պատրաստող Մուհամմեդ
համար	Սալեհի հաշվին և այլ
1000 թուման	1092 թուման և 5300+ դինար
	<i>Սոյուրդալ</i> և այլն:
	93032 թուման և 5000+ [դինար]:
<i>Սոյուրդալ</i> և մուաֆոթյուն	<i>Վազիֆե</i>
36777 թուման և 8800+ դինար	5361 թուման և 9700+ [դինար]
Ռոստամ Խանե Չանգիզին	<i>Ին'ամ</i>
որպես նպաստ ապրուստի ու ծախսերի համար և այլնի համար տրամադրող մուդարրարի	3120 թուման և 2400+ դինար
9414 թուման	

Վարձավճար

Մետաքսի *մուսալլամիության*  
արժեքը և *խիրաջաթը*

321 թուման և 2800+ դիևար  
Բխրաջաթ  
Հոդագործության,  
հյուրատների վարձակա-  
լության և այլնի, ինչպես նաև  
այդ պաշտոնյաների հաղղ  
ալ-սայիի, թոչնակերի, խմելու  
ջրի, բաղնիքների վառելիքի և  
այլնի նպաստի՝ 23 թուման և  
6800+ դիևար

Փոխհատուցում  
Օտարերկրացիներին՝ անգ-  
լիացիներին և պորտուգա-  
լացիներին նավահանգիստ-  
ների համար հատկացվող  
տասանորդի վճուխի համար

(Ավարտեցինք զիրքը տանակարող Տիրոջ օգնությամբ)

تذکره کتابخانه ملک آستان

7075 թուման և 6300+ [դիևար]  
Զարաթ  
Խուման, ողորմություն,  
մզկիթների լուսավորություն  
ու աշխարհակալ տիրոջ<sup>185</sup>  
դրախտաբնակ Նորին  
Մեծության դամբարանների  
խնամակալություն՝ 5140  
թուման և 4300+ [դիևար]

## ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Աբասի - (عباسی) - Սեֆյան շրջանում շրջանավորդ հիմնա-  
կան արծաթե դրամն էր, որը սկսվել է հատվել շահ Աբբաս Ա-ի  
օրոք: XVII դարում 200 դիևարը, որ կոչվում էր մեկ արասի,  
կշռում էր 7-9 գրամ մաքուր արծաթ<sup>184</sup>: Նրա պաշտոնական կշիռը  
1 միսղալ էր, որը հավասար էր 6 դանգի կամ 4,64 գրամի, սակայն  
տատանվել է և 18-րդ դարի սկզբին հասել 7/6 միսղալի, թեև 1133  
թ. Լորից հասել է 1 միսղալի, այդպես շարունակելով հատվել  
նաև Աֆղան Մահմուդի օրոք<sup>185</sup>:

Ազար - (عزب) - Ազաբները պետք է, որ լինեին գրանցող  
պաշտոնյաներ<sup>186</sup>:

Ազար բաշին - (عزب باشی) - գործելով դաֆթարխանեի  
դարուդայի ենթակայության տակ՝ պատասխանատու էր  
սպասարկող ստորին անձնակազմի (ազաբների ու ֆառաշների)  
համար:

Ադարախանե - (ادارخانه) - Վայր, որտեղ սուրճ, թեյ, հյուր և  
այլ ըմպելիքներն էին պատրաստում:

Արվար-ե ջամ - (ارواب جمع) - էր կոչվում հարկերի հաշվառ-  
ման այն ձևը, երբ որևէ հարկատու օբյեկտից կամ առանձին  
գյուղական համայնքից գանձվող բոլոր պետական հարկերը  
մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին հար-

<sup>184</sup> Հ. Փափագյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I,  
հրովարտակներ, պրակ Ա, Երևան, 1956, էջ 108:

<sup>185</sup> Tadhkirat al-mulūk, p. 130, 131.

<sup>186</sup> Նույն տեղում, էջ 144:

կային մատյաններում գրանցվելուց հետո ի մի էին բերվում և ի վերջո դրամական արտահայտությամբ արձանագրվում որքան հարկ պետք է վճարի և դրանից որքանը որ հարկի հաշվից<sup>187</sup>:

**Աթարբաշի** - (عطار باشي) - Արբունի դեղագործների պետը:

**Ադա** - (اد) - Պարոն, տեր, կրտսեր պաշտոնյաներին տրվող տիտղոս:

**Ամիլ** - (عامل) - Այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները, չափում ցանքերն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում, թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է գանձվի:

**Ամիր** - (امير) - Բարձրաստիճան գորահրամանատար, քոչվորական ռազմական միավորումների առաջնորդ:

**Ամիրախոտ բաշի** - (امير اخور باشي) - Գլխավոր օրհասակապետ, որը պետք է ներկա գտնվեր *խասսե-ե շարիֆեի* կողմից նվիրված կենդանիների և այլ նվերների օրհասակապետ տարվելու և *խասսեի* ավանգարդների հեծնելու ժամանակ, հետևել արքունի օրհասակների կարգուկանոնին և նշանակել *ամիրախոտներին* ու օրհասակների մյուս աշխատողներին: Նա էր նախապես գրում հիշյալ անձանց և *խասսեի* ձիապանների ու մյուս ծառաների *թալիդեները*, որոնց *նագեր-ե բոյութաթը* ծանոթանում էր և ապա տալիս *ամիրախոտ բաշիի* հաստատմանը: Ախոտում աշխատող մնացած ծառաների՝ պայտողների, անասնաբույժներին նա էր հաստատում, ապա բարձրագույն դիվանի հրամանագրով նրանց

*թանխահ* էր նշանակվում<sup>188</sup>: Կային երկու տեսակի ամիրախոտ բաշի: Մեկը՝ ամիրախոտ բաշի-ե ջելոուն «շահի օրհասակների պետն էր, որն իր տրամադրության տակ ուներ ենթակաների մի մեծ խումբ, որոնց նշանակումները վերահսկում էր նագեր-ե բոյութաթը: Նրա ենթականերն էին *ջելոդար բաշին*, *զինդար բաշին* և այլք: Մյուսը՝ *ամիրախոտ բաշի-ե սահրան*՝ «դրսի» օրհասակների պետն էր:

**Ամիրշիրբար բաշի, տե՛ս շիրբարբաշի**

**Անբարդար բաշի** - (انباردار باشي) - Գլխավոր պահեստապետ, որի պատասխանատվության տակ էին պահվում արքունի գումերում պահվող կենդանիների անասնակերը և հանդերձանքի պարագաները:

**Աշրաֆի** - (اشرفي) - իրանական ոսկեդրամի անվանումը: Մեֆյան շահերը ոսկեդրամ հատում էին միայն հատուկ առիթներով. շահի գահակալում, Նոր Տարի և այլն: Աշրաֆի կշիռը հիմնականում 4,5 դանգ կամ 3/4 միսղալ էր, բայց պատահում էին նրա կշռի կրճատված և ավելի մեծ (մոտի-ե աշրաֆի, դասթաջա բիլա) տարբերակներ<sup>189</sup>:

**Ավարեջե** - (اوارجه) - Հաշվապահական հին տերմին, որ հավանաբար գալիս է Մասսանյան շրջանից: Մեֆիսիների օրոք այսպես են կոչվել հարկային այն մատյանները, որոնց մեջ մասնավորապես հաշվառման էին ենթարկված յուրաքանչյուր հարկատուից ստացվող հարկերը: Ըստ հատուցման առանձին նվազ-

<sup>187</sup> Հ. Փափագյան, Հրովարտականք, պրակ Ա, էջ 103:

تذکره الملوك، بکوش محمد دهبوسايي، تهران، کتابفروشی زور، 1332، ص. 17

<sup>189</sup> Tadhkirat al-mulūk, p. 129.

ների: Ավարեջեի հատուկ դաֆթարներ կային ոչ միայն մայրաքաղաք Սպահանում, այլ նաև նահանգային խոշոր կենտրոններում:

**Ավարեջեննիս** - (اوراجه‌نوسى) - Ավարեջեի դաֆթարները, ինչպես նաև ավարեջեի հարկային հաշվումների հետ կապված հաշվապահական բոլոր գործարքները, վստահված էին հետուկ բարձրաստիճան պաշտոնյաների, որոնք կոչվում էին «ավարեջեննիս» (اوراجه نوسى), և անմիջապես ենթակա էին մուսթովֆի ալ-մամալեքին: Բնակչությունից գանձվող հարկերի հաշվին տրվա բահրաչեն թիուլնամեններն ու նման մյուս հրովարտակները, ինչպես նաև դրանց վերաբերող բոլոր պաշտոնական գրությունները, հաստատում էին ավարեջեննիսների ստորագրությամբ և կնիքով, որից հետո հանձնարարվում էր գրանցման հատուկ մատյաններում:

**Արբաբ** - (ارباب) - Այդպես էին կոչվում խոշոր կալվածատերերն ու գյուղատերերը: Այս եզրույթը ավելի լայն տարածում ստացավ XVIII - XIX դարերում և մինչև օրս էլ Իրանում խոշոր կալվածատերերը «արբաբ» են կոչվում<sup>190</sup>:

**Արբաբ ալ - թահավիլ** - (ارباب التحویل) - տե՛ս թահավիլդար:

**Բահրաչեն** - (بهرچه) - Հողագործ գյուղացիության կողմից պետությանն ու կալվածատիրոջը հատուցվող հողային ռենտան, որի պետությանը հատուցվող մասը կոչվում էր «բահրաչենե դիվանի» (بهرچه دیوانی), իսկ կալվածատիրոջը հատուցվողը բահրաչենե մալիքանե (بهرچه مالکانه): Վերջինս սովորաբար կոչվում էր միայն

<sup>190</sup> Հ. Փամիսգյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 105:

մալիքանե կամ պարզապես «մուլք», երբեմն նաև օջրաթուլմեա (الجزء المثل), որ բառացի նշանակում է «որպես վարձ»:

**Բադայա** - (بقایا) - Այդպես էին կոչվում հետ ընկած հարկերը, որոնք պարտք էին դառնում<sup>191</sup>:

**Բասմաչի** - (باسمه جی) - Տպագրական աշխատանքի բանվոր:

**Բարաթ** - (برات) - Պարտամուրհակ: Այդպես էր կոչվում նաև հրամանագիրը, որով որոշակի գումար էր հասկացվում պաշտոնյայի, պետական կամ զինվորական ծառայողին որոշակի վարի հարկերից այն ստանալու վերաբերյալ:

**Բեկլարբեկ**, պարսկ. ճիշտ ձևը բեկլարբեկի (بیکلربیک) - Մեֆյան Իրանի սահմանամերձ նահանգներում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկեր»: Իրանում XVI - XVII դարերում կային 13 բեկլարբեկություններ, որոնցից հյուսիս-արևմտյան սահմանումն էին գտնվում Ատրպատականի, Ղարաբաղի (Գանձակի), Շիրվանի և Չուխուր-Սաադի կամ Երևանի բեկլարբեկությունները<sup>192</sup>:

**Բոլուք** - (بلوک) - շրջան, թաղամաս:

**Բոլուք բաշի** - (بلوک باشی) - Շրջանների (հավանաբար պտղատու այգիների) պատասխանատու: Բոլուք բաշիներին նշանակում էր նազեր-ե դավարը և ամիրախո բաշին<sup>193</sup>:

**Բոլուքթաթ** - (بوتات) - Արքունի արհեստանոցներն ու շահական իշխանության գանազան պահանջները բավարարող հաս-

<sup>191</sup> W. Floor, A Fiscal history of Iran in the Safavid and Qajar Periods (1500-1925), New York, Bibliotheka Persica-Press, 1998, p. 509.

<sup>192</sup> تذکره الملوک، بکوشش محمد دبیرسیاهی، ص: 5

<sup>193</sup> دستور الملوک، ص: 208, 588

տատությունները, խոհանոց, որսի թռչունների թռչանոցները, ախոռները, գոմերը և այլն:

**Բոնիչև** - (بونهچ) - Արհեստավորների համար որոշված հարկեր, որոնք նշանակվում էին ընդհանուր կերպով տվյալ հանրառությանը, իսկ յուրաքանչյուր շնչից գանձվող գումարը բաշխվում էր տեղում:

**Գարաքյարաղների** - (گورکیراقان) - Սեֆյան արքունիքի պաշտոնյաներից էին, որոնց դիրքը հավասար էր վեզիրների դիրքին: Նրանք «վեզիրների ու ամիրների» հետ ապրանքներ էին ուղարկում Նահանգներից: Նրանք ըստ երևույթին որոշ տեսակի մատակարարներ էին, ուղարկված բոլորաթափ կողմից, որոնք հասկանում էին որոշ տեսակի մթերքների որակից: Վեզիրները, աշխատողները և գարաքյարաղերը հավասար կերպով, մթերքից բացի հարյուրին մեկ աշխատավարձ էին ստանում:

**Դաղանե** - (داغانه) - Գումար, որ ռուսումի փոխարեն ստանում էին ուղտերի խարանման համար:

**Դանգ** - (دانگ) - Կավվածատիրական մուլքային գյուղերից ստացվող ամբողջ եկամուտը կամ ռենտան, որ սովորաբար կոչվում էր մուլք, դիտվում էր որպես մի ամբողջություն և, ծանրության մանր միավոր միսոլլալի նման բաժանվում էր 6 դանգի: Գյուղերի մուլքերը առուծախի էին ենթարկվում ինչպես ամբողջությամբ, որ կոչվում էր շեշդանգ-شعشع (վեց դանգ), այնպես նաև մի քանի, երբեմն էլ մեկ, կես կամ քառորդ դանգով, որն անվանվում էր թասուջ-طاسوج: Դանգ էր կոչվում նաև դիրհեմի 1/6-ը:

**Դավաթդար** - (دواتار) - Բառացի թանաքապահ: Այս պաշտոնյան, որն ավելի ցածր էր մոհրդարից, կնքում էր որոշ տեսակի հրամանագրեր, որոնց մասին նշվում է «Թագքիրթաթ ալ-մուլուքի» համապատասխան մասում:

**Դար ալ-մարջ** - (دارالمرز) - Սահմանային շրջան: Սեֆյան ժամանակ այդպես էին կոչում Կասպից ծովի ափերին ընկած շրջանները:

**Դարուղա** - (داروغه) - Այսպես էր կոչվում տվյալ վայրի ոստիկանապետը, որ ակտիվ մասնակցություն ուներ բնակչությունից գանձվող հարկերի իրացման գործում:

**Դաֆթար** - (دفتر) - Տեղոր, մատյան: Գլխավորապես օգտագործվում էր հարկային մատյանների իմաստով, *դաֆթար* կամ *դաֆթարխանե* (دفترخانه) էր կոչվում նաև այն հիմնարկությունը, որտեղ պահվում էին հարկային մատյանները<sup>194</sup>:

**Դաֆթարդարի** - (دفترداري) - Արքունի գրագրատան պատասխանատուն, որի պարտականությունները նկարագրվում են «Թ.Մ.»-ի 15-րդ ենթագլխում (Ֆալ)՝<sup>195</sup>:

**Դինար** - (دينار) - Դրամական մանր միավոր, հայկական աղբյուրներում հաճախ անվանվում էր նաև «դեան» կամ «դիան»: 10000 դինարը կազմում էր 1 թուման:

**Դիվան** - (ديوان) - Վարչական գլխավոր կենտրոն:

**Դիվան ալ-սադարաթ** - (ديوان الصدارت) - Սադրերի դիվան (ատյան), կրոնական գլխավոր ատյան:

<sup>194</sup> Չ. Փափագյան, հրովարտակներ, արակ Ա, էջ 108:

<sup>195</sup> Տե՛ս բնագրի թարգմանությունը, էջ 147:

**Դիվանբեկի** - (دیوان بیگی) - Այսպես էր կոչվում գերագույն դատավորը, որ մեծ լիազորություններ էր վայելում: Երկրի բոլոր կողմերից բոլոր հարցերի շուրջը տրված բողոքները ուղղվում էին սադրին՝ նրա կարծիքն իմանալու: Վերջինիս կողմից տրված վճիռները ենթակա էին հաստատման դիվանբեկիի կողմից առանց որի դրանք չէին կարող օրինական համարվել: Դիվանբեկին փաստորեն քաղաքացիական դատարանի ֆունկցիաներն էր իրագործում և առաջնորդվում էր սովորույթային կամ 'ուրֆի օրենքներով, սերտ կապ պահպանելով սակայն հոգևոր դատարանի պետի՝ սադրի հետ: Նահանգներում 'ուրֆի ներկայացուցիչները կառավարիչներն էին: Դիվանբեկին հայերի դատական ատյան էր ողջ թագավորության համար և նրան էին դիմում նաև ամենաբարձր հեղինակությունների դեմ հայցերով<sup>196</sup>:

**Դուշուլուք** - (دوشک) - Հարկ, որ ստանում էին նվերներից և կախված այն հանգամանքից թե որքան էր գնահատվում նվերը, կազմում էր նվերի 11-18 տոկոսը, որը արձանագրվում էր հարկերի մատյանների մեջ և որի կեսը հանձնում էին նազերին և մնացյալը *դուշուլուք* անունով բաժանվում էր այլ պաշտոնավոր անձանց մեջ: Պետական բարձրաստիճան որոշ պաշտոնյաներին վճարվող ֆինանսական տուրք<sup>197</sup>:

**Զաբեթե** - (ضابطه) - Կարգ, կանոն: Զաբեթեի վարչությունը թերևս զբաղվում էր զարիթներին վերաբերող գործերով:

<sup>196</sup> Tadhkirat al-mulūk, p. 120.

<sup>197</sup> W. Floor, A Fiscal history of Iran, p. 513

**Զաբեթենեխա** - (ضابطه نویسی) - *Զաբեթենեխար մուսթովֆի ալ-մամալեթի* ենթականերից էր, որին անվանում էին նաև *մալի մուսթովֆի*: Նա արձանագրում էր գանձվող հարկերը:

**Զաբիթ** - (ضابط) - Գրավող, բռնագրավող, որոշումն իրագործող: *Զաբիթ* էին կոչվում նաև պետական հարկերի վարձակալները, որոնք նախապես որոշ գումար մուծելով պետական գանձարան, իրավունք էին ստանում տվյալ օբյեկտի հարկերը գանձելու:

**Զառարի** - (عزایی) - Նշանակում է դրամահատ: Զառարիները սովորաբար լինում էին հարուստ վաճառականներ, որոնք կապալով էին վերցնում երկրի տարբեր քաղաքներում գտնվող պետական փողերանոցները: Զառարիների պետը (զառարի բաշին) ղեկավարում էր պետության դրամահատության գործը, որը վերահսկում էր և *մու'այյիր ալ-մամալեթը*:

**Զառարիանե** - (عزای خانه) - Դրամահատարան:

**Զարբուք** - (زرکوب) - Ոսկյա և արծաթյա թերթիկներ պատրաստող:

**Զաքաթ** - (زکات) - Ունեցվածքի մի մաս, որը իսլամական օրենքի համաձայն մուսուլմանները պիտի վճարեն աղքատներին և չքավորներին:

**Զինդար** - (زینداری) - Բառացի «ձիու թամբը պահող»: Սեֆյան արքունի ձիապան պաշտոնյա, որն աշխատում էր *զինխանեում*, *զինդար բաշիի* ենթակայությամբ:

**Զինխանե** - (زینخانه) - Արքունի թամբուսարքի արհեստանոց:

**Էթեմադ ալ-դուլե** - (اعتماد الدوله) - Բառացի պետության վստահելի, պետության մեծ վեզիրի տիտղոսը (վեզիրե ազամ-وزیر)

(اعظم): Նա վերահսկում էր երկրի բոլոր վարչական և ֆինանսական գործերին, փաստորեն, կատարելով մինիստր – նախագահի և արտաքին գործերի մինիստրի ֆունկցիաները: Նրա հաստատմամբ էին շահի հրամանագրերը գործադրվում և վարչական ապարատի պաշտոնյաների նշանակումները առանց նրա կնիքի վավերական չէին<sup>198</sup>: Այս տիտղոսը գոյություն չունեղ վաղ Մեֆյան պետության մեջ և շահին հաջորդող ամենաբարձրաստիճան պաշտոնյան կոչվում էր «վաքիլ» (փոխանորդ): Շահ Աբբաս Ա-ի ժամանակաշրջանից «վաքիլ» տիտղոսը կազմեց իմաստով այլևս չի գործածվում<sup>199</sup>: Շահ Աբբաս Ա-ի մեծ վեզիրն էր Միրզա Մուհամմեդ Մարութադին, որն այդ պաշտոնը վարեց (1616-1634/5 թթ.), այնուհետև շահ Աբբաս Բ-ի օրոք ութ տարի (1646/7-1653/4 թթ.) այդ պաշտոնը վարում էր Սեյդ Ալա ալ-Դին Հուսեյնին, 1653/4-1661/2 թթ.՝ Մուհամմեդ Բեկ Թաբրիզին, 1661/2 - 1669/70 թթ.՝ Միրզա Մուհամմեդ Մահդին, նրա մահից հետո 1673 թ. քուրդ Շեյխ Ալի Ջանգանեն էր մինչև 1690 թ., 1690/1-1698/9 թթ.՝ Միրզա Մուհամմեդ Թահիր Վահիդը, 1698/9-1706/7 թթ.՝ Մուհամմեդ Մո'մեն խան Բիզդեյի Շամլուն, 1706/7-1715 թթ.՝ քուրդ Շահ Ղուլի խան Ջանգանեն, 1715-1720/1 թթ.՝ Ֆաթհալի խան Դաղստանին, 1720/1-1722/3 թթ.՝ Մուհամմեդ Ղուլի խան Բիզդեյի Շամլուն<sup>200</sup>: Շահ Թահմասպ Բ-ի օրոք մի քանի անձանց անուններ են հիշատակվում *է'շթեմաղ ալ-դուվլեի* պաշտոնում՝ Իսմայիլ Բեկի, Մուհամմեդ Ալի խան Սոքրիի, Միրզա Արդալլահ

<sup>198</sup> The Cambridge History of Iran, vol. 6, p. 354:

<sup>199</sup> Tadhkīrat al-mulūk, pp. 114-115.

<sup>200</sup> عبد الرقيق حقيقت (رقيق)، وزیران ایرانی از بزرگ مهر تا امیر کبیر، تهران، 1386، صص. 356-337

Մար'աշիի, Միրզա Մո'մեն Ղազվինիի և Ռաջաբ Ալիի անունները:

**էնթեղալի** - (انتقالی) - Բառացի «փոխանցված»: էնթեղալի էին կոչվում այն հողամասերը, որոնք մասնալեք վիճակից վերածվել էին խասսեի<sup>201</sup>:

**Թա'լիղ(յ)ե** - (تملیقه) - Փաստաթղթերի լուսանցքներում կատարվող գրառումներ, որին վարչական լեզվում թալիղչե էին անվանում: Այդպես էին կոչվում նաև խաների, մեծ ամիրների, վեզիրների ու այլ բարձրաստիճան պաշտոնյաների հրամանագրերը:

**Թահսիլդար** - (تحصیلدار) - Հարկերը գանձող: Դրանք այն անձնավորություններն էին, որոնք, ի դիմաց իրենց ռոճիկի, իրավունք էին ստանում այս կամ այն հարկատու օբյեկտից ստացվող հարկերը գանձելու:

**Թահվիլդար** - (تحویلدار) - Գանձապետ, պաշտոնյա, որը զբաղվում էր դրամական գործարքներով:

**Թահլասահ** - (تخواه) - Կանխիկ դրամ, խոշոր գումար, հասկացվում է որպես կանխիկ դրամին փոխարինող հասարժեք այլ ապրանք կամ հարստություն: Գործ է ածվել պետական պաշտոնյաների և զինվորականության ռոճիկների դիմաց բնակչությունից գանձվող հարկերի հաշվին տրվող հատուցումների իմաստով: Այսինքն ռոճիկի դիմաց կամ ռոճիկին փոխարինող հատուցում, որը կարող է լինել հացահատիկ և այլ մթերքներ, ինչպես նաև կանխիկ դրամ, եթե հարկը դրամական հարկ էր:

<sup>201</sup> Tadhkīrat al-mulūk, p. 148.



**Թասուջ** – (طوسج) - Որևէ բանի 1/24-ը: (Դերեհամը վեց դանգ է հաշվվում, և դանգը երկու կարաթ է հաշվվում և կարաթը երկու թասուջ է հաշվվում, նաև գյուղերի մուլքերը առուծախի էին ենթարկվում ինչպես ամբողջությամբ, որ կոչվում էր շեշդանգ-ششادان (վեց դանգ), այնպես նաև մի քանի, երբեմն էլ մեկ, կես կամ քառորդ դանգով, որն անվանվում էր թասուջ-طوسج):

**Թիուլ** - (تبول) - Ֆեոդալական պարզևական հողատիրության տարածված ձևերից մեկը: Պետական և զինվորական ծառայության դիմաց թիուլներ էին տրվում ինչպես ամբողջական գյուղեր (եթե դրանք պետական «դիվանի» գյուղեր էին), այնպես նաև առանձին մուլքային գյուղերից և այլ հարկատու օբյեկտներից ստացվող պետական հարկերը կամ նրանց մի մասը: Թիուլ ստացող ֆեոդալներն ու պետական-զինվորական պաշտոնյաները անվանվում էին թիուլդարներ: Խոշոր թիուլդարները թիուլդարության ժամանակաշրջանում իրենց թիուլի սահմաններում բնակվող ռայաթների նկատմամբ ունեին նաև վարչական ու դատական իրավունք:

**Թողրա** - (طغرا) - Հրովարտակների սկզբում դրվող և թագավորի, կրոնապետի կամ այլ բարձրաստիճան անձնավորության անունը պարունակող մոնեդրամ, որը գրվում էր իբրար մեջ հյուսված բարդ և դժվար ընթեռնելի գրությամբ: Թողրան գործածվում էր նաև փաստաթղթի կամ հրովարտակի բնօրինակ իմաստով: Մասնավորապես կալվածագրերում այդ բառով նշվում էին նաև որպես ապացույց, հինք ներկայացվող փաստա-

թղթերը՝ տվյալ փաստաթղթի տեսակի հետ միասին, ինչպես օրինակ «երկու թողրա դարալչե – دو طغری قبالچه»:

**Թովջիհ** - (توجه) - Այս տերմինի տակ հասկացվում էր որևէ բանի ցրում, բաշխում, ուղղում դեպի տարբեր կողմեր: Դա կարող էր վերաբերել ինչպես առանձին հարկային օբյեկտների հարկերի ընդհանուր գումարի բաշխմանը տվյալ օբյեկտի ռայաթների կամ առանձին տնտեսությունների վրա, նշելով, թե նրանցից ով որքան պետք է վճարի, ինչպես նաև այդ գումարների գանձման իրավունքի բաշխումը զինվորականության և պետական պաշտոնյաների միջև: Վերջինիս գլխավոր տեսքերը կոչվում էր բարձրագույն դիվանի սահեբ թովջիհ (սահեբ թովջիհ-ե դիվան-ե ալա صاحب توجه دیوان اعلى): Սահեբ թովջիհը համարվում էր զինվորականությանը և պետական պաշտոնյաներին ռոճիկի դիմաց տրվող հանձնարարական գրությունների գլխավոր վերակացուն:

**Թուման** - (تومان) - Դրամական խոշոր միավոր որ հավասար է 10,000 դինարի:

**Թուշմալ բաշի** - (توشمال باشی) - Այս պաշտոնյան թագավորական խոհանոցի վարիչն էր և նազերի առաջին ենթակա: Նա էր առաջնորդում շահի կերակուրները խոհանոցից մինչև նրա սեղանը: Երբ շահն իր կանանց հետ էր, ապա առաջնորդում էր մինչև հարեմի դարբաս: Հասարակական հավաքությունների ժամանակ նա համտեսում էր մատուցվող կերակուրը դահլիճի մուտքի մոտ: Ամբողջ ուտելու ընթացքում նա կանգնած էր մնում, իսկ երբ

կերակուրը հավաքվում էր, եւ իրավունք ուներ իր դանակը դնել ասիսներից որի մեջ կցանկանար և ուղարկել այն որտեղ, որ կցանկանար<sup>203</sup>:

**Թուփչի բաշի** - (توبچی باشی) - Թեղանոթածիզների ղեկավար:

**Թուֆանկչաղասի** - (توغانچی آغاسی) - Այսպես էր կոչվում Սեֆյան արքունիքին առընթեր հրացանակիր զինվորների ընդհանուր հրամանատարը, որը *դոռչի բաշու*, *դուլլարաղասու* և *իշիքաղասի բաշու* հետ դիտվում էր որպես պետության չորս հենասյուներից մեկը (ارکان دولت قاهره) արքանե դուլաթե դահերեհ): Նա պալատական գլխավոր ամիրներից էր և մասնակցում էր 7 ամիրների ջանաղի (جانقی) կոչվող արտակարգ գերագույն խորհրդին:

**Իթլաղ** - (اطلاق) - Բառացի՝ «հեռացում», «ուղարկում»: Խոսքը պետական պաշտոնյաներին այս կամ այն հարկատու օրջեկտն ուղարկելու մասին է. պաշտոնյաներ, որոնք իրենց ռոճիկները ստանում էին տվյալ օրջեկտից գանձվող հարկերի հաշվից: Այս առիթով նրանց ձեռքը տրվող հանձնարարական գրությունները կոչվում էին «հավալե»<sup>204</sup>:

**Իխրաշաթ** - (اخراجات) - Բառացի նշանակում է «ծախսեր»: Այդպես էին կոչվում այն արտակարգ ծախսերը, որ տարբեր առիթներով ռայաթները պարտավոր էին հատուցել պետությանը կամ նրա պաշտոնյաներին<sup>205</sup>:

<sup>203</sup> Tadhkirat al-mulūk, p. 137.

<sup>204</sup> Հ. Փափագյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 110:

<sup>205</sup> Նույն տեղում:

**Իլթիզամ** - (انترام) - Պետական պաշտոնյաներին որևէ խնդիր կարգավորելու համար որպես վարձատրություն որոշակի գումար վճարելու պարտավորություն:

**Ին'ամ** - (انعام) - Բառացի նշանակում է «նվեր», «պարգև»: Արտակարգ դեպքերում բարձրաստիճան զինվորականությանը, պաշտոնյաներին և հոգևորականությանը տրվող պարգև: Սովորաբար այդ պարգևը տրվում էր տվյալ անձնավորության տարեկան ռոճիկի չափով, ամեն տարի կանոնավոր ստանալու իրավունքով: Սակայն կային նաև այլ կարգի պաշտոնյաներ, ինչպիսին էր օրինակ, մեծ վեզիր *էթեմաղ ալ -դուվլեն*, որը որոշակի ռոճիկ չուներ, այլ ամեն տարի ստանում էր բավական մեծ գումար որպես ին'ամ:

**Իշիքաղասի** - (ایشیک آغاسی) - Սեֆյան արքունի արարողապետը իշիքաղասի էր կոչվում: *Իշիքաղասի բաշին զիվանի* բոլոր *իշիքաղասիների*, թիկնապանների, ներքինիների, բարապանների, *յասավուլների* և մուևետիկների գլխավորն էր:

**Իքթա'** - (اقتاع) - Բանակում ծառայության ղիմաց տրամադրվող հողակտոր:

**Լաշքարնևիս** - (لشکر نویسی) - Այս պաշտոնյան, որը *նազերե-բոյութաթի* ենթականերից էր, պարտավոր էր *զիվանի* բոլոր աշխատողների՝ *ամիրներից* մինչև *բոյութաթի* բանվորներին վերաբերող գումարները արձանագրել և կնքել: Նա փոքր աշխատավարձ էր ստանում, սակայն հավելյալ գումարներ էր ստանում նրա ձեռքի տակով անցնող փաստաթղթերից: Նա իր ենթակա ներկայացուցչին էր նշանակում արշավանքի գնացող զորքում:

**Լոնդրա** - (لندن) - նաև լոնտրինա - Անգլիական մահուդ (կարմրավուն):

**Խալ'աթ** - (خلعت) - Հյուրասիրության և կամ գանազան տոների առթիվ կազմակերպված ընդունելությունների ժամանակ, հարգանքի և մեծարման նպատակով տրվող մեծարժեք նվեր, որը մեծ մասամբ լինում էր շքեղ և թանկագին հագուստ:

**Խալիսե** - (خالمه) - Արքունական հողամասեր: XVII դարի փաստաթղթերի տվյալների հիման վրա Հ. Փափազյանը հանգել է այն եզրակացությանը, որ այդ շրջանում «խալիսե» հողերը պետական սեփականություն էին համարվում, սակայն նրանք տվյալ միլայեթի տնօրինության տակ էին և նրանց եկամուտներն ամբողջովին պատկանում էին խաներին ու բեկլարբեկերին<sup>206</sup>:

**Խալիֆաթ ալ-խուլաֆա** - (خليفة الخلفاء) - Իրանում Սեֆյան ժամանակաշրջանում «խալիֆա» եզրույթն առավելապես օգտագործվում էր սուֆիական միաբնության *մուրշիդի*<sup>207</sup> տեղակալի իմաստով<sup>208</sup>: Նույն շրջանում կար նաև *խալիֆաթ ալ-խուլաֆայի* պաշտոնը, որը զբաղվում էր սուֆիական գործերով և միապետի անունից իր մարդկանց էր նշանակում նահանգներում: Սեֆյան շահերը *խալիֆաթ ալ-խուլաֆայի* և սուֆիների միջոցով վերահսկում էին այն ուժերը, որոնք կազմում էին երանց հենարանը<sup>209</sup>:

<sup>206</sup> А. Папазян, *ևշվ. աշխ.*, էջ 106:

<sup>207</sup> Մորշեղ (مرشد) - հոգևոր առաջնորդ, ղեկավար, կրոնական հետևորդներ ունեցող առաջնորդ:

<sup>208</sup> دستور الملوك ميرزا رفيعا، به كوشش و تصحيح محمد اسماعيل نارنجينكوفسكى، ترجمه علي كرتابادي، تهران، 1385. ص 562

<sup>209</sup> Tadhkirat al-mulūk, p. 125-126.

Քանի որ սուֆիները հիմնականում ղզլբաշներ և մեծամասամբ թուրքեր էին, խալիֆաթ ալ-խուլաֆաները նս այդ ցեղերի անդամներ էին:

**Խասսե-ե շարիֆե** (خاصه شريفه) էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները, և առհասարակ, շահին ու թագավորական ընտանիքին պատկանող մյուս բոլոր հաստատությունները միասին վերցրած:

**Խութբա** - (خوطة) - Աղոթքի տեսակ, որի ժամանակ արտասանվում էր իշխող տիրակալի անունը:

**Խումս** - (خمس) - Եկամտի կամ շահույթի հինգերորդական մասը, որը մահմեդականները պետք է վճարեն Իմամին կամ նրա իրավահաջորդին:

**Կաբա** - (كعبة) - Տղամարդու ընդարձակ, երկար թևքերով հագուստ:

**Հակկաբե** - (حقابه) - Ատլի կամ ջրանցքի ջրի բաժին:

**Հադդ ալ-նազարա** - (حق النظارت) - Նազերի հավելավաստակ գումարը:

**Հադդ ալ-դարար** - (حق القرار) - Որոշված հավելավաստակ գումարի իրավունք:

**Հադդ ալ-սայի** - (حق السعي) - Բառացի «ջանասիրության համար» հավելավաստակ գումար:

**Հադդ ալ-թոուլիա** - (حق التوليت) - Տնտեսավարման համար հավելավաստակ գումարի իրավունք:

**Համեսալե** - (همه ساله) - Բառացի «ամենամյա»: Այսպես էր անվանվում ռոճիկների հատուցման այն ձևը, ըստ որի ռոճիկ ստացող պաշտոնյան իրավունք էր ստանում, ցնոր տնօրին-

նություն, ամեն տարի նույն վայրի հարկերի հաշվից ստանալու իր ոռճիկի գումարը:

**Հավալե** - (حواله) - Դիվանի կողմից պաշտոնյաներին ու զինվորականներին տրվող հանձնարարական գրություններ, որը նրանք ներկայացնում էին այս կամ այն գյուղական համայնքներին կամ ցածր հարկային վերակացուներին, որպեսզի ստանային նրանցից որոշակի քանակի գումար կամ մթերք<sup>210</sup>:

**Հավիջխանե** - (حویجانخانه) - Կաթսաների, ամանեղենի ու խոհանոցային պիտույքների պահոց:

**Հաքիմ** - (حاكم) - Գավառապետ, քաղաքացիական դատավոր:

**Հեքիմ բաշի** - (حكيم باشی) - Շահի գլխավոր բժիշկն էր, որը ահռելի գումարներ էր վաստակում, սակայն շահի մահվան դեպքում նա կարող էր կորցնել իր ողջ ունեցվածքը, անգամ կյանքը<sup>211</sup>:

**Հոքմ** - (حکم) - Հրամանագիր, հրաման, բարձր կարգադրություն:

**Ղազի** - (قاضی) - Դատավոր, շարի դատական ատյանի պետը, որը նշանակվում էր բարձրաստիճան հոգևորականության շարքերից, որը շարիաթի օրենքով քննում էր քաղաքացիական ու քրեական գործերը<sup>212</sup>:

**Ղազի սաքար** - (غازی عسکر) - Սեֆյան վաղ շրջանում *ղազի սաքարը դիվանբեկի* խորհրդականն էր, բայց հետագայում նրա այս գործառույթն անցնում է *սադրիե* Սեֆյան հարստության

վերջին շրջանում այս պաշտոնը իջեցվել էր զինվորականների հայերը գրանցողի աստիճանի<sup>213</sup>:

**Ղաչաջիխանե** - (چاچیان) - Կարի արհեստանոց:

**Ղոչի** - (قوچی) - Ցեղերից հավաքագրվող հեծյալ զվարդյայի զինվոր: Ղոչիները զինված էին նետերով, նիզակներով, դաշույններով և մարտական կացիներով<sup>214</sup>: Կային հատուկ տեսակի դոռչիներ, որոնց դոռչի բաշին տրամադրում էր տարբեր բաժան մունքներին: «Թագքիրաթ ալ-մուլուքում» հիշատակվում են երկու տեսակի դոռչիներ. զինակիր և նետակիր դոռչիներ: Ղոռչիների կարգերի առավել ամբողջական ցանկ է տալիս Պետրոս Պետիկը. «մեղելի դոռչիսին պատասխանատու էր շահի գլխի փաթտոցի համար, ղլիջ-ք դոռչիսին՝ շահի սրի, խանջար դոռչիսին՝ նրա դաշույնի, քամանաք դոռչիսին՝ նրա աղեղի ստաղղի դոռչիսին՝ նետերի և այլև»<sup>215</sup>:

**Ղոչի բաշի** - (قوچی باشی) - Ղոռչիների գլխավոր: Նահանգների բոլոր ցեղերի ու ցեղախմբերի գլխավորը: Վաղ Սեֆյան շրջանում, երբ դեռ կանոնավոր զորքեր չէին ձևավորվել, դոռչի բաշին գործնականում պետության ռազմական նախարարն էր, և կրում էր «ամիր ալ-ումարա» տիտղոսը: Այս պաշտոնյայի դերը նվազում է շահ Աբբաս Ա-ի օրոք ռազմական բարեփոխումների արդյունքում, երբ ձևավորվում են կանոնավոր զորքերը, և

<sup>210</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Ա, էջ 111:

<sup>211</sup> Tadhkirat al-mulūk, p. 128.

<sup>212</sup> Հ. Փափազյան, հրովարտակներ, պրակ Բ, էջ 222:

<sup>213</sup> Tadhkirat al-mulūk, p. 112.

<sup>214</sup> Նույն տեղում, էջ 32:

<sup>215</sup> A Man of Two Worlds Pedros Bedik in Iran 1670-1675, translated from the Latin and annotated by Collette Ouahes and Willem Floor, Washington, Mage publishers, 2014, p. 264-5.

վերոհիշյալ պաշտոնյան մնում է որպես ցեղերից հավաքագրվող հեծելազորի ղեկավարը<sup>216</sup>:

**Ղուլամ** - (غلام) - Բառացի նշանակում է «ստրուկ, ծառա»: Այսպես կամ պարզապես դուլ էին կոչում այն հեծյալները, որոնք մեծ մասամբ կամ իրենք էին նոր մահմեդականություն ընդունել և կամ հանդիսանում էին մեկ կամ երկու սերունդ առաջ մահմեդականություն ընդունած քրիստոնյաների զավակներ: Մրանք փաստորեն կազմում էին շահի անձնական թիկնապահների գվարդիան՝ դուլլար: Ղուլամները երկու տեսակի էին՝ ներքինի (խասսեին պատկանող դուլամներ) և ոչ ներքինի (սադե-ստվորական)<sup>217</sup>:

**Ղուլբեկի** - (قول بيكي) - Ղուլբեկի էին կոչվում խաները, որոնք կառավարում էին միայն մի քաղաք կամ շրջան<sup>218</sup>:

**Ղուլլարաղասի** - (قوللر آغاسی) - Բոլոր դուլամների, այսինքն՝ շահական թիկնազորի ղեկավարը

**Ղուշխանե** - (قوشخانه) - Արքունի թռչնարանը, որտեղ պահվում էին որսի թռչունները:

**Ղուշչի** (قوشچی) էին կոչվում պալատական պաշտոնյաները, որոնք զբաղվում էին շահական պալատի որսորդության համար անհրաժեշտ բազենների խնամքով<sup>219</sup>: Ըստ երևույթին, բազենների

<sup>216</sup> Tadhkirat al-mulūk, p. 117.

<sup>217</sup> Tadhkirat al-mulūk, p. 127.

<sup>218</sup> Ղուլյն տեղում, էջ 164:

<sup>219</sup> Ղուշչիների մասին բազմիցս հիշատակվում է Սեֆյան պետության վարչա-քաղաքական կառուցվածքին վերաբերող Դասթուր ալ-մուլուք աշխատության մեջ دستور الملوك ميرزا رفيعا، به كوشش و تصحيح محمد اسماعيل 268 239 238 229 57-55، ص. 1385، تهران، 1385. مارچينكوفسكى، ترجمه على كزادبايى، تهران، 1385.

մատակարարումը պալատին ապահովում էին առանձին բնակավայրեր, որոնք բացի հողի մշակությունից, զբաղվում էին բազենների բուծմամբ ու բազմացմամբ: Ղուշչիների ռոճիկն ու հատկացումները կատարում էր *մուշարրաֆ-ե դուշխանե* և այդ մասին գրանցում իր *դաֆթարում*<sup>220</sup>:

**Մալ** - (مال) - Գլխավոր եկամտահարկը և սեփականության հարկը, որ գանձվում էր ամեն տեսակի եկամտաբեր օբյեկտներից ու շենքերից, այգիներից, վարելահողերից, ջրաղացներից, ձիթահանքերից, գութաններից, տներից, խանութներից և այլն: Մալը գանձվում էր ինչպես բնածթերթով, այնպես և կանխիկ դրամով: XV դարից սկսած «մալ» հարկի հետ միատեղ հիշվում է նաև «ջահաթը» (տե՛ս մալուջահաթ)<sup>221</sup>:

**Մալիյյաթ կամ մալիե** - (مالیات، مالىه) - XV դարից և ավելի վաղ ժամանակներից գոյություն ունեցող գլխավոր եկամտահարկի «մալի» տարբերակներից է, որն ավելի գործածական է դառնում XVIII դարում և փոխարինում «մալ» կամ «մալուջահաթ» եզրույթներին:

**Մահալ** - (محل) - Շրջան, գավառ, XVII-XIX դարերում Այսրկավկասի վարչական բաժանման միավորներից է:

**Ման** - (من) - Կշռի միավոր: XVIII դարում 1 թալիքի մանը հավասար էր մոտ 3 կգ<sup>222</sup>:

**Մաշ'աղաբբաշի** - (مشعل نار باشي) - Արքունի ցահերի արհեստանոցի ղեկավար: Վերջինս երբեմն համատեղում էր

نصیری میرزا علی نقی، القاب و مواجب دورهٔ دورؤ سلاطین صفوی، ص. 69.

<sup>221</sup> Հ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Ա, էջ 112:

<sup>222</sup> Հ. Փափազյան, հրովարտականեր, պրակ Բ, էջ 223:

Քարթաշ բաշի պաշտոնը, նաև պատասխանատու էր պալատի տարացման համար<sup>223</sup>:

**Մաջլեսնեխա** - (مجلس نوبس) - Այլ անունով կոչվում էր նաև վաղե 'ենեխա - واقعه نوبس, որ նշանակում է դեպքերն արձանագրող: Մա փաստորեն շահի անձնական քարտուղարն էր և իր դիրքով արքունի աստիճանակարգության մեծ վեզիրից կամ *էթենաղ ալ-դավլեհե* հետո գրավում էր երկրորդ տեղը: Նա կրում էր նաև ձախակողմյան *վեզիր* անունը, որովհետև պաշտոնական ընդու նելությունների և արքունի խորհրդակցությունների ժամանակ նստում էր շահի ձախ կողմում: Մաջլեսնեխան էր ձևակերպում շահի «բերանացի» (المنشأه) կռչվող հրամանագրերը, այլ միապետ ներքի նամակների պատասխանները, պահում նրանց հետ կնքված պայմանագրերը, տեղյակ էր դիվանագիտական փոխհա բարերությունների նախադեպերին, կարևոր դեր էր խաղում դես պանների հետ բանակցություններում, գրանցում էր նրանց գալուստն ու հեռանալը, նրանց առաքելությունների նպատակները<sup>224</sup>:

**Միլաք** - (میلک) - Կտորի տեսակ, որ Նոուշաղ բաղաբից էին բերում: Հաստ ու կուպիտ գործվածքով կտոր:

**Մինբաշի** - (مین باشی) - 1000 հոգուց բաղկացած գորագնդի ղեկավար:

**Միսալ** (مثال) էին կոչվում մուսուլմանական հոգևոր ատ-յանների վճիռները: *Միսալ* եզրույթը նախքան Սեֆյան ժամանա-

կաջրջանը ուներ այլ իմաստ: Այն համարժեք էր *ֆիրման* բառին և նշանակում էր հրովարտակ<sup>225</sup>: Սեֆյան շրջանում իրավական կարևոր նորմերի (*վակֆային* ու *մուլքային* իրավունքների, կրո-նական ազատությունների) խախտման կապակցությամբ *դիվան ալ-սադարաթը* կայացնում էր դրանց վերաբերող որոշումներ՝ *միսալներ*, որոնք հաստատվում էին *միսալի* հակառակ կողմում գրված հրովարտակներով: Այս հրովարտակները հիմնականում ունեն *փարվանչե* կոչվող հրամանագրերին բնորոշ *թանիդիե*, շահական կնիք և *թողրա*: Սեֆյան վարչակարգում կար հատուկ պաշտոնյա *միսալ-ենեխա*, որ գրում էր *միսալները*<sup>226</sup>:

**Միաղալ** - (مقتال) - կշռի միավոր, որը հավասար է 4,65 գրամի:

**Միվեխանե** - (میوه خانه) - Արքունիքի միրգ մատակարարող բաժին:

**Միրաբ** - (میراب) - Պաշտոնյա, որ պատասխանատու էր ոռոգովի ջրի բաշխման համար:

**Միրեշաբ** - (میرشاب) - Ճիշտ ձևը պետք է լինի «ամիր-ե շաբ», որը բառացի նշանակում է «զիշերվա ամիր»: Ըստ Մինորսկու այս պաշտոնյան պահակներ էր նշանակում շուկաներում և այլուր, նաև «հավանաբար ուներ գործակալների ճյուղավորված ցանց»<sup>227</sup>: Դասթօր պ-մուլուքում այն հանդես է գալիս, որպես «զիշերայի հսկիչի» ոչ պաշտոնական անվանում<sup>228</sup>:

<sup>225</sup> قائم مقامی ج. مقدمه ای بر شناخت اسناد تاریخی, ص. 51-50.

<sup>226</sup> قائم مقامی ج. مقدمه ای بر شناخت اسناد تاریخی, ص. 56.

<sup>227</sup> Tadhkirat al-mulūk, p. 149.

<sup>228</sup> دستور الملوك میرزا رفیقا، به کوشش و تصحیح محمد اسماعیل مازچیتکوفسکی، ترجمه علی کرادادی، تهران، 1385. ص. 573.

<sup>223</sup> Tadhkirat al-mulūk, p. 138.

<sup>224</sup> Tadhkirat al-mulūk, p. 122.

**Մուլլաբաշի** - (ملاشی) - Մահմեդական հոգևորականության աստիճանաանդադակում բարձրագույն պաշտոնն էր՝ ստեղծված շահ Մուլթան Հուսեյնի իշխանության տարիներին: Միր Մոհամմադ Բադեր Մաջլեսին առաջին մարդն էր, որ շահ Մուլթան Հուսեյնի օրոք նշանակվում է այդ պաշտոնում, որը հիմնում է Զահաբբալի մադրասեն և այնտեղ սկսում դասավանդել: Նրանից հետո այդ պաշտոնում նշանակվում է Մուհամմեդ Հուսեյնը:

**Մոհրաբար** - (مهردار) - Բառացի՝ կնիքապան: Սեֆյան արքունի աստիճանակարգում արքայական կնիքի *մոհրդարը* ըստ Շարդենի իրականում պատասխանատու չէր արքայական կնիքի համար, քանի որ այն վստահված էր թագավորի մոլոր: Ուրբաթ օրերին արդեն մյուս պաշտոնյաների կողմից կնքված փաստաթղթերը տարվում էին հարեմի դարբասի մոտ, որտեղ էր նաև արքայական կնիքների տուփը: Փաստաթղթերը ընթերցվում էին շահին և վերջինս *մոհրդարի* նշած մասում դրոշմում էր կնիքը: Պաշտոնեական աստիճանակարգում ավելի ցածր դիրք ունեւր շարաֆ-ե նաֆագի փոքր կնիքի *մոհրդարը*, որն իրավունք չուներ շահի ներկայությամբ նստելու<sup>229</sup>:

